1914

990

206.4[Z.kunl
U-34

2010

206.4[ՅԻՍՈՒՍ]
Մ-36

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ

ԵՐԿՐԱՒՈՐ ԿԵԱՆՔԸ
ԵՒ
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ
ՀԻՒՍՈՒԱՆ
ԶՈՐՔ ԱՒԵՏԱՐԱՆԻՉՆԵՐԻՑ
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ

220
592-ՄԿ

ԿԱԶՄԵՑ
ՏԱՐԱՏ ԱՌԱՔ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՐԱՂԵԱՆ
(Բ. բարեփոխ. և պատկեր. տպ.)

ԹԱԳՈՒ
Տպարան եղբ. Ն. և Ա. Կարապետեանի
1914

220
592-Մա
206.4 (2 Հայաստան)
Մ-34
12012
474
220
Z.U.Kh.Z. ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴ
S.S.S.R. Հանրային Գրադարան
7/XI-1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
(1004) 16449-58
(1914)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ

ԵՐԿՐԱՒՈՐ ԿԵԱՆՔԸ

ԵՒ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ՀԻՍՈՒՍԱԾ

ՉՈՐՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉՆԵՐԻՑ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ

ԿԱԶՄԵՑ

ՏԱՃԱՏ ԱՐԱՊ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՐԱՊԵԱՆ

(Բ. բարեփոխուած և պատկերազարդ տպագրութիւն)

ԲԱԿՈՒ

ՏՊԱՐԱՆ ԵՂԲ. Ա. ԵՒ Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑԻ

1914.

2001

33523-Ա.Հ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե.

ԵՐԻՑՍ ԵՐԸՆԵԼՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԷԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

Գրաբիւն Դիւանի ի 6-ն յուլիսի 1913 ամի, № 996։

Իմ աշակերտներին.

Ձեզ եմ նուիրում այս գիրքը, սա մեր Մեծ-Ուսուցչի՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աւետարանն է, որ մեր քրիստոնեական հաւատի հիմքն է կազմում։

Սիրեցէք այս գիրքը, միշտ ձեռքներիդ ունեցէ՛ք եւ անձանձրոյթ կարդացէ՛ք. սա ձեզ կուսուցանէ թէ ի՛նչ պէտք է անէք կատարեալ մարդ եւ կատարեալ քրիստոնեայ լինելու համար։

Աւետարանը ձեր կեանքի միակ ուղեցոյցը պէտք է լինի, նա միայն կարող է բաւականութիւն տալ ձեր հոգու ամենագլխաւոր պահանջներին. մաքրել ձեր խիղճն ու ազնուացնել, լուսաւորել ձեր մտքերը, տրամադրել ձեզ ձգտելու միշտ դէպի ճշմարիտը, բարին ու գեղեցիկը։

Մաղթում եմ, որ դուք այս գիրքը կարդալով, ոչ միայն համոզուքիք որ Յիսուս Քրիստոսը Աստուծու Որդի եր եւ միանգամայն մարդկութեան փրկիչը, այլ եւ ձեր վարք ու բարքով եւ ձեր ընտիր գործերով ցոյց տաք, որ դուք յիրաւի ձեր Մեծ-Ուսուցչի արժանաւոր աշակերտներն էք։

Բագուի Ռէալական դպրոցի կրօնուսոյց՝

Տաճատ ա. քահ. Մարաղեան.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքի և վարդապետութեան մասին մեր ունեցած տեղեկութիւններն այն սակաւաթիւ գրուածներից ենք քաղում, որ թողել են մեզ սրբազան Առաքեալները։

Այդ գրուածներն որ ի մի վերցրած «Նոր-Կտակարան»-են կազմում, թէև ծաւալով շատ փոքր են, բայց մեզ համար նրանք մի անսպառելի աղբիւր են՝ իրենց մէջ պարունակուած փաստերի և տեղեկութիւնների առատութեամբ։

Այդ գրուածներից առաջին և գլխաւոր տեղը բռնում են Նոր-Կտակարանի առաջին չորս գրքերը, որոնք յայտնի են «Աւետարան» անունով։

Աւետարան անունը ծագել է հայերէն «աւետել» բառից, որ նշանակում է ուրախ և բարի լուր հաղորդել։

Այդ անունով կոչուեցան Նոր-Կտակարանի առաջին չորս գրքերը. որովհետև Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքի և փրկութեան ուրախ լուրը դրանք աւետեցին համայն մարդկութեան։

Որ աւետարաններն Յիսուս Քրիստոսի կեանքի և վարդապետութեան ամենաճշգրիտ ու հարազատ նկարագիրն են տալիս, այդ մասին չի

կարող որ և է կասկած լինել, որովհետև նրանց սրբազան հեղինակներն արձանագրել են այն թարմ յիշողութիւնները, որ տպաւորուած էին նրանց սրտերի մէջ. այն բոլորը, ինչ որ իրենց աչքով էին տեսել և ականջով լսել. միևնոյն ժամանակ ամեն բան «ականատեսներից և խօսքին սպասաւորողներից» ստուգելով։

Իսկ «ականատեսներն ու խօսքին սպասաւորողներն» արդէն յայտնի է, որ գիշեր ու ցերեկ շրջելով իրենց Վարդապետի հետ՝ լսել էին Նրա քարոզներն ու խօսած առակները, տեսել էին Նրա բժշկութիւններն ու գործած հրաշքները։ Ականատես էին եղել իրենց Վարդապետի կրած տանջանքներին, խաչուելուն, մահուանը և վկայ էին եղել Նրա հրաշալի յարութեանն ու փառաւոր համբարձմանը։

Իրենց Մեծ Վարդապետի խոստման համաձայն ընդունելով Սուրբ Հոգու շնորհը՝ կարողացան հասկանալ տեղի ունեցած անցքերի իսկական միտքն ու նշանակութիւնը. ըմբռնել իրենց առաքելական կոչումն ու պարտականութիւնը և արդէն լուսաւորուած ու զօրացած, առանձին իմն ոգևորութեամբ և եռանդով հրապարակ իջան և անընկիւղ քաջութեամբ սկսեցին քարոզել ու հրաչակել իրենց խաչեցեալ Վարդապետին ոչ միայն բանիւ, այլ և գրով։

***

Որոշել Աւետարանների ծագման ճիշտ ժամանակամիջոցը կամ գրութեան թուականը՝ դըժուար է։ Միայն կարել է ասել, որ Աւետարաններն երևան են եկել հաւանականաբար առաջին դարու երկրորդ կիսից։

Աւետարաններից առաջ, հաստատապէս կարելի է ասել, որ այսպէս կոչուած «Առաքեալների թղթերն» են գրուած։ Այդ թղթերն, որ առաքեալների տուած խրատները, յորդորներն ու պատուէրներն են պարունակում, չէին կարող գոհացնել նորահաւատների հետաքրքրութեանը, որովհետև դրանք չէին տալիս Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքի պատմութիւնը։

Նորահաւատների համար աւելի քան անհրաժեշտ էր Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքի պատմութիւնն ունենալ և այս խոշոր պակասը լրացնելու համար էր, որ հետզհետէ հանդէս եկան չորս աւետարանները։

Այս աշխատութիւնը հիւսուած լինելով այդ չորս Աւետարաններից, կարևոր եմ համարում մի քանի խօսք ասել թէ Աւետարանների և թէ նրանց սրբազան հեղինակների մասին. աչքի առաջ ունենալով այն տեղեկութիւնները, որ տըւել են մեզ Սուրբ գրքին հմուտ անձինք։

***

Առաջին Աւետարանի հեղինակը Մատթէոս աւետարանիչն է, որ Գալիլիայի Կափառնաում քաղաքացի ոմն Ալփիայի որդին էր և հրէական անունով կոչւում էր նաև Ղևի։ Նախքան առաքելական կոչման հրաւիրուելը, պարապում էր

մաքսաւորութեամբ և իբրև տէրութեան պաշտօնեայ՝ ամենայն հաւանականութեամբ դրագէտ անձն էր։

Նա իր աւետարանը գրեց հրէութիւնից քրիստոնեայ դարձած հրէաների համար եբրայական տառերով և արամէական բարբառով, որ քաղդէական և ասորական լեզուների մի խառնուրդ էր։ Այս բարբառը հասկանալի էր հրէաներին. այս բարբառով էր խօսում նաև Մեր Տէր Յիսուս Քրիստոսը։

Որովհետև այդ բարբառով գրուած Աւետարանը հասկանալի էր միայն Պաղեստինում բնակուող հրէաներին, իսկ Յիսուսի Մեսիա լինելն ու չլինելը հետաքրքրում էր նաև Պաղեստինից դուրս գտնուող հրէաներին, որոնք յունախօս էին և դժուարութեամբ էին հասկանում արամէական բարբառը, ուստի և անհրաժեշտ համարուեցաւ՝ Մատթէոսի Աւետարանը ունենալ յունական լեզուով. և շուտով թարգմանուեցաւ այդ Աւետարանը բայց ոչ դասական (կլասիք) լեզուով, այլ այսպէս կոչուած «Աղէքսանդրեան» լեզուով, որ ժամանակի ամենատարածուած լեզուն էր և հասկանալի էր գրեթէ բոլոր ազգերին։

Մատթէոսի Աւետարանում նորադարձ հրէաների համար ապացուցուած է, որ Յիսուսն ինքը խոստացեալ Մեսիան էր, որին վաղուց սպասում էին։

Հետևելով Յիսուսի երկրային կեանքի դէպքերին, Մատթէոսն ամեն անգամ հաստատում է

թէ ինչպէս այդ դէպքերից իւրաքանչիւրը կապուն Հին-Կտակարանի այն մարգարէութիւնների հետ, որ քաջ ծանօթ էր հրէաներին։ Մատթէոսն աւելի քան վաթսուն անգամ մատնացոյց է անում Հին-Կտակարանի վերայ։ Քառասուն և երեք դէպքում մարգարէութիւններից բառացի քաղուածք է անում, իսկ մնացած տեղերը՝ մարգարէութիւնների միայն ընդհանուր միտքն է առաջ բերում։

Մատթէոսն իւր Աւետարանն սկսում է Յիսուսի ազգաբանութիւնից, ներկայացնելով նրան որպէս Աբրահամից սերուած և Դաւթի գահի ժառանգ։ Պատմում է Յիսուսի մկրտութիւնը, սատանայից փորձուիլը. առաջ է բերում Նրա քարոզները, աշակերտների ընտրութիւնը, գործած հրաշքները, մատնութիւնը, չարչարանքը, խաչուիլը, թաղուիլը, յարութիւն առնելը և վերջանում է Աւետարանը Գալիլիայի լերան վերայ տեղի ունեցած Յիսուսի հրաժեշտի քարոզով, որով Յիսուսը պատուիրում է իւր աշակերտներին «գնալ և բոլոր հեթանոսներին քարոզել Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով» և խոստանում է նրանց հետ լինել «մինչև աշխարհի կատարածը»։

* * *

Երկրորդ աւետարանի հեղինակն է Մարկոսը, որ «Գործք Առաքելոցի» մէջ (գլխ. ժբ. 25) յիշւում է նաև Յովհաննէս անունով։ Սա Յիսու-

սի առաքեալներից չէր, այլ ինչպէս ասում են սուրբ հայրերը «առաքելաշնորհ» անձինքներից էր և Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքի ամբողջ ընթացքի ականատես։

Յիսուսի ծննդեան 42 թուին, երբ Պետրոս առաքեալը Հերովդէս Ագրիպասի հալածանքներից ազատուելու համար ստիպուած էր Երուսաղէմից Հռոմ փախչել, Մարկոսն էլ ուղեկցեց նրան և դարձաւ նրա գործակիցը։ Սրբազան առաքեալը սկսեց Աւետարանը քարոզել։ և կարճ ժամանակում մեծ յաջողութիւն ունեցաւ։ Երբ Պետրոս առաքեալի ունկնդիրները ցանկացան Յիսուսի վարդապետութիւնը գրաւոր ունենալ, նրանք դիմեցին Մարկոսին և նա գրեց իւր Աւետարանը յունարէն լեզուով։

Մարկոսի Աւետարանը Մատթէոսի Աւետարանից զանազանւում է իւր համառօտութեամբ և նպատակով։ Այն բոլոր կէտերը, որ առաջ է բերում Մատթէոսը նպատակ ունենալով ապացուցանելու հրէաներին, որ Յիսուսը իսկական Մեսիան է, բաց է թողնուած Մարկոսի աւետարանում։ Չկան նոյնպէս Յիսուսի ազգաբանութիւնը, մանկութիւնը, լերան քարոզը, երկնքի արքայութեան մասին նրա խօսած բազմաթիւ առակներից շատերը։ Կարդալով Մարկոսի Աւետարանը իսկոյն աչքի է ընկնում այն հանգամանքը, որ Մարկոսն իւր աւետարանը գրել է այն ընթերցողների համար, որոնք ծանօթ չէին հրէական սովորութիւններին։

Մարկոսն առաւելապէս ուշադրութեան է առել Աստուծու Որդի Յիսուս Քրիստոսի հասարակական կեանքը և նկարագրում է Յիսուսի Մեսիական պաշտօնավարութեան ժամանակամիջոցը. ցոյց տալու թէ ինչպէս Յիսուսը դուրս եկաւ յաղթական կերպով պատերազմելու աշխարհի չարիքների և մեղքերի դէմ։

Մարկոսի առաջ բերած նիւթերից այն մասը, որ գտնւում է նաև Մատթէոսի Աւետարանում, ըստ ամենայնի համաձայն է Մատթէոսին. այս հանգամանքը ցոյց է տալիս, որ Մարկոսն իւր Աւետարանը գրելու ժամանակ աչքի առաջ է ունեցել Մատթէոսի արամէական բարբառով գրած Աւետարանը։ Իսկ նրա Աւետարանի մէջ երևցած նոր մանրամասնութիւնները մանաւանդ տեղերի և անունների վերաբերմամբ, ցոյց են տալիս թէ նա ունեցել է նաև մի ուրիշ հեղինակաւոր աղբիւր, որ անշուշտ Պետրոս առաքեալն էր, որից իբրև նրա աշակերտը՝ քաղել է այդ տեղեկութիւնները։

Աշակերտած լինելով Պետրոսին, Մարկոսն ըստ ամենայնի ենթարկուած է նրա ազդեցութեանը և այդ երևում է նրա Աւետարանից։ Այսպիսով Մարկոսի Աւետարանն էլ առաքելական ծագում է ստանում։

Մարկոսն իւր Աւետարանն սկսում է Յովհաննէս Մկրտչի քարոզութիւնից և մկրտութիւնից։ Պատմում է աշակերտների ընտրութիւնը, հրաշագործութիւնները, մատնութիւնը և այլն

ըստ կարգին. և վերջացնում է Աւետարանը առաջ բերելով այն հանգամանքը, որ Յիսուսի համբարձումից յետոյ, առաքեալները գնացին Նրա վարդապետութիւնը քարոզելու։

Մարկոսն իւր Աւետարանում (տես գրքիս 129-րդ գլ.) առանց անունը տալու, յիշում է մի երիտասարդի, որ Յիսուսին կապած տանելու ժամանակ մերկ մարմնի վերայ մի ծածկոց ձրգած, հետևում էր Յիսուսին. և երբ զինուորները նրան էլ կամեցան բռնել, նա իւր ծածկոցը նրանց ձեռքը թողնելով, միանգամայն մերկ՝ փախաւ նրանցից։ Ընդհանրապէս կարծւում է, որ այդ երիտասարդը հէնց ինքը Մարկոսն էր։

***

Երրորդ Աւետարանի հեղինակը Ղուկասն է, Անտիոք քաղաքացի, հեթանոս, ծագումով թերևս հրէայ։ Դա մի կրթուած անձն էր. պարապում էր բժշկութեամբ և ինչպէս աւանդութիւնն ասում է եղել է նաև հմուտ նկարիչ։ Նա քրիստոնէութիւնը ընդունեց Պօղոս առաքեալից, որին և աշակերտեցաւ։ Պօղոս առաքեալի քարոզչական ճանապարհորդութիւնների ժամանակ լսելով և ըմբռնելով այդ շնորհալի առաքեալի վարդապետութիւնը, որն իսկապէս Յիսուսի վարդապետութեան վսեմ վերարտադրութիւնն ու մեկնութիւնն էր. գրեց իւր Աւետարանը ոմն «Քաջ Թէոփիլէի» խնդրանօք, որ թերևս մեծ յարգանք էր վայելում եկեղեցու կողմից և որ «ցանկացաւ իմանալ իւր սովորած վարդապետութեան ճշմարտութիւնը»։ Ղուկասի գրած Աւետարանը Պօղոս առաքեալի կողմից հաւանութիւն գտաւ (բ. Կորնթ. ը. 18) և շատ շուտ տարածուեցաւ հեթանոսութիւնից քրիստոնեայ դարձած հաւատացեալների մէջ։

Ղուկասն իւր Աւետարանում աշխատում է լրացնել այն պակասները, որոնք բաց էին թողնուած առաջին երկու Աւետարանների մէջ. և Ղուկասի Աւետարանում այդ լրացումները (հինգ հրաշք և տասնեերկու առակ) կազմում են ամբողջ նիւթի երրորդ մասը և պատկանում են բացառապէս Ղուկասին։ Բացի սրանից նա իւր ուշադրութիւնը դարձրեց այն հանգամանքի վերայ, որ Յիսուսի կեանքի նկարագիրն իւր Աւետարանում առաջ բերէ մանրամասնօրէն և «կարգով» նախապէս ամեն բան ստուգելով «ականատեսներից և խօսքին սպասաւորողներից»։ Այդ նպատակով նա աչքի առաջ ունեցաւ առաջին երկու Աւետարանները. ստոյգ տեղեկութիւններ հաւաքեց Պետրոսից, Տեառն եղբայր Յակոբոսից, Յովհաննէս առաքեալից, Յիսուսի մայր Մարիամից և Յովհաննէս Մկրտչի բարեկամներից, որոնց հետ անձամբ ծանօթ էր, նաև հաւանականաբար ի նկատի ունեցաւ այն գրութիւնները որոնց նա ակնարկում է իւր յառաջաբանում (Ղուկ. գլ. ա. 1). և այդպիսով նրան յաջողուեցաւ իւր Աւետարանում այնպիսի նոր նիւթեր և մանրամասնութիւններ տալ, որ ամենևին չեն

յիշուած առաջին երկու Աւետարանների մէջ։ Օրինակ, Աւետարանի առաջին գլուխները ուր խօսւում է Յիսուսի ծննդից առաջ և ծննդից յետոյ տեղի ունեցած անցքերի մասին։ Ղուկան իւր Աւետարանը գրեց յունարէն լեզուով հեթանոսութիւնից քրիստոնեայ դարձած հաւատացեալների համար և այդ աչքի է ընկնում երբ կարդում ենք նրա առաջ բերած Յիսուսի ազգաբանութիւնը, որ ոչ թէ Մատթէոսի նման Աբրահամից է սկսում, որ հրէաների նախահայրն էր, այլ Ադամից, որ համայն մարդկութեան նախահայրն է համարւում։

Ղուկան իւր Աւետարանում նկարագրում է գլխաւորապէս Յիսուսի կեանքի պատմական կողմը և պատմութիւնը առաջ է բերում հանգամանօրէն։ Պօղոս առաքեալի ամենամօտ հետևողներից մինը լինելով, նա կարողացաւ իւր Աւետարանում պարզ կերպով պատկերացնել այդ Առաքեալի հայացքները։ Այս տեսակէտով, երրորդ Աւետարանն էլ առաքելական դրոշմ է կրում։

Ղուկան իւր Աւետարանը սկսում է յառաջաբանով, պատմում է Յիսուսի մարդեղութիւնը, Յովհաննէսի մկրտութիւնը, սատանայից փորձուիլը. առաքեալների և եօթանասնից ընտրութիւնը, հրաշագործութիւնները, մատնութիւնը... և այլն ըստ կարգին. և Աւետարանը վերջացնում է Յիսուսի երկինք համբառնալու պատմութեամբ։ Ղուկասի գործն է նա և «Գործք Առաքելոցը»։

***

Երրոյիշեալ երեք Աւետարանները (Մատթէոսի, Մարկոսի և Ղուկասի) թէև, ինչպէս տեսանք, իրարից չեն օրինակուած և տարբերութիւններ էլ ունեն. բայց որովհետև բովանդակութեան և նիւթի կողմից նման են իրար. այդ պատճառով կոչւում են սինոպտիկ (համատես) Աւետարաններ։ Կան այսպէս կոչուած «համաձայնութեան տախտակներ» որոնք կազմուած են զանազան ժամանակներում Սուրբ գրքի զանազան մեկնիչների ձեռքով, եթէ նայելու լինենք այդ տախտակներին, կտեսնենք ոչ միայն այդ Աւետարաններից իւրաքանչիւրի առանձնայատկութիւնը, այլ և նրանցից իւրաքանչիւրի նման և տարբեր տեղերը։

Սինոպտիկ Աւետարանների 350 համարը նման են իրար։ Մատթէոսն ունի 350 ինքնուրոյն համար, Մարկոսը՝ 68. իսկ Ղուկասը՝ 541։

Սինոպտիկների գլխաւոր նմանութիւնը նկատւում է Յիսուս Քրիստոսի այսպէս ասած զրուցատարական մասի, իսկ տարբերութիւնը պատմական մասի նկարագրութիւնների մէջ։ Մատթէոսի Աւետարանում պատմական մասը ամբողջ նիւթի քառորդ մասն է կազմում, իսկ Մարկոսի և Ղուկասի Աւետարաններում՝ կէսը։

***

Աւետարանների շարքում իւր բովանդակութեամբ և ուղղութեամբ որոյն տեղ է բռնում չորրորդ Աւետարանը, որի հեղինակը Յիսուսի սի-

բելի աշակերտ Յովհաննէսն է։ Սա Գալիլիացի ձկնորս Զեբեդեայի որդին էր, որ «Բանն Աստուծոյ» մասին իւր գրած վսեմ վարդապետութեամբ՝ արժանացաւ Աստուածաբան պատուաւոր կոչմանը։ Յիսուսի համբարձումից յետոյ Յովհաննէսը մնաց Երուսաղէմում և ապա գնաց Փոքր Ասիայի Եփեսոս քաղաքը քրիստոնէութիւն տարածելու տեղական ժողովրդի մէջ և այնտեղ էլ նա գրեց իւր Աւետարանը յունարէն լեզուով, Երուսաղէմի կործանումից յետոյ, որ տեղի ունեցաւ Յիսուսի ծննդեան 70—71 թուականին։

Քրիստոնէութեան առաջին շրջանում Եփեսոսը արևելեան քրիստոնէաների մտաւոր կեանքի կենտրոնն էր համարւում և այնտեղ շփւում էին որպէս յոյն, նոյնպէս և արևելեան մտքի ներկայացուցիչները։ Այնտեղ արդէն հրապարակ էին իջել հերետիկոսները (Կիրինթոս, դպիր Նիկողայոս և այլք) որոնք աշխատում էին աղաւաղել մաքուր քրիստոնէութիւնը և մոլորեցնել նորահաւատներին կասկածելի դարձնելով Յիսուսի Աստուածութիւնը։

Այսպիսի հանգամանքներում անհրաժեշտ էր որ նորահաստատ եկեղեցին հաւատի ուղեցոյց ունենար որպէս զի զգուշանար մոլորութիւններից։ Յանձին Յովհաննէս առաքեալի ունենալով մի մերձաւոր վկայ, «ականատես և խօսքի սպասաւոր». Եփեսոսի քրիստոնեաները և ընդհանրապէս ասիական եկեղեցու ներկայացուցիչները խնդրեցին Յովհաննէսին, որ գրէ Յիսուսի երկրաւոր կեանքն ու վարդապետութիւնը։

Երբ նրա մօտ բերին առաջին երեք Աւետարանները, նա գովեց և հաստատեց նրանց ճշմարիտ և ստոյգ լինելը. միայն գտաւ, որ շատ կարևոր բաներ բաց են թողնուած։ Ներկայացնելով Յիսուսին իբրև մարդ, անհրաժեշտ էր խօսել նաև նրա Աստուածութեան մասին, որովհետև հակառակ դէպքում կարող էր պատահել, որ ժամանակի ընթացքում մարդիկ զբաղուելով Յիսուսի անձնաւորութեամբ՝ մոլորուէին և ընդունէին Նրան այնպէս, ինչպէս յայտնուել էր նա երկրաւոր կեանքի մէջ։ Ահա այս է պատճառը, որ Յովհաննէսի Աւետարանը ոչ թէ Յիսուսի մարդկային, այլ Աստուածային կողմի նրկարագրութեամբ է սկսում. ցոյց տալով որ «սկզբիցն էր Բանը (մարմնացեալ Յիսուսը) և Բանն Աստուծու մօտ էր և Բանն Աստուած էր»։

Յովհաննէսի Աւետարանն իւր բովանդակութեամբ և նպատակով գալիս էր մի կողմից հերետիկոսների թիւր կարծիքներն ու մոլորութիւնները ջրելու և միւս կողմից բացատրելու հաւատացեալներին թէ ով և ինչ էր Աստուծու Որդին. ինչ յարաբերութիւն ունէր Աստուծու հետ, Որին նա միշտ իւր Հայր է կոչում. ինչ դեր ունէր կատարելու այս աշխարհում և վերջապէս ինչուն էր կայանում այն փրկութիւնը, որի սկզբնապատճառը Ինքն էր։

Յովհաննէսի Աւետարանը լրացումն է առաջին երեք Աւետարանների։ Այդ Աւետարանում

առաջ են բերուած այնպիսի դէպքեր, որ չեն յիշուած առաջին երեք Աւետարանում. օր. Գալիլիայի Կանա քաղաքի հարսանիքը, Նիկոդիմոսի և Սամարացի կնոջ հետ ունեցած խօսակցութիւնը, Ղազարոսի յարութիւնը, ոտնալուան և այլն... Աւետարանը վերջանում է հեղինակի վերջաբանով, ուր ասուած է որ «իւր վկայութիւնը ճշմարիտ է»։

Յովհաննէսի գրչին են պատկանում «Առաքեալների թղթերից» մի քանիսը և «Յայտնութեան» գիրքը։

Յովհաննէսի Աւետարանում շատ քիչ են այն նիւթերը, որոնց կարդում ենք սինօպտիկների մէջ. դրանք միայն 8% են կազմում, մնացեալ 92% նոր նիւթ է։

Որպէս զի աւելի պարզ լինի թէ ինչումն է կայանում Յովհաննէսի և սինօպտիկ Աւետարանների զանազանութիւնը, հարկաւոր է համեմատել նրանց ըստ բովանդակութեան և նպատակի։

Սինօպտիկները պատմում են Յիսուսի Գալիլիայում անցրած կեանքը, իսկ Յովհաննէսը խօսում է Յիսուսի Հրէաստանում ունեցած գործունէութեան մասին։ Սինօպտիկները գլխաւորապէս Յիսուսի գործած հրաշքները, խօսած առակներն ու նրա կեանքի արտաքին դէպքերն են պատմում, իսկ Յովհաննէսը դատողութիւններ է անում Յիսուսի կեանքի խորիմաստ մրքերի վերայ։

Ընդհանրապէս Յովհաննէսի Աւետարանը սի-

նօպտիկներից զանազանւում է իւր բարձր դաղափարականութեամբ։ Այս հանգամանքը Սուրբ գրքի շատ մեկնիչներին և քննադատներին առիթ է տուել ենթադրելու, որ Յովհաննէսը ոչ թէ Քրիստոսի պատմութիւնն է տալիս, այլ Նրա կեանքի այլաբանութիւնը։

* * *

Աւետարանները թէև տարբեր կէտեր ունեն, ինչպէս այդ յիշուեցաւ. բայց հակասութիւններ չունին։

Եթէ ուշադրութեամբ հետևելու լինենք կարող ենք համաձայնութիւն գտնել նոյն իսկ սինօպտիկ և Յովհաննէսի Աւետարանների մէջ։ Թէև Յովհաննէսն առհասարակ քիչ բան է պատմում Յիսուսի Գալիլիայում անցրած կեանքի մասին, բայց նա յիշում է, որ Յիսուսը բազմիցս եղել է և երկար ապրել է Գալիլիայում։ Սինօպտիկները թէև քիչ բան են ասում Յիսուսի Երուսաղէմում և Հրէաստանում անցրած կեանքի մասին. բայց պատահում են ակնարկութիւններ։ Այսպէս նրանց վկայութիւնից ենք իմանում, որ Յիսուսն այնտեղ բարեկամներ, աշակերտներ և հետևողներ է ունեցել. օրինակ վերնատան տէրը՝ ուր տեղի ունեցաւ խորհրդաւոր ընթրիքը. Յովսէփ արեմաթացին, որն իւր պարտէզի մէջ փորած գերեզմանում ամփոփեց Յիսուսի մարմինը։ Երուսաղէմի վերայ Յիսուսի կարդացած ողբը, որ գտնւում է սինօպտիկների

մէջ, ապացուցանում է՝ որ Յիսուսն երկար ժամանակ ապրել է Երուսաղէմում։ Միւս կողմից թէև սինօպտիկները Ղազարոսի յարութեան մասին լռում են, սակայն Ղուկասը ծանօթացնում է Բեթանիայում ապրող Ղազարոսի երկու քոյրերի հետ և այդ ծանօթութիւնը թէև շատ համառօտ է, բայց և միանգամայն համաձայն է Յովհաննէսի Ղազարոսի մահուան առթիւ տուած նկարագրութեան հետ։

Յովհաննէսի Աւետարանի մէջ շատ յաճախ առաջ բերուած Յիսուսի զրոյցները բաւական նման են սինօպտիկների առաջ բերածներին միայն այն զանազանութեամբ, որ սինօպտիկների առաջ բերած զրոյցները ժողովրդականացրած և պարզուած են և կազմուած դիւրըմբռնելի առակներից և պարզաբանող օրինակներից, իսկ Յովհաննէսի առաջ բերածները վսեմ, խորհրդաւոր և մեծ մասամբ դժուար հասկանալի են. և կարծես թէ այդ զրոյցները ոչ թէ հասարակ ժողովրդի համար է ասուած, այլ ունկնդիրների մի սահմանափակ շրջանի համար։

Եթէ սինօպտիկների առաջ բերած զրոյցները ժողովրդական ու դիւրըմբռնելի են, դրա փոխարէն Յովհաննէսի առաջ բերած զրոյցները իրենց վսեմութեամբ և խորհրդաւորութեամբ մեր ունեցած տեղեկութիւնները Յիսուսի Աստուածութեան և Աստուծու Որդի լինելու մասին, աւելի լիակատար են դարձնում։

Եթէ սինօպտիկները ներկայացնում են Յի-

սուսին որպէս Մարդու Որդի և Դաւթի որդի, ընդհակառակն Յովհաննէսը Յիսուսին ներկայացնում է որպէս Աստուծոյ Որդի։ Այս հանգամանքը առիթ չպէտք է տայ կարծելու, որ սինօպտիկները Յիսուսի մարդկային կողմը ներկայացնելով՝ մոռացել են Աստուածայինը և Յովհաննէսը ներկայացնելով Աստուածայինը՝ մոռացել է մարդկայինը։ Ընդհակառակն, սինօպտիկների մէջ Մարդու Որդին միևնոյն ժամանակ և Աստուծու Որդի է «որին տուած է ամենայն իշխանութիւն երկնքի և երկրի վերայ»։

Յովհաննէսի Աւետարանի մէջ Աստուծու Որդին միևնոյն ժամանակ և Մարդու Որդի է, որովհետև նա գնում է Կանայի հարսանիքը, մասնակցում է հանդէսին, բարեկամաբար խօսում է Մարթայի և Մարիամի հետ և լաց է լինում իւր բարեկամ Ղազարոսի գերեզմանի վերայ։

Այսպէս ուրեմն սինօպտիկները և Յովհաննէսը լրացնում են իրար և ամբողջութեամբ տալիս են մեզ Յիսուս Քրիստոսի կատարեալ պատկերը։

***

Հին ժամանակուան քրիստոնեայ գրողները չորս Աւետարաններն այն գետի հետ էին համեմատում, որ դուրս գալով Եդեմից, Աստուծու դրախտը ոռոգելու համար չորս մասի էր բաժանուած, որոնք այնպիսի երկրներով էին հոսում, որ լի էին թանկագին քարերով և մետաղներով։ Չորս Աւետարանների համար աւելի սո-

վորական նշանակն այն խորհրդաւոր անիւներն էին, որ տեսաւ Եզեկիել մարգարէն տեսիլքի մէջ Քոբար գետի մօտ (տես մարգ. Եզեկելի ա. 1—26 և ժ. 9—14) որոնցից իւրաքանչիւրը չորս երես ունէր։ Դրանցից մինը մարդու նման էր. միւսը՝ առիւծի. երրորդը հորթի և չորրորդը՝ արծուի։ Դրանք ժամանակի ընթացքում Աւետարանների համար խորհրդաւոր նշաններ դարձան և այնուհետև V դարուց սկսած մինչև օրս, քրիստոնէական գեղարուեստը Մատթէոսին ներկայացնում է վարդու կամ հրեշտակի հետ, որովհետև նա իւր Աւետարանի մէջ Քրիստոսին պատկերացնում է գլխաւորապէս որպէս մարդու և որպէս Մեսիա։ Մարկոսին՝ առիւծի հետ, որովհետև նա իւր Աւետարանում ցոյց է տալիս Յիսուսի ամենակարողութիւնը։ Ղուկասին՝ հորի հետ, որովհետև նա պատմում է Յիսուսի քահանայապետութեան մասին, որի պաշտօնի հետ կապուած էր հորթի զոհաբերութիւնը և վերջապէս Յովհաննէսին՝ արծուի հետ, որովհետև այդ առաքեալը կարծես արծուի նման սաւառնում է երկինք և ամպերի վերայից է խօսում Յիսուսի Աստուածութեան մասին։

*
* *

Մի քանի խօսք էլ գրքիս մասին։

Սոյն աշխատութիւնը, որի առաջին տպագրութիւնը լոյս է տեսել 1898 թուին և այժմ լոյս է տեսնում բ. տպագրութեամբ լրացրած,

բարեփոխուած և պատկերներով ու Պաղեստինի քարտէզով ճոխացրած, ինչպէս վերն էլ յիշել եմ՝ հիւսուած է չորս Աւետարաններից։ Եւ որովհետև իմ նպատակն է եղել միմիայն բնագիրը տալ. այդ պատճառով էլ ամբողջ նիւթը առաջ եմ բերել ըստ գրաբառ բնագրի՝ ամենայն հարազատութեամբ։

Գրաբառից աշխարհաբառ թարգմանելիս ըստ կարելոյն պարզ և ամենքին հասկանալի լեզու եմ գործ դրել. բայց միևնոյն ժամանակ հնար եղածին չափ պահպանել բնագրի ոճը։

Նիւթերն հիւսելիս աշխատել եմ որքան կարելի է մի ամբողջացած գործ ներկայացնել և նիւթերը դասաւորել եմ ժամանակագրական կարգով, հետևելով Սուրբ գրքի յայտնի մեկնիչների կողմից ընդունուած ժամանակագրութեանը։

Ինչպէս ընթերցողն էլ կնկատէ, գրքիս մէջ շատ յաճախ մատնանշւում են Հին-Ուխտի այն մարգարէութիւնները, որոնք կապ ունեն Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքի հետ։ Ընթերցողի հետաքրքրութեանը բաւականութիւն տալու համար գրքիս սկզբում կարգով զետեղեցի այդ և ուրիշ մի շարք մարգարէութիւնների բառացին՝ աշխարհաբար լեզուով։

Ինկատի ունենալով, որ այս գիրքը կազմուած է ոչ միայն ժողովրդի ընթերցանութեան համար, այլ և աշակերտների ձեռքը տալու իբրև կրօնի օժանդակ դասագիրք, մանաւանդ պե-

տական միջնակարգ դպրոցներում, ուր հնար չկայ աշակերտների ձեռքը գրաբար բնագիրը տալու, աւելորդ համարեցի գիրքն եղածից աւելի ծանօթութիւններով ծանրաբեռնել։ Հայր կրօնուսոյցներն իրենք կարող են մութ համարուած տեղերը բացատրել ու պարզաբանել։

Գրքիս մասին, որ գիտեմ կունենայ իւր թերութիւնները, աւելորդ եմ համարում երկար խօսել։ Գնահատութիւնը թողնում եմ ընթերցողներին և հայր կրօնուսոյցներին, որոնց նկատողութիւնները՝ շնորհակալութեամբ կընդունեմ։

Տաճատ ա. քահ. Մարաղեան.

1-ն յունուարի 1914 ամի
ԲԱԳՈՒ

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆՆԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ*)

1. Աստուած Աբրահամին ասաց.—«Երկրի բոլոր ազգերը քո զաւակով պէտք է օրհնուին. (Գիրք Ծնն. իբ. 18)։

2. Բէովրի որդի Բաղաամ մարգարէն ասաց.—«Յակովբից մէկ աստղ կծագի և Իսրայէլից մի մարդ դուրս կգայ, որ կհարուածէ Մովաբի իշխաններին». (Թուոց իդ. 15—17)։

3. Յակովբը մեռնելու ժամանակ բացականչեց.—«Թող Յուդայից իշխան չպակասի և ոչ էլ պետ՝ նրա երանքից, մինչև որ հեթանոսների ակնկալած Խաղաղարարը գայ»։ (Ծնն. խթ. 10)։

4. Յեսսէի արմատից գաւազան դուրս կըգայ և ընից ծաղիկ կբուսնի։ Նրա վերայ կհանգչի Աստուծու հոգին—իմաստութեան և հանճարի հոգին։ (Մարգ. Եսայի ժա. 1)։

5. Այն օրը Յեսսէի արմատը, որպէս իշխան հեթանոսների մէջ կը կանգնի. հեթանոսները Նրան կյուսան և Նրա հանգիստը փառաւոր կլինի։ (Եսայի ժա. 10)։

---

*) Յիշեալ և ուրիշ շատ մարգարէութիւնները, որոնք գըրուած են մօտ 810—510 թ. Քրիստոսից առաջ և սփռուած են Ս. Գրքում, ցոյց են տալիս որ նախ քան Յիսուս Քրիստոսի աշխարհ գալը, Նրա պատմութիւնն արդէն գրուած էր դարեր առաջ։

6. Տէրն ինքը կտայ ձեզ նշան.—Ահա կոյսը կյղանայ, որդի կծնի և նրա անունը Էմմանուէլ կդնեն։ (Եսայի է. 14)։

7. Եւ դու Բեթղեհէմ, տուն Եփրաթա. թէև Յուդայի հազարաւորների թւում լինելու փոքր ես, բայց քեզանից պէտք է դուրս գայ Նա, որ Իսրայէլի վերայ իշխան պէտք է լինի և նրա ելքը 'ի հնուց՝ յաւիտենական օրերից է։ (Մարգ. Միքիա ե. 2)։

8. Մանուկ ծնաւ մեզ, Որդի տրուեցաւ մեզ. Նրա ուսի վերայ է իշխանութիւնը։ Նրան կը կոչեն Սքանչելի, Խորհրդակից, Հզօր Աստուած, Իշխան, Յաւիտենականութեան Հայր։ (Եսայի թ. 6)։

9. Անապատի մէջ կանչողի ձայնը.—«Պատրաստեցէք Տիրոջ ճանապարհները և ուղղեցէք մեր Աստուծու շաւիղները։ Բոլոր ձորերը կլցուին, բոլոր լեռներն ու բլուրները կխոնարհուին. բոլոր դժուարինները կհեշտանան և խորդ ու բորդ տեղերը կհաւասարուեն։ Աստուծու փառքը կերևայ և ամեն մարմին Աստուծու փրկութիւնը կտեսնի։ (Եսայի խ. 3—5)։

10. Սիօնի աղջկան ասացէք, որ ահա գալիս է Փրկիչդ, իւր վարձքն իւր հետ է և իւր գործերը՝ իւր առաջ։ (Եսայի կբ. 11)։

11. Տերոջս հոգին իմ վրաս է, որի համար իսկ օծեց ինձ։ (Եսայի կա. 1)։

12. Տէրն ինձ ասաց.—Դու իմ Որդին ես և ես այսօր ծնայ քեզ։ (Սաղմ. բ. 7)։

13. Նա կասէ ինձ.—Դու իմ Հայրն ես—իմ փրկութիւնն ընդունող Աստուածը։ Ես նրան անդրանիկ և երկրի բոլոր թագաւորներից բարձր կդարձնեմ։ (Սաղմ. ձբ. 27—28)։

14. Մխիթարուեցէք սրտով կարճամիտներ, զօրացէք և մի վախենաք, ահաւասիկ մեր Աստուածը հատուցանում է և կհատուցանէ դատաստանը. ինքը կգայ և կփրկէ մեզ։ Այն ժամանակ կոյրերի աչքերը կբացուեն և խուլերի ականջները կլսեն։ (Եսայի լե. 4—5)։

15. Մահը յաւիտեան կջնջուի և Աստուած բոլորի երեսից արտասուքը կսրբի և երկրի երեսից ժողովրդի նախատինքը կվերացնի, որովհետև Աստուած խօսեց։ Այն օրը կասեն.—«Ահա մեր Տէր Աստուածը, որին յուսացել էինք և նա կապրեցնէ մեզ, որովհետև Սա է Տէրը և Սրան էինք սպասում. ուրեմն մեր փրկութեամբ ցնծանք և ուրախանանք»։ (Եսայի իե. 8—9)։

16. Նա իմաստութեան բոլոր ճանապարհները գտաւ և այն իւր ծառայ Յակովբին ու իւր սիրած Իսրայէլին տուեց։ Սրանից յետոյ երկրի վերայ երևեցաւ և մարդկանց մէջ շրջեցաւ։ (Մարգ. Բարուք. գ. 37—38)։

17. Մովսէսն ասաց ժողովրդին.—«Քո Տէր Աստուածը, քո եղբայրների միջից ինձ նման

մարգարէ կյարուցանէ. Նրան լսեցէք։ Ես իմ պատգամները նրա բերանը կդնեմ և ինչ որ պատուիրեցի նրան, այն կխօսի նրանց հետ։ Եւ այն մարդը, որ չի լսի ինչ որ մարգարէն կխօսի իմ անունով, Ես վրէժխնդիր կլինեմ նրան»։ (Երկ. Օր. ԺԸ. 15, 18—19)։

18. Այն օրն իմ ժողովուրդը պէտք է իմանայ իմ անունը, գիտենայ որ Ես Այն եմ, որ խօսում էի և որ ահա ես եկայ։ Ի՜նչ գեղեցիկ են լեռների վերայ նրա ոտքերը, որ խաղաղութիւն ու բարութիւն է աւետում, որ փրկութիւն է քարոզում և ասում Սիօնին, թէ քո Աստուածն է թագաւորում։ (Եսայի ԾԲ. 6—7)։

19. Ահաւասիկ, ասում է Տէրը, օրեր կը-գան և ես իսրայէլի և Յուդայի տան հետ Նոր ուխտ կը կապեմ, ոչ այն ուխտի պէս, որ նը-րանց հայրերի հետ կապեցի, երբ նրանց ձեռ-քից բռնած հանեցի Եգիպտացոց երկրից, որը թէև նրանք քանդեցին, բայց ես նրանց հետ հաշտ մնացի։ Այժմ, ասում է Տէրը. այն ուխ-տը, որ ես կապում եմ Իսրայէլի տան հետ՝ այս է.—Իմ օրէնքները նրանց մտքի մէջ կդնեմ և նրանց սրտերի վերայ կգրեմ։ Ես կլինեմ նրանց Աստուածը, իսկ նրանք՝ իմ ժողովուրդը։ (Երեմ. Լ. 31—32)։

20. Ես նրանց ուրիշ սիրտ կտամ և նրանց նոր հոգի կպարգևեմ։ Նրանց մարմնի միջից կը հանեմ քարեղէն սիրտը և մարմնեղէն սիրտ կը

դնեմ, որ հրամանիս համաձայն գնան և իրա-ւունքներս պահեն ու կատարեն. նրանք կլինեն իմ ժողովուրդը և ես՝ նրանց Աստուածը։ (Եզե-կիէլ ժա. 19—20)։

21. Սրանից յետոյ իմ հոգուց բոլոր մարմ-նի վերայ կթափեմ, այն ժամանակ ձեր տղա-ներն ու աղջիկները կմարգարէանան, ձեր ծե-րերը երազելով կերազեն և ձեր երիտասարդնե-րը տեսիլքներ կտեսնեն։ (Յովել Բ. 2)։

22. Տիրոջ հոգին իմ վրաս է, որովհետև Տէրն օծեց ինձ և ուղարկեց ինձ աղքատներին աւետարանելու, սիրտ կոտրածներին բժշկելու, գերիներին ազատութիւն քարոզելու և կոյրերին տեսողութիւն շնորհելու։ Տիրոջ ընդունելի տա-րին և մեր Աստուծու հատուցման օրը հրատա-րակելու. բոլոր սգաւորներին մխիթարելու..... (Եսայի Կա. 1—2)։

23. Ահա իմ ծառայ Յակովբը, որին օգնա-կան կլինեմ և իմ ընտրած Իսրայէլը, որին հա-ւանեց իմ անձը. իմ հոգին նրա վերայ կդնեմ և հեթանոսներին իրաւունք կպատմէ։ Նա չի ա-ղաղակի և ոչ էլ կվիճի և նրա ձայնը ոչ ոք չի լսի դուրսը։ Ջախջախուած եղէգը չի փշրի և առկայծեալ պատրոյգը չի հանգցնի, այլ իրա-ւունքը ճշմարտութեան կհանէ. կզօրանայ և չի յաղթուի մինչև որ երկրի վերայ դատաստան հաստատէ. և հեթանոսները նրա անունը կյու-սան։ (Եսայի Խբ. 1—4)։

24. Իմ ոչխարներին ես պէտք է արածացնեմ և նրանց ես պէտք է հանգիստ տամ, որ իմանան թէ ես եմ Տէրը՝ այսպէս է ասում Տէր Աստուածը։ Կորածը պէտք է որոնեմ, մոլորուածը՝ դարձնեմ, վիրաւորուածը՝ փաթաթեմ, հիւանդը՝ զօրացնեմ և գերն ու հզօրը պահեմ (Երր. կորցնեմ)։ (Եզեկիէլ լդ. 15—16)։

25. Ուրախութիւնից ցնծա, Սիօնի աղջիկ. քարոզիր ով Երուսաղէմի աղջիկ, ահա քո թագաւորը գալիս է քեզ մօտ արդար, հեզ և փրկիչ. նստած իշի և նոր աւանակի վերայ։ (Զաք. թ. 9)։

26. Այս այն օրն է, որ Աստուած ստեղծեց. եկէք ցնծանք և ուրախանանք այդ օրում։ Ո՛վ Տէր փրկիր, ով Տէր առաջնորդիր. Օ՛րհնեալ է նա, որ գալիս է Տիրոջ անունով։ (Սաղմ. ճժէ. 24)։

27. Նա աւելի անարգուած ու ստորացուած էր քան մարդկանց բոլոր որդիները, նա բոլոր վշտերն ու ցաւերը համբերութեամբ տարաւ և մենք երես դարձնելով նրանից, անարգեցինք նրան և ոչինչ համարեցինք։ (Եսայի ծգ. 3)։

28. Դու ես Աստուածը և Իսրայէլի փրկիչ Աստուածը և մենք չգիտէինք։ (Եսայի խե. 15)։

29. Եղբայրներիս համար օտար և մօրս որդոց համար՝ հիւր եղայ։ Որովհետև Քո նախանձն ինձ կերաւ և քեզ նախատողների նախատինքներն ինձ վերայ թափուեցան։ (Սաղմ. կը. 9—10)։

30. Արդարին դարանակալ լինենք, որովհետև նա մեզ համար անտանելի է. նա հակառակում է մեր գործերին, նախատում է մեզ օրէնքի դէմ գործած մեղքերի համար և մեր երեսովն է տալիս մեր մանկութեան մեղքերը։ Նա իրեն յայտարարում է, որպէս Աստուածագէտ և իրեն Աստուծու Որդի է անուանում. նա մեր առաջ, մեր մեղքերը մերկացնողն է։ Ծանր է մեզ տեսնել նրան, որովհետև նրա կեանքն ուրիշների կեանքի նման չէ և նրա ճանապարհները էլ տարբեր են։ Նա մեզ դարշելի է համարում և խորշում է մեր ճանապարհներից, ինչպէս պղծութիւնից. արդարների մահին երանի է տալիս և Աստուծուն հպարտութեամբ իւր Հայր է կոչում։ Այժմ տեսնենք, ճշմարիտ են արդեօք Նրա խօսքերը և փորձենք թէ ինչպէս կլինի Նրա վախճանը։ Եթէ իսկապէս Նա Աստուծու Որդի է, ապա ուրեմն Աստուած կպաշտպանէ Նրան իւր թշնամիների ձեռքից։ Թշնամանենք Նրան ու տանջենք, որպէս զի նրա հեզութեան և անոխակալութեան չափն իմանանք։ Խայտառակ մահով տանջենք նրան, որովհետև ինչպէս ինքն է ասում, իբր թէ խնամուելու է ինքը։ Այսպէս էին մտածում, բայց խաբուեցան, որովհետև չարութիւնից կուրացել էին և չէին իմանում Աստուծու խորհուրդները։ (Գիրք իմաստ. բ. 12—21)։

31. Երկրի թագաւորները վեր կը կենան և

իշխանները միասին կժողովուեն Տիրոջ և Նրա Օծեալի դէմ։ (Սաղմ. բ. 2)։

32. Մինչև անգամ ինձ հետ հաշտ եղող մարդը, որի վերայ յուսացել էի և որ իմ հացն էր ուտում, նա դաւաճանեց ինձ։ (Սաղմ. խ. 10)։

33. Թշնամիներս իմ վատն են ուզում ասելով, թէ երբ կլինի որ սա մեռնի և անունը ջնջուի։ (Սաղմ. խ. 6)։

34. Իմ բոլոր թշնամիները իմ մասին են փսփսում, իմ մասին չար են մտածում և անօրէն գործեր դնում ինձ վերայ (Սաղմ. խ. 8-9)։

35. Ինձ տանջողներն քո առաջն են. նախատինքներին և թշուառութիւններին սիրտս համբերեց։ Աչքս մի վշտակցի էր սպասում, բայց չկար. մի մխիթարողի էր որոնում՝ բայց չգտնուեցաւ։ Կերակրի փոխարէն ինձ լեղի տուին, իսկ ծարաւ ժամանակս քացախ խմեցրին։ (Սաղմ. կը. 21—22)։

36. Ես շփոթուեցի.... թշնամու ձայնից. մահուան երկիւղն ինձ պատեց. ահ ու դող ընկաւ ինձ վերայ և խաւարն ինձ ծածկեց։ (Սաղմ. ծդ. 4—5)։

37. Իմ թշնամիները ինձ համար են խօսում և անձս պաշարողները խորհուրդ են անում միասին՝ ասելով—«Աստուած ձգեց նրան, բռնեցէք ու հալածեցէք Նրան, որովհետև Նրան այլևս ազատող չկայ։ (Սաղմ. հ. 10—11)։

38. Եւ վարձքիս համար երեսուն արծաթ կշռեցին. և Տէրն ասաց ինձ.—«Ձգիր այն գանձատանը»։ Դա բարձր գինն էր, որ ինձ համար կարեցին։ (Զաքար. ժա. 12—13. Յուն.)։

39. Զարթիր ով սուր, իմ հովուի և նրա ընկեր մարդու վերայ. ասում է Ամենակալ Տէրը.—կխփեմ հովուին և ոչխարները կցրուին։ (Զաք. ժգ. 7)։

40. Իմ թշնամիների ձեռքը մի մատնիր ինձ. իմ դէմ սուտ վկաներ վերկացան և սրտեցին ինձ....(Սաղմ. իգ. 12)։

41. Նա չարչարուեցաւ, բայց բերանը չբացեց։ Ոչխարի նման նրան մորթելու տարան. և ինչպէս գառն իւր մորթողի առաջ կանգնած է անձայն, այնպէս էլ նա իւր բերանը չբացեց։ (Եսայի ծգ. 7)։

42. Հարուածողներին թիկունքս դարձրի և ապտակողներին՝ ծնոտս. հայհոյողներից և երեսիս թքողներից երեսս չդարձրի։ (Եսայի ծ. 6)։

43. Մորթուելու տարուող անմեղ գառան պէս, ես չգիտէի թէ իմ մասին խորհուրդ են անում և ասում.—«Եկէք նրա կերակուրի մէջ (թունաւոր) փայտ ձգենք և կենդանիների երկրից բնաջինջ անենք, որ նրա անունն այլ ևս չյիշուի։ (Երեմիա ժա. 19)։

44. Շուրջս շներ հաւաքուեցան և չար մարդկանց բազմութիւնը շրջապատեց ինձ։ Ձեռ-

քերս ու ոտքերս ծակեցին, այնպէս որ ոսկրներս կարելի էր համարել (մարմինը ձգելուց). նրանք նայում և հանդիսատես էին։ Հանդերձներս իրենց մէջ բաժանեցին և պատմուճանիս վերայ վիճակ ձգեցին։ (Սաղմ. իա. 17, 19)։

45. Ես կասեմ նրան.—«Ձեռքերիդ մէջ այդ ինչ վէրքեր են»։ Նա կասէ ինձ.—«Այդ վէրքերը իմ սիրելու տանն ստացայ»։ (Զաքարիա ժգ. 6)։

46. Նա մեր մեղքերի համար վիրաւորուեցաւ և մեր անօրէնութիւնների համար պատժուեցաւ, մեր խաղաղութեան պատիժը նրա վերայ եղաւ և Նրա վէրքերով բժշկուեցանք։ (Եսայի ծգ. 5)։

47. Այդ պատճառով մեծերի հետ նրան բաժին կտամ և հզօրների հետ աւարից բաժին կըստանայ, որովհետև նա իւր անձը մահուան մատնեց և անօրէնների շարքը դասուեցաւ։ (Եսայի ծգ. 12)։

48. Մարմինս յուսով կհանգստանայ, որովհետև անձս չես թողնի դժոխքումը (կամ գերեզմանի մէջ) և քո սուրբին թոյլ չես տայ, որ ապականութիւն տեսնի։ (Սաղմ. ժե. 9—10)։

49. Կեանքս գրի մէջ խեղդեցին և ինձ վերայ քար դրին։ (Ողբ Երեմիայի գ. 53)։

50. Մահ, ո՞ւր է քո յաղթութիւնը. դժոխք, ո՞ւր է քո խայթոցը։ (Ովսիա ժգ. 14)։

51. Ինդրիր ինձանից և հեթանոսներին քեզ ժառանգութիւն կտամ և երկրի ծայրերի վերայ՝ իշխանութիւն։ (Սաղմ. բ. 8)։

52. Նստիր աջ կողմս, մինչև որ թշնամիներիդ ոտքիդ պատուանդանը անեմ։ (Սաղմ. ճթ. 1)։

53. Այն օրը մարդ իւր Արարչի վերայ կդնէ իւր յոյսը և նրա աչքերը Իսրայէլի Սուրբին կնայեն։ Այլ ևս ոչ իրենց մեհեանների վերայ կդնեն իրենց յոյսը և ոչ էլ իրենց մատների գործերի վերայ։ (Եսայի ժէ. 7—8)։

54. Բոլոր մարդիկ կխոնարհին և մարդկանց հպարտութիւնը կընկնի. և այն օրը ամենաբարձրը միայն Տէր Աստուածը կլինի։ Ձեռագործները (կուռքերը) բոլորովին կոչնչանան....և մարդը մի կողմ կձգէ այն արծաթեղէն ու ոսկեղէն կուռքերը, որոնց ինքը շինեց՝ նրանց երկրպագելու համար։ (Եսայի բ. 17, 18—20)։

55. Դաւթի տան և Երուսաղէմի բնակիչների համար այն օրը բացուած աղբիւր պէտք է լինի, որպէս զի նրանց մեղքերն ու աղտեղութիւնները լուացուին և այն օրը, ասում է Տէրը, ես այս երկրից կուռքերի անունները կջնջեմ, որ մէկ էլ չյիշուին։ (Զաքար. ժգ. 1—2)։

56. Լսեցէք ինձ կղզիք և ականջ դրէք հեթանոսներ, Տէրն ինձ արգանդից կանչեց և անունս մօր որովայնից յայտնեց։ Եւ այժմ, մօր

որովայնից ինձ ծառայ ստեղծող Տէրն ասում է, որ ես Յակովբին նրան դարձնեմ և Իսրայէլին Նրա մօտ ժողովեմ։ Ես կժողովեմ և Տիրոջս առաջ կփառաւորուիմ. և իմ Աստուածը իմ զօրութիւնը կլինի։

Տէրն ասաց ինձ.—Յակովբի ազգը հաստատելու և ցրուած Իսրայէլացիներին վերադարձնելու համար, իմ ծառան լինելդ քիչ է, ահա ես քեզ հեթանոսների լոյսը կդարձնեմ, որպէս զի իմ փրկութիւնը մինչև երկրի ծայրերը տարածուի։

Աչքերդ բարձրացրու, նայիր շուրջդ..... և տես, բոլոր ազգերը ժողովւում և քեզ մօտ են գալիս։ (Եսայի խթ. 1, 5—6, 18)։

57. Տունս թողի և ժառանգութիւնս ձգեցի. սրտիս սիրածին իւր թշնամիների ձեռքը տուի։ Իմ ժառանգութիւնը անապատի առիւծի պէս եղաւ. նա իւր ձայնն ինձ վերայ բարձրացրեց, դրա համար էլ ատեցի նրան։ (Երեմ. ժբ. 7—8)։

58. Այժմ ես նրա հոմանիների (սիրեկանների) առաջ կբանամ նրա պղծութիւնները և ոչ ոք չէ կարող նրան իմ ձեռքից խլել։ Նրա ուրախութիւններն ու տօները, նրա ամսագլուխներն ու շաբաթները և նրա բոլոր հանդէսները պէտք է խափանեմ։ (Ովսիայ բ. 10)։

59. Եթէ դուք և ձեր որդիք ինձանից կհեռանաք.... այն ժամանակ Իսրայելին կջնջեմ այն երկրի երեսից, որ տուի նրանց։ Եւ այդ տունը

(տաճարը), որ սրբեցի իմ անունով, իմ երեսից կձգեմ և Իսրայէլը ազգերի առաջ ծաղր ու ծանակ կդառնայ։ Այս տունը պէտք է աւերուի և դրա մօտից անցնողը պէտք է զարմանայ և սուլելով ասէ.—«Տէրն ինչո՞ւ համար այս երկրի ու այս տան հետ այսպէս վարուեցաւ»։ (բ. Թագ. թ. 6—8)։

60. Գիշերուան տեսիլքներում տեսնում էի, որ ահա երկնից ամպերով Մարդու Որդու նման մինը գալիս էր. և մինչև Հինաւուրցն եկաւ և նրան մօտեցրին նրա առաջ։ Եւ նրան իշխանութիւն, փառք և թագաւորութիւն տրուեցաւ, որ բոլոր ժողովուրդները, ազգերն ու ազգինք նրան ծառայեն։ Նրա իշխանութիւնը յաւիտենական է ու անանցանելի և նրա թագաւորութիւնը՝ անջնջելի։ Դանիէլ. է. 13—14)։

ՉՈՐՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉՆԵՐ.



I.
ՅԻՍՈՒՍԻ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԿԱՊՈՒՑՈՒԱԾ ՊԻՊՔԵՐ

1.

ԴՈՒԿԱՍ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ ՅԱՌԱՋԱԲԱՆԸ

Ղուկ. ա. 1-4 Որովհետև արդէն շատերն են ձեռնարկել մեր մէջ հաստատուած յայտնի եղելութիւնների պատմութիւնը կազմելու, ինչպէս որ ըսկզբից ականատեսներն ու Բանին սպասաւորողներն աւանդեցին մեզ. ես էլ, որ սկզբից ամեն բանի ուշի ուշով հետևել էի, յարմար դատեցի կարգով գրել քեզ, քաջդ Թէոփիլէ, որպէս զի սովորածդ վարդապետութեան ճշմարտութիւնն իմանաս։

2.

ԶԱՔԱՐԻԱՅԻ ՏԵՍԻԼՔԸ ՏԱՃԱՐՈՒՄ

Ղուկ. ա. 5-25 Հերովդէսի թագաւորութեան ժամանակ, Հրէաստանում Աբիայի դասակարգութիւնից[1]), Զա-

[1]) Աբիայի դասակարգութիւն. տես. ա. Մնաց. իդ. 10-19, Նէեմ. ժբ. 4-18.

քարիա անունով մի քահանայ էր ապրում իւր Եղիսաբէթ[1]) կնոջ հետ, որ Ահարոնի ցեղից էր։

Երկուսն էլ Աստուծու առաջ արդար էին և Տիրոջ բոլոր պատուիրաններն ու կանոններն անբասութեամբ էին պահում։ Նրանք որդի չունէին, որովհետև Եղիսաբէթն ամուլ էր և երկուսն էլ արդէն ծերացել էին։

Մի անգամ, երբ Զաքարիան իւր հերթին քահանայական պաշտօն էր կատարում Աստուծու առաջ, Տիրոջ տաճարը մտնելու և խնկարկութիւն անելու համար ձգուած վիճակը, ինչպէս այդ սովորաբար տեղի էր ունենում քահանայից մէջ՝ Զաքարիային ընկաւ։

Խնկարկութեան ժամանակ ժողովրդի ամբողջ բազմութիւնը դուրսն աղօթք էր անում։

Տիրոջ հրեշտակն երևեցաւ Զաքարիային խնկի սեղանի աջ կողմը կանգնած։ Երբ Զաքարիան տեսաւ, շփոթուեցաւ և վախեցաւ։ Տիրոջ հրեշտակն ասաց.—«Մի՛ վախենար Զաքարիա, որովհետև աղօթքդ լսուեցաւ։ Քո կին Եղիսաբէթը որդի կծնի և նրա անունը Յովհաննէս կդնես։ Նա քեզ ուրախութիւն և ցնծութիւն կլինի և նրա ծննդեան վերայ շատերը կուրախանան։ Նա Աստուծու առաջ մեծ կլինի, գինի և օղի չի խմի և դեռ մօր որովայնում Սուրբ Հոգով կլցուի։

[1]) Աւանդութիւնն ասում է, որ Եղիսաբէթը Մատթան քահանայի թոռն էր։ Այս քահանան երեք աղջիկ ունէր. Աննա, Սովիւէ և Մարիամ։ Աննայի աղջիկն էր Յիսուսի մայր Մարիամը. Սովիւէի աղջիկն էր Զաքարիայի կին Եղիսաբէթը և Մարիամի աղջիկն էր Յովհաննէս և Յակոբոս Առաքեալների մայր Սողոմէն։

Իսրայէլի որդիներից շատերին դէպի իրենց Տէր Աստուածը կդարձնէ։ Ինքը նրա առջևից Եղիայի հոգով և զօրութեամբ կգայ, որ հայրերի սիրտը դէպի որդիքը դարձնէ և անհնազանդներին՝ դէպի արդարների իմաստութիւնը, որ Տիրոջը բարեկարգ ժողովուրդ ներկայացնէ»։

Զաքարիան հրեշտակին ասաց.—«Ի՞նչով իմանամ այդ, որովհետև ես էլ ու կինս էլ արդէն ծերացել ենք»։

Հրեշտակը պատասխանեց.—«Ես Գաբրիէլն եմ, որ կամ Աստուծու առաջ, ես ուղարկուեցայ քեզ հետ խօսելու և այս բանի աւետիսը տալու։ Բայց որովհետև չհաւատացիր իմ խօսքերին, որ ժամանակին պէտք է կատարուին, կհամրանաս և չես կարողանայ խօսել մինչև այն օրը՝ երբ այդ կը կատարուի»։

Ժողովուրդը սպասում էր Զաքարիային և զարմանում էր նրա տաճարում ուշանալուն վերայ։ Երբ Զաքարիան դուրս եկաւ, այլ ևս չէր կարողանում նրանց հետ խօսել։ Նրանք իմացան որ տաճարում տեսիլք է տեսել։

Նա պապանձուել էր և նրանց հետ նշաններով էր խօսում։

Երբ Զաքարիան հերթապահութիւնը վերջացրեց, իւր տուն գնաց։

Նրա կին Եղիսաբէթը յղացաւ և այդ հանգամանքը ծածկում էր ամենքից և ինքն իրեն ասում.—«Այս հասակումս Տէրն ինձ խղճաց և

ազատեց ինձ անկորեան նախատինքից»։[1])

3.

Ս. ՄԱՐԻԱՄԻ ԱՐԵՏՈՒՄԸ

Ղուկ. ա. 26-38 Վեցերորդ ամսին, Աստուած Գաբրիէլ հրեշտակին ուղարկեց Գալիլիայի Նազարէթ քաղաքը Մարիամ[2]) անունով մի կոյսի մօտ, որ նշանուած էր Յովսէփ անունով մի մարդու հետ, որ Դաւթի ցեղից էր։

Հրեշտակը գալով Մարիամի մօտ՝ ասաց.— «Ուրախացիր, բերկրեալդ,[3]) Տէրը քեզ հետ է»։

Մարիամն այս խօսքի վերայ շփոթուեցաւ և մտածում էր թէ ինչ ողջոյն է այդ։

Հրեշտակն ասաց նրան.—«Մի վախենար Մարիամ, որովհետև Աստուծու առաջ շնորհ գըտար. ահա կյղանաս և որդի կծնես և նրա անունը Յիսուս կդնես։ Նա մեծ կլինի և Բարձրեալի որդի կը կոչուի։ Տէր Աստուածը կտայ նրան իւր հօր Դաւթի աթոռը, յաւիտեան կթագաւորէ Յակովբի տան վերայ և նրա թագաւորութիւնը վերջ չի ունենայ»։[1])

Մարիամը հրեշտակին ասաց.—«Այդ ինչպէս կարող է լինել, քանի որ ես մարդ չունիմ»։

Հրեշտակը նրան պատասխանեց.—«Սուրբ Հոգին կիջնի քեզ վերայ և Բարձրեալի զօրութիւնը հովանի կլինի քեզ, ուստի և քեզանից ծնուածը Սուրբ կլինի և Աստուծու Որդի կը կոչուի։ Ահա քո ազգական Եղիսաբէթն էլ, որ ամուլ էր համարւում, յղի է իւր ծերութեան հասակում և այժմ նրա վեցերորդ ամիսն է։ Աստուծու համար ոչ մի անկարելի բան չկայ»։ Մարիամն ասաց.—«Ես Տիրոջ աղախինն եմ, թող քո ասածի պէս լինի»։

Եւ հրեշտակն հեռացաւ նրանից։

4.

Ս. ՄԱՐԻԱՄԻ ԱՑՑԵԼՈՒԹԻՒՆՆ ԵՂԻՍԱԲԷԹԻՆ

Ղուկ. ա. 39-56 Երբ Մարիամը հրեշտակից լսեց, որ իւր ազգական Եղիսաբէթը յղի է, վերկացաւ ու շտապով գնաց լեռնակողմը Յուդայի քաղաքը (Քերբոն) և մտնելով Զաքարիայի տունը, ողջունեց Եղիսաբէթին։

---

[1]) Գիրք Ծննդոց ժդ. 2, լ. 2-8, Ա. Թագաւորաց ա. 2-20.

[2]) Մարիամը, համաձայն բոլոր եկեղեցիների կողմից ընդունուած աւանդութեան, Դաւթի ցեղից Յովակիմ անունով մի արդար և բարեպաշտ մարդու աղջիկն էր։ Յովակիմը ամուսնացած էր Մատթան քահանայի Աննա անունով աղջկայ հետ, որից մինչև իւր ամուսնութեան յիսներորդ տարին՝ զաւակ չունեցաւ, որ մեծ վիշտ էր պատճառում ամուսիններին։ Աստուծու անքննելի խորհրդով, ամուսինները իրենց ծերութեան հասակում մի աղջիկ ունեցան, որին երբ երեք տարեկան դարձաւ, իրենց ուխտի համաձայն՝ տաճարին ընծայեցին։ Մարիամը մինչև տասն և երկու տարեկան դառնալը տաճարում մնաց և ապա վերադարձաւ ծնողների մօտ։ Այնուհետև նշանուեցաւ Յովսէփ անունով մի այրի մարդու հետ, որ նոյնպէս Դաւթի ցեղից էր։ Մարիամի ծնողների մահից յետոյ, Յովսէփն իւր տուն տարաւ Մարիամին և բնակուեցին Գալիլիայի Նազարէթ քաղաքում, ուր ծերունի Յովսէփը վաղուց իւր բնակութիւնն էր հաստատել և պարապում էր հիւանութեամբ։

[3]) Բերկրեալդ—նշ. շնորհալի, երջանիկ։

[1]) Տես 60-րդ Մարգ.

Երբ Եղիսաբէթը Մարիամի ողջոյնը լսեց, մանուկն խկոյն նրա որովայնի մէջ խաղաց։ Եղիսաբէթը Սուրբ Հոգով լցուեցաւ, բարձրաձայն աղաղակեց ու ասաց.—«Օրհնուած ես դու կանանց մէջ և օրհնուած է որովայնիդ պտուղը։ Եւ ինչպէս պատահեց, որ Տիրոջս մայրն ինձ մօտ եկաւ։ Որովհետև երբ ողջոյնիդ ձայնը ականջիս հասաւ, մանուկս որովայնիս մէջ ցնծալով խաղաց։ Եւ երանի՜ հաւատացողին, որովհետև պէտք է կատարուին այն ամենը, որ Տիրոջ կողմից նրան ասուեցաւ»։

Մարիամն ասաց.—«Անձս Տիրոջս կփառաւորէ և հոգիս ուրախացաւ Աստուծով—իմ Փրկչով, որ նայեց իւր աղախնի խոնարհութեանը։ Այսուհետև բոլոր ազգերն ինձ երանի կտան։ Հզօրն ինձ շատ մեծացրեց և Նրա անունը սուրբ է։ Նրա ողորմութիւնը ազգէ ազգ իրենից վախեցողների վերայ է։ Նա ցոյց տուեց իւր բազկի զօրութիւնը, ցրուեց հպարտներին իրենց սրտի մտածմունքներով, հզօրներին աթոռներից իջեցրեց և խոնարհներին բարձրացրեց։ Քաղցածներին բարութեամբ լցրեց, իսկ հարուստներին ունայն արձակեց։ Պաշտպանեց իւր ծառայ Իսրայէլին իւր ողորմութիւնն յիշելով, ինչպէս խօսեց մեր հայրերի—Աբրահամի և նրա զաւակների հետ յաւիտեան»։[1])

[1]) Մարիամի յիշեալ օրհնաբանութիւնը շատ նման է Սամուէլի մայր Աննայի ասած օրհնաբանութեանը. (Ա. Թագ. բ. 1-10) այս պարագան ցոյց է տալիս, որ Մարիամը հմուտ էր Ս. Գրքին, որ անկասկած ձեռք էր բերել տաճարում ծառայած ժամանակ։

Մարիամն երեք ամսաչափ մնաց Եղիսաբէթի մօտ և ապա վերադարձաւ իւր տունն։

5.

ՅՈՎՍԷՓԻ ՏԵՍԻԼՔԸ

Մատթ. ա. 18-25 Յիսուս Քրիստոսի ծնունդն այսպէս էր։ Նրա մայր Մարիամը նշանուած լինելով Յովսէփի հետ, դեռ իրար հետ չկենակցած, երևեցաւ որ արդէն յղացած է Սուրբ Հոգուց։

Յովսէփը որ մի արդար մարդ էր, չկամեցաւ Մարիամին խայտառակել. ուստի մտածեց ծածուկ արձակել նրան։ Նա դեռ այս մտածմունքի մէջ էր, որ Տիրոջ հրեշտակն երևեցաւ նրան տեսիլքում և ասաց.—«Յովսէփ, Դաւթի որդի, մի վախենար քո կին Մարիամին քեզ մօտ վերցնելու, որովհետև նրա մէջ յղացածը՝ Սուրբ Հոգուցն է։ Նա որդի կծնի և անունը Յիսուս կդնես, որովհետև նա կազատէ ժողովրդին մեղքերից»։

Եւ այս ամենն եղաւ, որ Եսայիա մարգարէի միջոցով Տիրոջ ասածը կատարուի.—«Ահա կոյսը կյղանայ, որդի կծնի և անունը Էմմանուէլ կդնեն, որ նշանակում է Աստուած մեզ հետ է»։[1])

Յովսէփը քնից զարթելով՝ կատարեց Տիրոջ հրեշտակի հրամանը և իւր կին Մարիամին իւր

[1]) Տես 6-րդ մարգ.

մօտն առաւ։ Եւ չգիտէր նրան՝ մինչև իր անդրանիկ որդուն ծնաւ և նրա անունը Յիսուս դրեց։[1])

6.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ԾՆՆՈՒՆԴԸ ԵՒ ՆՐԱ ՊԱՇՏՕՆԸ

Ղուկ. ա. 57-80 Եղիսաբէթի ծնելու ժամանակն հասաւ և մի որդի ծնաւ։ Երբ նրա հարևաններն ու ազգականներն իմացան, որ Տէրը մեծ ողորմութիւն է արել նրան, սկսեցին նրա հետ միասին ուրախանալ։

Ութերորդ օրը մանկանը թլպատելու եկան և կամեցան հօր անունով Զաքարիա կոչել. բայց նրա մայրն ասաց, որ մանուկը պէտք է Յովհաննէս կոչուի։ Նրան ասացին, որ իւր ազգականների մէջ Յովհաննէս անունով ոչ ոք չկայ և հօրն ակնարկեցին, թէ ինչ կը կամենայ դնել։

Զաքարիան տախտակ ուզեց և վրան գրեց. — «Դրա անունը Յովհաննէս է»։ Ամենքն էլ զարմացան։

Շուտով բացուեցաւ նրա լեզուն և սկսեց խօսել և օրհնել Աստուծուն։

Շրջակայքում բնակուողներն և առհասարակ բոլորն էլ, որոնք լսեցին այդ՝ վախեցան և Հրէաստանի լեռնային մասում այդ բանն էր պատմւում։

Լսողներն ասում էին. — «Ի՞նչ պիտի լինի արդեօք այս մանուկը»։ Եւ Տիրոջ ձեռքը նրա վերայ էր։

Նրա հայր Զաքարիան Սուրբ Հոգով լցուած՝ մարգարէացաւ և ասաց. — «Օրհնեալ լինի Իսրայէլի Տէր Աստուածը, որ այցելեց մեզ և փրկեց իւր ժողովրդին։ Նա իւր ծառայ Դաւթի տնից մեզ համար փրկութեան եղջիւր[1]) հանեց (ինչպէս խօսել էր սուրբերի բերանով, որոնք յաւիտենից Նրա մարգարէներն էին) փրկութիւն մեր թշնամիներից և մեզ ատողների ձեռքից, մեր հայրերին ողորմութիւն անելու և սուրբ ուխտն յիշելու։ Աբրահամին արած երդումը[2]) տալու մեզ, որպէս զի մեր թշնամիների ձեռքից ազատուելով՝ անվերկիւղ պաշտենք Նրան սրբութեամբ և արդարութեամբ մեր կեանքի բոլոր օրերում։ Եւ դու մանուկ, Բարձրեալի մարգարէ կը կոչուիս, որովհետև Տիրոջ առջևից պէտք է գնաս Նրա ճանապարհները պատրաստելու և Նրա ժողովրդին հասկացնելու փրկութիւնը՝ իրենց մեղքերի թողութեամբ և մեր Աստուծու գթած

---

[1]) Ինչպէս Հայոց եկեղեցին, նոյնպէս էլ այլ քրիստոնեայ եկեղեցիները դաւանում են, որ Յիսուս Քրիստոսը ծնուել է կոյսից, և որ ս. Մարիամը, Յիսուսին ծնելուց յետոյ էլ միշտ կոյս մնաց. թէ և նա նշանուած էր Յովսէփի հետ և Յովսէփը նրա ամուսինն էր ճանաչւում։

[1]) Եղջիւրը անասունի մեկ զէնքն ու ոյժն է, որ գործ է դնում որ և է վտանգի ժամանակ։ Սուրբ գրքի մէջ եղջիւր բառը գործ է դրուած ոյժ և զօրութիւն բառերի տեղ։ Յիսուս Քրիստոսը փրկութեան եղջիւր էր, այսինքն մի ահեղ զօրութիւն, որ եկաւ մեղքի մէջ թաթախուած մարդկային ազգը փրկելու։

[2]) Տես 1-5 Մարգարէութիւնները։

ողորմութեամբ, որով ծագող Արեգակը (Յիսուս Քրիստոսը) վերեւից այցելեց մեզ՝ խաւարի և ստուերի մէջ նստողներին լուսաւորելու և մեր ոտքերը դէպի խաղաղութեան ճանապարհն ուղղելու»։

Մանուկն աճում և զօրանում էր հոգով և մինչև Իսրայէլին երեւալու օրը՝ անապատումն էր։

7.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Ա.

(Ըստ Մատթէոսի)

Մատթ. ա. 1-17 Դաւթի որդի, Աբրահամի որդի Յիսուս Քրիստոսի ծննդեան գիրքը։

Աբրահամը ծնաւ Իսահակին. Իսահակը՝ Յակովբին. Յակովբը ծնաւ Յուդային և նրա եղբայրներին։

Յուդան ծնաւ Փարէսին և Թամարա կնոջից՝ Զարային, Փարէսը ծնաւ Եսրոնին. Եսրոնը՝ Արամին.

Արամը ծնաւ՝ Ամինադաբին. Ամինադաբը՝ Նաասոնին. Նաասոնը՝ Սաղմոնին։

Սաղմոնը Ռախաբ կնոջից ծնաւ Բոոսին. Բոոսը Հռութ կնոջից ծնաւ Ովբէթին. Ովբէթը՝ Յեսսէին. Յեսսէն՝ Դաւթի թագաւորին։

Դաւթի թագաւորը Ուրիա կնոջից ծնաւ Սողոմոնին. Սողոմոնը՝ Ռոբովամին. Ռոբովամը՝ Աբիային. Աբիան՝ Ասային։

Ասան ծնաւ Յովսափատին. Յովսափատը՝ Յովրամին. Յովրամը՝ Ողիային։

Ողիան ծնաւ Յովաթամին. Յովաթամը՝ Աքազին. Աքազը՝ Եզեկիային։

Եզեկիան ծնաւ Մանասէին. Մանասէն՝ Ամոնին. Ամոնը՝ Յովսիային։

Բաբելոնի գերութեան ժամանակ Յովսիան ծնաւ Յեքոնիային և նրա եղբայրներին։

Բաբելոն գերութեան գնալուց յետոյ Յեքոնիան ծնաւ Սաղաթիէլին. Սաղաթիէլը՝ Զօրաբաբէլին։

Զօրաբաբէլը ծնաւ Աբիութին. Աբիութը՝ Եղիակիմին. Եղիակիմը՝ Ազովրին։

Ազովր ծնաւ Սադովկին. Սադովկը՝ Աքինին. Աքինը՝ Եղիուդին։

Եղիուդը ծնաւ Եղիազարին. Եղիազարը՝ Մատթանին. Մատթանը՝ Յակովբին։

Յակովբը ծնաւ Յովսէփին—Մարիամի նշանածին, որից Յիսուսը ծնուեց, որ կոչուեցաւ Քրիստոս։

Այսպիսով Աբրահամից մինչև Դաւիթ բոլոր ազգերն են տասն և չորս. Դաւթից մինչև Բաբելոնի գերութիւնը՝ նոյնպէս տասն և չորս. և Բաբելոնի գերութիւնից մինչև Քրիստոս՝ դարձեալ տասն և չորս։

Բ.

(Ըստ Ղուկասի)

Ղուկ. գ. 23-38 Յիսուսը, ինչպէս կարծւում էր Յովսէփի որդին էր, (ասս Յակովբի[1]) սա Հեղիի. սա էլ Մատաթի։

Մատաթը Ղեւիի որդին էր. Ղեւին Մեղքիինը. սա Յաննէի, սա էլ Յովսէփի։

Յովսէփը Մատաթիայի որդին էր, Մատաթիան՝ Ամոսի, սա Նաւումի, սա Եսղիի, սա էլ Նանգէի։

Նանգէն Մաաթի որդին էր. Մաաթը՝ Մատաթիայի, սա Սեմէի, սա Յովսէփի, սա էլ Յուդայի։

Յուդան Յոհանի որդին էր, սա Ռէսայի, սա Զօրաբաբէլի, սա Սաղաթիէլի. սա էլ Ներիի։

---

[1]) Յակովբ անունը յունական և լատինական թարգմանութեանց մէջ չկայ։ Ամստերդամում 1698 թ. տպուած Աւետարանում «որ Յակովբայս» անունը նոտրագիր է և փակագծի մէջ է առնուած։ Ես էլ այդ անունը փակագծի մէջ առայ. տես սոյն գլխի ծանօթութիւնը։

Ներին Մեղքիի որդին էր, սա Ադդայի, սա Կոսամի, սա Եղմոդդայի, սա էլ Էրիի։

Էրին Յեսուի որդին էր, սա Եղիազարի, սա Յորամի, սա Մատաթի, սա էլ Ղևիի։

Ղևին Սիմոնի որդին էր, Սիմոնը՝ Յուդայի, սա Յովսէփի, սա Յովհանի, սա էլ Եղիակիմի։

Եղիակիմը Մեղկայի որդին էր, Մեղկան՝ Մինայի, սա Մատաթիայի, սա Նաթանի, Նաթանն էլ՝ Դաւթի։

Դաւիթը Յեսէի որդին էր, Յեսէն՝ Ովբէթի. սա Բոոսի, սա Սաղմոնի, սա էլ Նաասոնի։

Նաասոնը Ամինադաբի որդին էր, Ամինադաբը՝ Արամի, սա Ադմէի, սա Առնէի[1]), սա Եսրոմի, սա Փարէսի, սա էլ Յուդայի։

Յուդան Յակովբի որդին էր, սա Իսահակի, սա Աբրահամի, սա Թարայի, սա էլ Նաքովրի։

Նաքովրը Սէրուքի որդին էր, Սերուքը՝ Ռագաւի, սա Փաղէկի, սա Երերի, սա էլ Սաղայի։

Սաղան Կայնանի որդին էր, Կայնան՝ Արփաքսադի, սա Սէմի, սա Նոյի, սա էլ Ղամէքի։

Ղամէքը Մաթուսաղայի որդին էր, Մաթուսաղան՝ Ենովքի, սա Յարէդի, սա Մաղաղիէլի, սա էլ Կայնանի։

Կայնանը Սեթի որդին էր, Սեթը՝ Ադամի. Ադամը էլ Աստուծու։[2])

---

[1]) Ադմէի և Առնէի անունները նոյնպէս չկան յունական և լատինական թարգմանութեանց մէջ։

[2]) Յիսուս Քրիստոսի վերոյիշեալ ազգահամարները, որոնցից մինը տալիս է Մատթէոսը, իսկ միւսը՝ Ղուկասը, գտնւում է գրքիս մէջ նիւթն ամբողջացնելու համար։ Այդ ազգահամարներն իսկապէս իրար շատ քիչ նմանութիւն ունին և գանազանւում են ոչ միայն անունների դասաւորութեամբ և առաջ բերած անուններով այլ և նպատակով։ Որովհետև այդ ազգահամարների մասին թէր ու դէմ կարծիքներ կան, աւելորդ չի լինի մի քանի խօսք ասել։ Ս. գրքի յայտնի մեկնիչներից մեծագոյն մասը ընդունում է, որ Մատթէոս Աւետարանչի առաջ բերած ազգահամարը Յովսէփինն է, որովհետև այդ ճիւղագրութիւնը սկսուելով Աբրահամ նահապետից՝ գալիս է մինչև Դաւիթ թագաւորը և իջնելով հասնում Յովսէփին։ Թէև Մատթէոսն այդ ազգահամարն անելու ժամանակ բաց է թողնում մի քանի հրէայ թագաւորների անուններ օր. Ոքոզիային, Յովասին, Ամասիային և այլոց և թռիչքներ է անում, սակայն այդ հանգամանքը չէ արգելում ընդունելու որ Մատթէոսի ազգահամարն Յովսէփինն է և նպատակ ունի ցոյց տալու հրէաներին, որ Յիսուս Քրիստոսը Դաւիթ թագաւորի գահի օրինաւոր յաջորդն ու ժառանգն էր։ Մատթէոսի ազգահամարում կարգով յիշուած են բացառապէս թագաւորութեան ժառանգների անունները։

Բայց նոյնը չէ կարելի ասել Ղուկասի առաջ բերած ազգաբանութեան համար, որ ոչ սկսուածքով է նմանում Մատթէոսի ազգահամարին և ոչ էլ վերջաւորութեամբ։ Ղուկասի առաջ բերած ազգահամարում յիշւում են միանգամայն ուրիշ անուններ. այսպէս Դաւթից զէպի ցած միայն երկու անուն կայ նման. մինը Սաղաթիէլի, միւսը Զօրաբաբէլի։

Ս. գրքի մեկնիչներն առաջ այն կարծիքի էին, որ Ղուկան էլ Յովսէփի ազգահամարն է անում միայն այն տարբերութեամբ, որ Ղուկասը փոխանակ թագաւորների անունները տալու, Յիսուսի ամբողջ տոհմն է արձանագրում. բայց այս կարծիքը հաւանական չհամարուեցաւ։ Մեկնիչների յայտնի մասը ընդունում է որ Ղուկասի ազգահամարը ոչ թէ Յովսէփինն է, այլ Մարիամինը։ Այս ենթադրութիւնը հիմնում են Ղուկասի առաջ բերած ազգահամարի սկսուածքով։ Ղուկան ասում է.—«Եւ Յիսուսը ինչպէս կարծւում էր Յովսէփի որդին էր, սա Յակովբի և սա Հեղիի....»։ Ղուկասի «ինչպէս կարծւում էր թէ Յովսէփի որդին էր», միջանկեալ խօսքերը նրանց կարծիքով ցոյց են տալիս, որ Ղուկասը փափուկ կերպով ուզում է դուրսը թողնել Յովսէփի անունը, որովհետև Ղուկասին յայտնի էր Յիսուսի կուսական ծնունդը. և ի նկատի ունենալով որ Յակովբ անունը յունական և լատինական թարգմանութիւնների մէջ չկայ, այն ժամանակ մնում է միայն Հեղիի անունը։ Ըստ այսմ, եթէ Ղուկասի առաջ բերած տողերը ձևակերպուի և փակագծի մէջ առնուի «որ ինչպէս կարծում էր Յովսէփի որդին էր» բառերը՝ կստացուի հետևեալը.—«Եւ Յիսուսը (որ ինչպէս կարծւում էր Յովսէփի որդին էր) Հեղիի որդին էր...» գիտենք որ Հեղին (Եղիակիմ և Յովակիմ անունների նոյնանիշն է և Ս. գրքի

8.

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Ղուկ. բ. 1-7 Այդ միջոցներին Հռովմայեցոց Օգոստոս կայսրը[1]) հրաման արձակեց ամբողջ երկրում աշխարհագիր անելու։ Այս առաջին աշխարհագիրն էր Կիւրենի Ասորոց վերայ դատաւոր եղած ժամանակ։

Ամենքն էլ արձանագրուելու համար իրենց քաղաքներն էին գնում։ Յովսէփն էլ Դաւթի ազգից ու տնից լինելով, արձանագրուելու համար

քում այդ անունը մէկը միւսի տեղ է գործածուած) Մարիամի հայրն էր, ուրեմն Ղուկասը Հեղիի միջոցով տալիս է Մարիամի ազգահամարը։ Բացի վերոգրեալ բացատրութիւնից կարելի է նաև առանց Յակովբ անունը բաց թողնելու մի ուրիշ հաւանական բացատրութիւն էլ տալ Ղուկասի սկսուածքին։ Եթէ ի նկատի ունենանք, որ հրէաները սովորութիւն ունէին իրենց փեսաներին որդի անուանելու (Թուոց լբ. 40-41, Ա. Մնաց. բ. 21-22, է. 14) և փեսաներն էլ իրենց կնոջ ազգով կոչուելու, այնժամանակ պարզ է որ Ղուկան Յովսէփին իբրև փեսայի Հեղիի հետ կապելով, այդպիսով կամեցել է Մարիամի ազգահամարն անել։

Այսպէս կամ այնպէս երկու Աւետարանիչներն էլ Յիսուսի ազգաբանութիւնը կազմելու ժամանակ ամենայն հաւանականութեամբ աչքի առաջ են ունեցել թէ Հին կտակարանի ազգահամարները և թէ ընտանիքներում պահուած յիշատակարանները։ Կարելի է մինչև անգամ ասել, որ Ղուկասը ս. Մարիամի ազգահամարը գրելու ժամանակ կարևոր տեղեկութիւններն նոյն իսկ ս. Մարիամից է ստացել։

[1]) Հռովմի 747 թուին, հռովմայեցոց Օգոստոս Ոկտաւիանոս կայսրը հրովարտակ արձակեց ամբողջ կայսերութեան մէջ աշխարհագիր (մարդահամար) կատարելու։ Որովհետև Հրէաստանն էլ Հռովմայեցոց իշխանութեան տակ էր և ընդհանուր Ասորիքի մի նահանգն էր համարւում, ուստի և Ասորիքի դատաւոր Կիւրէնին (Կիւրինէս կամ Կուրինոս) յանձնարարուեցաւ Պաղէստինումն էլ մարդահամար կատարելու։

(1004/19470) 16449-58

վերցրեց իւր նշանած Մարիամին, որ յղի էր և դուրս գալով Գալիլիայի Նազարէթ քաղաքից, գնաց Հրէաստանի Դաւթի քաղաքը, որ Բեթղեհէմ էր կոչւում։

Երբ տեղ հասան, Մարիամի ծնելու օրերն էլ լրացան։ Նա ծնաւ իւր անդրանիկ որդուն, փաթաթեց նրան խանձարուրով և որովհետև իջևանում տեղ չէին գտել, մանկանն ախոռի մսրումը դրին։[1])

9.

ՏԻՐՈՋ ՀՐԵՇՏԱԿՆ ՈՒ ՀՈՎՒՒՆԵՐԸ

Ղուկ. բ. 8-20 Քաղաքից դուրս, դաշտում հովիւներ կային, որոնք իրենց հօտերի գիշերային պահպանութեանն էին հսկում։

Յանկարծ երևեցաւ նրանց Տիրոջ հրեշտակը

---

[1]) Աւանդութիւնն ասում է, որ Յիսուսը այրի մէջ ծնաւ. մեր շարականի մէջ էլ ասւում է «... Ոչ մեկնելով ի Հօրէ, ի սուրբ այրին բազմեցաւ։ Բեթղեհէմի Ս. Ծնունդ եկեղեցու մէջ, հէնց այսօր էլ ցոյց տուածը մի քարայր է։ Բայց Աւետարանի մէջ քարայրի և այրի մասին խօսք չկայ, և հիմք չկայ կարծելու թէ Յիսուսը ք ա ղ ա ք ի ց դ ո ւ ր ս մի այրի մէջ է ծնուել։ Ի նկատի ունենալով որ հին ժամանակները գիւղերի մէջ քարայրերը ախոռի տեղ էին ծառայում, հաւանականն այն է, որ այդպիսի ախոռի տեղ ծառայող քարայրերից մինն էլ իջևանում եղած լինէր, ուր և ծնաւ Յիսուսը։

Ծննդեան պատկերների մէջ, մսրի մօտ երբեմն մի եղ և մի էշ էլ են նկարում. (տես գրքիս մէջ զետեղուած պատկերը) սա այլաբանութիւն է և ակնարկում է Եսայի մարգարէի միջոցով Իսրայէլի ժողովրդին ուղղած հետևեալ յանդիմանութիւնը—«Եղն իւր կերակրողին ճանաչէց, էշն՝ իւր տիրոջ մսուրը, իսկ Իսրայէլը չճանաչէց»։ (Եսայի ա. 2)։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Ս.Ս.Հ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
7/XI 1922
ԱՄՈՒԱ, Մասնաճյուղ
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

և Տիրոջ փառքը լուսաւորեց նրանց, որից խիստ վախեցան։

Հրեշտակը նրանց ասաց.—«Մի վախենաք, ես ձեզ և բոլոր ժողովրդին մեծ ուրախութիւն եմ աւետում։ Այսօր Դաւթի քաղաքում ձեզ Փրկիչ ծնուեցաւ, որ է Օծեալ Տէրը։ Ահա ձեզ նշան. — Մանկանը կգտնէք խանձարուրով փաթաթած և մսրումը դրած»։

Յանկարծ հրեշտակի հետ, երկնաւոր զօրաց մի բազմութիւն երևեցաւ, որ փառաբանում էր Աստուծուն երգելով. «Փառք Աստուծուն երկընքում, երկրի վերայ խաղաղութիւն և մարդկանց մէջ հաճութիւն»։

Երբ հրեշտակներն երկինք վերացան, հովիւներն իրար ասացին.—«Գնանք Բեթղեհէմ. և տեսնենք թէ այնտեղ ինչ է պատահել, որի մասին Տէրը յայտնեց մեզ»։

Նրանք շտապով եկան և գտան Մարիամին, Յովսէփին և մսրումը դրած մանկանը։

Տեսնելուց յետոյ, արդէն սկսեցին պատմել այն ամենը, ինչ որ մանկան մասին ասուել էր իրենց։

Ամենքն էլ լսելով հովիւների պատմածները՝ զարմանում էին։ Իսկ Մարիամը լսած խօսքերը պահում էր իւր մտքում։

Հովիւները վերադարձան և սկսեցին փառաբանել և օրհնել Աստուծուն, որ լսեցին ու տեսան այն ամենը, ինչ որ ասուել էր իրենց։

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴՆ ՈՒ ՀՈՎԻՒՆԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ

10.

ՅԻՍՈՒՍԻ ԹԼՊԱՏՈՒԹԻՒՆԸ.—ՔԱՌԱՍՈՒՆԵՒՆ ՏԱՃԱՐ ՏԱՆՈՒԻԼԸ.—ՍԻՄԷՕՆ ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼ ԵՒ ԱՆՆԱ ՄԱՐԳԱՐԷՈՒՀԻՆ:

Ղուկ. ա. 21-40 Ծննդեան ութերորդ օրը մանկանը թլպատեցին. և ինչպէս յանձնարարել էր հրեշտակը դեռ մօր արգանդում չյղացած, Յիսուս (Փրկիչ) անուանեցին։

Իսկ երբ Մովսէսի օրէնքի համաձայն նրանց մաքրութեան օրերը լրացան, Յիսուսին տաճար տարան Աստուծուն ներկայացնելու (ինչպէս գրուած է Տիրոջ օրէնքում, որ ամեն մի արու զաւակ, որ բաց է անում արգանդը Տիրոջը պէտք է նուիրուի) և օրէնքի մէջ ասուած ի համաձայն մի զոյգ տատրակ կամ աղաւնու երկու ձագ ընծայ տալու։[1])

Երուսաղէմում Սիմէոն[2]) անունով մի արդար և երկիւղած մարդ կար, որ Իսրայէլի միխթարութեանն էր սպասում։ Սուրբ Հոգին նրա վերայ էր։ Սուրբ Հոգուց գուշակուած էր նրան մահ չճաշակել՝ մինչև Տիրոջ Օծեալին տեսնելը։

---

[1]) Ղեւ. ժբ. 2-8, Ելից ժգ. 2, լդ. 19-20, լբ. 26, Թուոց գ. 12, 47։

[2]) Թէ ով էր Սիմէոնը, Աւետարանն այս մասին ոչինչ չէ ասում, այլ յիշում է որ նա «մի արդար և երկիւղած, անձն էր։ Բայց որովհետև Աւետարանը Յիսուսի վերայ «պատշաճաւոր ծէսը» կատարող քահանայի անունը չէ տալիս և այդ գործողութիւնը վերագրում է Սիմէոնին, ուստի և հաւանական է որ նա տաճարին սպասաւորող քահանաներից մինը պէտք է լինէր։

Նա Սուրբ Հոգու ներշնչմամբ տաճար եկաւ և երբ ծնողները մանուկ Յիսուսին բերին, որ նրա վերայ պատշաճաւոր ծէսը կատարեն, Սիմէոնը գրկեց նրան, օրհնեց Աստուծուն և ասաց.— «Տէր, խօսքիդ համաձայն խաղաղութեամբ արձակիր քո ծառային, որովհետև աչքովս տեսայ արդէն բոլոր ժողովրդի համար քո պատրաստած փրկութիւնը, հեթանոսներին լուսաւորող լոյսը և Իսրայէլ ժողովրդիդ փառքը»։

Յովսէփն ու նրա մայրը զարմացել էին իրենց որդու մասին խօսածների վերայ։

Սիմէոնն օրհնեց և ասաց նրա մօրը—Մարիամին.—«Այս մանուկն Իսրայէլի մէջ շատերի անկման ու բարձրանալու պատճառ կլինի. և հակառակութեան առիթ կդառնայ։ Շատերի սրտի խորհուրդները կյայտնուին և քո սիրտն էլ կխոցոտուի»։

Այնտեղ էր նաև Ասերի ցեղից, Փանուէլի դուստր Աննա մարգարէուհին, որ մի պառաւ կին էր և իւր ամուսնութեան օրից միայն եօթն տարի էր ապրել իւր մարդու հետ։ Նա ութսունևչորս տարեկան այրի էր. օր ու գիշեր պահքով և աղօթք անելով էր ծառայում Աստուծուն և տաճարից ամենևին չէր հեռանում։ Նա էլ միևնոյն ժամանակ մօտենալով՝ փառաբանում էր Աստուծուն և խօսում էր Յիսուսի մասին այն ամենի հետ, որոնք Երուսաղէմում փրկութեանն էին սպասում։

Երբ Տիրոջ օրէնքի համաձայն ամեն բան

կատարեցին, նորից Գալիլիա դարձան—իրենց Նազարէթ քաղաքը։ Մանուկ Յիսուսը մեծանում և իմաստութեամբ լցուած՝ զօրանում էր Հոգով և Աստուծու շնորհքը նրա վերայ էր։

11.

ՄՈԳԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ։—ՄԱՆԿԱՆ ՓԱԽՈՒՍՏՆ ԵՎ ԳԻՊՏՈՍ։—ԲԵԹՂԵՀԷՄԻ ՄԱՆԿԱՆՑ ԿՈՏՈՐԱԾԸ. ԴԱՐՁ ԵԳԻՊՏՈՍԻՑ ՆԱՀԱՆԴԷԹ։

Մատ. ը. 1-23 Երբ Յիսուսը ծնուեց (Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքում, Հերովդէս թագաւորի օրով) արևելքից մոգեր եկան Երուսաղէմ և ասացին.—«Ո՞րտեղ է հրէից նորածին թագաւորը. մենք նրա աստղը արևելքում տեսանք և եկանք նրան երկրպագութիւն տալու»։

Երբ Հերովդէս թագաւորը լսեց այդ՝ շփոթուեցաւ և նրա հետ էլ բոլոր Երուսաղէմացիները։ Նա ժողովելով բոլոր քահանայապետներին և դպիրներին՝ հարցրեց թէ ուր պիտի ծնուի Քրիստոսը։

Նրանք պատասխանեցին, որ Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքում, որովհետև մարգարէի ձեռքով այսպէս է գրուած—«Եւ դու Բեթղեհէմ Յուդայի երկիր, ոչնչով փոքր չես Յուդայի իշխանների մէջ, քեզանից դուրս կգայ մի իշխան, որ կհովուէ իմ Իսրայէլ ժողովրդին»։[1])

Այն ժամանակ Հերովդէսը ծածուկ կանչեց

[1]) Տես 7-րդ մարգ.

մոգերին, ստուգեց նրանցից աստղն երևալու ժամանակը. և նրանց Բեթղեհէմ արձակելով՝ ասաց.—«Գնացէք, մանկան մասին ճիշտը տեղեկացէք և երբ գտնէք, ինձ իմաց տուէք, որ ես էլ գամ նրան երկրպագութիւն տալու»։

Թագաւորի հրամանը լսելուց յետոյ, մոգերը գնացին և այն աստղը, որ տեսել էին արևելքում՝ առաջնորդեց նրանց մինչև որ եկաւ և կանգնեց այնտեղ, ուր մանուկն էր։ Տեսնելով աստղը՝ չափազանց ուրախացան և մտնելով տուն, գտան մանկանն իւր մայր Մարիամի հետ, երկրպագութիւն տուին նրան և բանալով իրենց գանձերը ոսկի, կնդրուկ և զմուռս ընծայեցին նրան[1])։ Մոգերը տեսիլքում հրաման ստացան այլևս Հերովդէսի մօտ չդառնալ։ Նրանք էլ ուրիշ ճանապարհով վերադարձան իրենց երկիրը։

[1]) Այդ մոգերն ամենայն հաւանականութեամբ Հրէաստանին մօտ երկրներից եկած իմաստուն մարդիկ էին, որոնք ծանօթ էին հրէական մարգարէութիւնների հետ։ Պատկերների մէջ այդ մոգերը նկարուած են լինում թագաւորական և երբեմն էլ իշխանական հագուստներով, բայց Աւետարանը մեզ չէ ասում թէ դրանք թագաւորներ կամ իշխաններ են եղել, այլ նկարիչները և Ս. գրքի մեկնիչներից սմանք մոգերի զարն ու ընծայաբերութիւնը կամենում են յարմարեցնել Սաղմոսի հետևեալ համարի հետ.—«Թարսսի և կղզիների թագաւորները ընծաներ կմատուցանեն նրան. Արաբայի և Սաբայի թագաւորները ընծաներ կբերեն նրա համար»։ (Սաղմ. հա. 10)։

Բոլոր եկեղեցիներն էլ աւանդութեան վերայ հիմնուելով՝ ընդունում են որ այդ մոգերը կոչուելիս են եղել Մելքոն, Գասպար և Բաղդասար։ Մոգերի բերած ընծաներն էլ խորհրդաւոր նշանակութիւն ունին. այսպէս ոսկին, որ հարստութեան նշան է, ընծայուած է որպէս թագաւորի, կնդրուկը որ անուշահոտ խունկ է, ըն-

Երբ մոգերը գնացին, Տիրոջ հրեշտակն երևեցաւ Յովսէփին տեսիլքում և ասաց.—»Վեր կաց, վեր առ մանկանն և իւր մօրը և փախիր Եգիպտոս և մինչև իմ ասելը կաց այնտեղ, որովհետև Հերովդէսը կամենում է մանկանդ սպանել»։

Յովսէփը վեր կենալով. վերցրեց մանկանն ու նրա մօրը և գիշերով Եգիպտոս փախաւ և այնտեղ մնաց մինչև Հերովդէսի մահը, որ կատարուի մարգարէի միջոցով Տիրոջ ասածը, թէ Եգիպտոսից կը կանչեմ իմ որդուն։[1])

Երբ Հերովդէսը տեսաւ, որ մոգերն իրեն խաբեցին, սաստիկ բարկացաւ և մոգերից ստուգած ժամանակի համաձայն, զինուորներ ուղարկեց որ Բեթղեհէմում և նրա սահմաններում եղած բոլոր երկու տարեկանից փոքր մանուկներին կոտորեն։ Այն ժամանակ կատարուեցաւ Երեմիա մարգարէի միջոցով Տիրոջ ասածը, թէ —Հռամայից ողբի և լաց ու կոծի ձայն եկաւ,

---

ծայուած է որպէս Աստուծու. իսկ զմուռսը, որ դառնահամ խէժ է, ընծայուած է որպէս Փրկչի։ Այսպիսով մոգերի ընծայուած պաշտօնը դառնում է կատարեալ դաւանութիւն. ճանաչելով Յիսուսին որպէս Երկնաւոր թագաւոր, որպէս Աստուած և մարդ և որպէս աշխարհի Փրկիչ, որ դառն չարչարանքներ կրեց և զոհեց իրեն՝ աշխարհի փրկութեան համար։

[1]) Մարգարէութեան բառացին. «Որովհետև Իսրայէլը մանուկ էր և ես սիրեցի նրան և նրա որդոց Եգիպտոսից կանչեցի»։ (Ովսիայ ժա. 1)։ Այստեղ Իսրայէլը Յիսուսի օրինակն է։ Իսրայէլի Եգիպտոսից Պաղէստին գալը, նախատիպ է Յիսուսի Եգիպտոսից Հրէաստան գալուն։

Հռաքելը լաց էր լինում իւր որդոց համար և չէր մխիթարուում. որովհետև նրանք չկային։[1])

Հերովդէսի մահից յետոյ, Տիրոջ հրեշտակն երևեցաւ Յովսէփին տեսիլքում և ասաց.—«Վեր կաց, վեր առ մանկանը և իւր մօրը և գնա Իսրայէլի երկիրը, որովհետև մանկանը սպանել ցանկացողը՝ մեռաւ»։

Եւ Յովսէփը վեր կենալով, վերցրեց մանկանն ու նրա մօրը և եկան Իսրայէլի երկիրը։ Բայց երբ իմացաւ որ Հրէաստանում Հերովդէսի

---

[1]) Մարգարէութեան բառացին.—« Հռամայից ձայն լսուեցաւ. ողբի և լաց ու կոծի, Հռաքելը իւր որդոց վերայ էր լաց լինում և չէր կամենում մխիթարուել իւր որդոց վերայ, որովհետև նրանք չկային» (Երեմիա լա. 15)։ Հռաքելը Յակովբ նահապետի կինն էր որ Եփրաթայի (Բեթղեհէմի) մօտ իւր վերջին Բենեամին որդուն ծնելուց յետոյ մեռաւ, չկարողանալով ծննդաբերութեան ցաւերը տանել և թաղուեցաւ Եփրաթայի ճանապարհին (Ծնող. լե. 16—19.)։ Երեմիայի վերոյիշեալ մարգարէութիւնը (համեմատել Երեմիայի խ. 1) վերաբերում է այն դէպքին, որ տեղի ունեցաւ մարգարէութիւնը գրուելուց մի փոքր ժամանակ առաջ։ Նաբուգոդոնոսոր թագաւորի Նաբուզարդան զօրավարը բազմաթիւ հրէաներ գերելով, սրանց Հռամայ հաւաքեց։ Թագաւորի հրամանով հրէայ աղնուականներին կոտորեցին, հրէից Սեդեկիայ թագաւորի որդոց իրենց հօր աչքի առաջ մորթեցին, թագաւորին իրեն կուրացրին և շղթաներով կապեցին և ապա ուրիշ շղթայուած գերիների հետ, ողբ ու լացով ճանապարհեցին Բաբելոն։ Մարգարէն այս լաց ու կոծը յիշելով, այլաբանօրէն մէջ է բերում Հռաքելին, որը որպէս թէ գերեզմանից դուրս գալով՝ ողբում է իւր ազգատոհմի կոտորածն ու գերեվարութիւնը։

Մատթէոս Աւետարանիչն էլ, ներկայ դէպքում—Բեթղեհեմի մանուկների կոտորածի ժամանակ, որ պատճառ եղաւ սրդեկորոյս մայրերի ողբ ու լացին, վայելուչ կերպով մէջ է բերում դարձեալ նախամայր Հռաքելին, որ որպէս թէ այժմ էլ գերեզմանից դուրս գալով, իւր ողբը միացնում է այն որդեկորոյս մայրերի ողբին, որոնք իրենից էին սերուած։

փոխարէն նրա որդի Արքեղայոսն է թագաւորել, վախեցաւ այնտեղ մնալու և տեսիլքում հրաման ստացաւ Գալիլիայի կողմերը գնալ։

Յովսէփն եկաւ և բնակուեցաւ Նազարէթ կոչուած քաղաքում, որ կատարուի Մարգարէի խօսքը թէ՝ Նազովրեցի պիտի կոչուի։[1])

Յիսուսը Նազովրեցի էր կոչւում, որովհետև Մարիամն ու Յովսէփն ապրում էին Գալիլիայի Նազարէթ քաղաքում, այնտեղ էր նրանց տունը, այնտեղ անցրեց Յիսուս իւր մանկութեան ու պատանեկութեան երեսուն տարիները։ Բայց որ Յիսուսը պէտք է Նազովրեցիկոչուէր ըստ մարգարէից կանխագուշակութեան, ինչպէս այդ ասում է Մատթէոս Աւետարանիչը, այդպիսի մարգարէութիւն չկայ Սուրբ գրքում։

Մեկնիչներից մեծագոյն մասը, Յիսուսի Նազովրեցի կոչուիլը համարում է կատարումն այն մարգարէութիւնների, ուր ասւում է թէ Մեսիան պէտք է անարգուած ու արհամարուած լինէր. վերցնելով այդ՝ նոյն իսկ Նազարէթ քաղաքի վայելած վատ հռչակից։

Պէտք է նկատել, որ Գալիլիան առհասարակ շատ էր նուաստացած Հրէաստանի, մանաւանդ Երուսաղէմի հրէաների աչքում, որովհետև շատ հեռու և Սամարիայով բաժանուած լինելով Երուսաղէմից, (որ հրէական ուսման և կրօնի կենտրոնն էր) և միևնոյն ժամանակ իւր բնակիչների մէջ հեթանոսների մեծ բազմութիւն ունենալով, ոչ միայն սառել էր կրօնից, այլ և ազատւել լեզուն և սովորութիւնները։ Նազարէթ քաղաքը, որ Գալիլիայումն էր գտնւում աւելի ևս վատ հռչակ էր վայելում և Նազարէթցի կամ Նազովրեցի կոչուիլը անարգանքի և արհամարհանքի նշան էր։ Յայտնի էր որ Գալիլիացի Նաթանայէլը չէր հաւատում (տես գրքիս 18-րդ գլուխը), որ «Գալիլիայից կարող է լաւ բան դուրս գալ» այն էլ յայտնի է թէ Նազարէթցիք առհասարակ ինչպէս էին վարւում Յիսուսի հետ։ Ի դէպ կարելի է առաջ բերել Սաղմոսից մի համար ի հաստատութիւն վերջին ենթադրութեան։—«Ես մարդ չեմ, այլ մի որդն. մարդկանց նախատինք և ժողովրդի արհամարանք» (Սաղմ. իա. 7)։

ՄՈԳԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ

12.

ՏԱՍՆԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ՅԻՍՈՒՍԸ ՏԱՃԱՐՈՒՄ

Ղուկ. բ. 41-52 Յիսուսի ծնողներն ամեն տարի զատկի տոնին Երուսաղէմ էին գնում։ Երբ Յիսուսը տասներկու տարեկան դարձաւ, ըստ սովորութեան, զատկի տօնին Երուսաղէմ գնացին։ Երբ տօնի օրերը վերջանալուց յետոյ վերադառնում էին, մանուկ Յիսուսը մնաց Երուսաղէմում։ Նրա ծնողներն այդ բանը չէին նկատել, ուստի և կարծելով թէ նա ուղեկիցների հետ է, մի օրուան ճանապարհ անցան, իսկ յետոյ սկսեցին ազգականների և ծանօթների մէջ որոնել. բայց չգտնելով՝ նորից Երուսաղէմ դարձան նրան որոնելու։

Վերջապէս երեք օրից յետոյ նրան տաճարում գտան։ Նա վարդապետների հետ նստած, լսում էր նրանց և հարցեր տալիս։ Լսողները զարմանում էին նրա իմաստութեան և տուած պատասխանների վերայ։

Ծնողները տեսնելով նրան՝ զարմացան. և մայրն ասաց.—«Որդեակ, այդ ի՞նչ արիր մեզ. ես ու հայրդ վշտացած քեզ էինք որոնում»։ Յիսուսը նրանց պատասխանեց.—Ի՞նչու էիք ինձ որոնում. մի՞թէ չգիտէիք որ պէտք է ինձ Հօրս տանը լինել»։ Բայց նրանք չհասկացան այդ խօսքի նշանակութիւնը։

Յիսուսն իջաւ նրանց հետ և Նազարէթ գը-

նաց, ուր հնազանդ էր իւր ծնողներին։

Յիսուսը զարգանում էր իմաստութեամբ ու հասակով և Աստուծուց ու մարդկանցից շնորհք գտնելով։

II.

ՅԻՍՈՒՍԻ ԳՈՐԾԵՐԸ ՄԻՆՉԵՎ ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻԿԸ

1.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԱՆԽԱՍԱՅՈՒԹԻՒՆԸ

Մարկ. ա. 1 Սկսում է Աստուծու Որդի Յիսուս Քրիստոսի Աւետարանը։

Ղուկ. գ. 1-2 Տիբերիոս կայսեր թագաւորութեան տասնեհինգերորդ տարին, երբ Պոնտացի Պիղատոսը Հրէաստանի դատաւոր էր, Հերովդէսը Գալիլիայի չորորդապետը, սրա եղբայր Փիլիպպոսը Իտուրիայի և Տրաքոնիայի չորորդապետը. երբ Լիւսանիասը Աբիլինացոց երկրի չորորդապետն էր և Անանն ու Կայիափան Երուսաղէմի քահանայապետը, համաձայն մարգարէութեան մէջ

Մարկ. ա. 2 գրուածի, թէ ահա ես ուղարկում եմ քո առաջ իմ դեսպանը, որ քո առաջ ճանապարհ պատրաստէ.[1])

[1]) Մարգ. Մաղաք. գ. 1.

Ղուկ. գ. 2-3 Աստուծու խօսքը անապատումն եղող Զաքարիայի որդի Յովհաննէսին ուղղուեցաւ, որ գնայ Յորդանանի կողմերը։ Եւ սա եկաւ ու մեղքերի թողութեան համար ապաշխարութեան մկրտութիւն էր քարոզում։

Մատթ. գ. 3-4 Եւ ասում էր.—«Ապաշխարեցէք, որովհետև մօտեցել է Երկնքի Արքայութիւնը»։ Եւ սա է, որի համար Եսայիա մարգարէի միջոցով ասուեցաւ թէ—անապատի մէջ կանչողի ձայնը. պատրաստեցէք Տիրոջ ճանապարհը և ուղղեցէք նրա ոտքի շաւիղները։

Ղուկ. գ. 5-6 Ամեն ձոր պէտք է լցուի և ամեն սար ու բլուր ցածանայ, ծուռը պէտք է ուղղուի և խորդ ու բորթ տեղերը հարթ ճանապարհներ դառնան։ Եւ ամեն մարմին Աստուծու փրկութիւնը պէտք է տեսնի։[1])

Մատթ. գ. 4-10 Յովհաննէսն ուղտի բրդից պատրաստած շոր էր հագնում, մէջքին կաշէ գօտի էր կապում և մարախ ու վայրենի մեղր էր ուտում։

Երուսաղէմացիներից և հրէաստանցիներից շատերը, ինչպէս և Յորդանանի ամեն կողմերից գալիս էին նրա մօտ, խոստովանում էին իրենց մեղքերը և մկրտւում նրանից Յորդանանում։

Յովհաննէսը տեսնելով մկրտութեանն եկած

[1]) Մարգ. Եսայի խ. 3-5, տես 9-րդ մարգ.

Սադուկեցիներից[1]) և Փարիսեցիներից[2]) շատերին՝ ասաց.—«Իժերի ծնունդներ, ո՞վ ասաց ձեզ,

[1]) Սադուկեցիութիւնը գոյութիւն ունէր Հրէից մէջ դեռ 200 տարի քրիստոսից առաջ։ Կարծւում է որ Սադուկեցիների դասակարգութեան հիմնադիրն եղել է ոմն Սադովկ, որի քնունով և կոչուել են նրա հետևողները։

Հաւանական է համարւում և այն, որ Սադուկեցի բառը ծագած լինի եբրայական Սեդեկ բառից, որ նշանակում է արդար։

Սադուկեցիք արտաքոյ հին կտակարանի ոչինչ չէին ընդունում, ոչ աւանդութիւն և ոչ անգիր օրէնք։ Եւ հին կտակարանը ճանաչուած և ընդունուած էր որպէս հրէական օրէնքների ազբիւր և կանոն։

Թէև ընդունում էին հին—կտակարանը, բայց ոչ հանդերձեալ կեանքին, ոչ յարութեանը, ոչ հրեշտակների գոյութեանը և ոչ էլ հոգու անմահութեանն էին հաւատում։

Սրանց վարդապետութիւնը առհասարակ ընդունուած չէր հասարակ ժողովրդի կողմից, մինչդեռ անագին հետևողներ ունէր բարձր և առհասարակ ուսումնական դասակարգից։ Սադուկեցիք յայտնի էին իրրև լաւ վարքի ու բարքի տէր։

[2]) Հրէից մէջ գոյութիւն ունեցող դասակարգութիւնից երկրորդը Փարիսեցիք էին։ Փարիսեցիք բացի հին կտակարանից, ուրեմն և գրաւոր օրէնքներից, ընդունում էին նաև անգիր օրէնքներն ու աւանդութիւնները։ Փարիսեցիք վերին աստիճանի ծիսապաշտ էին առանձին նշանակութիւն և կարևորութիւն էին տալիս լուացմանը, պասին, երկար աղօթելուն, ողորմութիւն տալուն անհաւատներից հեռու և զգոյշ լինելուն և այլն։ Հաւատում էին հանդերձեալ կեանքին, յարութեանը, հրեշտակների գոյութեանը, հոգու անմահութեանը և վերջապէս ճակատագրին։

Փարիսեցիք ցուցամոլ ու փառասէր էին և վերին աստիճանի օրինապահ։ Օրէնքները շատ անգամ մեկնում էին ըստ քմայ, նայելով հանգամանքներին, ժամանակին, տեղին ու պահանջին։

Փարիսեցիները Սադուկեցիների հակապատակերն էին ոչ միայն դաւանած վարդապետութեամբ, այլ և բարոյականութեամբ։ Փարիսեցիներն առ երեսս մաքուր և սուրբ էին երևում, որի պատճառով շատ յարգուած էին հասարակ ժողովրդի, մանաւանդ կանանց կողմից. բայց ի ներքուստ ամենակեղտոտ և ապականուած անձինք էին։ Այս է պատճառը, որ Փարիսեցիները շատ յաճախ յանդիմանւում էին Յիսուսից, իրենց կեղծաւորութեան և կեղտոտութեան համար։

որ գալու բարկութիւնից փախչէք։ Այսուհետև ապաշխարութեան արժանի պտուղ բերէք և մի մտածէք և մի ասէք թէ Աբրահամը մեր հայրն է։ Ասում եմ ձեզ, որ Աստուած կարող է այս քարերից Աբրահամի որդիք յարուցանել։ Ահա կացինը ծառի արմատներին է դրուած. այն ծառը որ բարի պտուղ չէ բերում, կը կտրուի և կրակը կձգուի»։

Ղուկ. գ. 10-18 Ժողովուրդը հարցնում էր նրան ու ասում. —«Ուրեմն ի՞նչ պիտի անենք»։ Նա պատասխանեց.—«Ով երկու շոր ունի, թող մինը չունեցողին տայ և ով կերակուր ունի, թող նոյնն անէ»։

Մաքսաւորներն էլ եկան մկրտուելու[1]) և հարցրին.—«Վարդապետ, մենք ի՞նչ անենք»։ Նա պատասխանեց.—«Ձեզ պատուիրածից աւելին մի պահանջէք»։

Զինուորներն էլ հարցրին ու ասացին.—«Իսկ մենք ի՞նչ անենք»։ Նրանց էլ ասաց.—«Ոչ ոքի մի հարստահարէք, ոչ ոքի մի զրպարտէք և ձեր ռոճկով բաւականացէք»։

---

[1]) Մաքսաւոր, նշանակում է հարկահան։ Մաքսաւորների պարտականութիւնն էր հարկերը հաւաքել և ներկայացնել Հռովմայեցոց տէրութեան գանձարանին։ Հրէաները շատ դժկամակութեամբ էին վճարում հարկը, որովհետև հակառակ էին համարում իրենց կրօնին։ Հրէաների մէջ մաքսաւորութիւնը ամենակեղտոտ և անպատիւ պաշտօնն էր համարւում և այն հրէան, որ կը համաձայնէր այդ պաշտօնն ընդունել, հեռացւում էր իւր բարեկամների և ազգականների շրջանից և հեթանոս էր համարւում։ Նրանց շատ անգամ չէին թոյլ տալիս ժողովարան մտնել, հասարակաց աղօթքներին մասնակցել դատաւորութիւն անել և կամ վկայութիւն տալ։

Երբ ժողովուրդը սպասում էր և ամենքն էլ մտածում էին, թէ արդեօք Յովհաննէսը չէ՞ Քրիստոսը. Յովհաննէսն ասաց.—«Ես ձեզ ջրով եմ մկրտում, բայց ինձանից աւելի զօրաւորն է գալիս և ես արժանի չեմ նրա կօշիկների կապերը քանդելու։ Նա կմկրտէ ձեզ Սուրբ Հոգով և կրակով։ Նրա ձեռքին է հեծանոցը,[1]) նրանով կմաքրէ իւր կալը, ցորենը կժողովէ իւր ամբարի մէջ, իսկ յարդը կայրէ անհանգչելի կրակով»։ Ուրիշ էլի շատ բաներ էր աւետում ժողովրդին՝ ուսուցանելով։

14.

ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Մատթ. գ. 13-17 Այդ ժամանակ Յիսուսը Գալիլիայից Յորդանան եկաւ Յովհաննէսի մօտ, նրանից մկրտուելու։

Յովհաննէսն արգելեց նրան ու ասաց.—«Ես պէտք է քեզանից մկրտուեմ և դո՞ւ ես եկել ինձանից մկրտուելու»։

Յիսուսը պատասխանեց.—«Թող այժմ, որովհետև այդպէս կվայելէ մեզ, որ բոլոր արդարութիւնը կատարենք»։

Եւ Յովհաննէսը թոյլ տուեց։

Յիսուսը մկրտուելուց յետոյ, իսկոյն դուրս եկաւ ջրից և ահա երկինքը բացուեցաւ և Յովհաննէսը տեսաւ թէ ինչպէս Աստուծու Հոգին

---

[1]) Հեծանոցը կալի մէջ գործ դրուող մի գործիք է, որով կալը քամու են տալիս՝ ցորենը յարդից բաժանելու։

աղաւնու պէս իջնում ու գալիս էր Նրա վերայ։

Եւ երկնքից ձայն լսուեցաւ որ ասում էր. —«Սա է իմ սիրելի որդին որին հաճեցայ»։

Ղուկ. գ. 23 Յիսուն այդ ժամանակ երեսուն տարեկան էր։

15.

ՓՈՐՁՈՒԹԻՒՆ.

Ղուկ. գ. 1-2 Յիսուսը Սուրբ Հոգով լցուած, վերադարձաւ Յորդանանից և Հոգին Նրան անապատը տարաւ։ Այնտեղ Նա քառասուն օր ու գիշեր փորձւում էր սատանայից և ոչինչ չէր ուտում. իսկ քառասուն օրն անցնելուց յետոյ՝ քաղցեցաւ։

Մատթ. դ. 3-10 Եւ մօտենալով փորձիչը (սատանան) ասաց Նրան.—«Եթէ Աստուծու Որդի ես, ասա, որ այս քարերը հաց դառնան»։ Յիսուս պատասխանեց. —«Գրուած է ոչ միայն հացով կապրի մարդ, այլ Աստուծու բերանից դուրս եկած ամենայն մի խօսքով»։[1])

Այն ժամանակ սատանան տարաւ Նրան Սուրբ քաղաքը (Երուսաղէմ) և կանգնեցնելով Նրան տաճարի աշտարակի վերայ՝ ասաց.—«Եթէ Դու Աստուծու Որդին ես, քեզ այստեղից վայր ձգիր, որովհետև գրուած է.—իւր հրեշտակներին կպատուիրէ քեզ համար, որ քեզ ձեռքերի վերայ բարձրացնեն, որպէս զի ոտքդ քարին չդիպցնես»։[2]) Յիսուսն ասաց.—«Գրուած է դարձեալ.

[1]) Բ. Օրինաց ը. 3.
[2]) Սաղմոս ղ. 11—12.

—«Մի փորձիր քո Տէր Աստուծուն»։[1])

Դարձեալ տարաւ Նրան սատանան և հանեց մի շատ բարձր լերան գլուխը և ցոյց տուեց Նրան աշխարհի բոլոր թագաւորութիւններն ու նրանց փառքը և ասաց.—«Այս ամենը քեզ կըտամ, եթէ չոգես ու ինձ երկրպագութիւն տաս»։

Այն ժամանակ Յիսուսն ասաց.—«Հեռացիր ինձանից սատանա, որովհետև գրուած է—քո Տէր Աստուծուն միայն երկրպագես և Նրան միայն պաշտես»։[2])

Ղուկ. դ. 13 Եւ սատանան վերջացնելով իւր բոլոր փորձութիւնները, մի առ ժամանակ ձեռք քաշեց Նրանից։

Մատթ. դ. 11 Այն ժամանակ մօտեցան հրեշտակներն ու սկսեցին Նրան ծառայել։

13.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ.

Յովհ. ա. 19-34 Այս է Յովհաննէսի վկայութիւնը, որ տուեց այն ժամանակ երբ հրէաներն Երուսաղէմից քահանաներ և դատաւորներ ուղարկեցին, որ Յովհաննէսից հարցնեն թէ դու ով ես։

Յովհաննէսը խոստովանեց և չուրացաւ, նա ասաց.—ես Քրիստոսը չեմ։

Նրան հարցրին.—«Հապա ով ես դու, Եղիան ես»։ Նա պատասխանեց.—«Եղիան չեմ»։

[1]) Բ. Օրինաց գ. 16.
[2]) Բ. Օրինաց գ. 13։

—Ուրեմն դու այն մարգարէն ե՞ս[1]։ Յովհաննէսը պատասխանեց.—Ո՛չ։

Այն ժամանակ ասացին նրան.—«Դու ո՞վ ես, ասա՛, որ պատասխան տանենք մեզ ուղարկողներին. դու ի՞նչ ես ասում քո մասին»։

Յովհաննէսն ասաց.—«Ես անապատում կանչողի ձայնն եմ.—ուղղեցէք Տիրոջ ճանապարհը, ինչպէս ասաց Եսայիա մարգարէն»։

Եւ ուղարկուածները որ փարիսեցիներից էին՝ հարցրին.—«Եթէ դու ո՛չ Քրիստոսն ես, ո՛չ Եղիան և ո՛չ մարգարէն, հապա ի՞նչու ես մկրտում»։

Յովհաննէսը պատասխանեց.—«Ես ձեզ ջրով եմ մկրտում, բայց ձեր մէջ կայ մինը, որին դուք չէք ճանաչում, Նա յետևից եկողն է, որ ինձանից առաջ էր և որի կօշիկների կապերը քանդելու արժանի չեմ»։

Այս խօսակցութիւնը տեղի ունեցաւ Բեթաբարայում, Յորդանանի միւս կողմը, որտեղ բնակւում էր Յովհաննէսը և մկրտում։

Հետևեալ օրն երբ Յովհաննէսը տեսաւ, որ Յիսուսը դէպի իրեն է գալիս՝ ասաց.—«Ահա Աստուծու գառը, որ պէտք է բառնայ աշխարհի մեղքերը։ Սա է որի համար ասացի թէ իմ յետևից մի մարդ է գալիս որ ինձանից առաջ եղաւ, որովհետև ինձանից առաջ էր։ Ես նրան չէի ճանաչում, բայց եկայ ջրով մկրտելու, որպէս զի Նա Իսրայէլին յայտնուի։

[1]) Այստեղ Մովսէսի յիշած մարգարէն է ակնարկւում. տես 17-րդ մարգ.

Եւ Յովհաննէսը վկայեց ասելով.—«Ես տեսնում էի Հոգուն, որ աղաւնու պէս իջնում էր երկնքից և նրա վերայ հանգչում։ Ես նրան չէի ճանաչում, բայց Նա, որ ինձ ուղարկեց ջրով մկրտելու՝ ասաց.—«Որի վերայ Հոգուն իջնելիս և հանգչելիս կտեսնես, Նա է, որ Սուրբ Հոգով պէտք է մկրտի։

Ես տեսայ և վկայում եմ, որ Սա Աստուծու Որդին է»։

17.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԵՏԱՐԱՆԻՉԸ՝ ՅԻՍՈՒՍԻ ՄԱՍԻՆ

Յովհ. ա. 1-18

Սկզբից էր Բանը և Բանն Աստուծու հետ էր և Բանն Աստուած էր։ Նա սկզբից Աստուծու հետ էր։ Ամեն բան նրանով եղաւ և ինչ որ եղաւ, առանց նրա չեղաւ։ Կեանքը նրա մէջ էր և կեանքը մարդկանց լոյսն էր։ Լոյսը խաւարի մէջ էր լուսաւորում և խաւարը նրան չհասկացաւ ու չընդունեց։

Աստուծուց ուղարկուած մի մարդ կար, նրա անունը Յովհաննէս էր։ Նա իբրև վկայ եկաւ, որ լոյսի մասին վկայէ. որպէս զի ամենքն էլ նրա միջոցով հաւատան։ Ինքն այն լոյսը չէր, բայց ուղարկուած էր, որ լոյսի համար վկայէ։ Կայ մի ճշմարիտ լոյս, որ լուսաւորում է ամեն մի աշխարհ եկող մարդու։

Այդ լոյսն աշխարհումն էր և աշխարհը նրանով ստեղծուեցաւ, բայց աշխարհը նրան չճանաչեց։ Իւրայիններին մօտ եկաւ և իւրայինները

նրան չընդունեցին։ Իսկ նրանց, որոնք ընդունեցին ու հաւատացին իւր անունը, իշխանութիւն տուեց Աստուծու որդիք լինելու. որոնք ոչ արիւնից, ոչ մարմնի կամքից և ոչ էլ մարդու կամքից, այլ Աստուծուց ծնուեցան։ Եւ բանը մարմնացաւ ու բնակուեցաւ մեր մէջ լի շնորհքով և ճշմարտութեամբ. և մենք տեսանք նրա փառքը, ինչպէս Հօրից միածնի փառք։

Յովհաննէսը վկայում է նրա մասին և բարձրաձայն ասում.—Սա է, որի մասին ասացի, թէ իմ յետևից եկողը ինձանից առաջ եղաւ, որովհետև նա ինձանից առաջ էր։ Եւ մենք ամենքս նրա լիութիւնից շնորհքի վերայ՝ շնորհք ստացանք։

Օրէնքը Մովսէսի ձեռքով տրուեցաւ, իսկ շնորհքն ու ճշմարտութիւնը Յիսուս Քրիստոսի միջոցով եղան։ Աստուծուն ոչ ոք չէ տեսել երբէք, բայց միածին Որդին որ Հօր ծոցումն է՝ Նա պատմեց։

18.

ՅԻՍՈՒՍԻ ՀԵՏԵՎՈՂՆԵՐԸ

Յովհ. ա. 35-41 Հետևեալ օրն երբ Յովհաննէս (Մկրտիչը) իւր երկու աշակերտների հետ կանգնած, Յիսուսին անցնելիս տեսաւ՝ ասաց.—«Ահա Քրիստոսը —Աստուծու գառը»։

Աշակերտները հենց որ լսեցին այդ, Յիսուսի յետևից գնացին։ Յիսուսը դարձաւ և տեսնելով որ իւր յետևից են գալիս՝ հարցրեց.—

«Ի՞նչ էք կամենում»։ Նրանք պատասխանեցին.—«Ռաբբի (վարդապետ) ո՞րտեղ է բնակարանդ»։

Յիսուսն ասաց.—«Եկէք ու տեսէք»։

Նրանք գնացին ու տեսան նրա բնակարանը. և այն օրը նրա մօտ մնացին, որովհետև մօտ ժամի տասը կլինէր։

Յովհաննէսին լսողներից և Յիսուսի յետևից գնացողներից մինը՝ Սիմոն Վիմի եղբայր Անդրիասն էր։ Սա նախ իւր եղբայր Սիմոնին գրտաւ և ասաց.—«Մեսիային (Քրիստոսին) գրտանք»։ Եւ նրան Յիսուսի մօտ բերեց։

Յիսուսը նայելով նրան՝ ասաց.—«Դու, Յովնանի որդի Սիմոն, այսուհետև Կեփաս[1]) (Պետրոս) կը կոչուես։

Յիսուսին պատահեց Փիլիպպոս անունով մի ձկնորս, որ Գալիլիայի Բեթսայիդա քաղաքից էր և Անդրիասի ու Պետրոսի հայրենակիցը։ Յիսուսը նրան ասաց.—«Ե՛կ իմ յետևից»։

Փիլիպպոսը գտաւ Նաթանայէլին (Նոյն և Բարդուղիմէոս) և ասաց նրան.—«Գտանք Յովսէփի որդի Յիսուս Նազովրեցուն, որի համար թէ Մովսէսն է գրել օրէնքների մէջ և թէ մարգարէները»։

Նաթանայէլն ասաց.—«Մի՞թէ Նազարէթից կարող է լաւ բան դուրս գալ»։

Փիլիպպոսը պատասխանեց.—«Եկ և տես»։

Երբ Յիսուսը Նաթանայէլին տեսաւ, ասաց.

---

[1]) Սիմոնը կոչուեցաւ Պետրոս կամ Կեփաս։ Պետրոսը՝ յունարէն է. Կեփասը՝ ասորերէն։

—«Իսկապէս ահա մի իսրայէլացի, որի մէջ նենգութիւն չկայ»։

Նաթանայէլը հարցրեց.—«Դու ինձ ո՞րտեղից ես ճանաչում»։ Յիսուսը պատասխանեց.—«Դեռ Փիլիպպոսը քեզ չէր կանչել որ քեզ թզենու տակ տեսայ»։

Նաթանայէլը բացականչեց։—«Ռաբբի, Դու Աստուծու Որդին ես, դու Իսրայէլի թագաւորն ես»։ Յիսուսն ասաց նրան.—«Դու այն պատճառով հաւատացիր, որ ասացի քեզ թէ թզենու տակ տեսայ։ Սրանից յետոյ աւելի մեծ բաներ կտեսնես»։

Եւ աւելացրեց.—Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում ձեզ, որ այսուհետև կտեսնէք երկինքը բացուած և Աստուծու հրեշտակներին, որոնք կբարձրանան ու կիջնեն Մարդու Որդու վերայ»։

19.

ԿԱՆԱՅԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Յովհ. բ. 1-12 Երրորդ օրը Գալիլիայի Կանա քաղաքում մի հարսանիք կար Յիսուսի մայրն էլ այնտեղ էր։

Հարսանիք կանչուեցան նաև Յիսուսն ու նրա աշակերտները։

Երբ գինին պակասեց, Յիսուսի մայրն ասաց նրան.—«Գինի չունին»։ Յիսուսն ասաց.—«Ա՜յ կին, ինձ ինչ կամ քեզ ինչ. իմ ժամանակը դեռ չէ հասել»։

Նրա մայրն ասաց ծառաներին.—«Ինչ որ ասէ ձեզ, կատարեցէք»։

Այնտեղ, հրէաների սովորութեան համաձայն, լուացուելու համար վեց հատ ջրի ամաններ կային, որոնցից իւրաքանչիւրը երկու կամ երեք մար[1]) էր տանում։ Յիսուսն ասաց.—«Այդ ամանները ջրով լցրէք»։

Ամանները մինչև բերանը ջրով լցրին։

Յիսուսն ասաց.—«Այժմ վերցրէք ու սեղանապետին տարէք»։ Նրանք էլ տարան։

Երբ սեղանապետը գինի դարձած ջրի համն առաւ (նա չգիտէր թէ որտեղից էր այդ գինին, միայն ջուր ածող ծառաները գիտէին) դիմեց փեսային՝ ասելով.—«Ամեն մարդ նախ լաւ գինին է բերում. իսկ երբ հիւրերը հարբում են, այն ժամանակ միայն վատը։ Իսկ դու լաւ գինին մինչև այժմ պահել ես»։

Սա Յիսուսի առաջին հրաշքն էր, որ գործեց Գալիլիայի Կանա քաղաքում և սրանով յայտնեց իւր փառքը և աշակերտները հաւատացին նրան։

Սրանից յետոյ Յիսուսն իւր մօր և եղբայրների[2]) հետ Կափառնաում իջաւ, ուր երկար չմնաց։

---

[1]) Մարը—հեղանիւթի չափ է և հաւասար է մօտաւորապէս կէս վեդրոյին։

[2]) Յունարէնում ասուած է «աշակերտների»։

III.
ՅԻՍՈՒՍԻ ԳՈՐԾԵՐՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՉԱՏ-ԿԻՑ ՄԻՆՉԵՒ ԵՐԿՐՈՐԴԸ

20.

ՅԻՍՈՒՍՆ ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ ՉԱՏԿԻ ՏՕՆԻՆ

Յովհ. բ. 13-25 Հրէից զատիկը մօտ էր և Յիսուսը Երուսաղէմ գնաց։ Նա գտաւ տաճարի մէջ արջառ, ոչխար և աղաւնի ծախողներ և լումայափոխներ, որոնք նստել էին իրենց սեղանների առաջ։ Զուանից խարազան շինելով, ամենքին դուրս արաւ տաճարից, թէ ոչխարներին և թէ արջառներին։ Հատավաճառների պղնձները ցրուեց և սեղանները կործանեց։ Աղաւնի ծախողներին էլ ասաց.—«Վերցրէք դրանց այստեղից և Հօրս տունը վաճառի տուն մի դարձնէք»։ Նրա աշակերտները յիշեցին գրուածը, թէ քո տան նախանձը կերաւ ինձ։[1]) Հրէաները տեսնելով այդ՝ ասացին.—«Ի՞նչ հրաշք ես ցոյց տալիս մեզ, որ այդ բաներն ես անում»։

Յիսուսը պատասխանեց.—«Քանդեցէք այս տաճարը և ես երեք օրումը կշինեմ»։

[1]) Սաղմոս կը. 10. տես 27-րդ մարդ.

Հրէաներն ասացին.—«Այս տաճարը քառասուն և վեց տարուան ընթացքումն է շինուել և դու ուզում ես երեք օրումը շինել»։

Յիսուսն իւր մարմնի տաճարի համար էր ասում. և երբ ինքը մեռելներից յարութիւն առաւ, նրա աշակերտներն յիշեցին, որ այդ մասին արդէն ասուած էր և հաւատացին թէ գրքին և թէ Յիսուսի ասած խօսքին։

Երբ Յիսուսը զատկի տօնին Երուսաղէմումն էր, շատերը նրա գործած հրաշքները տեսնելով՝ հաւատացին նրան։

Իսկ Յիսուսն իւր անձը ոչ ոքի չէր հաւատում, որովհետև ինքը ճանաչում էր ամեն մարդու և պէտք էլ չունէր որ որևէ մէկը սրա կամ նրա մասին վկայութիւն տար իրեն, որովհետև ինքը շատ լաւ գիտէր թէ ինչ կայ մարդու ներսը։

21.

ՅԻՍՈՒՍՆ ՈՒ ՆԻԿՈԴԻՄՈՍԸ

Յովհ. գ. 1-21 Հրէից իշխաններից մի փարիսեցի, Նիկոդիմոս անունով, գիշերով Յիսուսի մօտ եկաւ և ասաց.—«Ռաբբի, գիտենք որ դու վարդապետ ես Աստուծուց եկած, որովհետև այն հրաշքները որ դու ես գործում, ոչ ոք չէ կարող գործել, եթէ Աստուած նրա հետ չլինի»։

Յիսուսն ասաց.—«Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում քեզ, որ եթէ մի մարդ նորից չծնուի,

չի կարող Աստուծու Արքայութիւնը տեսնել։

Նիկոդիմոսն ասաց.—«Մի մարդ, որ արդէն ծերացած է, ինչպէս կարող է նորից ծնուել. մի՞թէ կարող է մինչ մօր որովայնը մտնել և ծնուել»։

Պատասխանեց Յիսուսն ու ասաց,—«Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում քեզ, որ եթէ մի մարդ ջրից ու Հոգուց չծնուի, չի կարող Աստուծու Արքայութիւնը մտնել, որովհետև մարմնից ծնուածը՝ մարմին է, իսկ Հոգուց ծնուածը՝ Հոգի։ Դու մի զարմանայ, որ ասացի քեզ թէ հարկաւոր է ձեզ նորից ծնուել։ Քամին փչում է ուր որ կամենում է և լսում ես նրա ձայնը, բայց չգիտես թէ որտեղից է գալիս և ուր է գնում. այդպէս է լինում այն ամենի հետ, որ Հոգուցն է ծնուում»։

Նիկոդիմոսը հարցրեց. —«Այդ ինչպէս կարող է լինել»։ Յիսուսը պատասխանեց.—«Դու Իսրայէլի վարդապետն ես և այդէլ չգիտե՞ս։[1]) Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում քեզ, որ մենք ինչ որ գիտենք, այն ենք խօսում և ինչ որ տեսանք, այն ենք վկայում. բայց դուք չէք ընդունում մեր վկայութիւնը։ Ես ձեզ երկրաւոր բաների մասին խօսեցի և դուք չհաւատացիք, էլ ինչպէս կարող էք հաւատալ, եթէ երկնաւորի մասին խօսեմ։

[1]) Յիսուսն ուզում է յիշեցնել Նիկոդիմոսին, որ ջուրը սըրբութեան նշանակ է, ինչպէս և գրել է մարգարէն.—«Ես կցանեմ ձեզ վերայ սուրբ ջուր, և դուք կսրբուէք ձեր բոլոր պղծութիւններից» (Եզեկիել լգ. 25)։

Ոչ ոք չբարձրացաւ երկինք բացի երկնքից իջնող Մարդու Որդուց, որ երկնքումն էր։ Եւ ինչպէս Մովսէսն օձը անապատի մէջ բարձրացրեց,[2]) այնպէս էլ Մարդու Որդին պէտք է բարձրանայ, որպէս զի նրան հաւատացողը չկորչի, այլ յաւիտենական կեանք ունենայ։

Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ իւր միածին Որդուն տուեց, որպէս զի նրան հաւատացողը՝ չկորչի, այլ յաւիտենական կեանք ունենայ։

Աստուած իւր Որդուն աշխարհ ուղարկեց, ոչ թէ աշխարհը դատելու, այլ որպէս զի աշխարհը նրանով փրկուի։ Նրան հաւատացողը՝ չի դատուի, բայց չհաւատացողը՝ արդէն իսկ դատապարտուած է. որովհետև չհաւատաց Աստուծու միածին Որդու անունը։

Դատաստանն հէնց այն է, որ Լոյսն աշխարհ եկաւ, բայց մարդիկ խաւարը լոյսից աւելի սիրեցին, որովհետև նրանց գործերը չար էին։ Ով չար գործեր է անում, ատում է լոյսը և չէ գալիս դէպի լոյսը, որպէս զի նրա չար գործերը չմերկանան։ Իսկ նա, որ ճշմարիտն է գործում, դէպի լոյսն է գնում, որ յայտնի լինին նրա գործերը, որովհետև Աստուծով գործուեցան»։

[2]) Թուոց խ. 9.

22.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ԽՕՍՔՆ ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՅԻՍՈՒՍԻ ՄԱՍԻՆ

Յովհ. գ. 22-36 Սրանից յետոյ Յիսուսն իւր աշակերտների հետ Հրէաստան եկաւ և նրանց հետ շրջելով մկրտում էր։ Յովհաննէսն էլ Սաղէմի մօտ—Այենոնվնումն էր մկրտում, որովհետև այնտեղ շատ ջուր կար և մեծ բազմութիւն էր գալիս նրանից մկրտուելու։

Յովհաննէսն այդ ժամանակ դեռ բանտարկուած չէր։

Յովհաննէսի աշակերտները վէճի բռնուեցան հրէաների հետ մաքրութեան մասին և գալով Յովհաննէսի մօտ՝ ասացին.—«Ռաբբի, Նա, որ քեզ հետ Յորդանանի միւս կողմն էր և որի մասին վկայեցիր, մկրտում է և ամենքն էլ նրա մօտ են գնում»։

Յովհաննէսը պատասխանեց ու ասաց։—«Մարդս երբէք ոչինչ չէ կարող իւր վերայ առնել, եթէ նրան երկնքից տուած չլինի։ Դուք անձամբ կվկայէք, որ ասացի թէ ես Քրիստոսը չեմ, այլ նրա առջևից ուղարկուածը։ Փեսան նա է, որ հարս ունի, իսկ փեսայի բարեկամը որ կանգնած լսում է նրան, սաստիկ ուրախանում է փեսայի ձայնը լսելով. ուստի այս իմ ուրախութիւնն արդէն լցուած է։ Նա պէտք է զօրանայ, իսկ ես մեղմանամ։ Վերևից եկողն ամենից վեր է, իսկ նա որ երկրից է՝ երկրաւոր է

և երկրից է խօսում։ Երկնքից եկողն ինչ որ տեսաւ և լսեց, այն է վկայում և նրա վկայութիւնը ոչ ոք չէ ընդունում։ Ով որ ընդունում է նրա վկայութիւնը, դրանով հաստատում է որ Աստուած ճշմարիտ է, որովհետև Աստուած որոշ չափով չէ տուել նրան իւր հոգին։

Հայրը սիրում է իւր Որդուն և ամեն բան նրա ձեռքն է տուել։ Որդուն հաւատացողն յաւիտենական կեանք ունի, իսկ չհաւատացողը կեանք չի տեսնի և Աստուծու բարկութիւնը նրա վերայ կմնայ»։

23.

ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ԲԱՆՏԱՐԿՈՒԻԼԸ։—ՅԻՍՈՒՍՆ ՀԵՌԱՆՈՒՄ Է ՀՐԷԱՍՏԱՆԻՑ

Ղուկ. գ. 19-20 Մատթ. ժդ. 3-5 Հերովդէս չորրորդապետն իւր գործած բազմաթիւ չարիքների վերայ աւելացրեց և այն, որ բռնելով Յովհաննէսին, կապեց ու բանտարկեց իւր եղբայր Փիլիպպոսի կնոջ — Հերովդիադայի պատճառով։

Որովհետև Յովհաննէսն ասել էր Հերովդէսին, որ անպատշաճ է նրան Հերովդիադային կին ունենալ։[1])

---

[1]) Հերովդէս Մեծը տասը կին ունէր։ Իւր երկրորդ կնոջից—Մարիամից, որ Մակաբայեցոց անից էր, ունեցաւ մի որդի Արիստոբուղոս անունով։ Սա ամուսնացաւ իւր հօրաքրոջ աղջկայ Բերենիկէի հետ, որոնց վերջին զաւակն էր Հերովդիան կամ Հերովդիադան։ Հերովդէս Մեծը իւր երրորդ կնոջից—Մարիամից, որ նոյնպէս Մակաբայեցոց անից էր, ունեցաւ մի որդի Փիլիպպոս անունով, սա ամուսնացաւ իւր եղբօր աղջկայ—Հերովդիադայի

Հերովդէսը կամենում էր նրան սպանել, բայց ժողովրդից էր վախենում, որովհետև ա-

---

հետ, սրանց ամուսնութիւնից ծնուեց Սողոմէ աղջիկը։ Հերովդէս Մեծը Փիլիպպոս որդուն չէր սիրում և ժառանգութիւնից զրկեց. Փիլիպպոսը այլ ևս աւելորդ համարելով Պաղեստինում ապրել, իւր կին Հերովդիադայի հետ փոխադրուեցաւ Հռոմ և այնտեղ ապրում էր որպէս մասնաւոր անձն։ (Այս Փիլիպպոսին պէտք չէ շփոթել Փիլիպպոս չորրորդապետի հետ, որ թէև սա էլ Հերովդէս մեծի որդին էր, բայց ծնուած էր Կլեոպատրա կնոջից)։ Հերովդէս Մեծը իւր չորրորդ կնոջից ունեցաւ դարձեալ մի որդի, որ կոչուեցաւ Հերովդէս Անտիպաս։ Սա ամուսնացաւ Արաբիայի Հարէտաս կամ Արէտաս թագաւորի աղջկայ հետ։ Իւր հօր—Հերովդէս Մեծի մահից յետոյ, սա—Հերովդէս Անտիպասը, Հռոմայեցոց Օգոստոս կայսեր հաճութեամբ և հաստատութեամբ նշանակուեցաւ Գալիլիայի և Պերիայի չորրորդապետ։ Իւր երախտագիտութիւնը Հռոմի գահին ցոյց տալու համար Հերովդէս Անտիպասը Հռոմ գնաց։ Հռոմում, Անտիպասը իջաւ իւր եղբայր Փիլիպպոսի տանը, ուր գտնւում էր նաև իւր եղբօր կինը—Հերովդիադան։ Հերովդիադան որպէս վերին աստիճանի խանդոտ, հեշտասէր և փառասէր կին, շատ շուտ կարողացաւ իւր տագր Հերովդէս Անտիպասին իւր ցանցը ձգել։ Սրանք սիրահարուեցան և բանն այնտեղ հասաւ, որ Անտիպասը տիպեց Հերովդիադային բաժանուել իւր ամուսնուց և փոխադրուել Պաղէստին։ Հերովդիադան համաձայնեց և սաքի տակ տալով ազգակցական և խնամէական կապերը և օրէնքը, որ իւր ամուսնուց որդի ունենալով նա չէր կարող ամուսնանալ իւր տագր հետ, վերցրեց իւր աղջիկ Սողոմէին և Հերովդէս Անտիպասի հետ Պաղէստին եկաւ։ Ժողովուրդն սկսեց դժգոհել, տրտնջալ և յուզուել. բայց և ոչ ոք չէր համարձակւում բացարձակապէս բողոք յայտնել այդ անիրաւութեան դէմ։ Միմիայն Յովհաննէս Մկրտիչն էր, որ ձայն բարձրացրեց և բացարձակապէս յայտնեց Հերովդէսին, որ օրէնք չէ իւր եղբօր կնոջ հետ կենակցել։ Այստեղից սկսուեց հալածանքը։ Հերովդէսը կամեցաւ պատժել մարգարէին, որ այդքան յանդուգն կերպով խառնւում էր իւր ընտանեկան գործերին, բայց վախենում էր ժողովրդից, որովհետև մարգարէի տեղ էր ընդունում Յովհաննէսին։ Հերովդիադան ամեն րոպէ գրգռում էր Հերովդէսին Յովհաննէսի դէմ, որը իւր բացարձակ յանդիմանութիւններով վտանգի էր ենթարկել Հերովդիադայի բաղը։ Եւ վերջապէս Հերովդէսը մեղադրելով Յովհաննէսին, որպէս ժողովուրդ գրգռողի, հրամայեց որ մարգարէին շղթայեն և բանտը դնեն։

մենքն էլ նրան մարգարէի տեղ էին ընդունում։

Յովհ. գ. 1-3 Երբ Յիսուսն իմացաւ, որ փարիսեցիները լսել են թէ ինքը շատ աշակերտներ ունի և մկրտում է աւելի՝ քան Յովհաննէսը (թէև ոչ թէ Յիսուս ինքն էր մկրտում, այլ նրա աշակերտները) և միևնոյն ժամանակ այն հանգամանքը, որ Յովհաննէսը բանտարկութեան էր մատնուած,

Մատթ. գ. 12 թողեց Հրէաստանն ու ճանապարհուեց Գալիլիա։

24.

ՅԻՍՈՒՍԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՍԱՄԱՐԱՑԻ ԿՆՈՋ ՀԵՏ

Յովհ. գ. 4-42 Յիսուսը Սամարիայից անցնելիս եկաւ Սամարացիների Սիւքար քաղաքը. այն գիւղի մօտ, որ Յակովբն իւր որդի Յովսէփին տուեց։ Այնտեղ էր գտնւում Յակովբի աղբիւրը։ Յիսուսը ճանապարհից յոգնած, նստեց աղբրի մօտ։ Վեցերորդ ժամը կլինէր։

Մի Սամարացի կին եկաւ ջուր հանելու։ Յիսուսը դիմեց նրան ասելով.—«Ջուր տուր խմեմ»։ (Աշակերտները քաղաք էին գնացել կերակուր գնելու)։ Սամարացի կինն ասաց.—«Դու որ հրէայ ես, էլ ինչպէս ես ինձնից—մի Սամարացի կնոջից—ջուր ուզում. չէ՞ որ հրէաները Սամարացիների հետ չեն խառնւում»։ Յիսուսը պատասխանեց.—«Եթէ դու գիտենայիր Աստուծու պարգևը և թէ ով է քեզնից ջուր ուզողը, այն ժամանակ ինքդ կինդրէիր նրանից և նա կենդանի ջուր կտար քեզ»։

Կինն ասաց.—«Տէր, դու դոյլ չունես ջուր հանելու և ջրհորն էլ խորն է, էլ ո՞րտեղից է քեզ կենդանի ջուրը։ Մի՞թէ դու մեր հայր Յակոբից մեծ ես, որ մեզ այս ջրհորը տուեց և որից թէ ինքը խմեց և թէ իւր որդիքն ու անասունները»։

Յիսուսը պատասխանեց.—«Այս ջրից խըմողը, դարձեալ կծարաւի. բայց նա, որ իմ տուած ջուրը կխմի, նա յաւիտեան չի ծարաւի։ Եւ այն ջուրը որ ես կտամ, յաւիտենական կեանքում նրա մէջ բղխող ջրի աղբիւր կդառնայ»։

Կինն ասաց.—«Տէր, տուր ինձ այդ ջուրը, որ չծարաւեմ և էլ չգամ այստեղից ջուր հանելու»։

Յիսուսն ասաց.—»Գնա, մարդուդ կանչիր և եկ այստեղ»։

Կինը պատասխանեց.—«Ես մարդ չունիմ»։

Յիսուսն ասաց.—«Լաւ ասացիր թէ մարդ չունիմ, որովհետև դու հինգ մարդ ես ունեցել և նա էլ որ այժմ ունիս, քոնը չէ. այդ ճըշմարիտն ասացիր»։

Կինն ասաց.—«Տէր, ես տեսնում եմ որ դու մարգարէ ես։ Մեր հայրերն այս լեռների վերայ երկրպագեցին, իսկ դուք (հրէաներդ) ասում էք որ երկրպագութեան տեղն Երուսաղէմն է»։

Յիսուսն ասաց.—«Ա՜յ կին, հաւատայ ինձ, որ ժամանակ կգայ, երբ ո՞չ այս լեռների վերայ և ո՞չ էլ Երուսաղէմում կերկրպագէք Հօրը[1])։

[1]) Այլ ամեն տեղ. համեմատել—«Ամենայն տեղ խունկ և սուրբ պատարագ պէտք մատուցուի իմ անուան» (Մաղաք. ա. 11).

Դուք չէք իմանում թէ ինչին էք երկրպագում, իսկ մենք գիտենք թէ որին ենք երկրպագում, որովհետև փրկութիւնը հրէաներից է։ Ժամանակ կգայ և հէնց եկել է արդէն, երբ ճշմարիտ երկրրպագողները հոգով և ճշմարտութեամբ կերկրրպագանեն Հօրը, որովհետև Հայրն էլ իրեն այդպիսի երկրպագողներ է որոնում։ Աստուած Հոգի է և Նրան երկրպագողները պէտք է Հոգով և ճշմարտութեամբ երկրպագանեն»։

Կինն ասաց.—«Գիտեմ որ Քրիստոս կոչուած Մեսիան գալու է, երբ որ գայ, նա մեզ ամեն բան կյայտնէ»։

Յիսուսն ասաց,—«Քեզ հետ խօսողը, Մեսիան ինքն է»։

Այս խօսքի վերայ եկան նրա աշակերտները և զարմանում էին որ կնոջ հետ էր խօսում։ Բայց նրանցից և ո՞չ մինը չասաց թէ ի՞նչ ես խընդրում, կամ դրա հետ ի՞նչ ես խօսում։

Կինն իւր սափորը թողեց ու քաղաք գնալով մարդկանցն ասաց.—«Եկէք ու տեսէք այն մարդուն, որ ինչ արել եմ, բոլորն էլ ասաց. արդեօք նա Քրիստոսը չէ՞»։

Նրանք դուրս եկան քաղաքից և նրա մօտ գնացին։

Աշակերտներն աղաչում էին նրան ու ասում.—«Ռաբբի, հաց կեր»։

Նա պատասխանեց.—«Ես կերակուր ունիմ, որ դուք չգիտէք»։ Աշակերտներն իրար ասացին.—«Երևի դրա համար կերակուր բերող է եղել»։

Յիսուսն ասաց.—«Իմ կերակուրն այն է, որ ինձ Ուղարկողի կամքն անեմ և նրա գործը կատարեմ։ Դուք չէ՞ք ասում, որ մինչև հունձը դեռ չորս ամիս ժամանակ կայ, բայց ես ասում եմ ձեզ, բարձրացրէք ձեր աչքերը և նայեցէք արտերին, թէ ինչպէս սպիտակել և հասել են հնձի համար։ Հնձողը վարձ է ստանում և յաւիտենական կեանքի մէջ պտուղ ժողովում, այնպէս որ թէ ցանողը և թէ հնձողը միասին կուրախանան։

Որովհետև այս դէպքում ճիշտ է ասուած թէ,—մէկը ցանում է, իսկ միւսը՝ հնձում։ Ես ուղարկեցի ձեզ հնձելու այն, որ դուք չէք աշխատել, ուրիշներն աշխատեցին և դուք նրանց աշխատանքի մէջ մտաք»։

Այն քաղաքի բնակիչներից շատերը լսելով կնոջ պատմածները (որ Յիսուսն ասել էր նրան այն բոլորն ինչ որ ինքն արել էր) հաւատացին Յիսուսին։

Այդ պատճառով էլ Սամարացիներն եկան Յիսուսի մօտ և խնդրեցին որ իրենց մօտ մնայ. Յիսուսն էլ երկու օր մնաց այնտեղ։ Տեսնելով Յիսուսին և լսելով նրա խօսքերը, աւելի շատերն հաւատացին նրան։

Իսկ այն կնոջն ասացին, որ այլևս ոչ թէ նրա խօսքովն են հաւատում, այլ որ իրենք լսեցին ու ճանաչեցին որ Նա է իսկապէս աշխարհի Փրկիչը։

ՅԻՍՈՒՍԸ ԵՒ ՍԱՄԱՐԱՑԻ ԿԻՆԸ

25.

ԱՐՔԱՅԱՆՑՆԻ ՈՐԴՈՒ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Յովհ. գ. 43-54 Յիսուսն երկու օրից յետոյ դուրս եկաւ այնտեղից և Գալիլիա գնաց, որովհետև ինքը վկայեց՝ որ մարգարէն իւր հայրենիքում պատիւ չունի։

Երբ նա Գալիլիա եկաւ, գալիլիացիները ընդունեցին Նրան, որովհետև նրանք էլ Երուսաղէմ էին գնացել և ներկայ եղել տօնին, ուր տեսել էին այն բոլոր նշանները, որ արել էր Յիսուսը տօնի ժամանակ։

Այդպէս նա դարձեալ Գալիլիայի Կանա քաղաքն եկաւ, որտեղ ջուրը գինու էր փոխել։ Այդտեղ կափառնաումցի մի արքայազն կար, որի որդին հիւանդ էր։ Երբ լսեց որ Յիսուսը Հրէաստանից Գալիլիա էր եկել, նրա մօտ եկաւ և աղաչեց, որ Կափառնաում գայ իւր մահամերձ որդուն բժշկելու։

Յիսուսն ասաց Նրան.—«Մինչև որ նշաններ ու հրաշքներ չտեսնէք, դուք չէք հաւատայ»։

Արքայազն ասաց.—«Տէր, գնանք, քանի որ մանուկս չէ մեռել»։ Յիսուսն ասաց.—«Գնա, քո որդին արդէն առողջացած է»։

Նա Յիսուսի խօսքին հաւատաց ու գնաց։

Ճանապարհին նրա ծառաները դիմաւորեցին և աւետելով ասացին.—«Մանուկդ առողջացած է»։

Նա ծառաներին հարցրեց.—«Ո՞ր ժամին ապաքինեց հիւանդը»։

Ծառաները պատասխանեցին.—«Երէկ ժամի եօթին տաքութիւնն անցաւ»։ Նրա հայրն իսկոյն յիշեց, որ այդ այն ժամն էր, երբ Յիսուսն ասաց թէ քո որդին արդէն առողջացած է։

Այն ժամանակ թէ ինքը և թէ իւր ամբողջ ընտանիքը հաւատացին Յիսուսին։

Յիսուսը Հրէաստանից Գալիլիա գալով, սրանով երկրորդ հրաշքն էր՝ որ գործեց։

26.

ՅԻՍՈՒՍԸ ՆԱԶԱՐԷԹՈՒՄ.

Ղուկ. գ. 16-30 Յիսուսն եկաւ Նազարէթ, որտեղ մեծացել էր և իւր սովորութեան համաձայն՝ շաբաթ օրը ժողովարան մտաւ։ Երբ նրան Եսայիա մարգարէի գիրքը տուին, նա վերկացաւ, բացեց գիրքը և գտաւ այն տեղն ուր գրուած էր.—«Տիրոջ Հոգին ինձ վերայ է, որովհետև Նա ինձ օծեց, որպէս զի աղքատներին աւետիս տամ. ինձ ուղարկեց սիրտ կոտրածներին բժշկելու, գերիներին ազատութիւն քարոզելու, կոյրերին տեսողութիւն տալու, նեղուածներին ազատ արձակելու և Տիրոջ ընդունելի տարին քարոզելու»։[1]) Նա փակեց գիրքը, տուեց պաշտօնեային և նստեց։ Ժողովարանի մէջ եղողների աչքերը նրան էին նայում։

Նա սկսեց խօսել նրանց հետ և ասաց.—

[1]) Եսայի կա. 1-2, տես 22 և 11-րդ մարգ.

«Այսօր այս գրուածքը, որ ձեր ականջներով լսեցիք՝ կատարուեցաւ»։

Ամենքն էլ վկայեցին այդ բանը և զարմանում էին նրա բերանից դուրս եկած շնորհալի խօսքերի վերայ և ասում.—«Սա Յովսէփի որդին չէ՞»։ Յիսուսն ասաց նրանց.—«Անշուշտ դուք ինձ այս առածը կասէք.—«Բժիշկ, բժշկիր քո անձը և այստեղ, քո հայրենիքումն էլ արա այն, ինչ որ, ինչպէս լսել ենք, Կափառնաումի մէջ էիր անում»։ Եւ աւելացրեց.—«Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ ոչ մէկ մարգարէ չէ ընդունւում իւր հայրենիքում։ Արդարև, ասում եմ ձեզ. Եղիայի օրերում, երբ երկինքն երեք տարի և վեց ամիս փակուեցաւ և երկրի մէջ մեծ սով եղաւ, թէ և Իսրայէլի մէջ շատ այրի կանայք կային, բայց Եղիան նրանցից և ոչ մինի մօտ չուղարկուեցաւ, այլ միայն Սիդոնացոց Սարեպտա քաղաքում բնակուող մի այրի կնոջ մօտ։[1]) Եւ Եղիսէ մարգարէի ժամանակ Իսրայէլի մէջ շատ բորոտներ կային, բայց նրանցից և ոչ մինը չբժշկուեց, բացի Ասորի Նէեմանից»։[2])

Ժողովարանի մէջ եղողները լսելով այս խօսքերը՝ բարկութեամբ լցուեցան։ Եւ վեր կենալով, դուրս հանեցին նրան քաղաքից և տարան այն լերան գլուխը, որի վերայ շինուած էր քաղաքը, որպէս զի նրան վայր գլորեն. բայց Յիսուսն անցնելով նրանց միջից՝ հեռացաւ։

---

1) Գ. թագ. ԺԷ 8-16.

2) Դ. թագ. Ե 9-14.

27.

ՅՈՎՀԱՆԻ ԵՒ ԶԵԲԵԹԻԱՅԻ ՈՐԴՈՅ ՆՈՐ ԿՈՉՈՒՄԸ

Մարկ. ա. 14-20 Յովհաննէսի մատնուելուց յետոյ Յիսուսը Գալիլիա եկաւ, ուր Աստուծու Արքայութեան Աւետարանն էր քարոզում և ասում.—«Ժամանակը լրացած է և Աստուծու թագաւորութիւնը մօտեցած. ապաշխարեցէք և Աւետարանին հաւատացէք»։

Գալիլիացոց ծովեզրը պտտելիս, նա տեսաւ Սիմոնին և նրա եղբայր Անդրիասին, որոնք ուռկան էին ձգել ծովը, որովհետև ձկնորս էին։ Յիսուսը նրանց ասաց.—«Եկէք իմ յետևից և ես ձեզ մարդկանց որսորդ կդարձնեմ»։

Նրանք էլ անմիջապէս թողին իրենց ուռկանները ու գնացին Նրա յետևից։

Մի փոքր առաջ գնալով, տեսաւ Զեբեթեան Յակոբոսին և նրա եղբայր Յովհաննէսին, որոնք նաւի մէջ նստած՝ իրենց ուռկանները էին կարկատում։

Նրանց էլ կանչեց. և նրանք թողնելով իսկոյն նաւի մէջ իրենց հօրը—Զեբեթիային և ծառաներին, գնացին Նրա յետևից։

28.

ՅԻՍՈՒՍԸ ԿԱՓԱՌՆԱՈՒՄ ՔԱՂԱՔՈՒՄ։ ԴԻՒԱՀԱՐԻ, ՊԵՏՐՈՍԻ ՋՈՐԱՆՁԻ ԵՒ ԱՅԼՈՑ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ։

Մատթ. դ. 13-16 Յիսուսը թողնելով Նազարէթը, եկաւ Գալիլիայի ծովեզրեայ քաղաքը Կափառնաում, որ

Զաբուղոնի և Նեփթաղիմայի սահմաններումն էր։ Որ կատարուի Եսայիա մարգարէի միջոցով ասուածը թէ.—Զաբուղոնի երկրում և Նեփթաղիմայի երկրում, ծովի ճանապարհին, Յորդանանի միւս կողմը և Հեթանոսների Գայիլիայում խաւարի մէջ նստած ժողովուրդը՝ մեծ լոյս տեսաւ և մահի երկրում և ստուերի մէջ նստողների վերայ՝ լոյս ծագեց։[1])

Ղուկ. գ. 31-37 Եւ երբ Կափառնաում եկաւ, շաբաթ օրերը ուսուցանում էր ժողովրդին։ Եւ ժողովուրդը զարմանում էր Նրա վարդապետութեան վերայ, որովհետև իշխանութեամբ էր խօսում։ Ժողովարանում պիղծ դեւի ոգի ունեցող մի մարդ կար, նա բարձր ձայնով աղաղակեց ու ասաց.—«Թող մեզ, ի՞նչ գործ ունիս մեզ հետ, Յիսուս Նազովրեցի, եկար որ մեզ ջնջե՞ս. գիտեմ թէ ով ես դու Սուրբդ Աստուծոյ»։ Յիսուսը սաստեց նրան ու ասաց.—«Պապանձուի՛ր և դո՛ւրս եկ դրա միջից»։ Եւ դեւը ժողովրանի մէջ տեղը, գետնովը տուեց նրան և դուրս եկաւ նրա միջից։

Ամենքը զարմացած խօսում էին միմեանց հետ ու ասում.—«Ի՞նչ է նշանակում այս. նա իշխանութեամբ և զօրութեամբ հրամայում է պիղծ ոգիներին և նրանք դուրս են գալիս»։

Եւ Նրա համբաւը ամբողջ շրջակայքում տարածուեցաւ։

---

[1]) Մարգ Եսայի թ 1-2.

Մարկ. ա. 29 Յիսուսը շուտով դուրս գալով ժողովարանից, Յակովբոսի և Յովհաննէսի հետ մտաւ Սիմոնի և Անդրիասի տուն։

Ղուկ. գ. 39-41 Սիմոնի զոքանչը սաստիկ տանջւում էր ջերմից։ Յիսուսին աղաչեցին որ նրան բժշկէ։ Յիսուսը մօտեցաւ նրան, սաստեց ջերմին և ջերմը թողեց նրան։ Նա իսկոյն վեր կացաւ և սկսեց ծառայել նրանց։ Արևը մայր մտնելու ժամանակ, ամենքն էլ, որոնք զանազան ցաւերով հիւանդներ ունէին, բերին Նրա մօտ և Նա ամեն մինի վերայ դնելով իւր ձեռքը՝ բժշկում էր նրանց։

Մատթ. ը. 17 Որ կատարուի Եսայիա մարգարէի միջոցով ասուածը, թէ նա մեր հիւանդութիւնները վերացրեց և մեր ցաւերը կրեց։[1])

Ղուկ. գ. 42-45 Շատերից դեւեր էին դուրս գալիս, որոնք աղաղակում էին ու ասում.—«Դու Քրիստոսն ես, Աստուծու Որդին»։

Յիսուսը սաստում էր նրանց և թոյլ չէր տալիս ասելու, որ իրենք գիտեն թէ Նա Քրիստոսն է։

Հետևեալ օրը Նա դուրս եկաւ տնից և գընաց մի անապատ տեղ։ Ժողովուրդը որոնում էր նրան և գալով նրա մօտ՝ չէին թողնում հեռանալու։

Յիսուսը նրանց ասաց.—«Ուրիշ քաղաքնե-

---

[1]) Այս վկայութիւնը բերուած է Եսայի մարգարէութիւնից համաձայն եբրայական բնագրի. հոթանանից բնագիրն ասում է. «Նա մեր մեղքերը վերացրեց և մեզ համար չարչարուեց»։ (Եսայի. ծգ. 4)։ Համեմատել նաև գլ. ծգ. 5-ի հետ։ Տես 46-րդ մարգ.

ին էլ պէտք է աւետարանեմ Աստուծու Արքայութիւնը, որովհետև ես հէնց դրա համար եմ ուղարկուած»։

Եւ քարոզում էր Գալիլիայի ժողովարաններում։

29.

ՁԿԱՆ ՈՐՍՐ

Ղուկ. 5. 1-11 Երբ Յիսուսը կանգնած էր Գենեսարէթի ծովափի մօտ և Աստուծու խօսքերը լսելու համար նրա շուրջը մեծ բազմութիւն էր խռնուած, ծովակի ափին երկու նաւ տեսաւ։ Ձկնորսները դուրս էին եկել նաւից և իրենց գործիքներն էին լուանում։ Նա մտաւ Սիմոնի նաւը և խնդրեց մի փոքր ափից հեռացնել և ապա նստելով սկսեց նաւի միջից ժողովուրդին ուսուցանել։

Երբ խօսքը վերջացրեց, Սիմոնին ասաց.— «Նաւը դէպի խորը խաղացուր և ձգեցէք գործիքները՝ ձուկ որսալու»։

Սիմոնը պատասխանեց ու ասաց.—«Վարդապետ, ամբողջ գիշեր աշխատեցինք և ոչինչ չորսացինք. բայց որ ասում ես, կձգենք գործիքները»։

Երբ ձգեցին, այնքան շատ ձուկ որսացին, որ փոքր էր մնում թոռերը պատառուէին։ Իսկոյն նշան տուին միւս նաւի մէջ եղող որսակից ընկերներին որ օգնեն իրենց, նրանք եկան և երկու նաւերն էլ ձկներով լցրին, այնպէս որ փոքր

էր մնում նաւերը խորասուզուէին։ Երբ Սիմոն Պետրոսը տեսաւ այդ բանը, Յիսուսի ոտքերն ընկաւ ու ասաց.—«Տէր, ինձնից հեռու կաց, որովհետև ես մի մեղաւոր մարդ եմ»։

Այդ հրաշալի ձկան որսը երկիւղ ազդեց ոչ միայն Սիմոնին և նրա հետ եղողներին, այլ և Զեբեթիայի որդոց—Յակովբին ու Յովհաննէսին։

Յիսուսն ասաց Սիմոնին.—«Մի վախենայ, սրանից յետոյ մարդիկ կորսաս»։

Եւ նաւերը ցամաք հանելով՝ ամեն բան թողին և գնացին նրա յետևից։

30.

ԳԱԼԻԼԻԱՅԻ ԲՈՐՈՏԻ ԵՒ ԿԱՓԱՌՆԱՈՒՄԻ ԱՆԴԱՄԱԼՈՒԾԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Ղուկ. 5. 12-16 Երբ Յիսուսը հասաւ Գալիլիայի քաղաքներից մինը, մի բորոտ մարդ եկաւ և տեսնելով Յիսուսին, երեսի վերայ ընկաւ, աղաչեց նրան ու ասաց.—«Տէր, եթէ կամենաս, կարող ես ինձ սրբել»։ Յիսուսն իւր ձեռքը մեկնեց, մօտեցրեց նրան ու ասաց.—«Կամենում եմ, սրբուիր»։ Բորոտութիւնն իսկոյն անցաւ։ Յիսուսը պատուիրեց նրան ու ասաց.—«Ոչ ոքի չասես, այլ գնա և 'ի վկայութիւն նոցա, ցոյց տուր քեզ քահանային և ինչպէս հրամայել է Մովսէսը, տուր մաքրուելուդ ընծան»։ Նրա համբաւը աւելի և աւելի տարածուելով, ժողովրդի մեծ բազմութիւն էր հաւաքւում Նրա քարոզները լսելու և իրենց հիւանդութիւններից բժշկուելու։ Բայց

Նա անապատ տեղերն էր քաշւում և այնտեղ աղօթում։

Մարկ. բ. 1 Մի քանի օրից յետոյ դարձեալ Կափառնաում եկաւ և լուր տարածուեցաւ որ Նա տանն է։

Ղուկ. ե. 17-26 Երուսաղէմից, Գալիլիայից և Հրէաստանի բոլոր քաղաքներից ժողովուած փարիսեցիներն ու օրինաց վարդապետները Նրա մօտ եկան, Նրա խօսքերը լսելու. և Տիրոջ զօրութիւնը ներկայ էր[1]) նրանց հիւանդներին բժշկելու։

Այդ միջոցին մարդիկ մահճի մէջ դրած մի անդամալոյծ բերին և կամենում էին տուն մըտցնել և Յիսուսի առաջ դնել, բայց բազմութեան պատճառով չկարողացան ներս տանել. այն ժամանակ տանիք բարձրացրին և երդիկը քանդելով անդամալուծին մահճով Քրիստոսի առաջ իջեցրին։

Յիսուսը տեսնելով նրանց հաւատը՝ ասաց անդամալուծին. – Ա՛յ մարդ, քո մեղքերդ ներւում են քեզ։

Դպիրներն ու փարիսեցիները սկսեցին դատողութիւններ անել և ասել.—«Ո՞վ է այս հայհոյութիւններ խօսողը։ Բացի Աստուծուց, ո՞վ կարող է մեղքեր ներել»։

Յիսուսն հասկանալով նրանց խորհուրդը պատասխանեց ու ասաց.—«Ի՞նչ էք մտածում ձեր սրտերում։ Ո՞րն է հեշտ ասել. ներւում են

[1]) Տիրոջ զօրութիւնը երեւում էր յանձին Յիսուս Քրիստոսի, որ հիւանդներին բժշկելով յայտնի էր կացուցանում Տիրոջ զօրութեան ներկայութիւնը։

քեզ քո մեղքերը թէ՞ վեր կաց ու գնա։ Բայց որպէս զի իմանաք, որ Մարդու Որդին իրաւունք ունի երկրի մէջ մեղքեր ներելու. ասաց անդամալուծին.—Վեր կաց, վերցրու մահիճդ և գնա քո տուն»։

Անդամալոյծն իսկոյն, ամենքի ներկայութեամբ վեր կացաւ, վերցրեց մահիճը և Աստուծուն փառաբանելով՝ գնաց իւր տուն։

Ամենքն էլ զարմացան, փառաւորեցին Աստուծուն և երկիւղով լցուած՝ ասացին.—«Այսօր նոր հրաշք տեսանք»։

Մարկ. բ. 12 Շատերն էլ ասում էին.—«Այսպիսի բան մենք երբէք չենք տեսել»։

31.

ՄԱՏԹԷՈՍ ՄԱՔՍԱԼՈՐԻ ԿՈՉՈՒՄԸ

Մարկ. բ. 13-22 Յիսուսը կրկին դուրս եկաւ ծովեզրը և բոլոր ժողովուրդը գնաց նրա յետևից և նա ուսուցանում էր նրանց։ Անցնելիս նա տեսաւ Ալփիայի որդի Ղեւիին,[1]) որ նստած մաքսի տուրքն էր գանձում և ասաց նրան.—«Ե՛կ իմ յետևից»։ Երբ Յիսուսը մտնելով նրա տուն՝ նստեց, Նրա հետ նստեցին նաև Նրա աշակերտներն ու շատ մաքսաւորներ, որոնք հետևում էին Նրան։

Երբ դպիրներն ու փարիսեցիները տեսան որ Յիսուսը մաքսաւորների և մեղաւորների հետ է ուտում, Նրա աշակերտներին ասացին.—«Ի՞նչ-

[1]) Ղեւին—Մատթէոսի հրէական անունն էր։

պէս բան է, որ դուք մաքսաւորների ու մեղաւորների հետ էք ուտում և խմում»։ Յիսուսը լսելով այդ՝ ասաց.— «Բժիշկն հիւանդներին է հարկաւոր և ոչ առողջներին։ Ես եկայ ապաշխարութեան կանչելու մեղաւորներին և ոչ արդարներին»։

Յովհաննէսի աշակերտներն ու փարիսեցիները ծոմ էին. եկան և Յիսուսին ասացին.— «Ի՞նչն է պատճառը, որ Յովհաննէսի աշակերտները և փարիսեցիները ծոմ են պահում, իսկ քո աշակերտները չեն պահում»։

Յիսուսը պատասխանեց.— «Մի՞թէ առագաստի որդիքը փեսան իրենց մօտ եղած ժամանակ կարող են ծոմ պահել։ Քանի որ փեսան իրենց մօտ է չեն կարող պահել։ Բայց կգան օրեր, երբ փեսան կբաժանուի նրանցից, այն ժամանակ նրանք կպահեն»։

Ոչ ոք հին շորը նոր կտորով չի կարկատի, որովհետև նոր կտորը կձգէ հինը և պատառուածքն աւելի վատ կլինի։ Եւ ոչ ոք նոր գինին հին տակերի մէջ չի ածի, որովհետև գինին տակերը կճաքեցնի և այդպիսով թէ գինին կթափուի և թէ տակերը կոչնչանան։

Նոր գինին, պէտք է նոր տակերի մէջ ածել։

IV.

ՅԻՍՈՒՍԻ ԳՈՐԾԵՐՆ ԵՐԿՐՈՐԴ ՁԵՏԿԻՑ ՄԻՆՉԵՒ ԵՐՐՈՐԴԸ

32.

ՊՐՈՊԱՏԻԿԷԻ ԱՆԴԱՄԱԼՈՒԾԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Յով. ե. 1–15 Սրանից յետոյ սկսուեց Հրէից տօնը (Զատիկը) և Յիսուսն Երուսաղէմ գնաց։

Երուսաղէմում, Պրոպատիկէ [1]) աւազանի մօտ, որ եբրայեցերէն Բեթհեզդա էր կոչւում, հինգ սրահ կար, ուր հաւաքուած էին հիւանդների, կոյրերի, կաղերի և գոսացածների մեծ բազմութիւն, որոնք ջրի յուզուելուն էին սպասում։

Տիրոջ հրեշտակը ժամանակին աւազանն էր իջնում և ջուրը յուզում և ով որ ջրի յուզուելու ժամանակին էր մտնում, բժշկւում էր այլ ևս հիւանդութեան ոչ մի նշան չունենալով։

Այնտեղ մի մարդ կար, որ երեսուն և ութ

[1]) Պրոպատիկէ յունարէն բառ է, նշանակում ոչխարային։ Զոհուելիք ոչխարներն այդ աւազանից էին խմում, լուացւում և սրբւում։ Հրէաներն իրանց լեզուով այդ աւազանը կոչում էին Բեթհեզդա, որ նշանակում է Ողորմութեան տուն. այդ աւազանի ջրով էին բժշկւում հիւանդները և այդպիսով յայտնւում Աստուծու ողորմութիւնը։

տարուց ի վեր հիւանդ էր։ Յիսուսը տեսնելով նրան ընկած և իմանալով որ երկար ժամանակ է ինչ պառկած է, ասաց նրան.—«Կամենում ես առողջանալ»։

Հիւանդը պատասխանեց ու ասաց.—«Տէր, ոչ ոք չունիմ որ ջրի յուզուելու ժամանակն ինձ աւազանը ձգէ և մինչև իմ շարժուելը, ինձնից առաջ մի ուրիշն է իջնում»։

Յիսուսն ասաց.—«Վեր կաց, մահիճդ վերցրու և գնա»։

Նա առողջացաւ, վեր կացաւ, վերցրեց իւր մահիճն ու գնաց։ Այն օրը շաբաթ էր։ Հրէաները բժշկուածին ասացին.—«Այսօր շաբաթ է և դու չպէտք է մահիճդ վերցնես»։ Նա պատասխանեց ու ասաց.—«Ինձ բժշկողն ասաց որ մահիճս վերցնեմ ու գնամ»։

Հարցրին նրան.—«Ո՞վ է այն մարդը, որ ասաց քեզ մահիճդ վերցրու և գնա»։

Բժշկուածն ինքն էլ չգիտէր, թէ ով էր իրեն բժշկողը, որովհետև մեծ բազմութիւն լինելու պատճառով, Յիսուսն արդէն հեռացել էր այնտեղից։

Սրանից յետոյ Յիսուսը գտնելով նրան տաճարում, ասաց.—«Ահա դու առողջացար, այլևս մի մեղանչիր, որ էլ չար բան չպատահի քեզ»։

Նա գնաց և հրէաներին պատմեց, որ իրեն բժշկողն Յիսուսն էր։

33.

ՊՐՈՊԱՏԻԿԷԻ ՔԱՐՈԶԸ

Յովհ. ե. 16-47 Հրէաները տեսնելով, որ Յիսուսը շաբաթ օրերն է բժշկութիւններ անում, սկսեցին հալածել նրան։

Յիսուսն ասաց նրանց.—«Հայրս մինչև այժմ գործում է ես էլ եմ գործում». Հրէաներն աւելի ևս բորբոքուեցան և կամեցան սպանել նրան, որովհետև նա ոչ միայն շաբաթ օրերն էր լուծում, այլ և Աստուծուն իւր հայրն էր անուանում և իրեն Աստուծուն հաւասարեցնում։

Դրա համար Յիսուսն ասաց նրանց.—«Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում ձեզ, որ Մարդու Որդին ինքն իրենից ոչինչ չի կարող անել, եթէ չտեսնի որ Հայրն անում է։ Որովհետև ինչ որ Հայրն է գործում, նոյնն և Որդին է գործում։ Հայրը սիրում է Որդուն և ցոյց է տալիս իւր արած բոլոր գործերը. և սրանցից աւելի մեծ գործեր ցոյց կտայ, որի վրայ դուք կզարմանաք։ Ինչպէս Հայրը յարութիւն է տալիս և կենդանացնում է մեռելներին, այնպէս էլ Որդին որին կամենայ կը կենդանացնէ։ Հայրը ոչ ոքի չէ դատում, նա ամենայն մի դատաստան Որդուն տուեց, որպէսզի ամենքն էլ ինչպէս Հօրն են պատուում, այնպէս էլ Որդուն պատուեն։ Ով Որդուն չէ պատուում, նշանակում է նա չէ պատուում Նրան ուղարկող Հօրը։ Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում, որ իմ խօսքը լսողը և ինձ Ու-

դարկողին հաւատացողը՝ յաւիտենական կեանք կունենայ. նա դատաստանի տակ չի ընկնի, այլ մահից դէպի կեանքը կերթայ։

Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում ձեզ, որ կգայ ժամանակ և արդէն եկել է, երբ մեռելները կլսեն Աստուծու Որդու ձայնը և լսողները պէտք է ապրեն։ Որովհետև ինչպէս Հայրն ինքն իւր մէջ կեանք ունի, այդպէս էլ Որդուն տուեց, որ ինքն իւր մէջ կեանք ունենայ։ Եւ դատելու իշխանութիւն տուեց նրան, որովհետև Նա Մարդու Որդին է։ Այս բանի վերայ մի զարմանաք, որովհետև կգայ ժամանակ, երբ գերեզմաններում եղողները կլսեն Աստուծու Որդու ձայնը։ Եւ յարութիւն առնելով՝ դուրս կգան գերեզմաններից. բարիք գործողները կեանքի, իսկ չարիք գործողները՝ դատապարտուելու համար։

Ես ինքս ինձնից ոչինչ չեմ կարող գործել։ Ինչպէս լսում եմ, այնպէս էլ դատում եմ և իմ դատաստանը արդար է. որովհետև ես ոչ թէ իմ կամքն եմ որոնում, այլ ինձ ուղարկող Հօր կամքը։ Եթէ ես ինձ համար վկայեմ, այն ժամանակ իմ վկայութիւնը ճշմարիտ չի լինի։ Ուրիշն է որ վկայում է ինձ համար և դուք գիտէք որ ճշմարիտ է այն վկայութիւնը, որով ինձ համար վկայեց։

Դուք ուղարկեցիք Յովհաննէսի մօտ և նա վկայեց ճշմարտութեան մասին։ Ասենք ես չեմ էլ ընդունում մարդկանց վկայութիւնը. բայց այս բանն այն պատճառով եմ ասում, որ դուք

փրկուէք։ Նա վառուող և լոյս տուող մի ճրագ էր, բայց դուք քիչ ժամանակ միայն կամեցաք նրա լուսով ուրախանալ։

Ես Յովհաննէսի վկայութիւնից աւելի մեծ վկայութիւն ունիմ, այդ այն գործերն են, որ Հայրս տուեց ինձ կատարելու։ Հենց այդ կատարածս գործերը վկայում են, որ Հայրն է ինձ ուղարկել։

Եւ ինձ ուղարկող Հայրն ինքը վկայեց ինձ համար։ Իսկ դուք ոչ Նրա ձայնն էք լսել և ոչ Նրա կերպարանքն էք տեսել։ Դուք ձեր մէջ չունիք բնակած Նրա խօսքը, որովհետև դուք Նրա ուղարկածին չէք հաւատում։

Քննեցէք գրքերը, որոնցով և կարծում էք թէ յաւիտենական կեանք էք ունենալու։ Հենց այդ գրքերն են որ վկայում են ինձ համար. բայց դուք չէք կամենում գալ ինձ մօտ, որ կեանք ունենաք։ Ես մարդկանցից փառք չեմ ընդունում, բայց ես ճանաչում եմ ձեզ. դուք ձեր մէջ դէպի Աստուած սէր չունիք։ Ես եկայ Հօրս անունով և դուք ինձ չէք ընդունում, եթէ մի ուրիշն իւր անունով գայ, նրան կընդունէք։ Դուք ինչպէս կարող էք հաւատալ, քանի որ փառքն իրարից էք ստանում. իսկ այն փառքն որ մի Աստուծուցն է, դուք չէք որոնում։

Չկարծէք թէ ես պէտք է մեղադրեմ ձեզ Աստուծու առաջ. դուք ունիք մեղադրող և նա Մովսէսն է, որի վերայ դրել էք ձեր յոյսը։ Որովհետև եթէ դուք հաւատայիք Մովսէսին, ինձ էլ

կհաւատայիք, որովհետև նա իմ մասին գրեց։[1]) Եւ եթէ նրա գրածներին չէք հաւատում, իմ խօսքերին ինչպէս պէտք է հաւատաք»։

34.

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՍԿ ԿՈՐՁԵԼԸ. — ԿԱՓԱՌՆԱՈՒՄԻ ԳՈՍԱՅԱԾԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ.

Մատթ. ժբ. 1-8 Յիսուսը մի շաբաթ օր անցնում էր արտերի միջով։ Նրա աշակերտները քաղցելով, սկսեցին հասկեր կտրել, փշրել և ուտել։ Փարիսեցիները տեսնելով այդ՝ ասացին.—«Քո աշակերտներն անում են այն, որ չպէտք է շաբաթ օրն անել»։

Յիսուսն ասաց.—«Դուք չէ՞ք կարդացել արդեօք Դաւթի արածը, որ երբ ինքն ու իւր հետ եղողները քաղցեցան, Աստուծու տունը մտան և առաջաւորութեան հացերը կերան, որ օրէնքով[2]) միայն քահանաները կարող էին ուտել և ոչ ինքը կամ իրեն հետ եղողները[3])։ Կամ թէ չէ՞ք կարդացել արդեօք օրէնքում, որ շաբաթ օրերը քահանաները տաճարում շաբաթն են պղծում և անմեղ են[4])։ Բայց ասում եմ ձեզ, որ տաճարից մեծն այստեղ է։

Եւ եթէ հասկանայիք թէ ի՞նչ է նշանակում

[1]) Տես 17-րդ մարգ.
[2]) Ղեւտ. իդ 5-9.
[3]) Թագ. իա 1-6.
[4]) Յիսուսն ակնարկում է որ քահանաները շաբաթ օրերը, զոհեր էին մատուցանում, կենդանիներ մորթում ողջակիզում և այլն (Թուոց իբ. 9.)։

—«Ողորմութիւն եմ կամենում և ոչ զոհ»— խօսքը,[1]) այն ժամանակ դուք անմեղներին չէիք դատապարտի։ Որովհետև Մարդու Որդին նաև շաբաթի տէրն է»։

Ղուկ. գ. 6-10 Հետևեալ շաբաթ օրը ուսուցանելու համար, նրանց ժողովարանը մտաւ։ Այնտեղ մի մարդ կար, որի աջ ձեռքը գոսացած էր։ Դպիրներն ու փարիսեցիները հետևում էին, որ տեսնեն թէ կըժշկէ՞ արդեօք նրան շաբաթ օրը, որպէս զի չարախօսելու առիթ ունենան։ Բայց Յիսուսն հասկանալով նրանց միտքը, գոսացածին ասաց.—«Վեր կաց և մէջ տեղը կանգնիր»։

Նա էլ վեր կացաւ ու կանգնեց։

Յիսուսն ասաց նրանց.—«Հարցնում եմ ձեզ. շաբաթ օրը բարիք պէտք է գործել թէ՞ չար. հոգի ապրեցնել թէ՞ կորցնել»։

Եւ զայրացած նայելով իրեն շրջապատողներին, դիմեց գոսացածին ու ասաց.—«Մեկնիր ձեռքդ»։ Նա մեկնեց և միւսի նման առողջացաւ։

Մատթ. ժբ. 14 Փարիսեցիները դուրս գալով, խորհուրդ արին թէ ինչպէս կորցնեն նրան։ Բայց Յիսուսն իմանալով այդ՝ այնտեղից հեռացաւ։

35.

ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ.

Մարկ. գ. 7-8 Յիսուսն իւր աշակերտներով դէպի ծովեզրը գնաց և ժողովուրդն էլ, որ եկել էր Գալիլիայից,

[1]) Ովսիայ գ. 6.

Հրէաստանից, Երուսաղէմից և Յորդանանի միւս կողմից՝ նրա յետևից էր գնում։ Տիւրոսի և Սիդոնի շրջակայքում բնակուողները լսելով նրա կատարած գործերի մասին, մեծ բազմութեամբ գալիս էին Նրա մօտ։

Մատթ. ժբ. 15-21 Նա բժշկեց ամենքին և պատուիրեց որ իւր մասին ոչ ոքի բան չյայտնեն, որ կատարուի Եսայիա մարգարէի միջոցով ասուածը[1])—«Ահա իմ մանուկը որին ընտրեցի և իմ սիրելին որին հաւանեցի։ Իմ Հոգին նրա վերայ կդնեմ և հեթանոսներին իրաւունք կպատմի։ Չի հակառակուի, չի աղաղակի և նրա ձայնը հրապարակներում ոչ ոք չի լսի։ Ջախջախուած եղէգը չի փշրի և առկայծեալ պատրոյգը չի հանգցնի մինչև որ դատաստանը յաղթութեան հանէ։ Եւ հեթանոսները նրա անունը կյուսան

Ղուկ. գ. 12-13 Յետոյ, աղօթելու համար լեառը բարձրացաւ և ամբողջ գիշերն Աստուծուն աղօթելով անցկացրեց։ Առաւօտը կանչեց իւր աշակերտներին և նրանցից տասնուերկու հոգի ընտրեց, որոնց առաքեալներ անուանեց։

Մարկ. գ. 14-19 Դրանք պէտք է միշտ իւր հետ լինէին, քարոզելու ուղարկուէին և ցաւեր բժշկելու ու դևեր հանելու իրաւունք ունենային։ Որոշեց.—Սիմոնին, որին Պետրոս անուանեց։ Զեբեթիայի որդի Յակոբին և սրա եղբայր Յովհաննէսին, որոնց անունները Բաներգէս դրեց, որ նշանակում է Որդի Որոտման։ Անդրիասին ու Փիլիպպոսին։ Բարդուղիմէոսին և Մատթէոս մաքսաւորին։ Թովմասին և Ալփիայի որդի Յակոբոսին։ Թադէոսին, Սիմոն Կանանացուն և Յուդա Իսկարիովտացուն, որն և մատնեց նրան։

[1]) Եսայիա մարգ. գլխ. խբ. 1—4. Յիշեալ մարգարէութիւնը բաղկացած է երեք մասից. առաջին մասը ցոյց է տալիս Յիսուսի Աստուծու Որդի լինելը և Նրա պաշտօնի բարձրութիւնը։ Միջին մասը ցոյց է տալիս, որ Յիսուսը իւր պաշտօնը խոնարհութեամբ, հեզութեամբ և քաղցրութեամբ պէտք է կատարէր. իսկ վերջին մասը, որ նա իւր խաչով, կատարեալ յաղթութիւն պիտի տանէր։

Բառացին (տես 23-րդ մարգ.) վերցրած է եօթանասնից թարգմանութիւնից։ Մատթէոսը յիշեալ մարգարէութիւնը Եբրայական օրինակի համեմատ է առաջ բերել։

36.

ԼԵՐԱՆ ՔԱՐՈԶԸ[1]).

Ղուկ. գ. 17-19 Յիսուսն իւր առաքեալների հետ իջաւ մի տափարակ տեղ, ուր Նրա աշակերտներն էին ժողովուած. և նրա խօսքերը լսելու և իրենց հի-

[1]) Յիշեալ քարոզը, որ Յիսուսի խօսած գլխաւոր քարոզներից մինն է. յայտնի է «Լերան քարոզ» անունով, որովհետև Յիսու-

ւանդութիւններից բժշկուելու համար Հրէաստանից, Երուսաղէմից և Տիւրոսի ու Սիդոնի ծովեզրից մեծ բազմութիւն էր հաւաքուած։ Եկած էին նաև պիղծ ոգի ունեցողներ, որոնք բժշկւում էին։ Եւ ամբողջ ժողովուրդը ուզում էր դիպչել Նրան, որովհետև նրանից զօրութիւն էր դուրս գալիս և ամենքին բժշկում։

Մատ. Նա բանալով իւր բերանը՝ խօսքն ուղղեց իւր
ե. 2. աշակերտներին և ասաց.

Ա.

Մատթ. ե. — Երանի հոգով աղքատներին, որովհետև
3-12 նրանցն է Երկնքի Արքայութիւնը։

Երանի սգաւորներին, որովհետև նրանք պէտք է մխիթարուին։

սրն այդ քարոզը խօսել է Կապառնաումի լերան վերայ, որի երկու գագաթների մէջ տեղը գտնուած տափարակում ժողովուել էին Նրա առաքեալները, աշակերտներն ու ժողովրդի մեծ բազմութիւն։

Քրիստոնեաներն այդ լերանը «Երանութեանց լեռն» են անուանում, որովհետև քարոզը սկսւում է «Երանութիւններով»։ Այդ ընդարձակ քարոզը, որ Մատթէոսն առաջ է բերում երեք ամբողջ գլխների մէջ, իսկ Ղուկասը՝ համառօտ կերպով, բաժանւում է հինգ մասի։

Ա. մասն ուսուցանում է, որ մարդուս ոչ թէ արտաքին, այլ ներքին առաւելութիւններն են բարձրացնում։ Մարդուս բարոյական և առաքինի յատկութիւններն ու գործերն են, որ «Երանելի» են դարձնում։

Բ. մասը՝ վերաբերում է այն մեծ նշանակութեանը, որ ստացան Հին-Ուխտի պատուիրանները Նոր-Ուխտի մէջ։

Գ. մասը վերաբերում է երեք մեծ բարեպաշտական գործեր կատարելու ձևին։

Դ. մասը առաջ է բերում անհատական կեանքի կատարելութեան պայմանները. և

Ե. մասը շօշափում է ընկերական կեանքի մէջ նկատուելիք սկզբունքները և տալիս է քարոզի վերջաբանը։

Երանի հեզահոգիներին, որովհետև նրանք պէտք է ժառանգեն երկիրը։

Երանի նրանց, որոնք արդարութեան համար քաղցած ու ծարաւ են, որովհետև նրանք պէտք է կշտանան։

Երանի ողորմածներին, որովհետև նրանք պէտք է ողորմութիւն գտնեն։

Երանի նրանց որոնք սրտով սուրբ են, որովհետև նրանք պէտք է Աստուծուն տեսնեն։

Երանի խաղաղարարներին, որովհետև նրանք պէտք է Աստուծու որդիք կոչուին։

Երանի արդարութեան համար հալածուածներին, որովհետև նրանցն է Երկնքի Արքայութիւնը։

Երանի է ձեզ, երբ իմ պատճառով կնախատեն ձեզ, կհալածեն և վրաներդ չարախօսութիւն կանեն։

Ցնծացէք և ուրախացէք, որովհետև շատ մեծ է ձեր վարձքը երկնքում. այդպէս հալածեցին նաև ձեզնից առաջ եղող մարգարէներին։

Մատթ. ե. Դուք երկրի աղն էք, եթէ աղն իւր համը
13-16 կորցնէ, էլ ինչպէս կարելի է նրան իւր համը տալ. չէ՞ որ բացի դէն ձգելուց և մարդկանցից ոտնակոխ լինելուց, էլ ուրիշ բանի պէտք չի գայ։

Դուք աշխարհի լոյսն էք։ Լերան վերայ կանգնած քաղաքը չի կարող թաղնուել։ Եւ վառելով ճրագը, գրուանի[1]) տակ չեն դնում, այլ

---

[1]) Գրուան. ցորեն չափելու փայտեայ աման—չանախ.

աշտանակի վերայ և նա լուսաւորում է տան մէջ եղողներին։

Թող ձեր լոյսն այդպէս լուսաւորէ մարդկանց առաջ, որպէս զի ձեր բարի գործերը տեսնեն և ձեր Երկնաւոր Հօրը փառաւորեն։

Ղուկ. գ. 24-26 Բայց վա՜յ ձեզ հարուստներիդ, որովհետև ձեր մխիթարութիւնն արդէն ստացել էք։

Վա՜յ ձեզ, որ կուշտ էք այժմ, որովհետև յետոյ պէտք է քաղցէք։

Վա՜յ ձեզ, երբ մարդիկ ձեր մասին լաւը կասեն, որովհետև նրանց հայրերն այդպէս էին վարուում սուտ մարգարէների հետ։

Բ

Մատթ. ե. 17-42 **Զ**կարծէք թէ ես (Մովսէսի) օրէնքներն ու մարգարէների գրուածները քանդելու եմ եկել. ոչ, քանդելու չեմ եկել այլ լրացնելու։ Ճըշմարիտն եմ ասում, որ թերևս երկինքն ու երկիրը ջնջուին, բայց օրէնքներից ու մարգարէների գրուածներից յոտի[2]) չափ մի կէտ անգամ չի ջնջուիլ, որովհետև բոլորն էլ պէտք է կատարուի։

Ով այս փոքրիկ պատուիրաններից մի բան անգամ քանդէ և մարդկանց այնպէս ուսուցանէ, նա Երկնքի Արքայութեան մէջ փոքր կը կոչուի.

[2]) Յոտ—հայերէն նշանախեց, եբրայեցերէն իօտ և յունարէն իօտա. առհասարակ գործ էր դրուում ամենափոքր կամ ամենաչնչին բան ցոյց տալու համար։ Յոտը եբրայեցոց այբբենարանի ամենափոքրիկ նշանագիրն էր։

իսկ ով կը կատարէ և կուսուցանէ, նա մեծ կը կոչուի։ Բայց ասում եմ ձեզ, որ եթէ ձեր արդարութիւնը դպիրների և փարիսեցիների արդարութիւնից չի գերազանցի, չէք կարող Երկնքի Արքայութիւնը մտնել։

Դուք լսեցիք որ ձեր նախնիքներին ասուեցաւ.—Մի սպանիր. ով որ սպանէ պարտական կլինի դատաստանին։[1]) Բայց ես ասում եմ ձեզ. —Եթէ մինը զուր տեղը բարկանայ եղբօր վերայ, պարտական կլինի դատաստանին։ Ով իւր եղբօրը յիմար ասէ, պարտաւոր կլինի Ատեանին[2]). իսկ ով իւր եղբօրը խենթ ասէ, պարտական կլինի գեհենի կրակին[3])։ Եթէ դու ընծայ զոհի սեղանի վերայ մատուցանելու ժամանակն յիշես, որ եղբայրդ քո դէմ մի խէթ ունի, ընծայ սեղանի առաջ թող և գնա, նախ եղբօրդ հետ հաշտուիր և ապա եկ ընծայ մատուցանելու։

Հակառակորդիդ հետ շուտով, քանի որ նը-

[1]) Ելից ժ. 13.

[2]) Այսինքն հրէից բարձրագոյն դատաստանին—Սինեդրիոնին։

[3]) Այդ կրակը Նոր-կտակարանի մէջ գեհեն բառով է բացատրուած։ Գեհեն բառը Գէ-Ենոմ բառի աղաւաղուած ձևն է, որ նշանակում է Ձոր—Ենոմի և գտնուում է Երուսաղէմի մօտ. որ արևմտեան կողմից սկսուելով իջնում է դէպի հարաւ և խառնուում է Կեդրոնի ձորի հետ։ Աքազի և Մանասէի ժամանակ այդ ձորը կուռքերի նուիրուեցաւ. իսկ Յոսիան կործանելով այդ կուռքերը՝ ձորը պղծեց և նրանից յետոյ Գէ-Ենոմ կամ Գեհեն անունը պիղծ տեղի համանիշն եղաւ (տես բ. Մնաց. իբ. 3. լգ. 6. գ. թագ. իգ. 10) Նոր կտակարանի մէջ Գեհեն բառը գործածուեցաւ իբրև դատապարտեալների դժոխք։

բա հետ ճանապարհումն ես՝ հաշտուիր. որպէս-զի, չլինի թէ հակառակորդդ դատաւորի ձեռքը մատնէ քեզ և դատաւորն էլ դահճի և բանտը ձգուիս։ Ճշմարիտն եմ ասում քեզ, որ մինչև վերջին նաքարակիդդ (մօտ $1^1/_2$ կոպ.) չվճարես, այնտեղից չես կարող դուրս գալ։

Լսեցիք որ ձեր նախնիքներին ասուեցաւ.— Մի շնար։[1]) Բայց ես ասում եմ ձեզ, որ ով կը-նայէ որ և է կնոջ նրան ցանկանալու մտքով, նա արդէն իւր սրտի մէջ շնացաւ նրա հետ։ Եթէ աջ աչքդ գայթակղեցնէ քեզ, հանիր ու դէն ձգիր, որովհետև լաւ է անդամներիցդ մինը կորչի, քան ամբողջ մարմինդ գեհենի մէջ ընկնի։ Եւ եթէ աջ ձեռքդ գայթակղեցնէ քեզ, կտրիր ու դէն ձգիր, որովհետև լաւ է որ անդամների-ցըդ մինը կորչի, քան ամբողջ մարմինդ գեհենն ընկնի։

Ասուեցաւ նոյնպէս, որ ով իւր կնոջն ար-ձակէ, թող նրան արձակման թուղթ տայ[2])։ Բայց ես ասում եմ ձեզ.—ով որ արձակէ իւր կնոջն առանց պոռնկութեան պատճառի, նա ա-ռիթ է տալիս նրան պոռնկութիւն անելու. և ով արձակուած կնոջն է առնում, նա էլ է պոռնը-կութիւն անում։

Լսեցիք դարձեալ որ ձեր նախնիքներին ասուեցաւ թէ.—Սուտ մի երդուիր և Տիրոջը

---

1) Ել. Ի. 14.

2) Բ. Օր. Իդ. 1։

տուած երդումդ կատարիր։[1]) Բայց ես ասում եմ,—ամենևին մի երդուէք. ոչ երկնքով, որով-հետև Աստուծու աթոռն է և ոչ երկրով, որով-Նրա ոտքի պատուանդանն է. ոչ Երուսաղէմով, որովհետև Մեծ թագաւորի քաղաքն է։ Եւ մի երդուիր գլխովդ, որովհետև չես կարող մէկ մա-զըդ անգամ սպիտակ կամ թուխ դարձնել։ Եւ թող ձեր խօսքը լինի.—այո՝ այո և ոչ՝ ոչ. և սրանից աւելին՝ չարիցն է։ Լսեցիք որ ասուե-ցաւ.—Աչքն՝ աչքի և ատամն ատամի տեղ։[2]) Բայց ես ասում եմ ձեզ,—չարին մի հակառակէք, այլ եթէ մէկն աջ ծնոտիդ ապտակ խփէ, միւսն էլ դարձրու։ Ով որ կամենայ քեզ հետ դատուել և շապիկդ առնել, նրան բաճկոնդ էլ տուր։ Եւ ով որ ստիպէ քեզ իւր հետ մի մղոն գնալ, նրա հետ երկուսը գնայ։

Քեզանից ուզողին տուր և փոխ առնել կա-մեցողից երեսդ մի դարձնի։

Ղուկ. գ. 30 Եթէ մէկին փոխ տուիր, էլ ետ մի պահանջիր։

Մատթ. Ե. 43-45 Յետոյ լսեցիք որ ասուեցաւ.—Սիրիր ըն-կերոջդ և ատիր թշնամուդ։[3]) Բայց ես ասում եմ ձեզ,—սիրեցէք ձեր թշնամիներին, օրհնեցէք ձեզ անիծողներին. բարի արէք ձեզ ատողներին և աղօթեցէք ձեզ տանջողների և հալածողների համար, որ ձեր Երկնաւոր Հօր որդիքը լինէք, որովհետև իւր արեգակը և չարերի և բարինե-

---

1) Ղևտ. ԺԹ. 12.

2) Ել. Խա. 23-25։

3) Ղևտ. ԺԹ. 18։

րի վերայ է ծագում և անձրև է թափում թէ արդարների և թէ մեղաւորների վերայ։ Եթէ սիրէք նրանց, որոնք ձեզ են սիրում, ինչ վարձ կունենաք, չէ՞ որ մաքսաւորներն էլ նոյնն են անում։

Ղուկ. գ. 33-36 Եթէ ձեր բարերարներին բարութիւն անէք, ինչ վարձ կունենաք, չէ՞ որ մեղաւորներն էլ նոյնն են անում։

Եւ եթէ նրանց էք փոխ տալիս, որոնցից ետ ստանալու յոյս ունիք, ինչ վարձ կունենաք, չէ՞ որ մեղաւորներն էլ մեղաւորներին են փոխ տալիս, որպէս զի նոյն չափով ետ ստանան։

Բայց դուք փոխ տուէք և ոչինչ մի սպասէք. և դուք մեծ վարձ կստանաք և Բարձրեալի որդիք կլինէք, որովհետև Նա բարի է դէպի ապերախտներն ու չարերը։ Ուրեմն, եղէք ողորմած՝ ինչպէս ձեր Հայրը ողորմած է։

Մատթ. ե. 47-48 Եթէ միայն ձեր բարեկամներին ողջոյն տաք, ինչ աւելի բան էք անում, չէ՞ որ մաքսաւորներն ու մեղաւորներն էլ նոյնն են անում։

Ուրեմն, եղէք կատարեալ՝ ինչպէս ձեր Երկնաւոր Հայրը կատարեալ է։

Գ.

Մատթ. գ. 1-18 Զգոյշ կացէք ողորմութիւն տալու ժամանակ, չլինի թէ մարդկանց ներկայութեամբ անէք, նրանց ցոյց տալու նպատակով, այս դէպքում ձեր Երկնաւոր Հօրից վարձ չէք ստանայ։ Երբ ողորմութիւն տալու լինիս, առաջդ փող մի

փչիր, ինչպէս այդ մարդկանցից փառաւորուելու համար կեղծաւորներն են անում՝ ժողովարաններում և հրապարակներում։ Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ նրանք ստանում են արդէն իրենց վարձը։

Դու ողորմութիւնդ այնպէս տուր, որ աջ ձեռքդ չիմանայ, թէ ինչ է գործում ձախդ, որպէս զի տուած ողորմութիւնդ ծածուկ լինի և քո Հայրը, որ տեսնում է ծածուկը, յայտնապէս կհատուցանէ քեզ։

Եւ երբ աղօթում ես, կեղծաւորների նման մի լինիր, որոնք սիրում են մարդկանց ցոյց տալու համար ժողովարաններում և հրապարակների անկիւններում աղօթել. ճշմարիտն եմ ասում ձեզ, որ նրանք ստանում են արդէն իրենց վարձը։

Իսկ դու, երբ աղօթել կամենաս, սենեակդ մտիր, դուռդ փակիր և ծածուկ աղօթիր, և Հայրդ, որ տեսնում է ծածուկը, յայտնապէս կհատուցանէ քեզ։

Աղօթելու ժամանակ հեթանոսների նման մի շատախօսէք, որովհետև նրանք այնպէս են կարծում, թէ իրենց շատախօսութեամբ կարող են լսելի լինել։

Ուրեմն նրանց մի նմանուէք, որովհետև Հայրը մինչև ձեր խնդրելն արդէն գիտէ, թէ ձեզ ինչ է հարկաւոր։

Դուք այսպէս աղօթեցէք.

Հայր մեր, որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէն, զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն[1]։

Որովհետև եթէ դուք մարդկանց իրենց յանցանքները ներէք, ձեր Երկնաւոր Հայրն էլ ձեզ կներէ։ Իսկ եթէ չներէք մարդկանց իրենց յանցանքները, ձեր Հայրն էլ չի ների ձեր յանցանքները։

Պաս պահելու ժամանակն էլ կեղծաւորների նման մի՛ տրտմէք, որոնք իրենց տխուր դէմքով կամենում են ցոյց տալ մարդկանց թէ իրենք պաս են պահում։ Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ հէնց այդ է նրանց վարձը։

Իսկ դու երբ պաս պահելու լինիս, օծիր գլուխդ իւղով, լուա՛ երեսդ, որպէս զի պաս պա-

[1]) Մեր երկնաւոր Հայր, սուրբ լինի քո անունը. քո թագաւորութիւնը գայ. լինի քո կամքը ինչպէս երկնքում, այնպէս էլ երկրիս վերայ. մեր ամենօրեայ հացը, այսօր էլ տուր մեզ. և ների՛ր մեր պարտքերը, ինչպէս մենք էլ մեր պարտապանների՛ն ենք ներում. մեզ փորձութեան մէջ մի՛ ձգիր, այլ ազատի՛ր մեզ չարից. որովհետև քոնն է արքայութիւնը, զօրութիւնն ու փառքը յաւիտեանս. ամէն։

հող երևաս ոչ թէ մարդկանց, այլ Հօրդ առաջ. և Հայրդ որ տեսնում է ծածուկը՝ յայտնապէս կհատուցանէ քեզ։

Դ.

Մատթ. գ. 19-34 Ձեր գանձերն երկրիս վերայ մի՛ հաւաքէք, ուր ցեցն ու ուտիճն են ապականում և ուր գողերը գետնի տակ փորում են ու գողանում։ Ձեր գանձերն երկնքումն հաւաքեցէք, ուր ոչ ցեցն ու ուտիճը կապականեն և ոչ գողերը գետնի տակը կփորեն և կգողանան։[1]) Որովհետև ուր ձեր գանձերն են հաւաքուած, այնտեղ էլ ձեր սրտերը կլինեն։ Մարմնի ճրագը աչքն է, եթէ աչքդ պարզ է, ամբողջ մարմինդ լուսաւոր կլինի, իսկ եթէ աչքդ խաւար է, ամբողջ մարմինդ խաւար կլինի։ Այսպէս ուրեմն, եթէ քո մէջ եղած լոյսը խաւար է, խաւարն որչափ աւելի։

Ոչ ոք չէ կարող երկու տիրոջ ծառայել կամ մինին պէտք է սիրէ՝ միւսին ատէ, կամ մինին պէտք է պատուի՝ միւսին արհամարէ։

Չէք կարող և՛ Աստուծուն և՛ մամոնային ծառայել։[2]) Դրա համար էլ ասում եմ ձեզ, հո-

[1]) Այսինքն ձեր գանձերը ողորմութեան և բարի գործերի վերայ գործ դրէք, որովհետև ով որ ողորմութիւն է տալիս, նա իւր գանձը Աստուծուն է յանձնում, ուր մնում է ապահով։ Համեմատել—«Ով որ ողորմութիւն է տալիս տնանկին՝ Աստուծուն է փոխ տալիս». (Առակ. ԺԹ. 17)։

[2]) Մամոնայ բառը ասորական ծագումն ունի և նշանակում է ստացուածք, ինչք, գանձ։

դու համար հոգ մի անէք, թէ ինչ պէտք է ուտէք կամ ինչ պէտք է խմէք. և ոչ էլ ձեր մարմինների համար, թէ ինչ պէտք է հագնէք։ Չէ՞ որ ոգին կերակուրից և մարմինը հագուստից բարձր է։

Նայեցէք երկնքի թռչուններին, որոնք ոչ վարում, ոչ հնձում և ոչ էլ շտեմարաններում են ժողովում, բայց ձեր Երկնաւոր Հայրը կերակրում է նրանց. մի՞թէ դուք նրանցից աւելի չէք։ Ձեզանից ո՞րն իւր վերայ հոգս անելով, կարող է իւր հասակի վերայ մի կանգուն աւելացնել։ Հագուստի համար ինչո՞ւ էք հոգս անում։ Նայեցէք վայրի շուշանին թէ ինչպէս է աճում. ոչ աշխատում է և ոչ մանում։ Ասում եմ ձեզ, Սողոմոնն անգամ իւր բոլոր փառքերի մէջ նրանցից և ոչ մինի պէս շոր չհագաւ։ Եթէ վայրի խոտը, որ այսօր կայ և վաղը կրակը պէտք է ձգուի Աստուած այդպէս է հագցնում, հապա որչափ աւելի ձեզ համար կհոգայ, թերահաւատներ։

Այսուհետև հոգս մի անէք և ասէք, թէ ինչ ուտենք, կամ ինչ խմենք և կամ ինչ հագնենք։ Այդ բաները միայն հեթանոսներն են խնդրում, որովհետև ձեր Երկնաւոր Հայրը գիտէ, որ այդ ամենը հարկաւոր է ձեզ։ Դուք նախ Աստուծու Արքայութիւնը և Նրա արդարութիւնը խնդրեցէք և այդ ամենը կտրուի ձեզ։

Այսուհետև հոգս մի անէք վաղուան համար, որովհետև վաղն ինքն իւր համար կհոգայ. իւրաքանչիւր օրուան համար՝ իւր նեղութիւններն էլ բաւական է։

Ե.

Մատթ. է. 1-6 Մի դատէք, որ չդատուիք, որովհետև ինչ դատաստանով դատէք, նրանով պէտք է դատուիք և ինչ չափով չափէք, նրանով պէտք է չափուէք։ Ինչո՞ւ եղբօրդ աչքի շիւղը տեսնում ես և քո աչքի գերանը չես տեսնում։ Կամ ինչպէս ես ասում եղբօրդ թող քո աչքի շիւղը հանեմ, այն ինչ քո աչքում գերան կայ։

Կեղծաւոր, առաջ քո աչքի գերանը հանիր և յետոյ նայիր եղբօրդ աչքի շիւղը հանելու։

Սրբութիւնները շներին մի տաք և ձեր մարգարիտները խոզերի առաջ մի թափէք, որպէս զի նրանք ոտնակոխ չանեն և յետ դառնան ու ձեզ պատառոտեն։

Ղուկ. ժա. 5-8 Ձեզանից ո՞վ է այն մարդը, որ եթէ բարեկամ ունենայ և այդ բարեկամը կէս գիշերին գայ նրա մօտ և ասէ.—Բարեկամ, երեք հաց փոխ տուր, որովհետև բարեկամս եկել է ճանապարհից և ոչինչ չունեմ նրա առաջ դնելու, նա ներսից ասէ.—Մի նեղացնիր ինձ, որովհետև դուռն արդէն փակ է և մանուկներս էլ հետս պառկած են անկողնում, չեմ կարող վեր կենալ ու քեզ հաց տալ։ Ասում եմ ձեզ, որ եթէ այդ մարդը յանուն բարեկամութեան էլ վեր չկենայ ուզածը տալու, գոնէ նրա թախանձանքներին զիջանելով վեր կը կենայ և կտայ։

Մատթ. է. 7-29 Խնդրեցէք և կտրուի ձեզ, որոնեցէք և կը գտնէք, բաղխեցէք դուռը և կը բացեն։ Որովհետև խնդրողը՝ կստանայ, որոնողը՝ կգտնի և բաղխողի առաջ՝ կբացուի դուռը։ Արդեօք ո՞վ է ձեզանից այն մարդը, որ եթէ իւր որդին հաց խնդրէ, քար տայ նրան և կամ ձուկ խնդրէ՝ օձ տայ նրան։

Ուրեմն, դուք որ չար էք, գիտէք ձեր որդոց բարի պարգևներ տալ, հապա որքան աւելի ձեր Երկնաւոր Հայրը բարի բաներ կտայ նրանց, որոնք խնդրում են իրենից։

Այսպէս, այն ամենն ինչ որ կամենում էք որ մարդիկն անեն ձեզ, այնպէս էլ դուք արէք նրանց, որովհետև հենց սա է օրէնքն ու մարգարէութիւնը։

Նեղ դռնով մտէք, որովհետև լայն է այն դուռը և ընդարձակ այն ճանապարհը, որ դէպի կորուստն է տանում. և շատերն են այդ ճանապարհով գնում։ Բայց նեղլիկ է այն դուռը և նեղ այն ճանապարհը, որ դէպի կեանքն է տանում և քչերն են նրան գտնում։

Զգուշացէք սուտ մարգարէներից, որոնք ոչխարի զգեստներով են գալիս ձեզ մօտ, իսկ ներսից յափշտակող գայլեր են։ Իրենց պտղից ճանաչեցէք նրանց։ Մի՞թէ կարելի է փշից խաղող քաղել կամ տատասկից թուզ։ Այսպէս, ամեն բարի ծառ՝ բարի պտուղ է բերում, իսկ չար ծառը՝ չար պտուղ է տալիս։ Բարի ծառը, չի կարող չար պտուղ տալ և ոչ էլ չար ծառը՝ բարի պտուղ տալ։ Այն ծառը, որ բարի պտուղ չէ բերում՝ կը կտրուի և կրակը կը ձգուի։ Ուրեմն իրենց պտղից ճանաչեցէք նրանց։

Ամեն մարդ, որ ինձ Տէր—Տէր է կանչում չի մտնի Երկնքի Արքայութիւնը, այլ նա միայն, ով որ կատարում է Երկնաւոր Հօրս կամքը։

Շատերն ինձ այն օրը կասեն.—«Տէր, Տէր, չէ՞ որ Քո անունով մարգարէացանք և Քո անունով դևեր հանեցինք ու հրաշքներ գործեցինք»։ Այն ժամանակ նրանց կասեմ.—«Երբէք ձեզ չեմ ճանաչել. հեռացէք ինձնից անօրէնութիւն գործողներ»։

Նա, որ իմ խօսքերը լսում ու կատարում է, նման է այն իմաստուն մարդուն, որ իւր տունը քարի վերայ շինեց։ Եկան անձրևները, վարարեցին գետերը, փչեցին քամիները, խփեցին տանը և տունը չկործանուեց, որովհետև հիմքը քարի վերայ էր դրուած։

Եւ նա, որ իմ խօսքերը լսում է, բայց չէ կատարում, նման է այն յիմար մարդուն, որ իւր տունը աւազի վերայ շինեց։ Եկան անձրևները, բարձրացան գետերը, փչեցին քամիները, խփեցին տանը և տունն ընկաւ։—Նրա կործանումը խիստ մեծ էր։

Երբ Յիսուսն իւր քարոզը վերջացրեց, ժողովուրդը զարմացաւ Նրա վարդապետութեան վերայ, որովհետև նա ուսուցանում էր ոչ որպէս դպիրները, այլ որպէս իշխանութիւն ունեցող։

37

ՀԱՐԻՒՐԱՊԵՏԻ ԾԱՌԱՅԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆԱՅԻՆԻ ՊԱՏԱՆՈՒ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Ղուկ. է. 1-17 Յիսուսը վերջացնելով քարոզը՝ Կափառնաում մտաւ։

Մի հարիւրապետի ծառայ, որ շատ սիրելի էր իւր տիրոջը, մահամերձ հիւանդ էր։ Երբ հարիւրապետը լսեց Յիսուսի մասին, հրէաների ծերերից ոմանց Նրա մօտ ուղարկելով, աղաչեց որ գայ և իւր ծառային բժշկէ։

Նրանք գալով Յիսուսի մօտ, թախանձանօք աղաչեցին և ասացին.—«Նա արժանի է որ այդ շնորհն անես, որովհետև նա սիրում է մեր ազգը և մեզ համար ժողովարան շինեց»։ Յիսուսը նրանց հետ գնաց և երբ մօտեցաւ տանը, հարիւրապետն Յիսուսի մօտ բարեկամներ ուղարկեց՝ ասելու.—Տէր, դու նեղութիւն մի քաշիր, որովհետև ես արժանի չեմ, որ դու յարկիս տակ մտնես։ Այդ պատճառով էլ ես ինձ արժանի չհամարեցի քեզ մօտ գալու։ Եթէ դու մի խօսք ասես, ծառաս կբժշկուի։ Որովհետև ես էլ իշխանութեան տակ գտնուող մարդ եմ. բայց ձեռքիս տակ զինուորներ ունենալով, մէկին ասում եմ—Գնա. և գնում է. միւսին—Ե՛կ. և գալիս է. ծառայիս պատուիրում եմ—այս բանն արա. և անում է»։

Յիսուսը լսելով այս՝ զարմացաւ և դառնալով իրեն հետևող ժողովրդին՝ ասաց.—«Ճըշ-

մարիտն եմ ասում ձեզ, որ Իսրայէլի մէջ անդամ, այսչափ հաւատք չգտայ»։

Ուղարկուածները տուն վերադառնալով հիւանդ ծառային բժշկուած գտան։

Հետևեալ օրն երբ Նա գնում էր Նային քաղաքը, Նրան հետևում էին իւր աշակերտները և ժողովրդի մեծ բազմութիւն։ Երբ քաղաքի դռանը մօտեցան, այնտեղից մի մեռեալ էին դուրս բերում, որ մի այրի մօր միակ որդին էր։ Քաղաքից շատ ժողովուրդ էր գնում նրա յետևից։

Երբ Յիսուսը մօրը տեսաւ խղճաց ու ասաց։—«Լաց մի լինիր»։ Եւ առաջ անցնելով, մօտեցաւ դագաղին. տանողները կանգ առան. և Յիսուսն ասաց.—«Պատանի՛ քեզ եմ ասում, վեր կաց»։

Մեռեալը վեր կացաւ, նստեց և սկսեց խօսել։ Յիսուսը նրան իւր մօրն յանձնեց։ Ամենքն էլ վախեցան, փառաւորում էին Աստուծուն և ասում.—«Մեր մէջ մեծ մարգարէ է երևացել և Աստուած այցելութիւն արաւ իւր ժողովրդին»։

Յիսուսի մասին եղած այս կարծիքը տարածուեցաւ Հրէաստանում և ամբողջ շրջակայքում։

38.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉԸ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆ Է ՈՒՂԱՐԿՈՒՄ ՅԻՍՈՒՍԻ ՄՕՏ։—ՅԻՍՈՒՍԸ ԳՈՎՈՒՄ Է ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻՆ

Ղուկ. է. 18-35 Յովհաննէս մկրտչի աշակերտներն այս ամենը իրենց վարդապետին պատմեցին։ Նա կան-

չելով իւր աշակերտներից երկուսին, ուղարկեց Յիսուսի մօտ, որ հարցնեն.—«Այն դու ե՞ս, որ պէտք է գայ, թէ՞ ուրիշին սպասենք»։

Նրանք Յիսուսի մօտ գալով՝ ասացին.—«Մեզ Յովհաննէս Մկրտիչն է ուղարկել քեզ մօտ, որ հարցնենք թէ՝ դու այն ես որ պէտք է գայ, թէ՞ ուրիշին սպասենք»։

Յիսուսն հենց այդ ժամանակ շատերին հիւանդութիւններից, ցաւերից և չար ոգիներից բժշկեց և շատ կոյրերի էլ տեսողութիւն շնորհեց։ Ապա դարձաւ Յովհաննէսի աշակերտներին և ասաց.—«Գնացէք և Յովհաննէսին պատմեցէք ինչ որ տեսաք. կոյրերը տեսնում են, կաղերը գնում, բորոտները սրբւում են և խուլերը լսում. մեռելները յարութիւն են առնում և աղքատներին Աւետարան է քարոզւում։ Երանելի է նա, որ իմ մասին չէ գայթակղւում»։

Երբ Յովհաննէսի աշակերտները վերադարձան՝ Յիսուսն սկսեց խօսել ժողովրդի հետ Յովհաննէսի մասին։

—«Ի՞նչ տեսնելու գնացիք անապատը. արդեօք մի եղէգն, որ շարժւում է քամուց։ Արդեօք փափուկ հանդերձներով զարդարուած մի մարդ։ Բայց փափուկ կեանք վարող և երևելի հանդերձներով զարդարուածները՝ թագաւորական պալատներում են ապրում։ Հապա ի՞նչ տեսնելու գնացիք, արդեօք մի մարգարէ՞։ — Այո՛, ասում եմ ձեզ, աւելի մեծ քան մարգարէն։

Սա է որի համար գրուած է.—«Ահա ու-

ղարկում եմ հրեշտակս քո առջևից, որ քո ճանապարհը պատրաստէ»։[1]) Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ կանանց ծնունդների մէջ Յովհաննէսից մեծ մարգարէ չկայ, բայց Աստուծու Արքայութեան միջի փոքրագոյնը՝ նրանից մեծ է»։

Բոլոր ժողովուրդն ինչպէս և մաքսաւորները լսելով այս, փառաւորեցին Աստուծուն, որովհետև Յովհաննէսի մկրտութեամբ էին մկրտուել։ Իսկ փարիսեցիներն ու օրինականներն իրենց վերաբերմամբ անարգեցին Աստուծու խորհուրդը՝ նրանից չմկրտուելով։

Այն ժամանակն Յիսուսն ասաց.—«Արդ, ո՞ւմ նմանեցնեմ այս ազգի մարդկանց և ո՞ւմ են նման։ Սրանք նման են այն մանուկներին, որոնք հրապարակներում նստած, կանչում են իրար և ասում.—«Ձեզ համար փող փչեցինք և պար չեկաք. ողբ երգեցինք և լաց չեղաք»։ Յովհաննէս Մկրտիչն եկաւ, ո՛չ հաց էր ուտում և ո՛չ գինի խմում և ասում էիք դև կայ նրա մէջ։ Մարդու Որդին եկաւ, ուտում է և խմում. և ասում էք.—«Ահա ուտող և արբեցող մարդ, մաքսաւորների և մեղաւորների բարեկամ»։ Եւ իմաստութիւնն արդարացաւ իւր որդիներով։[2])

39.

ՄԵՂԱՒՈՐ ԿԻՆԸ.—ՄԻՋՆԱԴԵՊ ՓԱՐԻՍԵՑԻ ՍԻՄՈՆԻ ՏԱՆԸ։

Ղուկ. է. 36-50 Փարիսեցիներից մինը (որի անունը Սիմոն

[1]) Մաղաք. մարգ. գ. 1.

[2]) Այսինքն.—Երկնքի արքայութեան իմաստութիւնը փառաւորուեցաւ իւր հետևողներով։

էր) խնդրեց Յիսուսին իւր մօտ ճաշելու։ Յիսուսը մտնելով փարիսեցու տունը, ճաշի նստեց։ Այս քաղաքում մի մեղաւոր (պոռնիկ) կին կար, երբ տեղեկացաւ, որ Յիսուսը փարիսեցու տանն է, մի շիշ թանկագին իւղ վերցրեց, եկաւ փարիսեցու տուն և Յիսուսի ետևի կողմից, նրա ոտքերի մօտ կանգնելով՝ սկսեց լաց լինել, իւր արտասուքներով թրջել նրա ոտքերը, իւր գլխի մազերով սրբել և համբուրելով ոտքերը՝ իւղով օծել։

Յիսուսին հրաւիրող փարիսեցին տեսնելով այս՝ ասաց իւր մտքում.—Եթէ սա մարգարէ լինէր, կիմանար թէ ով է և ինչպիսի կին է իրեն մօտեցող այս մեղաւոր կինը։

Յիսուսն հասկանալով փարիսեցու մտքինն ասաց.—«Սիմոն, ուզում եմ քեզ մի բան ասել»։ Փարիսեցին ասաց.—«Ասա, վարդապետ»։

Յիսուսն ասաց. — «Մի փոխատու երկու պարտապան ունէր, մինը հինգ հարիւր դահեկան[1]) էր պարտ, իսկ միւսը՝ յիսուն։ Բայց որովհետև նրանք վճարելու կարողութիւն չունէին, փոխատուն երկուսին էլ ներեց իրենց պարտքը։ Այժմ ասա ինձ, նրանցից ո՞րն աւելի կսիրէ փոխատուին»։

Սիմոնը պատասխանեց.—«Կարծում եմ նա, որին շատ ներեց»։

Յիսուսն ասաց.—«Ուղիղ դատեցիր». և ցոյց տալով կնոջն՝ ասաց Սիմոնին.—«Տեսնում ես

1) Դահեկանը = 60 կոպ.

այս կնոջը։ Ես եկայ քո տուն, դու ոտքերս լուանալու ջուր չտուիր, իսկ սա իւր արտասուքով թրջեց ոտքերս և իւր մազերով սրբեց։ Դու ինձ մի համբոյր էլ չտուիր, իսկ սա այստեղ գալուց մինչև այժմ չի դադարում ոտքերս համբուրելուց։ Դու հասարակ իւղով անգամ չօծեցիր գլուխս, իսկ սա ոտքերս անուշահոտ իւղով օծեց։ Ուստի, ասում եմ քեզ, որ ներւում են սրա շատ մեղքերն հենց այն պատճառով, որ շատ սիրեց։ Իսկ քիչ սիրողին՝ քիչ էլ կներուի»։

Եւ կնոջն ասաց.—«Ներւում են քեզ քո մեղքերը»։

Յիսուսի հետ ճաշի նստողներն սկսեցին իրենց մտքումն ասել.—Ո՞վ է սա, որ մեղքերն էլ է ներում։

Յիսուսը դարձաւ կնոջ ու ասաց.—«Քո հաւատը քեզ փրկեց, գնա խաղաղութեամբ»։

40.

ՅԻՍՈՒՍԻՆ ՀԵՏԵՒՈՂ ԿԱՆԱՅՔ։—ԿՈՅՐ ՈՒ ՀԱՄՐ ԴԻՒԱՀԱՐԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Ղուկ. է. 1-3 Սրանից յետոյ Յիսուսն իւր տասներկու աշակերտների հետ սկսեց շրջել քաղաքներն ու գիւղերը, քարոզում և աւետարանում էր Աստուծու Արքայութիւնը։

Նրա հետ էին նաև մի քանի կանայք, որոնց բժշկել էր չար ոգիներից և հիւանդութիւններից, ինչպէս Մարիամ Մագթաղինացին որից եօթն

դևեր էին դուրս եկել, Հերովդէսի հաղարապետ Քուզայի կին Յովաննան, այնուհետև Շուշանը և ուրիշ շատ կանայք, որոնք իրենց ստացուածքով ծառայում էին Յիսուսին։

Մարկ. գ. 20-21 Վերջապէս եկան տուն և խմբոյն ահագին բազմութիւն հաւաքուեցաւ, այնպէս որ նոյն իսկ հաց ուտել չկարողացան։ Իւր մերձաւորները տեսնելով այդ, գնացին որ նրան բռնի կերպով տուն բերեն, որովհետև կարծում էին, թէ նա իրեն կորցրել է։[1])

Մատթ.ժբ 22-23 Այն ժամանակ մօտեցաւ մի կոյր ու համր դիւահար և Յիսուսը բժշկեց նրան, այնպէս որ համր ու կոյր դիւահարը սկսեց խօսել ու տեսնել։

Ժողովուրդը զարմացած ասում էր՝.—«Զըլինի թէ սա Դաւթի որդի Քրիստոսն է»։

41.

ՅԻՍՈՒՍԸ ՀԵՐՔՈՒՄ Է ԴԻՒԱԿԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆԱԽԱՏՈՒՄ ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐԻՆ։

Մատթ.ժբ 24-37 Երբ փարիսեցիները լսեցին այդ՝ ասացին.—«Դա, դևերի իշխան Բեհեղզեբուղի զօրութեամբ[2]) է դևեր հանում»։ Յիսուսն իմանալով

[1]) Թէ նա իրեն կորցրել է. այսինքն ընկել է ինքնամոռացութեան մէջ։ Յիսուսը տուն վերադառնալով, պէտք է հանգստանար և ճաշէր. բայց ահագին բազմութիւն տեսնելով, նա ստիպուեցաւ խօսել ու նրանց հիւանդներին բժշկել. տանեցիք տեսնելով այդ, դուրս եկան և զօռով տուն մտցրին որ նրան հանգստանալու և ճաշելու միջոց տան։

[2]) Հրէաները սատանաների կամ դևերի մեծին Բեհեղզեբուղ էին կոչում, վերցնելով փղշտացիների Բահաղ-զեբուբ աստուծու անունից։

նրանց խորհուրդն՝ ասաց.—«Ամենայն մի թագաւորութիւն, որ ինքն իւր մէջ է բաժանուում կը կործանուի և ամենայն մի քաղաք կամ տուն, որ ինքն իւր մէջ է բաժանուում՝ չէ կարող հաստատուն մնալ։

Եւ եթէ սատանան կարողանայ սատանայ հանել, նշանակում է ինքն իւր դէմ է գործում, ուրեմն էլ ինչպէս կարող է մնալ նրա իշխանութիւնը։ Եթէ ես Բեհեղզեբուղի զօրութեամբ եմ դևեր հանում, հապա ձեր որդիքն[1]) ո՞ւմ զօրութեամբ են հանում։ Ահա այս պատճառով նրանք ձեր դատաւորները կլինեն։ Իսկ եթէ ես Աստուծու Հոգով եմ դևեր հանում, ապա ուրեմն հասել է ձեզ Աստուծու Արքայութիւնը։ Կամ ի՞նչպէս կարող է ոք մին ուժեղ մարդու տուն մտնել և յափշտակել նրա կայքը. չէ՞ որ նախ պէտք կլինի կապել այդ ուժեղ մարդուն և ապա թէ կողոպտել տունը։

Ով ինձ հետ չէ, նա հակառակ է ինձ. և ով որ ինձ հետ չէ ժողովում՝ նա ցրւում է։ Այդ պատճառով ասում եմ ձեզ.—ամենայն մի մեղք և հայհոյութիւն կներուի մարդկանց, բայց Հոգու դէմ ուղղուած հայհոյութիւնը՝ չի ներուի։

Եթէ մինը որևէ բան խօսի Մարդու Որդու վերայ, կներուի նրան. բայց եթէ Սուրբ Հոգու վերայ խօսի, ո՛չ այս աշխարհում կներուի և ո՛չ

[1]) Այսինքն ձեր երդմնեցուցիչները։ Հրէաների մէջ երդմնեցուցիչ էին կոչւում այն անձինք, որոնք Աստուծու անունով և ս. Գրքի ընթերցմամբ դիւահարներ էին բժշկում։ (տես գրքիս 66-րդ գլուխը։)

հանդերձեալում։ Կամ ծառը բարի ընդունեցէք և նրա պտուղն էլ բարի. և կամ ծառը չար ընդունեցէք և նրա պտուղն էլ չար, որովհետև ծառն իւր պտղից է ճանաչւում։

Օձի զաւակներ, ինչպէս կարող էք դուք բարի խօսել, քանի որ չար էք. որովհետև բերանը սրտի աւելացածից է խօսում։ Բարի մարդն իւր սրտի բարի գանձից՝ բարիք է հանում, իսկ չար մարդը՝ չարիք։ Բայց ասում եմ ձեզ, որ ամենայն մի դատարկ խօսքի համար, որ կասեն մարդիկ, դատաստանի օրը հաշիւ պէտք է տան։ Որովհետև քո խօսքերով պէտք է արդարանաս և քո խօսքերով դատապարտուիս»։

42.

ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐԸ ՅԻՍՈՒՍԻՑ ՀՐԱՇՔ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ։ ՅԻՍՈՒՍԻ ՑԱՆԴԻՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ։—ՅԻՍՈՒՍԻ ՄՕՐՆ ԵՐԱՆՈՂ ԿԻՆԸ

Մատթ. ժբ 38-45 Փարիսեցիներից և դպիրներից ոմանք, այդ նախատական խօսքերը լսելուց յետոյ՝ ասացին Յիսուսին.—Վարդապետ, ուզում ենք քեզնից մի նշան տեսնել»։

Յիսուսը պատասխան տուեց և ասաց.—«Շնացող և չար ազգը նշան է խնդրում և բացի Յովնան մարգարէի նշանից, ուրիշը չի տրուի։

Ինչպէս Յովնան մարգարէն երեք օր ու երեք գիշեր կէտ ձկան փորի մէջ էր, այնպէս էլ Մարդու Որդին երեք օր ու երեք գիշեր երկրի սրտի մէջ կլինի։ Նինուէացիները վեր կը

կենան դատաստանի օրն այս ազգի դէմ և կը դատապարտեն սրան, որովհետև նրանք Յովնանի քարոզութեամբ զղջացին. բայց ահա Յովնանից մեծն այստեղ է։

Հարաւի թագուհին վեր կը կենայ դատաստանի օրն այս ազգի դէմ և կդատապարտէ սրան, որովհետև նա հեռաւոր երկրից եկաւ Սողոմոնի իմաստուն խօսքերը լսելու. բայց ահա Սողոմոնից մեծն այստեղ է։ Երբ պիղծ սատանան դուրս է գալիս մարդու միջից, անջրդի տեղերն է շրջում, հանգստութիւն է որոնում և չէ գտնում։ Այն ժամանակն ասում է.—Վերադառնամ իմ տուն, որտեղից դուրս եկայ և գալով, գտնում է այն պարապ, մաքրուած և կարգի ձգուած։ Այն ժամանակ գնում է ու վերցնում իւր հետ եօթը սատանայ իրենից աւելի չար. և մտնելով՝ բնակւում է այնտեղ և այն մարդու վերջը առաջուանից վատթար է լինում։ Ահա այս չար ազգի հետ էլ այսպէս կլինի»։

Ղուկ. ժա. 27-28 Երբ Յիսուսն այս բաներն էր խօսում, ժողովրդի միջից մի կին բարձրացնելով ձայնը՝ աղաղակեց.—«Երանի՜ այն որովայնին, որ քեզ կրեց և այն ստինքներին որ քեզ կերակրեցին»։

Յիսուսն ասաց.—«Մանաւանդ երանի՜ նրանց որոնք լսում՝ու կատարում են Աստուծու խօսքը։

43.

ԹԷ ՈՐՈՆՔ ԵՆ ՅԻՍՈՒՍԻ ՄԱՅՐՆ ՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Մատթ. ժբ 46-50 Երբ Յիսուսը խօսում էր ժողովրդի հետ, նրա մայրն ու եղբայրները կանգնել էին այն-

տեղ և կամենում էին նրա հետ խօսել։

Ժողովրդականներից մինը դարձաւ Յիսուսին և ասաց.—«Ահա քո մայրն ու եղբայրներն[1]) եկել են և ուզում են քեզ հետ խօսել»։

Յիսուսը պատասխանեց նրանց ու ասաց.—«Ո՞վ է իմ մայրը և ո՞վքեր են իմ եղբայրները»։

Նա ձեռքը մեկնեց դէպի աշակերտներն ու ասաց.—«Ահա սրանք են իմ մայրն ու եղբայրները։ Ով որ կը կատարէ իմ երկնաւոր Հօր կամքը, նա է իմ եղբայրը, քոյրը և մայրը»։

44.

ՍԵՐՄԱՆԱՅԱՆԻ ԱՌԱԿԸ

Մատթ. ԺԳ 1-23

Յիսուսը տանից դուրս գալով, գնաց ծովեզրը։ Այնտեղ մեծ բազմութիւն էր հաւաքուել, որոնք մինչև Նրա նաւ մտնելն ու նստելը՝ կանգնած սպասում էին։

Յիսուսն սկսեց առակներով խօսել նրանց

1) Այստեղ «եղբայրներ» ասելով աւետարանիչներն ակնարկում են Յակոբին, Յովսէսին, Սիմոնին և Յուդային, որոնք ոչ թէ Մարիամից և Յովսէփից ծնուած հարազատ եղբայրներ էին կամ Յովսէփի առաջին կնոջից ծնուածները՝ ինչպէս այդ կարծում էր, այլ Յիսուսի ազգականներն էին, ծնուած Յովսէփի եղբայր Կղէովպասի և ոմն Մարիամի ամուսնութիւնից, ինչպէս այդ յիշում են Մատթէոսը (իէ. 56), Մարկոսը, (ժե, 40) և Յովհաննէսը (ժթ. 25)։ Յիշեալ Յակովբը, Յովսէսը, Սիմոնը և Յուդան իրենց քոյրերով որոնց յիշում են աւետարանիչները բայց առանց անունները տալու, իբրև Յիսուսի հօրեղբօր որդիք ժամանակի, մանաւանդ արևելեան ազգերի և մանաւորապէս հրէից ազգի սովորութեան համաձայն, իրարու «եղբայր» էին համարում (տես նաև գրքիս 133 գլխի ծանօթութիւնը)։

հետ և ասաց.—«Ահա, դուրս եկաւ սերմանացանը սերմ ցանելու։ Սերմանելու ժամանակ, սերմերից մինն ընկաւ ճանապարհի վերայ, թռչունն եկաւ ու կերաւ։ Մինն էլ ընկաւ քարքարոտ տեղ, ուր շատ հող չկար և հողի պակասութեան պատճառով՝ շուտ բուսաւ։ Բայց երբ արևը ծագեց, այրուեցաւ և որովհետև արմատ չունէր՝ չորացաւ։ Մի ուրիշն ընկաւ փշերի մէջ, փշերը դուրս եկան ու խեղդեցին նրան։

Իսկ այն սերմերը, որ լաւ հողի մէջ ընկան՝ բուսան ու պտուղ տուին որը հարիւր, որը վաթսուն և որն՝ երեսուն։

Ով լսելու ականջ ունի՝ թող լսէ։

Աշակերտները մօտենալով նրան՝ ասացին.—«Ի՞նչու ես նրանց հետ առակներով խօսում»։ Յիսուսը պատասխան տուեց ու ասաց.—«Այն պատճառով, որ ձեզ տուած է Երկնքի Արքայութեան խորհուրդն հասկանալու շնորհք, իսկ նրանց չէ տուած։ Որովհետև ով որ ունի նրան կտրուի և կաւելանայ. իսկ ով որ չունի, նրանից ունեցածն էլ կխլուի։ Այն պատճառով եմ առակներով խօսում նրանց հետ, որ տեսնում են ու չեն տեսնում, լսում են ու չեն լսում և մտքումը չեն պահում։ Եւ այսպիսով կատարւում է նրանց վերայ Եսայիայի մարգարէութիւնը, որ ասում է.—Լսելով կլսէք և չէք իմանայ, տեսնելով կտեսնէք ու չէք տեսնի։ Որովհետև թանձրացաւ այս ժողովուրդի սիրտը և ականջներով ծանր են լսում։ Փակեցին իրենց ականջները որ չլսեն.

չեն իմանում սրտով և դարձի չեն գալիս, որ ես նրանց բժշկեմ։[1])

Բայց երանի՜ ձեր աչքերին, որ տեսնում են և ձեր ականջներին՝ որ լսում են։ Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ շատ մարգարէներ և արդարներ ցանկացան տեսնել ձեր տեսածներն ու չտեսան և լսել ձեր լսածներն ու չլսեցին։

Իսկ այժմ լսեցէք դուք սերմանացանի առակի բացատրութիւնը։

Ճանապարհին ընկած սերմը, օրինակ է ա՛յն մարդուն, որ լսում է Արքայութեան մասին ասած խօսքերն ու մտքումը չէ պահում. չարը գալիս է և յափշտակում է նրա սրտի մէջ սերմանածը։

Քարքարոտ հողի վերայ սերմանածն այն է, որ խօսքը լսելուն պէս, ուրախութեամբ ընդունում է այն, բայց որովհետև արմատ չունի և ժամանակաւոր է, հենց որ խօսքի համար նեղութիւն կամ հալածանք է լինում՝ շուտով դայթակղւում է։

Փշերի մէջ սերմանածն այն է, որ թէև լսում է խօսքը, բայց աշխարհիս հոգսերն ու հարստութեան հրապոյրը խեղդում է խօսքը և տնպտուղ է լինում։

Բայց լաւ հողի մէջ սերմանածն այն է, որ լսում է խօսքը և մտքումն է պահում ու պտուղ տալիս, որը հարիւր, որը վաթսուն և որն՝ երեսուն։

[1]) Մարգ. Եսայի գ. 9-10.

45.

ՅԻՍՈՒՍԸ ՍԵՐՄԵՐԻ, ՄԱՆԱՆԵԽԻ ՍԵՐՄԻ, ԽՄՈՐԻ, ԳԱՆՁԻ ՄԱՐԳԱՐՏԻ ԵՒ ՈՒՌԿԱՆԻ ԱՌԱԿՆԵՐՈՎ, ԲԱՑԱՏՐՈՒՄ Է ԵՐԿՆՔԻ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԿԱՄ ԱՒԵՏԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՈՒԻԼՆ ՈՒ ԿԱՋՄՈՒԹԻՒՆԸ

Մարկ. դ. 26-29 Այսպէս է Աստուծու Արքայութիւնը. ինչպէս եթէ մի մարդ սերմ ձգէր հողի մէջ, եւ աղեւս խնամի տանելու պէտ չզգալով ինքը քնէր և վեր կենար. ադդպէս գիշեր ու ցերեկ յաջորդելի իւար իսկ սերմերն իրենի իրենց բուսնէին ու աճէին։ Նա չգիտէ թէ երկիրն ինքն է պտղաբերողը, որը նախ կանաչն է արտադրում, յետոյ հասկը և ապա հասկը ցորենով լցնում։ Բայց երբ պտուղ է տալիս, իսկոյն մանգաղ է ուղարկում, որովհետև հունձն հասել է։

Մատթ. ժգ 31-33 Մի ուրիշ առակ էլ պատմեց նրանց՝ ասելով.—Երկնքի Արքայութիւնը նման է մանանեխի սերմին, որ մի մարդ վերցրեց և իւր արտի մէջ ցանեց։ Նա թէև սերմերից փոքրագոյնն է, բայց երբ աճում է, բոլոր բանջարներից աւելի է մեծանում և ծառ դառնում, այնպէս որ երկնքի թռչունները գալիս ու հանգստանում են նրա ոստերի վերայ։

Մի ուրիշ առակ էլ ասաց նրանց.—Երկնքի Արքայութիւնը նման է խմորի, որ մի կին վերցրեց և երեք գրիւ[1]) ալիւրի հետ խառնեց, մինչև որ ամենն էլ խմորուեցաւ։

[1]) Գրիւ ալիւրը = մօտ 20 ֆ. ալիւրին.

Մատթ. ժդ 44-50 Երկնքի Արքայութիւնը նման է դարձեալ արտի մէջ ծածկուած գանձին, որ մի մարդ գըտնելով այն՝ թաղցրեց և գնաց, ուրախութիւնից ծախեց իւր բոլոր ունեցածն ու այն արտը գնեց։

Երկնքի Արքայութիւնը նման է դարձեալ գեղեցիկ մարգարիտներ որոնող վաճառականին, որ մի պատուական մարգարիտ գտնելով, գնաց իւր բոլոր ունեցածը ծախեց ու այն մարգարիտը գնեց։

Երկնքի Արքայութիւնը նման է դարձեալ ծովի մէջ ձգուած և ամեն տեսակի ձուկ բռնող ուռկանին, որն երբ լցուեցաւ ցամաք հանեցին և նստելով՝ լաւերն ամանների մէջ ժողովեցին, իսկ անպէտքները՝ դէն ձգեցին։ Այդպէս կլինի նաև աշխարհիս վերջը։ Հրեշտակները դուրս կգան և չարերին արդարների միջից ջոկելով՝ կրակի հնոցի մէջ կձգեն. այնտեղ նրանք լաց կլինեն և ատամները կը կրճատցնեն։

46.

ՈՐՈՄԻ ԱՌԱԿԸ

Մատթ. ժգ 24-30 Մի ուրիշ առակ էլ պատմեց նրանց.—Երկընքի Արքայութիւնը նման է այն մարդուն, որն իւր արտի մէջ բարի սերմ ցանեց։ Երբ մարդիկ քնած էին, նրա թշնամին եկաւ, ցորենի մէջ որոմ ցանեց ու գնաց։

Երբ կանաչն երևեցաւ և պտուղ տուեց, որոմն էլ երևեցաւ։ Տանտիրոջ ծառաներն եկան

ու ասացին.—«Տէր, չէ՞ որ քո արտի մէջ բարի սերմ ցանեցիր, ո՞րտեղից է նրա միջի որոմը»։ Նա պատասխանեց.—«Թշնամի մարդն է արել այդ»։ Ծառաները նրան ասացին.—«Եթէ կամենում ես կերթանք ու քաղահան կանենք»։ Նա պատասխանեց.—«Ո՛չ, մի գուցէ որոմը քաղելու ժամանակ, ցորենն էլ հետը քաղէք։ Թողէք որ մինչև հունձը միասին աճեն. հնձի ժամանակ՝ հնձողներին կասեմ.—Առաջ որոմը քաղեցէք և խուրձեր կապեցէք այրելու համար, իսկ յետոյ ցորենն իմ ամբարներում ժողովեցէք»։

Մատթ. ժգ 34-43 Յիսուսն այս բոլորն առակներով խօսեց ժողովրդի հետ և առանց առակի ոչինչ չէր խօսում, որ կատարուի մարգարէի ասածը թէ.—Առակներով կբանամ իմ բերանը և դուրս կը բղխեմ աշխարհի սկզբից 'ի վեր ծածկուած բաները։[1])

Սրանից յետոյ Յիսուսը թողեց ժողովրդին ու տուն եկաւ։ Աշակերտները մօտեցան նրան և ասացին.—«Բացատրիր մեզ արտի մէջ ցանած որոմների առակը»։ Յիսուսը պատասխան տուեց ու ասաց.—«Բարի սերմ ցանողը Մարդու Որդին է. արտը աշխարհս է. բարի սերմը արքայութեան որդիքն են, իսկ որոմը՝ չարի որդիք։ Որոմ ցանողը սատանան է. հունձը աշխարհիս վերջն է, իսկ հնձողները հրեշտակներն են։

Ինչպէս որոմը ժողովւում և կրակումն է այրւում, այնպէս էլ աշխարհիս վերջը կլինի։

---

[1]) Սաղմոս հկ. 2.

Մարդու Որդին կուղարկէ իւր հրեշտակներին, որոնք կժողովեն նրա արքայութիւնից բոլոր դայթակղութիւններն ու անօրէնութիւն գործողներին և նրանց կրակի հնոցի մէջ կձգեն, այնտեղ նրանք լաց կլինեն և ատամները կը կրճատացնեն։

Այն ժամանակն արդարները արևի պէս պէտք է փայլեն Արքայութեան մէջ[2])։

Ով լսելու ականջ ունի՝ թող լսէ»։

Մատթ. ԺԳ 51-52 Եւ ասաց աշակերտներին.—«Հասկացա՞ք այս բոլորը»։ Նրանք պատասխանեցին.—«Այո, Տէր»։ Յիսուսն ասաց.—«Այս պատճառով էլ, Երկնքի Արքայութեանն աշակերտող ամենայն մի դպիր, նման է այն տանուտէրին, որն իւր գանձից հին ու նոր բաներ է հանում»։

47.

ԱԼԵԿՈԾՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԱՐՏՈՒԻԼԸ։—ԳԵՐԳԵՍԱՑԻ ԴԻՒԱՀԱՐԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Մատթ. Ը. 18, 23-27 Յիսուսն իւր շուրջը շատ ժողովուրդ տեսնելով, աշակերտներին հրամայեց ծովի միւս կողմն անցնել։ Երբ նաւ մտաւ, աշակերտներն էլ հետևեցին նրան։ Եւ ահա ծովի վերայ մեծ ալէկոծութիւն սկսուեց, այնպէս որ ալիքները ծածկում էին նաւը։ Իսկ Նա քնած էր։

Այն ժամանակ աշակերտները մօտենալով նրան՝ արթնացրին ու ասացին.—«Տէր փրկիր մեզ, կորչում ենք»։ Յիսուսն ասաց նրանց.—«Ի՞նչու

2) Յունարէնում.—«իրենց Հօր Արքայութեան մէջ»։

էք այդքան վախկոտ, թերահաւատներ»։ Եւ վեր կենալով, սաստեց հողմերին ու ծովին և խաղաղութիւն տիրեց։

Մարդիկ զարմացան ու ասացին.—«Սա ո՞վ է որ հողմերն ու ծովն անգամ հնազանդւում են սրան։

Մարկ. Ե. 1-5 Եւ անցնելով ծովի միւս կողմը, եկան Գերգեսացոց երկիրը։

Երբ Յիսուսը նաւից դուրս եկաւ, գերեզմաններից դուրս եկած և պիղծ դևով բռնուած մի մարդ պատահեց նրան։ Նա գերեզմաններումն էր բնակւում և ոչ ոք չէր կարողանում նրան շղթայել, որովհետև թէ և շատ անգամ էին նրան կապանքի ու շղթայի զարկել, բայց նա փշրել էր կապանքներն ու շղթաները և ոչ ոք չէր կարողանում նրան զսպել։ Նա գիշեր ու ցերեկ գերեզմաններում և լեռներումն էր անցկացնում, աղաղակ բարձրացնելով և իրեն քարակոծ անելով։

Մատթ. Ը. 28 Եւ այնպիսի սարսափ էր տարածել, որ ոչ ոք չէր համարձակւում այն ճանապարհովն անցնել։

Մարկ. Ե. 6-20 Նա հեռուից Յիսուսին տեսնելով, վազեց և երկրպագութիւն տուեց նրան։

Եւ երբ Յիսուսն ասաց.—«Պիղծ ոգի, դուրս եկ այդ մարդուց». դևը բարձր ձայնով գոռաց ու ասաց.—«Ի՞նչ գործ ունիս ինձ հետ Յիսուս, բարձրեալ Աստուծու Որդի, երդուեցնում եմ քեզ Աստուծու անունով, մի տանջիր ինձ»։

Յիսուսը հարցրեց նրան.—«Անունդ ինչ է»։

Նա պատասխանեց.—«Իմ անունը Լեգեոն[1]) է, որովհետև մենք շատ ենք»։

Եւ աղաչում էին, որ երենց այդ երկրից դուրս չանէ։

Այնտեղ լերան մօտ, խոզերի երամակ էր արածում։ Դեւերն աղաչեցին նրան ու ասացին.—«Մեզ երամակն ուղարկիր, որ խոզերի մէջ մտնենք»։

Յիսուսն իսկոյն իրաւունք տուեց. և պիղծ դեւերը դուրս եկան ու խոզերի մէջ մտան։ Երամակը, որ երկու հազար խոզերից էր բաղկացած, բարձր տեղից դէպի ծովը դիմեց ու խեղդուեցաւ։

Խոզարածները փախան և այդ բանը քաղաքում և ագարակներում պատմեցին։

Բնակիչներն իսկոյն դուրս եկան, որ տեսնեն թէ ինչ է պատահել։ Եկան Յիսուսի մօտ և տեսան Լեգեոն ունեցող դիւահարին, որ հագնուած ու զգաստացած նստել էր այնտեղ։ Բոլորն էլ վախեցան։

Ականատեսները պատմեցին նրանց դիւահարին և խոզերին պատահածը։ Եւ նրանք էլ աղաչեցին Յիսուսին որ իրենց սահմաններից հեռանայ։

Երբ Յիսուսն ուզում էր նաւ մտնել, դիւահարն աղաչեց, որ իրեն էլ հետը վերցնի։ Բայց

1) Լեգեոն (ընտրեալ գունդ)—այսպէս էին կոչւում Հռովմայեցոց զինուորական գնդերը. իւրաքանչիւր Լեգեոնը 6000 զինուորից էր բաղկացած։ Այստեղ Լեգեոն բառը դրուած է ոչ թէ թիւը, այլ բազմութիւնը ցոյց տալու։

մերժեց ու ասաց.—«Գնա տուն՝ ընտանիքիդ մօտ և պատմիր նրանց թէ ինչ արաւ Տէրը և ինչպէս խղճաց քեզ»։

Դիւահարը Դեկապոլիս գնաց և սկսեց պատմել ինչ որ Յիսուսն արել էր իրեն։ Ամենքն էլ զարմանում էին։

48.

ՏԵՌԱՏԵՍ ԿՆՈՋ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՅԱՅՐՈՍԻ ԱՂՋԿԱՑ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Մարկ. ե. 21-29 Երբ Յիսուսը դարձեալ ծովի միւս կողմն անցաւ, նրան մեծ բազմութիւն շրջապատեց։ Նա կանգնած էր ծովեզրում։

Յայրոս անունով մի մարդ, որ ժողովարանի իշխաններից մինն էր, տեսնելով Յիսուսին, մօտեցաւ, ընկաւ նրա ոտքերն ու թախանձելով ասաց.—«Աղջիկս մերձիմահ է, եկ, ձեռքդ դիր նրա վերայ, որ առողջանայ ու ապրի»։ Յիսուսը նրա հետ գնաց։ Նրան շատ ժողովուրդ էր հետևում, որն և նեղութիւն էր պատճառում նրան։ Մի կին, որ տասներկու տարի շարունակ տեռատեսութեամբ[1]) էր տանջւում, որն արդէն նեղացել էր բժիշկներին դիմելուց և որն իւր ամբողջ կարողութիւնը փչացրել էր բայց և ոչ մի օգուտ չէր ստացել՝ այլ ընդհակառակն սաստկացել էր հիւանդութիւնը, լսելով Յիսուսի մասին, բազմութիւնը ճեղքելով՝ Յիսուսի յետևից

1) Տեռատեսութիւն նշ. արեան ծորում արգանդից։

եկաւ և ձեռքը նրա հանդերձին դիպցրեց։ Որովհետև ասում էր—«Եթէ ձեռքս նրա հանդերձին դիպցնեմ կբժշկուեմ»։ Իսկոյն արիւնհոսութիւնն ընդհատուեց և ինքն էլ զգաց, որ հիւանդութիւնից բժշկուեցաւ։

Ղուկ. ը. 45-47 Յիսուսն ասաց.—Ո՞վ էր ինձ դիպչողը»։ Երբ ամենքն էլ ուրացան, Պետրոսն և նրա հետ եղողներն ասացին.—«Վարդապետ, բազմութիւնը հրում և նեղում է քեզ և դեռ հարցնում ես թէ ով դիպաւ քեզ»։

Յիսուսն ասաց.—«Մէկն ինձ դիպաւ և ես զգացի որ ինձնից զօրութիւն դուրս եկաւ»։

Կինը տեսնելով որ իւր արածը չծածկուեցաւ, դողալով եկաւ և ընկաւ Յիսուսի առաջ և ժողովրդի ներկայութեամբ պատմեց թէ ինչու դիպաւ նրան և թէ ինչպէս բժշկուեց իսկոյն։

Մարկ. ը. 34-43 Յիսուսն ասաց.—«Աղջիկս, քո հաւատը փրկեց քեզ. գնա խաղաղութեամբ, արդէն բըժշկուած ես քո հիւանդութիւնից»։

Յիսուսը դեռ խօսքը չէր վերջացրել, որ Յայրոսի տնից մարդիկ եկան ու ասացին.—«Աղջիկդ մեռաւ և զուր է այլ ևս վարդապետին նեղացնելդ»։

Յիսուսը լսելով այդ, ասաց նրան.—«Մի վախենայ, միայն հաւատա»։

Եւ բացի Պետրոսից, Յակովբոսից և վերջինիս եղբայր Յովհաննէսից ոչ ոքի չթողեց իւր հետ գալու։

Գալով Յայրոսի տուն, տեսաւ մեծ ամբոխ և լաց և կոծ անող լալկանների մեծ բազմութիւն։ Ներս մտնելով ասաց նրանց.—«Ի՞նչու էք շփոթուել և լաց լինում, մանուկը մեռած չէ, այլ քնած է»։

Եւ սկսեցին ծաղրել նրան։

Յիսուսը բոլորին էլ դուրս հանելով, վերցրեց իւր հետ մանկան հօրն ու մօրը և իւր աշակերտներին, մտաւ մանկան սենեակը և նրա ձեռքից բռնելով ասաց.—«Տալիթա կումի»,[1] (որ նշանակում է աղջիկ, վեր կաց)։ Աղջիկն իսկոյն վեր կացաւ և սկսեց ման գալ։ Նա մօտ տասներկու տարեկան էր։

Տեսնողները չափազանց զարմացան։ Յիսուսը խստիւ պատուիրեց որ ոչ ոք չիմանայ այդ բանը. և հրամայեց կերակրել աղջկան։

49.

ԵՐԿՈՒ ԿՈՅՐԵՐԻ ԵՒ ԽՈՒԼ ՈՒ ՀԱՄԸ ԴԻՒԱՀԱՐԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Մատթ. թ. 27-34 Երբ Յիսուսն այնտեղից դուրս եկաւ, երկու կոյրեր նրա յետևից ընկած աղաղակում էին ու ասում.—«Ողորմիր մեզ, Դաւթի որդի»։ Երբ տուն եկաւ, կոյրերը մօտեցան նրան։ Յիսուսն հարցրեց նրանց.—«Հաւատում էք որ կարող եմ այդ անել»։

Կոյրերը պատասխանեցին.—«Այո, Տէր»։

---

[1]) Արամերէն է, հրէաների այն ժամանակուան խօսած լեզուն։

Այն ժամանակ Յիսուսն իւր ձեռքը նրանց աչքերին մօտեցրեց և ասաց.—«Ձեր հաւատի համեմատ թող լինի ձեզ»։ Եւ նրանց աչքերը բացուեցան։

Յիսուսը սաստեց նրանց ու ասաց.—«Զգոյշ կացէք, թող ոչ ոք չիմանայ»։

Իսկ նրանք դուրս գալով տնից, ամբողջ երկրի մէջ հռչակեցին նրան։

Նրանց դուրս գալուց յետոյ, Նրա մօտ մի համր դիւահար բերին։ Դեւի դուրս գալուն պէս, համրն սկսեց խօսել։

Ժողովուրդը զարմացաւ ու ասաց.—«Իսրայէլի մէջ երբէք սրա նմանը չէ երևացել»։

Իսկ փարիսեցիներն ասում էին.—«Դա դեւերի իշխանի զօրութեամբ է դեւեր հանում»։

50.

ՅԻՍՈՒՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՆԱԶԱՐԷԹ։— ԲԱՐՈԶՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒԻԼԸ

Մարկ. գ. 1-6 Յիսուսն այնտեղից դուրս գալով, եկաւ իւր հայրենիքը (Նազարէթ), Նրան հետևում էին իւր աշակերտները։

Երբ շաբաթն հասաւ, Նա սկսեց ժողովարանում ուսուցանել և լսողներից շատերը զարմացմամբ ասում էին.—«Սրան ո՞րտեղից է այս բաները, կամ այս ի՞նչ իմաստութիւն է, որ տրուած է սրան, որ սրա ձեռքով այսպիսի հրաշքներ են գործւում։ Մի՞թէ սա հիւսն Յովսէփի և Մարիամի որդին չէ. Յակովբի, Յովսէսի,

Յուդայի և Սիմոնի եղբայրը. և չէ՞ որ սրա քոյրերն էլ այստեղ—մեզ մօտ են»։ Եւ Նրա վերաբերմամբ գայթակղւում էին։

Յիսուսն էլ ասաց նրանց.—«Մարգարէն չէ կարող իւր հայրենիքում և իւր ազգականների ու տան մէջ յարգ ունենալ»։

Եւ այնտեղ ոչ մի հրաշք չգործեց։ Միայն մի քանի հիւանդների վերայ ձեռք դրեց և բժշկեց նրանց։ Եւ զարմանում էր նրանց անհաւատութեան վերայ։

Մատթ. թ. 35-38 Եւ շրջում էր Յիսուսը բոլոր քաղաքներն ու գիւղերը և ուսուցանում էր ժողովրդին իրենց ժողովարաններում, քարոզում էր Արքայութեան Աւետարանը և բժշկում էր նրանց ամեն տեսակ ախտերն ու հիւանդութիւնները։

Եւ ժողովրդին անհովիւ ոչխարների նման յոգնած ու ցրուած տեսնելով խղճաց նրանց։ Այն ժամանակն իւր աշակերտներին ասաց.—«Հունձն առատ է, իսկ մշակները սակաւ։ Ուրեմն, աղաչեցէք հունձի Տիրոջը, որ իւր հունձի համար մշակներ ուղարկէ»։

51.

ՅԻՍՈՒՍԸ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ Է ՏԱԼԻՍ ԻՒՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

Մատթ. ժ. 1 Յիսուսը կանչելով իւր տասներկու աշակերտներին, իշխանութիւն տուեց նրանց չար ոգիներ հանելու և ամեն տեսակ ցաւեր ու հիւանդութիւններ բժշկելու։ Եւ ապա սկսեց պատուէրներ տալ՝ ասելով.—«Հեթանոսների ճանա-

Մատթ. ժ. 5-42

պարհով մի գնաք և Սամարացոց քաղաքը մի մտնէք, այլ աւելի Իսրայէլի տան կորած ոչխարների մօտ գնացէք։

Երբ գնաք, քարոզեցէք ու ասացէք որ մօտեցել է Երկնքի Արքայութիւնը։ Հիւանդներին բժշկեցէք, բորոտներին սրբեցէք և դևերին հանեցէք։ Զրի ստացաք և ձրի էլ տուէք։

Մի վերցնէք ձեր գօտիների մէջ ոչ ոսկի, ոչ արծաթ և ոչ պղինձ, ոչ ճանապարհի պարկ և ոչ երկու շոր, ոչ կօշիկ և ոչ գաւազան. որովհետև մշակն արժանի է իւր կերակրին։ Որ քաղաք կամ գիւղ մտնէք, նախ հարցրէք թէ նրա մէջ ո՞վ է արժանաւորը և նրա մօտ մնացէք մինչև այնտեղից դուրս գալը։

Երբ տուն մտնէք, ողջունեցէք նրան ու ասացէք.—«Ողջոյն այս տանս»։ Եթէ տունն արժանի է, ձեր ողջոյնը նրա վերայ կգայ, իսկ եթէ արժանի չէ, ձեր ողջոյնը յետ կդառնայ ձեզ։

Եթէ մինը ձեզ չընդունեց և չլսեց ձեր խօսքերը, այնտեղից կամ այն քաղաքից դուրս գալիս, թափ տուէք ձեր ոտքերի փոշին։

Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ դատաստանի օրը Սոդոմացոց և Գոմորացոց երկրի համար աւելի դիւրին կլինի, քան այդ քաղաքի համար։ Ահա ես ուղարկում եմ ձեզ ինչպէս ոչխարներ գայլերի մէջ, այսուհետև օձերի նման՝ խորագէտ եղէք և աղաւնիների նման՝ միամիտ։

Զգուշացէք մարդկանցից, որովհետև նրանք

ձեզ պէտք է դատաստանի մատնեն և իրենց ժողովարաններում տանջեն։ Իմ պատճառով ձեզ դատաւորների ու թագաւորների մօտ կտանեն, նրանց և հեթանոսների առաջ վկայելու համար։

Բայց երբ մատնեն ձեզ, մի մտածէք թէ ինչպէս կամ ինչ պէտքէ խօսէք, որովհետև հենց այն ժամին կտրուի ձեզ, ինչ որ պէտք է խօսէք։

Որովհետև խօսողը ոչ թէ դուք պէտք է լինիք, այլ ձեր Հօր Հոգին, որ ձեր մէջ պէտք է խօսի։ Եղբայրն եղբօրը մահուան կմատնի և հայրը՝ որդուն. որդիք վեր կը կենան ծնողների դէմ և կսպանեն նրանց։ Եւ ամենից ատուած կլինիք իմ անուան համար. բայց մինչև վերջն համբերողը՝ կապրի։

Եթէ մի քաղաքում հալածեն ձեզ, փախէք մի ուրիշ քաղաք, եթէ այնտեղից էլ հալածեն՝ փախէք միւսը։ Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ չէք կարող սպառել Իսրայէլի քաղաքները. նոյնիսկ մինչև Մարդու Որդու գալը։[1])

Ո՛չ աշակերտն է իւր վարդապետից աւելի և ոչ ծառան իւր տիրոջից։ Այն էլ բաւական է, որ աշակերտն իւր վարդապետի նման լինի և ծառան իւր տիրոջ։ Եթէ տանտիրոջը բեհեզեբուղ կոչեցին, որչափ աւելի նրա ընտանիքին։ Այսուհետև մի վախենաք նրանցից. որովհետև չկայ ծածուկ բան, որ չյայտնուի և գաղտնիք՝

---

[1]) Այսինքն, աշխարհի մէջ տեղի պակասութեան չէք հանդիպի, եթէ նոյն իսկ սատկուած լինիք մինչև Մարդու Որդու (Յիսուս Քրիստոսի) միւս անգամ գալուստը՝ փախստական թափառելու։

որ չբացուի։ Ինչ որ ձեզ մթնումն եմ ասում, դուք լոյսի մէջ ասացէք. և ինչ որ ձեր ականջին եմ ասում, դուք տանիքների վերայ քարոզեցէք։

Մի վախենաք նրանցից, որ սպանում են մարմինը, բայց չեն կարողանում հոգին սպանել. դուք վախեցէք նրանից, որը կարող է հոգին ու մարմինը գեհենի մէջ կորցնել։

Չէ՞ որ երկու ճնճղուկը մի դանկով (մօտ 5 կոպ.) է ծախւում և նրանցից ոչ մինը առանց ձեր Հօր կամքի գետին չէ ընկնում։ Բայց ձեր գլխի բոլոր մազերն էլ հաշուած են։ Ուրեմն, մի վախենաք, որովհետև դուք շատ ճնճղուկներից աւելի լաւ էք։

Այսպէս, ով որ կդաւանէ ինձ մարդկանց առաջ, ես էլ կդաւանեմ իմ Երկնաւոր Հօր առաջ։ Իսկ ով որ կուրանայ ինձ մարդկանց առաջ, ես էլ նրան կուրանամ Երկնաւոր Հօրս առաջ։

Չկարծէք թէ ես երկրի վերայ խաղաղութիւն ձգելու եկայ, չեկայ խաղաղութիւն ձգելու այլ սուր։ Ես եկայ մարդուն իւր հօրից բաժանելու, աղջկան իւր մօրից և հարսին իւր սկեսուրից։ Եւ մարդու թշնամին իւր ընտանիքն է։

Ով որ իւր հօրն ու մօրը ինձնից աւելի է սիրում, ինձ արժանի չէ. և ով որ իւր տղային կամ աղջկան ինձնից աւելի է սիրում՝ ինձ արժանի չէ։ Եւ ով որ չէ վերցնում իւր խաչը և չէ գալիս իմ հետևից՝ ինձ արժանի չէ։ Իւր անձը գտնողը՝ կը կորցնէ նրան, իսկ իմ պատճառով իւր անձը կորցնողը՝ կը գտնէ նրան։ Ձեզ ընդունողը՝ ինձ է ընդունում, իսկ ինձ ընդունողը՝ ընդունում է ինձ Ուղարկողին։

Ով որ մարգարէ է ընդունում, մարգարէի անունով՝ մարգարէի վարձ կստանայ. և ով որ արդար է ընդունում, արդարի անունով՝ արդարի վարձ կստանայ։

Ով որ այս փոքրիկներից մինին մի բաժակ սառն ջուր խմեցնի աշակերտի անունով, ճշմարիտն եմ ասում ձեզ, որ իւր վարձը չի կորցնի»։

52.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ԳԼԽԱՏՈՒԻԼԸ

Մարկ. գ. 21-29 Երբ Հերովդէսն իւր ծննդեան տօնի օրը խնջոյք էր տալիս իւր նախարարներին, հազարապետներին ու գալիլիացոց մեծամեծներին, Հերովդէսի աղջիկը (Սաղոմէն) դահլիճ մտաւ ու կաքաւեց։ Աղջկայ պարը շատ դիւր եկաւ թէ Հերովդէսին և թէ հանդիսականներին։

Թագաւորն աղջկան ասաց.—«Խնդրիր ինչ որ կամենում ես և կտամ քեզ»։ Եւ մի քանի անգամ երդուեց, որ ինչ խնդրէ՝ կտայ, մինչև իսկ իւր թագաւորութեան կէսը։

Աղջիկը դուրս գալով, դիմեց իւր մօրն՝ ասելով.—«Ի՞նչ խնդրեմ»։ Մայրն իւր վրէժը լուծելու դարմար առիթ գտնելով, աղջկան ասաց.—«Խնդրիր Յովհաննէս Մկրտչի գլուխը»։

Աղջիկն իսկոյն ներս մտաւ թագաւորի մօտ

ու ասաց.—«Կամենում եմ որ հենց այժմ տան ինձ Յովհաննէս Մկրտչի գլուխը՝ սկուտեղի վերայ դրած»։

Թագաւորը սաստիկ տրտմեցաւ, բայց հանդիսականների ներկայութեամբ իւր տուած երդման պատճառով՝ չկարողացաւ մերժել նրան. և իսկոյն հրամայեց դահճին, որ գնայ ու Յովհաննէս Մկրտչի գլուխը բերէ։

Դահիճը բանտը գնաց, գլխատեց Յովհաննէսին և գլուխը սկուտեղի վերայ դրած, բերեց ու տուեց աղջկան. իսկ աղջիկն էլ տարաւ ու մօրը տուեց։

Մատթ. ժդ 12 Յովհաննէսի աշակերտները լսելով այս՝ եկան, վերցրին նրա մարմինն ու թաղեցին. և ապա գնացին ու Յիսուսին պատմեցին։

53.

ՅԻՍՈՒՍԸ ԲԵԹՍԱՅԻԴԱՅԻ ԱՆԱՊԱՏՈՒՄ.—ՀԻՆԳ ՀԱԶԱՐԻՆ ԿԵՐԱԿՐԵԼԸ

Մատթ. ժա 1 Յիսուսը իւր տասներկու աշակերտներին պատուէրներ տալուց յետոյ, հեռացաւ այնտեղից և գնաց նրանց քաղաքներում քարոզելու և ուսուցանելու։

Մատթ. ժդ 1-2 Հենց այդ միջոցներին, Հերովդէս չորրորդապետը լսելով Յիսուսի համբաւն՝ ասաց իւր ծառաներին.—«Նա Յովհաննէս Մկրտիչն է, որ յարութիւն է առել մեռելներից և այդ պատճառով էլ հրաշքներ են գործւում նրանով»։

Մատթ. ժդ 13-21 Իսկ Յիսուսը լսելով Յովհաննէսի գլխատուիլը, նաւով մի անապատ տեղ (Բեթսայիդայի

անապատը) գնաց առանձին. և ժողովուրդը լսելով այդ, դուրս եկաւ իւր քաղաքներից և ոտքով նրա յետևից գնաց։

Երբ Յիսուսը նաւից դուրս եկաւ, ահագին ժողովուրդ տեսաւ, խղճաց նրանց և բժշկեց նրանց հիւանդներին։ Երեկոյեան մօտեցան նրա աշակերտներն ու ասացին.—«Տեղս անապատ է և օրը տարաժամ, արձակիր ժողովրդին, որ գընան շրջակայ գիւղերն ու իրենց համար կերակուր գնեն»։ Յիսուսն ասաց.—«Հարկաւոր չէ նրանց գնալը, դուք կերակրեցէք նրանց»։ Աշակերտներն ասացին.—«Մենք այստեղ բացի հինգ նկանակից և երկու ձկնից ուրիշ բան չունինք»։ Յիսուսն ասաց.—«Բերէք այստեղ»։ Եւ հրամայեց նստեցնել ժողովրդին խոտի վերայ և վերցնելով հինգ նկանակը և երկու ձուկը, նայեց երկինք, օրհնեց, կտրատեց և տուեց նկանակներն աշակերտներին և աշակերտներն էլ բաժանեցին ժողովրդին։ Ամենքը կերան ու կշտացան և տասներկու կողովով լիքը աւելացած կտորներ վերցրին։ Ուտողները բացի կանանցից ու մանուկներից հինգ հազար էին։

Յովհ. զ. 14-15 Այն ժամանակ մարդիկ, տեսնելով Յիսուսի գործած հրաշքը՝ ասում էին.—«Սա իսկապէս այն մարգարէն է, որ պէտք է աշխարհ գար»։

Իսկ Յիսուսն իմանալով, որ կամենում են գալ

Մատթ. ժդ. 22 և յանկարծակի բռնել իրեն ու թագաւորացնել, իսկոյն հրամայեց աշակերտներին որ շուտով նաւ մտնեն և իրենից առաջ ծովի միւս կողմն

անցնեն, մինչև որ ինքն էլ ժողովրդին կարձակէ։

«ՏԷՐ, ՓՐԿԻՐ ԻՆՁ».

54.

ՅԻՍՈՒՍԸ ԾՈՎԻ ՎԵՐԱՅ

Մատթ. ԺԴ 23-36 Ժողովրդին արձակելուց յետոյ, առանձին աղօթելու համար՝ լեառը բարձրացաւ. և երբ մթնեց, այնտեղ միայն ինքն էր։

Որովհետև քամին հակառակ էր, այդ պատճառով էլ նաւն ալիքներից քշուելով, բաւական հեռացել էր ափից։ Գիշերուան չորրորդ պահուն, Յիսուսը ծովի վերայ քայլելով՝ գնաց նրանց մօտ։

Երբ աշակերտները տեսան Նրան ծովի վերայով գալիս, շփոթուեցան և ասացին.—«Աչքի երևոյթ կլինի»։ Եւ վախից աղաղակեցին։

Յիսուսը խօսեց նրանց հետ և ասաց.—«Քաջացէք, ես եմ, մի՛ վախենաք»։ Պետրոսը պատասխան տուեց ու ասաց.—«Տէր, եթէ դու ես, հրամայիր ինձ, որ ջրի վրայով քեզ մօտ գամ»։ Յիսուսն ասաց.—«Ե՛կ»։ Պետրոսն իջնելով նաւից, սկսեց ջրի վրայով մօտենալ Յիսուսին, բայց տեսնելով սաստիկ հողմը, վախեցաւ և երբ սկսեց ընկղմիլ աղաղակեց ու ասաց.—«Տէր, փրկիր ինձ»։

Յիսուսը մեկնեց իւր ձեռքը, բռնեց նրան ու ասաց.—«Թերահաւատ, ինչո՞ւ երկմտեցիր»։

Երբ նաւ մտան, քամին հանդարտեց։ Նաւի մէջ եղողները մօտեցան նրան, երկրպագութիւն տուին ու ասացին.—«Արդարև, դու Աստուծու Որդին ես»։

Մարկ. գ. 53-56 Անցնելով ծովի միւս կողմը, եկաւ Գենեսարէթի երկիրը։ Երբ նաւից դուրս եկան, բընակիչներն իսկոյն ճանաչեցին նրան։ Եւ վազելով գաւառի զանազան կողմերը, իմաց տուին Յիսուսի գալը։ Լսողներն սկսեցին մահիճներով բերել իրենց հիւանդներին։

Եւ ուր էլ գնում էր, թէ գիւղերը, թէ քաղաքներն և թէ ագարակները, հիւանդներին դընում էին հրապարակներում և աղաչում էին նրան, որ թոյլ տայ նրանց գոնէ հանդերձի փեշերին մօտենալու։ Եւ որոնք մօտենում էին՝ բժշկւում էին։

55.

ՅԻՍՈՒՍԸ ՔԱՐՈԶՈՒՄ Է ԿԱՓԱՌՆԱՈՒՄԻ ԺՈՂՈՎՐԱՆՈՒՄ

Յովհ. գ. 22-59 Հետևեալ օրն այն ժողովուրդը, որ ծովի միւս կողմն էր և տեսել էր որ այնտեղ բացի այն նաւակից (որի մէջ աշակերտներն էին նստել և մենակ, առանց Յիսուսի, գնացել) էլ ուրիշ նաւակ չկայ. և նկատելով որ ոչ Յիսուսն է այնտեղ և ոչ նրա աշակերտները, իրենք էլ այդ միջոցին, Տիբերիայից եկած (և հացը կերած տեղի մօտ կանգնած) նաւակների մէջ նստելով, կափառնաում եկան՝ Յիսուսին որոնելու։ Երբ նրան ծովի միւս կողմը գտան՝ ասացին.— «Ռաբբի՛ երբ եկար այստեղ»։

Յիսուսը պատասխան տուեց ու ասաց.—

Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում ձեզ, որ դուք ոչ թէ այն պատճառով էք որոնում, որ հրաշքներ տեսաք, այլ որ հացերից կերաք ու կշտացաք։ Գնացէք և աշխատեցէք ոչ թէ կորստական կերակուրի, այլ յաւիտենական կեանքի մէջ մնացող այն կերակուրի համար, որ կտայ ձեզ Մարդու Որդին, որովհետև Հայր Աստուածը իւր կընիքը նրա վրայ դրեց»։

Ասացին նրան.—«Ուրեմն, ի՞նչ անենք, որ Աստուծու գործերը կատարենք»։

Պատասխան տուեց Յիսուսն ու ասաց.— Հաւատացէք Նրա ուղարկածին. ահա Աստուծու գործը»։

Ասացին նրան.—«Ի՞նչ նշան կտաս մեզ, որ մենք տեսնենք ու հաւատանք։ Մեր հայրերը անապատում մանանայ կերան, ինչպէս և գրուած է.—Երկնքից հաց տուեց նրանց ուտելու»։[1])

Յիսուսն ասաց նրանց.—«Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում ձեզ, որ Մովսէսը երկնքից հաց չտուեց ձեզ, բայց իմ Հայրը երկնքից ձեզ ճշմարիտ հաց է տալիս։ Որովհետև Աստուծու հացը Նա է, որ իջնում է երկնքից և աշխարհին կեանք է տալիս»։

Ասացին նրան.—«Տէր, ամեն ժամանակ մեզ այդ հացից տուր»։ Յիսուսն ասաց.—«Ես եմ կեանքի հացը. ինձ մօտ եկողը չի քաղցի և ինձ հաւատացողը երբէք չի ծարաւի։

[1]) Սաղմոս ԿԷ. 24-25.—Բառացին—«Նրանց կերակրելու համար մանանայ ուղարկեց։ Երկնքից հաց տուեց նրանց. մարդիկ հրեշտակների հացը կերան»։

Բայց ես ասացի ձեզ, որ դուք տեսնում էք ինձ և չէք հաւատում։ Բոլորն ինչ որ տալիս է ինձ իմ Հայրը, ինձ մօտ է գալու և ինձ մօտ եկողին դուրս չեմ անի։ Որովհետև ես ոչ թէ իմ կամքը կատարելու համար իջայ երկնքից, այլ ինձ Ուղարկողի կամքը։ Եւ ինձ ուղարկող Հօր կամքն այն է, որ ես իմ Հօր տուածներից ոչինչ չկորցնեմ, այլ վերջին օրը յարուցանեմ։ Իմ Հօր կամքն այն է, որ Որդուն տեսնողը և նրան հաւատացողը՝ յաւիտենական կեանք ունենայ և ես վերջին օրը կյարուցանեմ նրան»։ Հրէաները տրտնջում էին, որ նա ասաց թէ ես եմ երկնքից իջած հացը. և ասում էին.—«Չէ՞ որ սա Յովսէփի որդի Յիսուսն է, որի հօրն ու մօրը ճանաչում ենք. հապա ի՞նչու է ասում, ես երկնքից իջայ»։ Յիսուսը պատասխան տուեց ու ասաց.—«Մի՛ քրթմնջէք իրար հետ։ Ոչ ոք չէ կարող ինձ մօտ գալ, եթէ ինձ ուղարկող Հայրը չը-քաշէ նրան. և ես վերջին օրը կյարուցանեմ նրան։ Մարգարէութիւնների մէջ ասուած է (ամենքն էլ ուսած կլինեն Աստուծուց)[1]) թէ նա, որ Հօրից է լսում և ուսանում, ինձ մօտ է գալիս։ Եւ այդ չէ նշանակում թէ որևէ մէկը տեսել է Հօրը, այլ այն, որ ով Հօր էութիւնից է, նա տեսաւ Հօրը։

Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում ձեզ, որ ինձ հաւատացողը՝ յաւիտենական կեանք կունենայ։

1) Մարգ. Եսայի ծդ. 13.

Ես եմ կեանքի հացը։

Ձեր հայրերն անապատում մանանայ կերան ու մեռան։ Իսկ երկնքից իջած հացն այն հացն է, որից ուտողը՝ չի մեռնի։

Ես եմ երկնքից իջած կենդանի հացը։ Այս հացն ուտողը յաւիտեան կապրի և՝ այն հացը, որ ես կտամ՝ իմ մարմինն է, որ ես կտամ աշխարհի կեանքի համար»։

Այդ ժամանակ հրէաներն սկսեցին իրար հետ վիճել ու ասել.—«Սա ինչպէս կարող է իւր մարմինը մեզ ուտելու տալ»։

Յիսուսն ասաց նրանց.—«Ճշմարիտ, ճըշմարիտն եմ ասում ձեզ, որ եթէ չուտէք Մարդու Որդու մարմինը և չխմէք նրա արիւնը՝ կեանք չէք ունենայ։ Իմ մարմինն ուտողը և իմ արիւնը խմողը միայն յաւիտենական կեանք կունենայ. և ես վերջին օրը կյարուցանեմ նրան։ Որովհետև իմ մարմինն է ճշմարիտ կերակուրը և արիւնս է ճշմարիտ խմելիքը։ Իմ մարմինն ուտողը և իմ արիւնը խմողը իմ մէջ է բնակւում և ես նրա մէջ։

Ինչպէս որ կենդանի Հայրն ուղարկեց ինձ և ես կենդանի եմ Հօրով, այնպէս էլ ինձ ուտողը՝ կենդանի կլինի ինձնով։

Այս այն հացն է, որ երկնքից իջաւ։ Այս հացը մանանայ չէ, որ ձեր հայրերը կերան ու մեռան, այլ այս հացից ուտողը՝ յաւիտեան կապրի»։

Յիսուսն այս ամենը ժողովարանումն ասաց, երբ նա քարոզում էր Կափառնաումի մէջ։

56.

ՅԻՍՈՒՍԻՆ ՀԵՏԵՒՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՎԱՐԱՆՈՒՄԸ

Յովհ. գ. 61-72 Աշակերտներից շատերը, Կափառնաումի քարոզը լսելուց յետոյ՝ ասացին.—«Օտարօտի խօսքեր են ասածները. ո՞վ կարող է լսել դրան»։

Յիսուսն հասկանալով, որ աշակերտները տրտնջում են՝ ասաց.—«Մի՞թէ իմ խօսքերը գայթակղեցնում են ձեզ։ Ի՞նչ կասէք եթէ տեսնէք Մարդու Որդուն բարձրանալիս այնտեղ, որտեղ առաջ էր։

Հոգին է կենդանացնողը, մարմինը ոչինչ չէ օգնում։ Այն խօսքերը որ ասում եմ ձեզ, Հոգի է և կեանք։ Բայց ձեր մէջ կան ոմանք, որոնք չեն հաւատում. (Յիսուսը հենց սկզբից գիտէր, թէ ովքեր են չհաւատացողները և թէ ո՞վ է իրեն մատնելու). և աւելացրեց.—«Հէնց այդ պատճառով ասացի ձեզ, թէ ոչ ոք չէ կարող ինձ մօտ գալ, եթէ իմ Հօրից տուած չլինի նրան»։

Այդ օրուանից նրա աշակերտներից շատերը հեռացան նրանից և այլ ևս նրա հետ չէին շրջում։

Այդ ժամանակ Յիսուսը դիմեց իւր տասներկու աշակերտներին.—«Արդեօք, դուք ևս չէ՞ք ցանկանայ գնալ»։

Պատասխան տուեց նրան Սիմոն Պետրոսն

ու ասաց.—«Տէր, էլ ո՞ւմ մօտ պէտք է գնանք, դու յաւիտենական կեանքի խօսքեր ունիս։ Մենք հաւատացինք ու ճանաչեցինք, որ դու ես Քրիստոսը՝ Աստուծու Որդին»։

Յիսուսը պատասխանեց։—«Չէ՞ որ ես ձեզ տասներկուսիդ ընտրեցի, բայց ձեզնից՝ մինը սատանայ է»։

Այս խօսքը Սիմոնեան Յուդա Իսկարիովտացու համար ասաց (որ տասներկուսից մինն էր) որովհետև նա պէտք է մատնէր նրան։

57.

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ։—ԱՐՏԱՔԻՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ ՊՂԾՈՒԹԻՒՆ

Յովհ. գ. 1 Մօտեցել էր հրէաների զատկի տօնը։

Յովհ. է. 1 Յիսուսը շրջում էր Գալիլիայում և չէր կամենում Հրէաստան գնալ, որովհետև հրէաները ուզում էին նրան սպանել։

Մատթ. ժե 1-20 Այն ժամանակ մօտեցան Յիսուսին Երուսաղէմից եկած փարիսեցիներն ու դպիրները և

ասացին.—«Ի՞նչու քո աշակերտները հաց ուտելիս ձեռքերը չեն լուանում և այդպիսով անցնում են ծերերի աւանդութիւնից»։ Նա պատասխան տուեց ու ասաց.—«Իսկ դուք ձեր աւանդութիւնների պատճառով, ի՞նչու էք Աստուծու պատուիրաններից անցնում։ Զէ՞ որ Աստուած ասաց.—«Պատուիր քո հօրն ու մօրը. և ով որ իւր հօրը կամ մօրը բամբասէ, պէտք է մեռնի.[1]) իսկ դուք ասում էք.—ով որ իւր հօրը կամ մօրն ասէ թէ պատարագէ[2]) այն, ինչով որ օգտւում ես ինձնից, այդպիսին կարող է և չպատուել հօրը կամ մօրը։ Այդպիսով դուք ձեր աւանդութեան համար, խափանում էք Աստուծու պատուէրը։ Կեղծաւորներ, Եսային շատ լաւ մարգարէացաւ ձեր մասին, որ ասաց.—«Այս ժողովուրդը շրթունքներով է պատուում ինձ, իսկ սրտով հեռացած է ինձնից։ Բայց ի՞զուր են պաշտում ինձ, մարդկանց պատուէրները իբրև վարդապետութիւն սովորեցնելով»։[3])

Եւ կանչելով ժողովրդին՝ ասաց.—«Լսեցէք և իմացէք, որ ո՛չ թէ բերան մտածն է պղծում մարդու, այլ բերանից դուրս եկածը»։ Այն ժամանակ մօտենալով նրա աշակերտները՝ ասացին.—«Գիտէ՞ս, երբ փարիսեցիները խօսքերդ լսեցին՝ դայթակղուեցան»։

Յիսուսը պատասխան տուեց ու ասաց.—

1) Ելից ի. 12 և իա. 17։
2) Պատարագ բառը ասորերէն է և նշանակում է զոհ։
3) Մարգ. Եսայի իթ. 13։

«Այն տունկը, որ Երկնաւոր Հօրից չէ տնկուած, արմատախիլ կլինի։ Թողէք նրանց, նրանք կոյր են և կոյրերի առաջնորդ։ Իսկ երբ կոյրն առաջնորդէ կոյրին, երկուսն էլ կմոլորուեն և փոսը կընկնեն»։

Պետրոսը պատասխանեց ու ասաց.—«Բացատրիր մեզ այդ առակը»։

Յիսուսն ասաց.—Մի՞թէ դուք տակաւին չէք իմանում և չէք հասկանում, որ բերան մտածը փորն է գնում և այնտեղից դուրս գալիս։ Իսկ բերանից դուրս եկածը սրտից է գալիս և այն է պղծում մարդուն։ Որովհետև սրտից են դուրս գալիս չար խորհուրդները, սպանութիւնները, շնութիւնները, պոռնկութիւնները, գողութիւնները, սուտ վկայութիւններն ու հայհոյութիւնները։ Ահա սրանք են մարդուն պղծողը և ոչ թէ անլուայ ձեռքով հաց ուտելը»։

58.

ԲԱՆԱՆԱՑԻ ԱՂՋԿԱՅ ԵՒ ԱՅԼ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Մատթ. ժե 21-31 Յիսուսը դուրս գալով այնտեղից, գնաց Տիւրոսի կողմերը։ Մի քանանացի կին Յիսուսի յետևից ընկած՝ աղաղակում էր և ասում.—«Տէր, Դաւթի որդի, ողորմիր ինձ, աղջիկս սատանի դիւահարւում է»։ Յիսուսը պատասխան չտուեց նրան։

Աշակերտները մօտեցան նրան և աղաչելով

ասացին.—«Արձակիր այդ կնոջը. ինչ է յետևներիցս աղաղակում»։

Յիսուսը պատասխանեց ու ասաց. — «Ես միայն Իսրայէլի տան կորած ոչխարների մօտ եմ ուղարկուած»։ Իսկ կինը մօտենալով, երկրպագութիւն էր տալիս ու ասում.—«Տէր, օգնիր ինձ»։ Յիսուսը նրան պատասխանեց.—«Լաւ չէ մանուկներից հացն առնել ու շներին ձգել»։

Կինն ասաց.—«Տէր, չէ՞ որ շներն էլ իրենց տիրոջ սեղանից թափուած փշրանքներովն են կերակրւում»։ Այն ժամանակ Յիսուսը պատասխան տուեց նրան ու ասաց.—«Ո՛վ կին, մեծ է քո հաւատը. ինչպէս որ կամեցար, թող այնպէս լինի»։

Եւ նոյն ժամին բժշկուեցաւ նրա աղջիկը։

Յիսուսն հեռանալով այնտեղից, եկաւ Գալիլիացոց ծովեզերը և բարձրանալով լեռը՝ նստեց այնտեղ։ Իսկոյն մեծ բազմութիւն հաւաքուեց նրա շուրջը, որոնք իրենց հետ կաղեր, կոյրեր, համրեր, հաշմանդամներ և ուրիշ հիւանդներ բերելով՝ ձգեցին Յիսուսի առաջ և նա ամենքին էլ բժշկեց. այնպէս որ ժողովուրդը զարմացաւ, տեսնելով որ՝ համրերը խօսում են, կաղերը շրջում, կոյրերը տեսնում, հաշմանդամները բժշկւում և փառաւորում են Իսրայէլի Աստուծուն։

59.

ՉՈՐՍ ՀԱԶԱՐԻՆ ԿԵՐԱԿՐԵԼԸ.—ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐԸ ԵՐԿՆԱՅԻՆ ՆՇԱՆ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ

Մարկ. ը. 1-12 Դարձեալ մեծ բազմութիւն էր հաւաքուել Յիսուսի շուրջը և ուտելու բան չունէին։ Յիսուսն իւր աշակերտներին կանչեց ու ասաց. — «Խղճում եմ այդ ժողովրդին, ահա երեք օր է ինձ մօտ է և ոչինչ չունի ուտելու։ Եթէ անօթի արձակեմ, ճանապարհին կնուաղին, որովհետև դրանցից շատերն հեռու տեղերից են եկել»։

Աշակերտները պատասխանեցին նրան. — «Այս անապատում ո՞րտեղից կարող ես դրանց հացով կշտացնել»։

Յիսուսը հարցրեց նրանց.— «Քանի՞ նկանակ ունիք»։ Նրանք ասացին.—«Եօթն»։ Այն ժամանակ հրամայեց ժողովրդին գետնի վրայ նստել և վերցնելով եօթը նկանակը, գոհացաւ, կըտրատեց և տուեց աշակերտներին ժողովրդի առաջ շարելու և նրանք էլ շարեցին։

Մի քիչ էլ ձուկ ունէին, այն էլ օրհնեց և հրամայեց որ ժողովուրդին բաժանեն։

Կերան ու կշտացան և եօթը զամբիւղ փշրանքներ հաւաքեցին։ Ուտողները մօտ չորս հազար հոգի էին. և Յիսուսն արձակեց նրանց։

Եւ իսկոյն աշակերտների հետ նաւ մտնելով, եկաւ Դալմանութայի կողմերը։

Փարիսեցիներն եկան և սկսեցին վիճել նրա հետ և փորձելով՝ երկնային նշան պահանջեցին նրանից։ Եւ նա զայրանալով՝ ասաց.—«Ի՞նչու

համար է այս ազգը նշան խնդրում. ճշմարիտն եմ ասում ձեզ, որ այս ազգին նշան կտրուի»։[1])

60.

ՅԻՍՈՒՍՆ ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐԻ ԽՄՈՐԻՑ.—ԲԵԹՍԱՅԻԴԱՅԻ ԿՈՅՐԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Մարկ. ը. 13-26 Եւ թողնելով նրանց, նորից նաւ մտաւ և անցաւ ծովի միւս կողմը—Բեթսայիդա։

Աշակերտները մոռացել էին հաց վերցնել և նաւի մէջ միայն մէկ նկանակ ունէին։ Յիսուսը պատուիրեց նրանց և ասաց.—«Զգոյշ կացէք փարիսեցիների և հերովդիանոսների[2]) խմորից։

Աշակերտները կարծեցին, որ Յիսուսն այն պատճառով ասաց այդ, որ իրենք հաց չէին վերցրել։

Յիսուսն հասկացաւ նրանց միտքն ու ասաց.—«Թերահաւատներ, ինչու էք մտածում որ հաց չունէք։ Մի՞թէ մինչև այժմս էլ չէք հասկանում և չէք ըմբռնում. մի՞թէ դեռևս ապշութիւն է պատել ձեր սրտերը։ Աչք ունէք և չէք տեսնում, ականջ ունէք և չէք լսում. չէք իմանում և չէք յիշում։ Երբ հինգ նկանակը հինգ

[1]) Յունարէնում. չի տրուի։

[2]) Հերովդիանոսներ կոչւում էին այն անձինք, որոնք Հերովդէսի կուսակից էին համարւում. և այս կուսակցութիւնը քաղաքական մի զօրեղ կուսակցութիւն էր, որի նպատակն էր ժողովրդին մոտեցնել Հռովմի դահին և զօրացնել Հռովմայեցոց ազդեցութիւնը Հրէաստանում։

հազարին բաժանուեցաւ, քանի՞ քթոց փշրանք վերցրիք»։ Ասացին.—«Տասներկու»։

—«Երբ եօթը նկանակը չորս հազարին բաժանուեցաւ, քանի՞ զամբիւղ փշրանք վերցրիք»։

Նրանք պատասխանեցին.—«Եօթն»։

Եւ ասաց նրանց.—«Հապա էլ ի՞նչու չէք հասկանում»։ Երբ Բեթսայիդա եկան, նրա մօտ մի կոյր բերին և աղաչում էին որ իւր ձեռքը դիպցնէ նրան։ Յիսուսը բռնելով կոյրի ձեռքից, գիւղից դուրս տարաւ, թքեց նրա աչքերին, ձեռքը դրեց վրան ու հարցրեց, թէ տե՞սնում է արդեօք որևէ բան։ Կոյրն աչքը բացեց ու ասաց.—«Տեսնում եմ շրջող մարդիկ, ինչպէս ծառերը»։ Յիսուսը դրեց դարձեալ իւր ձեռքը նրա աչքերի վերայ և հրամայեց նայել։ Նա բացեց արդէն առողջացած աչքերն և սկսեց ամեն բան պարզ տեսնել։

Յիսուսն արձակեց նրան իւր տուն և ասաց.—« Գիւղը չմտնես, այլ գնա՛ քո տուն. բայց եթէ գիւղը մտնես, այնտեղ ոչ ոքի չասես»։

61.

ՅԻՍՈՒՍԸ ԼՍՈՒՄ Է ԻՒՐ ՄԱՍԻՆ ԵՂԱԾ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ։—ՊԵՏՐՈՍԻ ԵՐԱՆՈՒԹԻՒՆԸ

Մարկ. ը. 27-28 Յիսուսն իւր աշակերտներով Փիլիպպոսի Կեսարիա գիւղը գնալիս, ճանապարհին հարցրեց աշակերտներին.—«Ո՞ւմ տեղ են ընդունում ինձ մարդիկ»։ Նրանք պատասխանեցին ու ասացին.—«Ոմանք Յովհաննէս Մկրտչի, ոմանք Եղիայի

և մի քանիներն էլ մարգարէներից մինի տեղ»։

Ասաց նրանց.—«Իսկ դուք ո՞ւմ տեղ էք ընդունում ինձ։ Ով եմ ես»։

Մատթ. ժզ 16-20 Պետրոսը պատասխան տուեց ու ասաց.—«Դու Քրիստոսն ես, կենդանի Աստուծու Որդին»։

Այն ժամանակ Յիսուսը պատասխան տուեց նրան ու ասաց.—«Երանի՛ քեզ Սիմոն, Յովնանի որդի, որովհետև քեզ այդ բանն յայտնողը, ոչ թէ մարմինդ էր և արիւնդ, այլ իմ Երկնաւոր Հայրը։ Եւ ես ասում եմ քեզ, որ դու ես վէմը. և այդ վիմի վերայ կշինեմ իմ եկեղեցին և դժոխքի դռները չեն կարող նրան յաղթել։ Եւ կտամ քեզ Երկնքի Արքայութեան բանալիները. ինչ որ կապես երկրի վերայ, կապուած կլինի երկնքում. և ինչ որ արձակես երկրի վերայ, արձակուած կլինի երկնքում»։

Եւ սաստեց աշակերտներին, որ իւր մասին ոչ ոքի բան չասեն։

62.

ՅԻՍՈՒՍԸ ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄ Է ԻՒՐ ՎԱԽՃԱՆԸ։—ՄԻՋՆԱԴԷՊ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՅԻՍՈՒՍԻ ՄԷՋ։—ՅԻՍՈՒՍԸ ՓԱՐԱՏՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՏԱՐԱԿՈՒՍԱՆՔԸ

Մատթ. ժզ 21 Այնուհետև Յիսուսն յայտնեց աշակերտներին, որ ինքը պէտք է գնայ Երուսաղէմ, ուր շատ չարչարանքներ պէտք է կրէ ծերերից, պէտք է անարգուի քահանայապետներից և դպիրներից, պէտք է մեռնի և երրորդ օրը յարութիւն առնի։

Մարկ. զ. 32. Այս բանը նա համարձակ յայտնեց։

Մատթ. զ. 22 Պետրոսը նրան մի կողմ տանելով սկսեց նրան յանդիմանել և ասել.—«Քա՛ւ լիցի Տէր, թող այդ բանը չպատահի քեզ»։

Մարկ. ժզ. 33-37 Յիսուսը դառնալով նայեց իւր աշակերտներին և յանդիմանելով Պետրոսին՝ ասաց.—«Հեռացի՛ր ինձնից սատանայ, որովհետև դու ոչ թէ Աստուածայինն ես մտածում, այլ մարդկայինը»։

Եւ ժողովրդին իւր աշակերտների հետ իւր մօտ կանչելով ասաց.—«Ով որ կամենում է իմ յետևից գալ, թող իւր անձն ուրանայ. վերցնի իւր խաչը և գայ իմ յետևից։ Որովհետև, ով որ կամենում է իւր անձն ապրեցնել, կը կորցնէ նրան և ով որ Աւետարանի համար կորցնէ իւր անձը՝ կապրեցնէ։ Ի՞նչ օգուտ մարդուն, եթէ նա ամբողջ աշխարհը ձեռք բերէ, իսկ իւր անձը կորցնի. և կամ մարդս ի՞նչ փրկանք կարող է տալ իւր անձի համար։

Մատթ. ժզ 27 Որովհետև Մարդու Որդին գալու է իւր հրեշտակների հետ իւր Հօր փառքով, ամեն մէկին իւր գործերի համեմատ հատուցումն տալու։

Մարկ. ը. 38-39 Ով որ ինձ և իմ խօսքերը ամօթ համարէ այս շնացող և մեղաւոր ազգի մէջ, Մարդու Որդին էլ ամօթ կհամարէ նրան երբ կըգայ սուրբ հրեշտակների հետ՝ իւր Հօր փառքով»։

Եւ ասաց նրանց. — «Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ այստեղ եղողներից մի քանիսը

մահ չեն ճաշակի, մինչև որ Աստուծու Արքայութիւնը զօրութեամբ եկած չտեսնեն»։[1])

63.

ՅԻՍՈՒՍԻ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ.—ՀԱՐՅՈՒՄ ԵՂԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Մատթ. ժէ. 1-3 Վեց օրից յետոյ, Յիսուսը վերցնելով իւր հետ Պետրոսին, Յակովբոսին և վերջինիս եղբայր Յովհաննէսին, հանեց նրանց առանձին մի բարձր լեռան[2]) գլուխը և նրանց առաջ այլակերպեցաւ։

Նրա երեսը արևի նման լուսաւորուեցաւ և նրա շորերը լոյսի նման սպիտակացան։ Եւ ահա փառքով երևեցան նրանց Մովսէսն ու Եղիան, որ խօսում էին նրա հետ։

Ղուկ. թ. 31 Նրանց խօսակցութիւնը Յիսուսի մահուան մասին էր, որ Երուսաղէմումն էր տեղի ունենալու։

Ղուկ. թ. 33 Մատթ. ժէ. 4-13 Պետրոսն առանց իմանալու թէ ինչ է խօսում՝ ասաց Յիսուսին.—«Տէր, լաւ է մեզ այստեղ մնալ. եթէ կամենում ես, երեք տաղաւար կըշինենք՝ մինը քեզ, միւսը Մովսէսի և երրորդը՝ Եղիայի համար»։ Մինչդեռ Պետրոսը խօսում էր. մի լուսաւոր ամպ ծածկեց նրանց և ամպի միջից ձայն լսուեց, որ ասում էր.—«Սա է իմ սիրելի Որդին որին հաճեցայ, սրան լսեցէք»։

[1]) Այսինքն աշակերտներից ոմանք դեռ չմեռած իրենց աչքով պէտք է տեսնեն Մարդու Որդու փառաւոր գալուստը և երկնքի Արքայութեան՝ յաղթանակը։

[2]) Գալիլիայի Թաբոր լեռը։

Աշակերտները լսելով այս, սաստիկ վախեցան և երեսների վերայ ընկան։ Յիսուսը մօտենալով բռնեց նրանց ու ասաց.—«Ոտքի կանգնեցէք և մի վախենաք»։

Երբ նրանք աչքերը բարձրացրին, բացի Յիսուսից ոչ ոքի չտեսան։

Երբ լեռնից իջնում էին, Յիսուսը պատուիրեց նրանց և ասաց.—«Այս տեսիլքը ոչ ոքի չյայտնէք, մինչև որ Մարդու Որդին մեռելների միջից յարութիւն չառնի»։

Աշակերտները հարցրին նրան ու ասացին.—«Ի՞նչու են դպիրներն ասում, որ առաջ Եղիան պիտի գայ։[1]) Յիսուսը նրանց պատասխանեց.—«Ճիշտ է, առաջ Եղիան պիտի գայ և ամեն բան կարգի ձգէ։ Բայց ասում եմ ձեզ, որ Եղիան արդէն եկել է և նրան չճանաչեցին, այլ նրա հետ վարուեցին այնպէս, ինչպէս կամեցան։ Մարդու Որդին էլ այդպէս պէտք է չարչարուի նրանցից»։

Այդ ժամանակ միայն հասկացան աշակերտները, որ նա Յովհաննէս Մկրտչի մասին է խօսում։

[1]) Հրէայ դպիրներն ասում էին, որ առաջ երկինք վերացած Եղիա մարգարէն պիտի գայ, իսկ յետոյ Մեսիան, ինչպէս այդ գուշակուած էր մարգարէից.—«Ահա ես կուղարկեմ ձեզ մօտ Եղիա Թեզբացուն, դեռ Տիրոջ մեծ և երևելի օրը չեկած, որ հայրերի սիրտը որդոց և որդոց սիրտը՝ հայրերին դարձնէ»։(Մաղաք գ, 5-6։) Աշակերտները խօսում են Յիսուսի հետ այս մասին. Յիսուսը բացատրում է, որ յիրաւի առաջ Եղիան պիտի գար, որ պատրաստէր Մարդու Որդու ճանապարհը և այդ Եղիան արդէն եկաւ բայց ոչ անուամբ, այլ Եղիայի հոգով. և այդ Եղիան՝ Յովհաննէս Մկրտիչն էր։

64.

ԼՈՒՍՆՈՏ ԴԻՒԱՀԱՐԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ։—ԲՐԺՇԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՏՄԱՆԸ

Մարկ. թ. 13-26 Երբ Յիսուսն եկաւ աշակերտների մօտ, նրանց շուրջը շատ ժողովուրդ տեսաւ։ Այստեղ դպիրներ էլ կային, որոնք վիճում էին աշակերտների հետ։ Ժողովուրդն Յիսուսին տեսնելով, զարմացաւ և առաջ վազելով՝ ողջունեց նրան։ Յիսուսը դպիրներին հարցրեց։—«Ի՞նչ էիք վիճում նրանց հետ»։

Ժողովրդի միջից մինն ասաց.—«Վարդապետ, որդուս, որ համր դևով է բռնուած՝ քեզ մօտ բերեցի։ Դևը որտեղ բռնում է որդուս, իսկոյն գետնովն է տալիս և նա սկսում է փրփրել, ատամները կրճատցնել և անզգայանալ։ Քո աշակերտներին ասացի որ դևը հանեն, բայց նրանք չկարողացան»։

Յիսուսը պատասխանեց ու ասաց.—«Ա՜յ անհաւատ ազգ, մինչև ե՞րբ պէտք է ձեզ մօտ լինեմ, մինչև ե՞րբ պէտք է լսեմ ձեզ. բերէք նրան ինձ մօտ»։ Նրանք բերին։ Հենց որ դիւահարն Յիսուսին տեսաւ, դևն իսկոյն ցնցեց նրան և նա գետին ընկնելով՝ թաւալում և փրփրում էր։

Յիսուսը հարցրեց հօրը.—«Ո՞ր ժամանակից է պատահել դրան այդ հիւանդութիւնը»։ Հայրը պատասխանեց.—«Մանկութիւնից»։ Դևը դրան սպանելու համար, շատ անգամ է կրակի և ջրի

մէջ ձգել։ Ուստի, Տէր, եթէ կարող ես, խղճա մեզ և օգնիր»։

Յիսուսն ասաց։—«Ասացիր թէ կարող ես. հաւատացողի համար ամեն բան հնարաւոր է»։ Տղայի հայրն իսկոյն աղաղակեց ու ասաց.—«Հաւատում եմ, օգնիր իմ անհաւատութեանս»։ Յիսուսը տեսնելով որ ժողովուրդը դիզւում է, պիղծ դևին սաստեց ու ասաց.—«Համր ու խուլ դև, ես քեզ հրամայում եմ դուրս եկ դրա միջից և այլ ևս չմտնես»։ Դևը աղաղակելով և սաստիկ չարչարելով տղային, դուրս եկաւ։ Տղան մեռածի պէս դարձաւ, այնպէս որ շատերը կարծեցին թէ արդէն մեռաւ։ Բայց Յիսուսը նրա ձեռքից բռնեց ու բարձրացրեց և նա կանգնեց։

Այն ժամանակ աշակերտներն առանձին մոտեցան Յիսուսին և ասացին.—«Մենք ի՞նչու չկարողացանք դևը հանել»։ Յիսուսն ասաց նրան.—«Ձեր թերահաւատութեան պատճառով։ Որովհետև ճշմարիտն եմ ասում ձեզ, որ եթէ մանանեխի սերմի չափ հաւատ ունենաք և այս լերանն ասէք թէ տեղափոխուիր այստեղից այնտեղ, կտեղափոխուի. և ձեզ համար ոչ մի բան անհնարին չի լինի։ Բայց այս (դևերի) ազգը աղօթքով ու պահեցողութեամբ միայն կարող է դուրս գալ»։

Գալիլիայում շրջելու ժամանակ, Յիսուսն ասաց աշակերտներին.—«Մարդու Որդին մարդկանց ձեռքը պէտք է մատնուի, նրան պէտք

է սպանեն և նա երրորդ օրը յարութիւն պէտք է առնի»։

Եւ աշակերտները սաստիկ արամեցան։

65.

ՅԻՍՈՒՍԻՑ ՀԱՐԿ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ

Մարկ. ԺԷ 21-26 Երբ Կափառնաում եկան, մօտեցան Պետրոսին երկդրամեան[1]) հարկ հաւաքողներն ու ասացին. —«Ձեր վարդապետը չի՞ վճարի արդեօք երկդրամեանը»։ Պետրոսն ասաց. —«Այո՛»։ Երբ տուն եկան, Յիսուսն ասաց· —«Սիմոն, ի՞նչ ես կարծում. ազգերի թագաւորներն ո՞ւմից են հարկը կամ հասոյթն ստանում, իրենց որդիներից թէ՞ օտարներից»։ Երբ Պետրոսն ասաց թէ օտարներից. Յիսուսն ասաց.—«Ուրեմն, որդիքն ազատեն։ Բայց որպէս զի գայթակղութեան առիթ չտանք, գնա՛ ծովը, կարթդ ձգիր և առաջին դուրս եկած ձկան բերանը բաց. բերանի մէջ դու մի ստեր[2]) կգտնես, վերցրո՛ւ այն և վճարիր նրանց թէ ինձ և թէ քեզ համար»։

66.

ԹԷ Ո՛Վ Է ՄԵԾ ԵՐԿՆԲԻ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ.—ՅԻՍՈՒՍԻՆ ՁՀԵՏԵՒՈՂ ԵՐԴՄՆԵՑՈՒՑԻՉԸ։—ՓՈՔՐԻԿՆԵՐԻՆ ԳԱՅԹԱԿՂԵՑՆԵԼՈՒ ՊԱՏԻԺԸ

Մարկ. Թ. 32-47 Յիսուսն եկաւ Կափառնաում և երբ տուն մտաւ, իւր աշակերտներին հարցրեց.—«Ի՞նչ էիք

[1]) Երկդրամեան = 2 դահեկան, մօտ 1 ր. 20 կոպ.
[2]) Ստեր = 2 ր. 40 կ.

վիճում իրար հետ ճանապարհին»։ Աշակերտները լռեցին, որովհետև ճանապարհին վիճում էին թէ ո՞վ է իրենցից մեծը։ Յիսուսը նստելով՝ ասաց նրանց.—«Ով որ կամենում է մեծ լինել, նա պէտք է ամենից յետինն ու ամենքի ծառան լինի»։ Եւ մի մանուկ կանչելով, նրան իւր գիրկը առաւ և ասաց.—«Ով որ սրա նման մանուկներից մինին ընդունի իմ անունով, ինձ է ընդունում. և ինձ ընդունողը ոչ թէ ինձ է ընդունում, այլ ինձ Ուղարկողին»։

Յովհաննէսը պատասխան տուեց ու ասաց. —«Վարդապետ, մենք մի մարդ (երդմնեցուցիչ) տեսանք, որ քո անունով դեւեր էր հանում, բայց մեր յետևից չէր գալիս, ուստի և մենք նրան արգելեցինք»։

Յիսուսն ասաց.—«Մի՛ արգելէք նրան, որովհետև իմ անունով հրաշք գործողներից չկայ այնպիսին, որ ինձ խսկոյն հայհոյէ։ Որովհետև ով որ հակառակ չէ մեզ, նա մեր կողմն է։ Ով որ ձեզ մի բաժակ ջուր խմեցնի իմ անունով. թէ դուք Քրիստոսինն էք, ճշմարիտն եմ ասում ձեզ նա իւր վարձը չի կորցնի։ Ով որ ինձ հաւատացող այս փոքրիկներից մէկին կգայթակղեցնէ, լաւ կլինէր եթէ նրա պարանոցից իշու երկանաքար կախէին և ծովը ձգէին։

Եթէ քո ձեռքը գայթակղեցնէ քեզ, կտրի՛ր ու դէն ձգիր, որովհետև աւելի՛ լաւ է խեղ մտնես յաւիտենական կեանքը, քան երկու ձեռքով գեհենը—մշտավառ կրակն ընկնես. ուր նրանց

որդը չէ՛ մեռնում և կրակը չէ՛ հանգչում։[1])

Եթէ քո ոտքը գայթակղեցնէ քեզ, կտրէ՛ր ու դէն ձգէ՛ր. որովհետև աւելի լաւ է կաղ ոտքով յաւիտենական կեանքը մտնես, քան երկու ոտք ունենաս և գեհենը—մշտավառ կրակն ընկնես. ուր նրանց որդը չէ՛ մեռնում և կրակը չէ՛ հանգչում։

Եւ եթէ քո աջ աչքը գայթակղեցնէ քեզ, հանէ՛ր ու դէն ձգէ՛ր. աւելի լաւ է մի աչքով յաւիտենական կեանքը մտնես, քան թէ երկու աչք ունենաս և գեհենն ընկնես. ուր նրանց որդը չէ՛ մեռնում և կրակը չէ՛ հանգչում։

Մարկ. ը. 48-49 Որովհետև ամեն բան կրակով է աղւում և ամենայն մի զոհ աղով է աղւում։[2]) Աղը լաւ բան է, բայց եթէ իւր համը կորցնէ, էլ ի՞նչով կարող էք նրա համը վերականգնել։ Աղ ունեցէք ձեր մէջ, խաղաղութիւն ունեցէք միմեանց հետ։

Մատթ. ժբ 10-14 Զգոյշ կացէք, չլինի թէ անարգէք այս փոքրիկներից մինին, որովհետև ասում եմ ձեզ, որ

[1])—«Նրանք վեր կը կենան և կը տեսնեն իմ դէմ ապստամբող մարդկանց ոսկրները, որովհետև նրանց որդը պէտք է չմեռնի և նրանց կրակը պէտք է չհանգչի և նրանք ամեն մարմնի զզուելի պէտք է լինեն։ (Եսայի կդ. 24)։ Յիսուսը մարգարէի յիշեալ խօսքերն առաջ բերելով յարմարեցնում է դատապարտուած և անբարիշտ մարդկանց, որոնց խղճի ներքին տանջանքները (որդը) և մարմնի արտաքին տանջանքները (կրակը) յաւիտեան ու անվերջ պէտք է մնան։

[2]) Յիսուսը ուզում է հասկացնել իւր աշակերտներին, որ ինչպէս հին օրէնքի զոհերը կրակով էին մաքրւում և աղով աղւում, որ Աստուծուն հաճելի լինի (Ղեւտ. բ 13), այնպէս էլ իրենք կրակով մաքրուածի նման՝ մաքուր պիտի լինեն և աղով աղուած կրակրի նման՝ հաճելի ու դուրեկան։

Նրանց հրեշտակներն ամեն ժամանակ տեսնում են իմ Երկնաւոր Հօր երեսը։

Որովհետև Մարդու Որդին կորածներին փրկելու եկաւ։

Ի՞նչ էք կարծում, եթէ մի մարդ հարիւր ոչխար ունենայ և նրանցից մինը մոլորուի, մի՞թէ իննսուն և ինն ոչխարը լեռների վերայ չի թողնի ու գնայ մոլորուածին որոնելու։ Եւ եթէ գտնելու լինի նրան, ճշմարիտն եմ ասում ձեզ. որ նրա վերայ աւելի կուրախանայ, քան թէ չմոլորուած իննսուն և ինն ոչխարի վերայ։

Այնպէս էլ Երկնաւոր Հայրս չէ կամենում, որ այս փոքրիկներից մինը կորչի»։

67.

ՅԻՍՈՒՍԸ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ Է ՄԵՂԱՆՉՈՂՆԵՐԻՆ ՈՒՂՂԵԼ ՈՒ ՆԵՐԵԼ։—ԱՆՆԵՐՈՂ ԵՒ ՉԱՐ ԾԱՌԱՅԻ ԱՌԱԿԸ

Մատթ. ժբ 15-35 Յիսուս շարունակելով իւր խօսքն ասաց. —«Եթէ եղբայրդ մեղանչէ քո դէմ, գնա՛ և յանդիմանիր նրան երբ մենակ էք։[1]) Եթէ նա քեզ լսեց, նշանակում է եղբօրդ շահեցար։ Իսկ եթէ չլսէ, հետդ մէկ կամ երկու մարդ վերցրու, որպէս զի երկու կամ երեք վկաների բերանով ամեն բան հաստատուի։[2]) Եթէ նրանց էլ չի լսի, եկեղեցուն յայտնիր. և եթէ եկեղեցուն էլ չլսեց, այն ժամանակ թող նա քեզ համար հեթանոսի

[1]) Համեմատել ղևտ. ժթ. 17-ի հետ։

[2]) Համեմատել բ. օր. ժթ. 15-ի հետ։

և մաքսաւորի պէս լինի։ Ճշմարիտն եմ ասում ձեզ, որին կապէք երկրի վերայ, կապուած կըլինի երկնքում և որին արձակէք երկրի մէջ, արձակուած կլինի երկնքում։

Այս էլ եմ ասում ձեզ, որ եթէ ձեզնից երկուսը երկրի վերայ միաբանուին, ինչ էլ որ խնդրեն, կտանան իմ Երկնաւոր Հօրից։ Որովհետև որտեղ երկու կամ երեք հոգի ժողոված լինեն իմ անունով, այնտեղ եմ և Ես՝ նրանց մէջ»։

Այն ժամանակ մօտեցաւ Պետրոսն ու ասաց.—«Տէր, եթէ եղբայրս իմ դէմ մեղանչէ, քանի՞ անգամ ներեմ նրան, մինչև եօթն անգամ»։

Յիսուսն ասաց.—«Չեմ ասում քեզ մինչև եօթն անգամ, այլ մինչև եօթանասուն անգամ եօթը։

Այս պատճառով Երկնքի Արքայութիւնը նըման է այն թագաւորին, որ կամեցաւ իւր ծառաներից հաշիւ ստանալ։

Երբ հաշուի նստեց, մօտեցաւ նրան բիւր[1]) քանքար պարտ եղող ծառան։ Եւ որովհետև նա վճարելու կարողութիւն չունէր, տէրը հրամայեց որ նրան, նրա կնոջն ու որդոց և նրա բոլոր ունեցածը ծախեն, որպէս զի պարտքը վճարուի։ Այն ժամանակ ծառան ընկնելով նրա առաջ, երկրպագեց ու ասաց.—«Ժամանակ տուր ինձ և ամբողջ պարտքս կվճարեմ։

[1]) Բիւրը = 10,000-ի։ Քանքարը=2,000 բուբ.։ Բիւր քանքարը = քսան միլիոն բուբլուն։

Տէրը խղճալով ծառային, արձակեց նրան և պարտքն էլ ներեց։ Այդ նոյն ծառան դուրս գալով տիրոջ տնից, գտաւ իւր ընկերներից մէկին, որն իրեն հարիւր դահեկան[1]) էր պարտ և բռնելով նրան՝ խեղդում էր ասելով.—«Վճարի՛ր ինձ պարտքդ»։ Այն ժամանակ ընկերն ընկաւ նրա ոտքերն և սկսեց աղաչել ու ասել.—«Ժամանակ տուր ինձ և կվճարեմ»։

Բայց նա չկամեցաւ, այլ գնաց և բանտը դրեց նրան, մինչև որ պարտքը վճարէ։ Նրա միւս ընկերները տեսնելով այդ, սաստիկ վշտացան, եկան ու եղելութիւնը տիրոջն յայտնեցին։

Այն ժամանակ տէրը կանչեց նրան ու ասաց.—«Չա՛ր ծառայ, ես քո ամբողջ պարտքը ներեցի, որովհետև աղաչեցիր ինձ։ Ուրեմն պէտք չէր, որ դու էլ ընկերոջդ ներէիր, ինչպէս որ ես քեզ ներեցի»։ Եւ բարկանալով նրա տէրը, դահիճների ձեռքը մատնեց նրան, մինչև որ ամբողջ պարտքը վճարէ։

Այսպէս կվարուի ձեզ հետ իմ Երկնաւոր Հայրը, եթէ դուք էլ սրտանց չէք ների ձեր եղբօր յանցանքները։

68.

ՅԻՍՈՒՍԸ ՀՐԱՀԱՆԳՈՒՄ Է ԻՒՐ ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԵՒ ԵՐԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ԵՒ ՅԱՆԴԻՄԱՆՈՒՄ ԳԱԼԻԼԻԱՑԻՆԵՐԻՆ

Ղուկ. ժ. 1-16 Յիսուսն ուրիշ եօթանասուն և երկու աշակերտներ էլ ընտրեց, որոնց զոյգ զոյգ ուղար-

[1]) Վաթսուն ռուբլի։

կեց այն քաղաքներն ուր գնալու էր ինքը։

Եւ ասաց նրանց.—«Հունձը շատ է, մշակները սակաւ. ուստի և աղաչեցէք հունձի Տէրոջը, որ իւր հունձի համար մշակներ ուղարկէ։

Գնացէք, ես ուղարկում եմ ձեզ ինչպէս գառների՝ գայլերի մէջ։ Հետներդ ոչ քսակ վերցրէք, ոչ պարկ և ոչ էլ կօշիկ. և ճանապարհին էլ ոչ ոքի չբարևէք։ Ինչ տուն էլ մտնէք, առաջ ասացէք.—Ողջոյն այս տանս։

Երբ այդ տան մէջ ողջոյնի արժանի մարդ գտնուեց, ձեր ողջոյնը նրա վերայ կհանգչի, իսկ եթէ չգտնուեց՝ ձեզ կդառնայ։ Հենց այն տանն էլ մնացէք և նրանց ունեցածից կերէք ու խմեցէք, որովհետև մշակն արժանի է իւր վարձին։ Տնից-տուն մի փոխուէք։ Եթէ որևէ քաղաք մտնէք և ձեզ ընդունեն. կերէք ինչ որ առաջներդ դնեն։ Այնտեղ գտնուած հիւանդներին բուժկեցէք և ասացէք.—Մօտեցել է ձեզ Աստուծու Արքայութիւնը։

Բայց եթէ մտնէք որևէ քաղաք և այնտեղ ձեզ չընդունեն, փողոց դուրս եկէք ու ասացէք. —«Այն փոշին էլ, որ ձեր քաղաքից կպել է մեր ոտքերին, ձեզ վերայ ենք թափ տալիս. բայց իմացէք, որ մօտեցել է ձեզ Աստուծու Արքայութիւնը»։ Ասում եմ ձեզ, որ այն օրը Սոդոմացիների համար աւելի մխիթարական կլինի, քան այն քաղաքի համար։

Վա՛յ քեզ Քորազին, վա՛յ քեզ Բեթսայիդա, եթէ ձեր մէջ գործուած հրաշքները Տիւրոսի և

Սիդոնի մէջ գործուէին, նրանք վաղուց քուրձով ու մոխրի մէջ նստած՝ ապաշխարած կլինէին։ Բայց դատաստանի օրը Տիւրոսի և Սիդոնի համար աւելի մխիթարական կլինի, քան ձեզ համար։

Եւ դու Կափառնաում, որ մինչև երկինքն ես բարձրացել, մինչև դժոխք կիջնես։

Ձեզ լսողն ինձ է լսում. և ձեզ անարգողն ինձ է անարգում. նա, որ ինձ է անարգում, ինձ Ուղարկողին է անարգում և ով ինձ է լսում, ինձ Ուղարկողին է լսում։

69.

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ ԳԱԼԻԼԻԱՅՈՒՄ

Յովհ. է. 2-9 Մօտենում էր հրէաների Տաղաւարահարաց[1]) տօնը։ Մօտեցան Յիսուսին իւր եղբայրներն ու ասացին.—«Դուրս եկ այստեղից և գնա՛ Հրէաստան, որ քո աշակերտներն էլ տեսնեն քո արած գործերը, որովհետև ոչ ոք չէ կարող ծածկաբար գործելով իրեն յայտնի անել։ Եթէ դու ես իսկապէս այդ գործերն անողը, այն ժամանակ յայտնիր քեզ աշխարհին»։

Նրա եղբայրներն այդ բանն այն պատճառով ասացին, որ իրենք էլ չէին հաւատում նը-

[1]) Տաղաւարահարաց տօնը Հրէից նշանաւոր տօներից մինն էր, որ տևում էր եօթն օր. այդ եօթն օրը հրէաները ծառերի ճիւղերից տաղաւարներ (վրաններ) էին շինում և նրանց տակն անցկացնում։ Այդ տօնն իրենց նախահայրերի Եգիպտոսից դուրս գալուց յետոյ քառասուն տարի անապատի մէջ վրանաբնակ կեանք վարելուն յիշատակն էր։

բան։ Յիսուսը պատասխանեց.—«Իմ ժամանակը դեռ չէ հասել, բայց ձեզ համար միշտ ժամանակ է։ Աշխարհը ձեզ չէ կարող ատել, բայց ինձ ատում է, որովհետև ես վկայում եմ, որ իւր գործերը չար են։ Դուք գնացէք տօնին, բայց ես դեռ չեմ գնայ, որովհետև դեռ չէ հասել իմ ժամանակը»

Եւ նա մնաց Գալիլիայում։

70.

ԴԷՊԻ ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ղուկ. Թ. 51-62 Արդէն մօտենում էր Յիսուսի այս աշխարհից վերանալու օրերը. և նա իւր երեսը դէպի Երուսաղէմ դարձրեց։

Նա առաջուց պատուիրակներ ուղարկեց, որոնք Սամարիա գնալով, մի գիւղ մտան, որպէսզի կարեւոր պատրաստութիւնները տեսնեն։

Բայց այնտեղ չնդունեցին Յիսուսին, որովհետեւ գիւղացիք լսել էին պատուիրակներից, որ Նա դէպի Երուսաղէմ է ճանապարհորդում։

Երբ նրա աշակերտները — Յակովբոսն ու Յովհաննէսը տեսան այդ՝ ասացին.—«Տէր, կուզես ասենք, որ երկնքից կրակ իջնի ու դրանց սատակեցնի։[1])

Յիսուսը դարձաւ նրանց և սաստելով ասաց.—«Դուք չգիտէք թէ որ հոգուցն էք։ Մարդու Որդին չեկաւ մարդկանց հոգիները կորցնելու, այլ փրկելու»։

Եւ գնաց մի ուրիշ գիւղ։

Երբ դեռ նրանք ճանապարհին էին, Յիսուսի հետևողներից մինն ասաց.—Տէր, ուր էլ գնալու լինես, յետևիցդ կգամ»։

Յիսուսը նրան ասաց. — «Աղուէսներն իրենց որջերն ունին և երկնքի թռչուններն իրենց բները, իսկ Մարդու Որդին իւր գլուխը դնելու տեղ էլ չունի։

Դառնալով մի ուրիշի ասաց.—«Դու եկ իմ յետևից»։ Իսկ նա պատասխանեց.—«Տէր, հրաման տուր, որ նախ գնամ հօրս թաղեմ»։ Յիսուսն ասաց նրան.—«Թող մեռելները թաղեն իրենց մեռելներին, իսկ դու գնա և Աստուծու Արքայութիւնն աւետիր»։

Մի ուրիշն էլ ասաց.—«Տէր, ես կգամ քո յետևից, միայն իրաւունք տուր ինձ, որ գնամ տանեցիներիս հրաժեշտի ողջոյն տամ»։

Յիսուսը նրան էլ պատասխանեց.—«Նա, որ իւր ձեռքը մաճի վերայ է դնում և յետ է նայում՝ այդպիսին անյարմար է Աստուծու Արքայութեան համար»։

71.

ՅԻՍՈՒՍԸ ՎԻՃԱՐԱՆՈՒՄ Է ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՂԱՒԱՐԱՀԱՐԱՑ ՏՕՆԻՆ

Յովհ. Է. 1, 9-44 Յիսուսը շրջում էր Գալիլիայում և չէր կամենում Հրէաստան գնալ, որովհետև հրէաներն

---

1) Յունարէնում աւելացած է.—«Ինչպէս Եղիան էլ արաւ» (Դ. Թագ. ա. 9-12)։

ուզում էին նրան սպանել։ Բայց երբ նրա եղբայրները տօնին Երուսաղէմ գնացին, ինքն էլ գնաց, բայց ոչ յայտնի կերպով, այլ ծածկաբար։ Հրէաները տօնի ժամանակ նրան էին որոնում և ասում.—«Ո՞ւր է նա»։ Նրա մասին ժողովուրդի մէջ էլ կար խօսակցութիւն։ Ոմանք ասում էին թէ նա բարի է, ոմանք էլ՝ թէ նա ժողովուրդ մոլորեցնող է։ Բայց այնուամենայնիւ, հրէաների վախից ոչ ոք չէր համարձակւում նրա մասին համարձակ խօսել։

Երբ տօնն ընդմիջեցաւ, Յիսուսը տաճար գընաց և սկսեց ուսուցանել։ Հրէաները զարմանում էին ու ասում.—«Ի՞նչպէս բան է, որ թէև չէ ուսել, բայց բոլոր գրուածները գիտէ»։

Պատասխանեց Յիսուսն և ասաց.—«Իմ վարդապետութիւնը իմս չէ, այլ ինձ Ուղարկողինն է։ Ով որ կամենում է Նրա կամքը կատարել, նա կիմանայ թէ այս վարդապետութիւնը Աստուածանից է թէ՞ ես ինձնից եմ խօսում։ Ինքն իրենից խօսողն իւր փառքն է որոնում, իսկ ով որ իւր Ուղարկողի փառքն է որոնում, նա ճշմարիտ է և նրա մէջ անիրաւութիւն չկայ։ Չէ՞ որ Մովսէսն օրէնք տուեց ձեզ. բայց ձեզնից և ոչ մինը չէ կատարում օրէնքը։ Ինձ ի՞նչու էք կամենում սպանել»։

Ժողովուրդը պատասխան տուեց ու ասաց. «Դև կայ քո մէջ ինչէ, ո՞վ է ուզում քեզ սպանել»։

Յիսուսը պատասխանեց ու ասաց.—«Մէկ

գործ գործեցի և ամենքդ էլ զարմացել էք։ Մովսէսը ձեզ թլպատութիւն տուեց (թէև ոչ թէ Մովսէսից էր, այլ ձեր նախահայրերից, և դուք օրը շաբաթ մարդ էք թլպատում։ Եթէ մի մարդ, շաբաթ օրը թլպատութիւն է ընդունում, որպէս զի Մովսէսի օրէնքը չլուծուի, հապա ինձ վերայ ինչո՞ւ էք զարմանում, որ ես շաբաթ օրը մի ամբողջ մարդ բժշկեցի։ Աչքի երևցածով մի դատէք, այլ արդարութեամբ դատեցէք»։

Այն ժամանակ Երուսաղէմացիներից ոմանք ասացին.—«Արդեօք սա այն անձը չէ՞, որին կամենում էին սպանել։ Ահա նա խօսում է յայտնապէս և ոչինչ չեն ասում նրան, երևի իշխաններն էլ համոզուեցին, որ սա իսկապէս Քրիստոսն է։ Մենք գիտենք թէ Սա որտեղից է, իսկ երբ Քրիստոսը գայ, ոչ ոք չէ կարող իմանալ թէ որտեղից է»։

Այն ժամանակ Յիսուսն սկսեց բարձրաձայն ուսուցանել տաճարում և ասել.—«Ինձ էլ գիտէք, որտեղից լինելս էլ գիտէք։ Ես ինքս ինձ չեմ եկել. բայց ճշմարիտը՝ ինձ Ուղարկողն է որին դուք չէք ճանաչում։ Ես ճանաչում եմ Նրան, որովհետև ես նրանից եմ և Նա ուղարկեց ինձ»։

Կամենում էին նրան բռնել, բայց ոչ ոք ձեռք չտուեց, որովհետև նրա ժամը դեռ չէր հասել։

Ժողովրդից շատերն հաւատացին նրան և ասում էին.—«Քրիստոսը որ գայ, մի՞թէ սրանից

աւելի նշաններ է ցոյց տալու»։

Փարիսեցիները լսելով ժողովրդի մէջ նրա մասին եղած խօսակցութիւնը, քահանայապետների հետ միացած, ուղարկեցին իրենց սպասաւորներին, որ նրան բռնեն։ Իսկ Յիսուսն ասաց. —«Ես երկար ժամանակ չեմ մնալու ձեզ մօտ, այլ գնալու եմ ինձ Ուղարկողի մօտ։ Դուք ինձ կորոնէք և չէք գտնի և ուր որ գնալու եմ, դուք չէք կարող գալ»։

Հրէաներն ասացին իրար.—«Սա ուր պէտք է գնայ, որ մենք չկարողանանք գտնել։ Չը՞լինի թէ ցիր ու ցան եղած հեթանոսների մօտ է ուզում գնալ՝ նրանց ուսուցանելու։ Ուրիշ ինչ կարող է նշանակել նրա խօսքը թէ.—ինձ կորոնէք և չէք կարող գտնել և ուր որ գնալու եմ, դուք չէք կարող գալ»։

Տօնի վերջին մեծ օրը, Յիսուսը կանգնած աղաղակեց ու ասաց.—«Ով որ ծարաւ է թող գայ ինձ մօտ և խմէ։ Ով որ ինձ հաւատում է նրա փորից, ինչպէս ասում է գիրքը[1]), կենդանի ջրի գետեր կբղխեն»։

Նա այդ բանը Սուրբ Հոգու մասին ասաց, որ նրան հաւատացողները պէտք է ընդունէին,

[1]) Բառացի կերպով Ս. Գրքի մէջ այդպիսի վկայութիւն չկայ։ Յիսուսն ընդհանուր կերպով ակնարկում է Եսայի մարգարէի այն խօսքերը, որով ջրի ու հոգու համեմատութիւններ են լինում։—«Անջրդի տեղերով գնացող ծարաւին՝ ես ջուր կտամ և իմ հոգին կդնեմ քո զաւակի վերայ»։ (Մարգ. Եսայի խդ. 3)։

—«Եւ սրանից յետոյ բոլոր մարմինների վերայ կթափեմ իմ հոգուց» (Յովել բ. 28)։

բայց որ դեռ ևս չէր տրուած նրանց, որովհետև Յիսուսը դեռ չէր փառաւորուել։

Ժողովրդականներից ոմանք լսելով այդ խօսքը՝ ասացին.—«Սա ճշմարիտ մարգարէ է»։ Ուրիշներն ասում էին.—«Սա Քրիստոսն է»։ Իսկ ոմանք էլ ասում էին.—«Մի՞թէ Քրիստոսը Գալիլիայից պէտք է գայ։ Չէ՞ որ գրքի մէջ ասուած է, թէ Քրիստոսը Դաւթի սերունդից պիտի լինի և Դաւթի գիւղից—Բեթղեհէմից պէտք է գայ»։ Եւ այս պատճառով ժողովրդի մէջ երկպառակութիւն ընկաւ։

Նրանցից ոմանք կամեցան նրան բռնել, բայց ոչ ոք ձեռք չտուեց։

72.

ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Յովհ. է. 45-52 Երբ ուղարկուած սպասաւորներն եկան քահանայապետների և փարիսեցիների մօտ, վերջինները ասացին.—«Ինչու նրան այստեղ չբերիք»։

Սպասաւորները պատասխան տուին ու ասացին.—«Ոչ ոք այդ մարդու նման չէ խօսել երբէք»։

Փարիսեցիները պատասխանեցին. — Մի՞թէ դուք էլ մոլորուեցաք։ Չլինի՞ թէ բացի այս անիծեալ խաժամուժ ամբոխից որ օրէնք չգիտէ, իշխաններից կամ փարիսեցիներից որևէ մէկը հաւատաց նրան»։

Նիկոդիմոսը (որ գիշերով եկել էր նրա մօտ և նրանցից մինն էր) ասաց նրանց.—«Մի՞թէ մեր

օրէնքը կարող է դատել մի մարդու, առանց նախապէս լսելու և իմանալու թէ նա ինչ է արել»։

Պատասխան տուին նրան ու ասացին. — «Մի՞թէ դու էլ Գալիլիացի ես։ Քննիր և կըտեսնես որ ոչ մէկ մարգարէ Գալիլիայից չէ եկել»։

Եւ ամենքն էլ ցրուեցան իրենց տները։

Յովհ. ը. 1 Իսկ Յիսուսը Ձիթենեաց լեռը բարձրացաւ։

73.

ՊՈՌՆԻԿ ԿԻՆԸ

Յովհ. ը. 2-11 Հետևեալ օրն առաւօտեան Յիսուսը դարձեալ տաճար եկաւ, բոլոր ժողովուրդը հաւաքուեցաւ նրա շուրջը։ Նա նստեց և սկսեց ուսուցանել նրանց։

Դպիրները, քահանայապետներն ու փարիսեցիները Յիսուսի մօտ շնութեան մէջ բռնուած մի կին բերին ու կանգնացնելով նրա առաջ՝ ասացին։ — «Վարդապետ, այս կինը շնութեան յանցանքի մէջ բռնուեցաւ. Մովսէսը օրէնքի մէջ պատուիրել է մեզ այդպիսիներին քարկոծել, դու ինչ ես ասում»։[1])

Այդ հարցը նրան փորձելու համար տուին, որպէս զի նրան ամբաստանելու պատճառ ունենան։

Յիսուսը ցած նայելով, մատով գրում էր

[1]) Դնտ. ի. 10 և բ. օր. իբ. 23-24.

գետնի վերայ։ Իսկ երբ ստիպելով հարցրին նրան, նա դէպի վեր նայեց և ասաց նրանց.— «Ով որ ձեզնից անմեղ է, առաջ նա թող քար ձգէ դրա վերայ»։

Եւ դարձեալ ցած նայելով, գրում էր գետնի վերայ։ Իսկ նրանք լսելով այդ՝ մէկ-մէկ դուրս եկան, առաջիններից սկսած մինչև վերջինները։ Յիսուսը միայն մնաց և կինը, որ կանգնած էր նրա առաջ։

Յիսուսը դիմելով կնոջն ասաց.— «Ա՛յ կին, ո՞ւր գնացին քեզ ամբաստանողները, ոչ ոք չը դատապարտեց քեզ»։ Կինն ասաց.— «Ո՛չ, Տէր»։

Յիսուսն ասաց.— «Ես էլ քեզ չեմ դատապարտում, գնա այսուհետև մի մեղանչիր»։

74.

ՅԻՍՈՒՍԸ ՎԻՃԱԲԱՆՈՒՄ Է ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՃԱՐԻ ԴԱՆՁԱՏԱՆԸ

Յովհ. ը. 12-59 Յիսուսն սկսեց խօսել ժողովրդի հետ և ասաց.— «Ես աշխարհի լոյսն եմ, իմ յետևից եկողը՝ խաւարի մէջ չի շրջի, այլ կեանքի լոյս կունենայ»։ Փարիսեցիներն ասացին,— «Քեզ համար ինքդ ես վկայում և քո վկայութիւնը ճշմարիտ չէ»։

Պատասխան տուեց Յիսուսն ու ասաց.— «Եթէ նոյն իսկ ինքս էլ վկայեմ ինձ համար, այնուամենայնիւ իմ վկայութիւնը ճշմարիտ է, որովհետև գիտեմ թէ որտեղից եկայ և ուր պէտ-

քէ գնամ. բայց դուք չգիտէք թէ որտեղից եմ ես և կամ ուր պիտի գնամ։ Դուք ըստ մարմնոյ էք դատում, ես ոչ ոքի չեմ դատում. իսկ եթէ դատելու էլ լինեմ, իմ դատաստանը ճշմարիտ է. որովհետև դատողը ես չեմ մենակ այլ ես և ինձ ուղարկող Հայրը։ Եւ ձեր օրէնքի մէջ էլ գրուած է, որ երկու մարդու վկայութիւնը ճշմարիտ է։[1]) Ինձ համար վկայողը ես եմ և իմ Երկնաւոր Հայրը, որ վկայում է ինձ համար»։

Այն ժամանակ ասացին նրան.—«Ո՞ւր է քո Հայրը»։ Յիսուսը պատասխան տուեց ու ասաց.—«Ո՛չ ինձ էք ճանաչում և ոչ իմ Հօրը. եթէ ինձ ճանաչէիք՝ իմ Հօրս էլ կճանաչէիք»։

Յիսուսն այս խօսքը գանձատանն ասաց. երբ նա ուսուցանում էր տաճարում և ոչ ոք չբռնեց նրան, որովհետև ժամանակը դեռ չէր հասել։

Յիսուսը շարունակեց.—«Ես գնում եմ և դուք կորոնէք ինձ և ձեր մեղքերի մէջ կմեռնէք և ես, ուր որ գնում եմ, դուք չէք կարող գալ»։

Հրէաներն ասում էին.—«Մի՞թէ անձնասպանութիւն է գործելու, որ ասում է թէ, ուր որ գնում եմ, դուք չէք կարող գալ»։

Յիսուսն ասաց նրանց.—«Դուք ցածիցն էք, իսկ ես վերևից. դուք այս աշխարհիցն էք, իսկ

[1]) «Անիրաւութեան կամ յանցանքի մէջ որևէ մարդու մեղադրելու համար, մի վկայի հաստատութիւնը բաւական չպէտք է համարուի»։

«Մահապարտը երկու կամ երեք վկայի հաստատութեամբ թող մեռնի. մէկ վկայի հաստատութեամբ չմեռնի»։ (Բ. օր. ԺԹ. 15. ԺԷ. 6.)

ես այս աշխարհից չեմ. այդ պատճառով էլ ասացի, որ ձեր մեղքերի մէջ կմեռնէք. որովհետև եթէ դուք չհաւատաք, որ Այն Ես եմ, այն ժամանակ դուք ձեր մեղքերի մէջ կմեռնէք»։

Հարցրին նրան.—«Ո՞վ ես դու»։

Յիսուսը պատասխանեց.—«Ես այն եմ, ինչ որ հէնց սկզբից խօսում եմ ձեզ հետ։[1]) Ձեզ համար խօսելու և դատելու բան շատ ունիմ, բայց ինձ Ուղարկողը ճշմարիտ է և ես ինչ որ Նրանից լսեցի՝ այն էլ աշխարհիս մէջ եմ խօսում»։

Նրանք չհասկացան որ Հօր մասին է խօսում։ Յիսուսն ասաց նրանց.—«Երբ Մարդու Որդուն բարձրացնէք, այն ժամանակ կիմանաք, որ Այն Ես եմ և որ ես ինձնից ոչինչ չեմ անում, այլ ինչպէս սովորեցրեց ինձ իմ Հայրը, այնպէս եմ խօսում։ Եւ ինձ Ուղարկողն ինձ հետ է։ Հայրն ինձ մենակ չի թողնի, որովհետև ես միշտ այն եմ անում, ինչ որ հաճելի է նրան»։ Երբ Յիսուսն այս բաներն էր խօսում, շատերն հաւատացին նրան։

Եւ իրեն հաւատացող հրէաներին Յիսուսն ասաց.—«Եթէ իմ խօսքերիս մէջ մնաք, իմ ճշմարիտ աշակերտները կլինէք։ Դուք կճանաչէք ճշմարտութիւնը և այդ ճշմարտութիւնը ձեզ ազատ կդարձնէ»։

Պատասխան տուին նրան ու ասացին.—

[1]) Այսինքն, որ իմ ով լինելս մինչև հիմայ բացատրում եմ ձեզ։

«Մենք Աբրահամի զաւակներն ենք և երբէք ոչ ոքի ծառայած չենք։ Ուրեմն ինչու ես ասում թէ ազատ կդառնաք»։ Յիսուսը պատասխանեց.— «Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում ձեզ, ով որ մեղք է գործում՝ նա մեղքի ստրուկն է։ Ստրուկը չի կարող տան մէջ յաւիտեան մնալ, բայց որդին յաւիտեան կմնայ։ Ուստի, եթէ Որդին ձեզ ազատ դարձնէ, այն ժամանակ դուք իսկապէս ազատ կլինէք։

Գիտեմ որ դուք Աբրահամի զաւակներն էք, բայց ուզում էք ինձ սպանել, որովհետև իմ խօսքերը ձեր մէջ տեղ չունին։ Ես ինչ որ Հօրս մօտ տեսայ, այն եմ խօսում. իսկ դուք ինչ որ ձեր հօր մօտ տեսաք՝ այն էք անում»։

Պատասխան տուին նրան ու ասացին. — «Մեր հայրն Աբրահամն է»։

Յիսուսն ասաց.— «Եթէ դուք Աբրահամի որդիքը լինէիք, Աբրահամի գործերը կգործէիք։ Բայց դուք ուզում էք սպանել ինձ — այսինքն նրան, որ ձեզ իւր Հօրից լսած ճշմարտութիւնը խօսեց. Աբրահամն այդ բանը չարաւ։ Դուք ձեր հօր գործերն էք անում»։

Այն ժամանակ ասացին նրան. — «Մենք պոռնկութիւնից չենք ծնուած, մենք մի Հայր ունինք, որ է Աստուած»։ Յիսուսը պատասխանեց.—«Եթէ Աստուած ձեր Հայրը լինէր, դուք ինձ պէտք է սիրէիք, որովհետև ես Աստուծուց ելայ ու եկայ. և ես ինքս ինձնից չեկայ, այլ Նա ուղարկեց ինձ։ Ի՞նչու չէք հասկանում խօսածներս, որովհետև չէք կարող խօսքերս լսել։ Ձեր հայրը սատանան է և դուք կամենում էք ձեր հօր ցանկութիւնները կատարել։ Նա սկզբից մարդասպան էր և ճշմարտութեան մէջ չմնաց, որովհետև նրա մէջ ճշմարտութիւն չկայ։ Երբ նա սուտ է խօսում, նա իրեններից է խօսում, որովհետև նա ստախօս է և ստութեան հայրը։ Իսկ ես որ ճշմարտութիւնն եմ խօսում, ինձ չէք հաւատում։

Ձեզնից ո՞րը կարող է ինձ մեղքի համար յանդիմանել։ Իսկ եթէ ես ճշմարտութիւնն եմ խօսում, հապա ի՞նչու չէք հաւատում ինձ։ Ով Աստուծուցն է, նա լսում է Աստուծու խօսքերը։ Դուք այն պատճառով չէք լսում, որ Աստուծուց չէք»։

Հրէաները պատասխան տուին նրան և ասացին.—«Ճիշտը չէինք ասո՞ւմ, որ դու Սամարացի ես և դև կայ քո մէջը»։

Յիսուսն ասաց.—«Իմ մէջ դև չկայ, բայց ես իմ Հօրս եմ պատուում, իսկ դուք ինձ անարգում էք։ Ես չեմ որոնում իմ փառքը, կայ մինը, որ որոնում է ու դատում։ Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում ձեզ, ով իմ խօսքերը պահէ, նա յաւիտեան մահ չի ճաշակի»։

Հրէաներն ասացին նրան.—«Այժմ իմացանք, որ քո մէջը դև կայ։ Աբրահամը մեռաւ, մարգարէները նոյնպէս և դու ասում ես, թէ ով իմ խօսքերս պահէ, յաւիտեան մահ չի ճաշակի։ Մի՞թէ դու մեծ ես մեր հայր Աբրահա-

մից ու մարգարէներից՝ որ մեռան և քեզ ում տեղն ես դնում»։

Յիսուսը պատասխանեց. — «Եթէ ես ինձ փառաւորեմ, իմ փառքը ոչինչ է. իմ Հայրն է, որ փառաւորում է ինձ և Որի համար ասում էք, թէ ձեր Աստուածն է։ Դուք Նրան չէք ճանաչում, իսկ ես ճանաչում եմ, և եթէ ասեմ թէ Նրան չեմ ճանաչում, ձեզ նման ստախօս կլինեմ։ Բայց ես ճանաչում եմ Նրան ու պահում Նրա խօսքերը։ Ձեր հայր Աբրահամը ցանկութիւն ունէր իմ օրը տեսնելու ու տեսաւ և ուրախացաւ»։

Հրէաներն ասացին նրան.—«Դու դեռ յիսուն տարեկան էլ չկաս և Աբրահամին տեսար»։

Յիսուսն ասաց նրանց.—«Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում ձեզ, որ ես Աբրահամի լինելուցն էլ առաջ եմ»։

Այն ժամանակ հրէաները քարեր վերցրին, որ քարկոծեն նրան.[1]) բայց նա խոյս տուեց և տաճարից դուրս եկաւ ու գնաց։

75.

Ի ԾՆԷ ԿՈՅՐԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Յովհ. թ. 1-38 Յիսուսն անցնելիս ի ծնէ կոյր մի մարդ տեսաւ։ Աշակերտներն հարցրին Յիսուսից.—«Սա ում մեղքի համար է կոյր ծնուել. իւր թէ՞ իւր

[1]) Համեմատել Ղեւ. իդ. 16-ի հետ։ «Աստուծուն հայհոյիչը մահով պէտք է մեռնի. ժողովուրդը նրան քարընկեցութեամբ պէտք է քարկոծէ»։

հօր կամ մօր մեղքի համար»։ Յիսուսը պատասխանեց.—«Սա կոյր է ծնուել ոչ իւր և ոչ էլ իւր հօր կամ մօր մեղքի համար, այլ որ դրա վերայ Աստուծու գործերն յայտնուին։ Քանի որ դեռ ցերեկ է, ես պէտք է ինձ Ուղարկողի գործերը կատարեմ. գիշերը կգայ և այլ ևս ոչ ոք չէ կարող գործել։ Քանի որ աշխարհումն եմ, աշխարհի լոյսն եմ»։ Ասելով այս, թքեց գետնի վերայ, թքով ցեխ շինեց և կոյրի աչքերին ծեփելով՝ ասաց—«Գնա և Սելոմայ աւազանի մէջ լուացուիր»։ Նա գնաց և լուացուեց. և երբ եկաւ, արդէն տեսնում էր։

Նրա դրացիներն ու առաջուց նրան մուրացկան տեսնողներն ասում էին.—«Արդեօք սա այն մուրացկանը չէ՞, որ նստած մուրացկանութիւն էր անում»։ Ոմանք ասում էին թէ նա է, ոմանք էլ թէ նա չէ, այլ նրա նման է. իսկ ինքն ասում էր թէ՝ ես եմ։ Ուստի և հարցրին նրան.—«Հապա ի՞նչպէս բացուեցան աչքերդ»։ Նա պատասխանեց.—«Մի մարդ, որին Յիսուս են կոչում, ցեխ շինեց և աչքերիս ծեփելով՝ ասաց.—«Գնա՝ Սելոմամ և լուացուիր։ Ես գնացի, լուացուեցայ և այժմ տեսնում եմ»։

Հարցրին նրան.—«Ո՞րտեղ է նա»։ Նա պատասխանեց.—«Չգիտեմ»։

Եւ այդ մարդուն, որ առաջ կոյր էր, փարիսեցիների մօտ տարան։ Այն օրը որ Յիսուսը ցեխ շինեց և կոյրի աչքերը բացեց, շաբաթ էր։

Փարիսեցիներն էլ հարցրին նրան, թէ ի՞նչ-

պէս է որ տեսնում է։ Նա էլ պատասխանեց.— «Աչքերիս վերայ ցեխ դրեց, ես լուացուեցայ և այժմ տեսնում եմ»։

Փարիսեցիներից ոմանք ասացին. — «Այդ մարդն Աստուծուց չէ, որովհետև շաբաթը չէ պահում»։ Ոմանք էլ ասում էին.—«Մեղաւոր մարդն ինչպէս կարող է այդպիսի հրաշք գործել»։ Եւ մէջներն երկպառակութիւն ընկաւ։ Նորից դիմեցին կոյրին՝ հարցնելով. — «Դու ի՞նչ կարող ես ասել նրա մասին, որովհետև նա է աչքերդ բացել։ Կոյրն ասաց. —«Նա մարգարէ է»։

Հրէաները չհաւատացին, որ նա կոյր է եղել և բացուել են աչքերը։ Ուստի և կանչեցին կոյրի ծնողներին ու հարցրին.—«Սա է՞ ձեր որդին, որի համար ասում էիք թէ կոյր ծնուեցաւ, հապա ինչպէս է որ այժմ տեսնում է»։

Նրա ծնողներն էլ պատասխանեցին հրէաներին ու ասացին.—«Գիտենք որ սա մեր կոյր ծնուած որդին է, բայց թէ այժմ ինչպէս է որ տեսնում է՝ չգիտենք. կամ թէ ով բացեց դրա աչքերը՝ նոյնպէս չգիտենք։ Ինքն արդէն չափահաս է, հենց իրեն հարցրէք, թող ինքը խօսի իւր մասին»։

Ծնողներն այն պատճառով ասացին, որ «ինքը չափահաս է, իրենից հարցրէք» որովհետև վախենում էին հրէաներից, որոնք ուխտել էին նրան Քրիստոսի տեղ ընդունողներին՝ ժողովարանից հեռացնել։ Փարիսեցիները նորից կանչեցին կոյր մարդուն և ասացին.—«Փառք տուր Աստուծուն, մենք գիտենք որ այն մարդը մեղաւոր է»։ Նա պատասխանեց.—«Մեղաւոր է թէ ոչ, ես այդ չգիտեմ. միայն այն գիտեմ, որ կոյր էի և այժմ տեսնում եմ»։

Նորից հարցրին նրան.—«Նա քեզ ի՞նչ արաւ. ի՞նչպէս բացեց աչքերդ»։

Պատասխան տուեց նրանց և ասաց.—«Ես արդէն ասացի ձեզ և դուք չլսեցիք՝ էլ ի՞նչ էք կամենում իմանալ, կամ դուցէ դուք էլ էք կամենում նրա աշակերտը լինել»։

Նրանք հայհոյեցին նրան ու ասացին.—«Դու ես նրա աշակերտը, մենք Մովսէսի աշակերտներն ենք, մենք գիտենք որ Աստուած Մովսէսի հետ խօսեց, բայց չգիտենք թէ սա որտեղից է»։

Պատասխան տուեց այն մարդն ու ասաց. —«Հենց զարմանալին էլ այդ է որ դուք չգիտէք թէ որտեղից է նա, բայց իմ աչքերը բացեց։ Իսկ մենք գիտենք, որ Աստուած ոչ թէ մեղաւորներին է լսում, այլ նրան միայն որ պաշտում է Աստուծուն և նրա կամքը կատարում։ Աշխարհի սկզբից մինչև օրս լսուած չէ, որ ոք մին ի ծնէ կոյր մարդու աչքեր բացած լինի։ Եթէ այն մարդն Աստուածանից չլինէր, ոչինչ չէր կարող անել»։

Պատասխան տուին նրան ու ասացին.— «Դու ոտից գլուխ մեղքի մէջ ես ծնուել և ուզում ես մեզ բան սովորեցնել»։ Եւ նրան դուրս վռնդեցին։ Յիսուսը լսեց որ նրան վռնդել

են. և երբ նրան գտաւ՝ ասաց.—«Դու հաւատում ես Աստուծու Որդուն»։

Նա պատասխանեց .—«Տէր, ո՞վ է նա, որ հաւատամ»։ Յիսուսն ասաց.—«Դու արդէն տեսար Նրան և Նա այժմ խօսում է քեզ հետ»։

Նա պատասխանեց.—«Հաւատում եմ Տէր»։ Եւ երկրպագեց Նրան։

76.

ՔԱՋ ՀՈՎՈՒԻ ՕՐԻՆԱԿԸ

Յովհ. թ. 39-41 Յիսուսը դարձաւ փարիսեցիներին ու ասաց.—«Ես դատաստանի համար եկայ այս աշխարհը, որպէս զի չտեսնողները՝ տեսնեն, իսկ տեսնողները՝ կուրանան»։

Փարիսեցիներից ոմանք լսելով այդ՝ ասացին.—«Մի՞թէ մենք էլ կոյր ենք»։

Յիսուսն ասաց.—«Եթէ կոյր լինէիք, ձեզ վերայ մեղք չէիք ունենայ, բայց որ ասում էք թէ տեսնում ենք, այդ պատճառով էլ ձեր մեղքը ձեր վերայ կմնայ։

Յովհ. ժ. 1-21 Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում ձեզ, ով որ դռնից չէ մտնում ոչխարների գաւիթը և ուրիշ տեղից է բարձրանում, նա գող է և աւազակ։ Իսկ ով դռնից է մտնում, նա ոչխարների հովիւն է։ Դռնապանը բաց է անում դուռը նրա համար և ոչխարները լսում են նրա ձայնը և նա անուն-անուն կանչելով ոչխարներին՝ դուրս է հանում փարախից։ Եւ երբ դուրս է հանում բո-

ՔԱՋ ՀՈՎԻՒԸ

լոր ոչխարներին, ինքը գնում է նրանց առջևից, իսկ ոչխարներն էլ նրա յետևից, որովհետև ճանաչում են նրա ձայնը։ Օտարի յետևից չեն գընում և փախչում են նրանից, որովհետև չեն ճանաչում օտարի ձայնը»։

Յիսուսն այս օրինակը բերեց, բայց նրանք չհասկացան թէ ինչ էր խօսում։

Յիսուսը շարունակեց.—«Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում ձեզ, որ ես եմ ոչխարների դուռը։ Եւ բոլորն էլ, որոնք ինձնից առաջ եկան՝ գողեր էին և աւազակներ և ոչխարները չլսեցին նրանց։ Ես եմ դուռը, ով որ ինձնով մտնի, նա կփրկուի և կմտնի ու դուրս կգայ և սնունդ կը գտնի։ Գողն այն նպատակով է գալիս, որ գողանայ, սպանէ ու կորցնէ։ Իսկ ես եկայ, որ կեանք ունենան և աւելորդով ունենան։

Ես եմ քաջ հովիւը, քաջ հովիւն իւր կեանքը դնում է իւր ոչխարների համար։ Վարձկանը, որ հովիւ չէ և ոչխարներն էլ իրենը չեն, երբ տեսնում է որ գայլն եկաւ, թողնում է ոչխարներին ու փախչում. և գայլն յափշտակում և ցաքուցրիւ է անում ոչխարներին. վարձկանը փախչում է, որովհետև վարձկան է և ոչխարների համար հոգս չէ քաշում։ Ես եմ քաջ հովիւը և ճանաչում եմ իմ ոչխարներին. իմ ոչխարները էլ ինձ են ճանաչում։ Ինչպէս Հայրս ճանաչում է ինձ, այնպէս էլ ես եմ ճանաչում Հօրը և կեանքս դնում եմ ոչխարներիս համար։ Ես ուրիշ ոչխարներ էլ ունեմ, որ այս փարա-

խից չեն, նրանց էլ պէտք է բերեմ այստեղ. նրանք կլսեն իմ ձայնը և կլինի մի հօտ և մի հովիւ։ Հայրս այն պատճառով է սիրում ինձ, որ ես տալիս եմ կեանքս, որպէս զի նորից ընդունեմ այն։ Ոչ ոք չէ խլում այն ինձնից, այլ ես ինքս եմ տալիս։ Իշխանութիւն ունիմ տալու այն և իշխանութիւն ունիմ նորից ընդունելու։ Այս պատուէրն ես Հօրից ստացայ»։

Այս խօսքերի համար, նորից երկպառակութիւն ընկաւ հրէաների մէջ. նրանցից շատերն ասում էին.—«Դև կայ սրա ներսը և խելագարւում է, ի՞նչու էք սրան լսում»։ Ոմանք էլ ասում էին.—«Այս խօսքերը դիւահարի խօսքեր չեն, մի՞թէ դևը կարող է կոյրի աչքերը բանալ»։

77.

ՄԱՐԹԱ ԵՒ ՄԱՐԻԱՄ

Ղուկ. ժ. 38-42 Յողովրդի ցրուելուց յետոյ Յիսուսը գընաց մի գիւղ (Բեթանիա) ուր Մարթա անունով մի կին՝ նրան իւր տունն ընդունեց։

Մարթան մի քոյր էլ ունէր Մարիամ անունով, որ Յիսուսին տեսնելուն պէս, նրա ոտքերի մօտ նստեց և սկսեց նրա խօսքերը լսել։ Մարթան որ ծառայութիւն անելով էր զբաղուած, եկաւ Յիսուսի մօտ և ասաց.—«Տէր, մի՞թէ հոգդ չէ, որ քոյրս ինձ գործի մէջ մենակ է թողել. ասա՛, որ գայ և օգնէ ինձ»։ Յիսուսը պատասխանեց ու ասաց.—«Մարթա՛, Մարթա՛, դու

հոգում ես և շատ բաներով ես զբաղուած, այն ինչ այստեղ քիչ բան է պէտք։ Մարիամը բարի բաժինն ընտրեց և այն չի խլուի նրանից»։

78.

ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԵՒ ԵՐԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ղուկ. ժ. 17-22 Եօթանասուն և երկու աշակերտները ուրախութեամբ վերադարձան և ասացին Յիսուսին. —«Տէր, քո անունով մինչև անգամ դեւերն են հնազանդւում մեզ»։

Յիսուսն ասաց նրանց.—«Սատանային փայլակի պէս երկնքից վայր ընկնելիս էի տեսնում։ Սրանով իշխանութիւն եմ տալիս ձեզ օձերին, կարիճներին և թշնամու բոլոր զօրութիւնները ոտնակոխ անելու. և ոչ մի բան ձեզ չէ կարող վնասել։ Դուք մի ուրախանաք, որ սատանաները հնազանդւում են ձեզ, այլ ուրախացէք որ ձեր անունները երկնքումն են գրուած»։

Նոյն ժամին Յիսուսը ցնծաց Սուրբ Հոգով և ասաց.—«Շնորհակալ եմ Քեզնից երկնքի և երկրի Հայր, որ այս բաները իմաստուններից և գիտուներից ծածկեցիր և տղաներին յայտնեցիր։ Այո՛ Հայր, որովհետև Դու այդպէս հաճեցար։

Ամեն բան տրուեցաւ ինձ իմ Հօրից և ոչ ոք բացի Հօրից, չգիտէ թէ ո՞վ է Որդին. և ոչ ոք չգիտէ թէ ո՞վ է Հայրը՝ բացի Որդուց և նրանից, որին Որդին կը կամենայ յայտնել։

Մատթ. ժա 28-30 Եկէք ինձ մօտ նեղութիւններից յոգնածներ և բեռան տակ ընկճուածներ, ես ձեզ կհանգըստացնեմ։ Իմ լուծը ձեզ վերայ առէք և ինձնից սովորեցէք, որ հեզ եմ և սրտով խոնարհ և դուք հանգիստ կգտնէք, որովհետև իմ լուծը քաղցր է և իմ բեռը՝ թեթև»։

Ղուկ. ժ. 23-24 Եւ ապա դառնալով իւր աշակերտներին առանձին՝ ասաց.—«Երանի՜ այն աչքերին, որ ձեր տեսածները կտեսնեն։ Որովհետև ասում եմ ձեզ, որ շատ մարգարէներ ու թագաւորներ կամեցան ձեր տեսածները տեսնել ու չտեսան. և ձեր լսածները լսել ու չլսեցին»։

79.

ՅԻՍՈՒՍՆ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆԸ։—ՍԱՄԱՐԱՑՈՒ ԱՌԱԿԸ

Ղուկ. ժ. 25-37 Մի օրինական, Յիսուսին փորձելու նպատակով հարցրեց. «Վարդապետ, ի՞նչ անեմ որ յաւիտենական կեանք ժառանգեմ»։ Յիսուսը պատասխանեց.—«Օրէնքի մէջ ի՞նչ է գրուած. ի՞նչ ես կարդում»։

Նա պատասխան տուեց ու ասաց.—«Սիրի՛ր քո Տէր Աստուծուն բոլոր սրտովդ, բոլոր անձովդ, բոլոր զօրութեամբդ և բոլոր մտքովդ.[1]) և ընկերոջդ էլ ինչպէս քո անձը»։[2]) Յիսուսն ասաց.—«Ուղիղ պատասխանեցիր, կատարի՛ր այդ և կապրես»։

---

[1]) Բ. օր. գ. 5.

[2]) Ղեւ. ժթ. 19.

Բայց նա իրեն արդարացնել կամենալով՝ Յիսուսին ասաց.—«Իսկ ո՞վ է իմ ընկերը»։

Պատասխան տուեց Յիսուսն ու ասաց.— «Մի մարդ Երուսաղէմից Երիքով գնալիս աւազակների ձեռքն ընկաւ, որոնք նրան մերկացրին, վիրաւորեցին և կիսամահ թողնելով՝ գնացին։ Պատահմամբ մի քահանայ էր գնում այդ ճանապարհով և տեսնելով նրան, առանց ուշադրութիւն դարձնելու, անցաւ գնաց։

Անցաւ նոյնպէս մի ղևտացի, որ հասնելով նոյն տեղը մօտեցաւ, նայեց վիրաւորեալին և ուշադրութիւն չդարձնելով՝ հեռացաւ։

Մի Սամարացի այդ ճանապարհովն անցնելիս, հէնց որ տեսաւ վիրաւորեալին, խղճաց։ Իսկոյն մօտեցաւ, գինի տուեց, վէրքի վերայ ձէթ քսեց, վէրքերը փաթաթեց և իւր գրաստի վերայ դնելով, մի պանդոկ տարաւ և սկսեց նրան խնամել։ Հետևեալ օրը, երբ նա այնտեղից դուրս պէտք է գար, երկու դահեկան հանեց և պանդոկապետին տալով՝ ասաց.—«Խնամիր սրան և եթէ աւելին ծախսես, վերադարձիս կը-վճարեմ։

Այժմ ի՞նչ ես կարծում, այս երեքից ո՞րն է աւազակների ձեռքն ընկած մարդու ընկերը»։

Օրինականը պատասխանեց.—«Նա, որ նրան ողորմութիւն արաւ»։ Յիսուսն ասաց նրան.— «Գնա՛ և դու էլ այնպէս արա»։

«ՈՂՈՐՄԱԾ ՍԱՄԱՐԱՑԻՆ»

80.

ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԲՈՂՈՔՈՂԸ.—ԱՆՄԻՏ ՀԱՐՍՏԻ ԱՌԱԿԸ.—ՅԻՍՈՒՍԸ ԽՕՍՈՒՄ Է ԳԱՆՁԻ ՄԱՍԻՆ

Ղուկ. ժբ. 13-21 Ժողովրդականներից մինը դիմեց Յիսուսին և ասաց.—«Վարդապետ, եղբօրս ասա, որ ժառանգութիւնն ինձ հետ բաժանէ»։

Յիսուսը պատասխանեց նրան ու ասաց.—Ա՛յ մարդ, ո՞վ է ինձ ձեզ վերայ դատաւոր կամ բաժանարար կարգել»։ Եւ դառնալով նրանց ասաց.—«Տեսէք և զգոյշ կացէք շահասիրութիւնից, որովհետև մարդու կեանքը ստացուածքի շատութիւնից չէ կախուած»։

Եւ նրանց հետևեալ առակն ասաց.—«Տոհմական հողեր ժառանգած մի հարուստ մարդ, որի արտերը առատ պտուղ էին տուել, ինքն իրեն մտածում էր.—ի՞նչ անեմ, պտուղներս հաւաքելու տեղ չունեմ։ Եւ ասաց.—«Գիտեմ ինչ կանեմ. ամբարներս կքանդեմ և աւելի մեծերը կշինեմ և ցորենս ու բոլոր բարիքներս այնտեղ կժողովեմ։ Եւ կասեմ անձիս, ո՛վ իմ անձն, շատ բարիքներ ունիս երկար տարիների համար ամբարած. հանգստացի՛ր, կե՛ր, խմի՛ր և ուրախացի՛ր»։ Բայց Աստուած նրան ասաց. «Անմի՛տ, այս գիշեր հոգիդ կառնեն քեզնից, յետոյ ումն են մնալու քո այդ պատրաստութիւնները»։

Այդպէս է լինում այն ամենի հետ, որն իրեն համար է գանձ դիզում և Աստուծով չէ հարստանում։

Ղուկ. ժբ. 32-34 Մի վախենար փոքրիկ հօտ, որովհետև ձեր Հայրը հաճեցաւ ձեզ տալ Արքայութիւնը։ Ծախեցէք ձեր ստացուածքը և ողորմութիւն տուէք։ Ձեզ համար չհնացող քսակներ և չպակասող գանձ պատրաստեցէք երկնքում, ուր ոչ գողն է մօտենում և ոչ ցեցն ապականում։ Որովհետև որտեղ ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր սրտերը կը լինեն»։

81.

ՅԻՍՈՒՍԸ ԽՕՍՈՒՄ Է ԱՐԹՈՒՆ ԵՒ ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵԼՈՒ ԵՒ ՀԱՒԱՏԱՐԻՄ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ղուկ. ժբ. 35-48 Ձեր մէջքերը թող գօտևորուած[1]) լինեն և ճրագները վառած։ Դուք այն մարդկանց նմանուեցէք, որոնք իրենց տիրոջ հարսանիքից վերադառնալուն են սպասում, որպէս զի երբ գայ և դուռը թակէ, իսկոյն բանան։ Երանի՜ այն ծառաներին որ երբ տէրը գայ, նրանց արթուն կը գտնի։ Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ գօտին մէջքին կապելով սեղան կնստեցնի և առաջ անցնելով, կծառայի նրանց։ Եւ եթէ երկրորդ կամ

[1]) Հրէից մէջ «գօտևորուած» լինելը փոխաբերական մտքով նշանակում էր պատրաստ գտնուել որ և է գործի համար, զօրանալ համբերութեամբ տանելու ամեն ծանրութիւն և վիշտ։ Ընդհակառակը գօտին բացարած ունենալ, նշանակում էր անպատրաստ գտնուել գործի համար, թուլանալ և խեղճանալ։

Յիսուսն հրաւիրում է իր հաւատացեալներին, որ գօտևորուած լինեն, այսինքն ժրանան և զօրանան Քրիստոնէութեան մէջ, համբերութեամբ տանեն ամենայն մի վիշտ և նեղութիւն։ (Դ. Թագ. գ. 29. Յովբ. լը 3. Երեմիա ա. 17. Թղթ. առ Եփես. գ. 14 և այլն)։

երրորդ պահուն[1]) գայ և նրանց արթուն գտնէ, այն ժամանակ երանելի են այն ծառաները։ Բայց դուք գիտէք, որ եթէ տանուտէրն իմանար, թէ որ ժամին է գողը գալու, արթուն կը մնար և թոյլ չէր տայ, որ իւր տունը ծակեն։

Դուք էլ պատրաստ կացէք, որովհետև որ ժամին չէիք սպասում, այն ժամին կգայ Մարդու Որդին»։

Պետրոսն ասաց.—«Տէր, այդ առակը մեզ ես ասում միայն թէ ամենքին»։

Եւ Տէրն ասաց.—«Ո՞վ է այն հաւատարիմ և իմաստուն տնտեսը, որին իւր տէրը կարողանայ իւր գերդաստանի վերայ կարգել, որպէս զի ժամանակին նրան կերակուր տայ։ Երանելի է այն ծառան, որ երբ իւր տէրը գայ, նրան այդպէս արած կգտնի։ Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ նրան իւր բոլոր ունեցածի վերայ կը կարգի։

Բայց եթէ այն ծառան իւր սրտումն ասէ, թէ տէրս շուտ չէ գալու և սկսէ ծառաներին ու աղախիններին ծեծել, ուտել, խմել ու արբենալ, նրա տէրն այն օրը կգայ որ չէր սպասում և այն ժամին որ չգիտէր, նրան միջից

[1]) Հին հրէից մէջ գիշերը երեք մաս էր բաժանւում և իւրաքանչիւրը տեւում էր մօտաւորապէս 4 ժամ և կոչւում էր պահ։ Հռովմայեցոց տիրապետութեան ժամանակ, ըստ հռովմէականի գիշերը չորս պահի բաժանուեցաւ և իւրաքանչիւր քառորդը տեւում էր 3 ժամ։ Այսպէս երեկոն, որ ամբողջ գիշերուան մի քառորդն էր կազմում՝ կոչւում էր առաջին պահ։ Երեկոյից յետոյ մինչև կէս գիշերը՝ կոչւում էր երկրորդ պահ. կէս գիշերից մինչև հաւախօսը՝ երրորդ պահ և հաւախօսից մինչև արշալոյսը՝ չորրորդ պահ։

կը կտրէ[1]) և անհաւատների վիճակին կենթարկէ։

Եւ այն ծառան, որ իւր տիրոջ կամքը գիտէր, բայց պատրաստ չէր նրա կամքի համաձայն գործելու, շատ կծեծուի. իսկ նա, որ չգիտէ և ծեծի արժանի գործ է բռնում՝ քիչ կը ծեծուի։ Որին շատ տրուեցաւ, շատ էլ կպահանջուի նրանից և որին շատ յանձնուեցաւ, նրանից էլ աւելի կպահանջուի»։

82.

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Ղուկ. ժբ. 49–59 Ես եկայ երկրի վերայ կրակ ձգելու և ինչպէս եմ ցանկանում, որ հենց այժմեանից բորբոքուէր։ Եւ մի մկրտութիւն ունիմ, որով պէտք է մկրտուեմ և ինչպէս եմ շտապում, որ կատարուի։ Մի՞թէ կարծում էք, որ ես եկայ, որպէս զի երկրին խաղաղութիւն տամ. ոչ, ասում եմ ձեզ, այլ բաժանութիւն։ Որովհետև սրանից յետոյ, մի տան մէջ հինգն իրարից պէտք է բաժանուին, երեքն՝ երկուից և երկուսն՝ երեքից։ Հայրը որդուց կբաժանուի և որդին հօրից։ Մայրն՝ աղջկանից և աղջիկը՝ մօրից. սկեսուրն իւր հարսից և հարսն իւր սկեսուրից»։

Եւ Ժողովրդին ասաց.—«Երբ տեսնում էք

[1]) Հրէաների մէջ ամենախիստ պատիժը մարդուն կտոր-կտոր անելն էր համարւում. (Դանիէլ. բ. 5 և գ. 29)։ Յիսուսն այդ դարձուածքը գործ դնելով հասկացնում է, որ անհաւատարիմ ծառաներն ու կեղծաւորները, սարսափելի պատիժ են կրելու։

որ արևմուտքից ամպ է բարձրանում, իսկոյն ասում էք թէ անձրև կգայ և այդպէս էլ լինում է։ Երբ հարաւային քամին է փչում, ասում էք շոգ կլինի և այդպէս էլ լինում է։

Կեղծաւորներ, դուք որ երկնքի և երկրի երևոյթները կարողանում էք ճանաչել, ինչպէս է որ ժամանակս հասկանալ չէք կարողանում։ Եւ ինչու դուք ձեր անձի համար պէտք եղածը չէք անում։

Երբ հակառակորդիդ հետ իշխանի մօտ գնալու լինիս, աշխատիր հէնց ճանապարհին ազատուել նրանից, որ չլինի թէ քեզ դատաւորի մօտ քարշ տայ և դատաւորը դահճին մատնէ և դահիճն էլ քեզ բանտը ձգէ։

Ասում եմ քեզ, որ այնտեղից չես դուրս գայ, մինչև որ վերջին ընիոնդ[1]) չվճարես։

83.

ՅԻՍՈՒՍԸ ԽՕՍՈՒՄ Է ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ ՊԱՏԱՀԱՆ ԴԷՊՔԵՐԻ ԱՌԹԻՒ ԵՒ ՊԱՏՄՈՒՄ Է ԱՆՊՏՈՒՂ ԹՁԵՆՈՒ ԱՌԱԿԸ

Ղուկ. 1-9 ժդ. Ժողովրդականներից ոմանք Յիսուսի մօտ եկան և պատմեցին այն գալիլիացիների մասին, որոնց արիւնը Պիղատոսն իրենց զոհերի արեան հետ խառնեց։[2])

---

[1]) Ընիոն—դրամ էր=1/2 կոպէկին։

[2]) Մի խումբ Գալիլիացիներ Երուսաղէմ էին եկել, որ տաճարում զոհ մատուցանեն, մի ինչոր պատճառով տաճարում ընդհարուելով տեղացի հրէաների ու քահանաների հետ մեծ շփոթու-

Յիսուսը պատասխան տուեց նրանց ու ասաց.—«Մի՞թէ կարծում էք, որ այդ գալիլիացիներն աւելի մեղաւոր էին քան բոլոր գալիլիացիները, որ այդպիսի պատուհասի ենթարկուեցան։ Ո՛չ, ասում եմ ձեզ, եթէ դուք էլ չապաշխարէք, ամենքդ էլ այդպէս կը կորչէք։

Կամ մի՞թէ կարծում էք, որ այն տասն և ութ հոգին, որոնց վերայ Սելոամի աշտարակն ընկաւ ու բոլորին սպանեց, աւելի մեղաւոր էին քան Երուսաղէմում բնակուողները։ Ո՛չ, ասում եմ ձեզ, եթէ դուք էլ չապաշխարէք, ամենքդ էլ այդպէս կը կորչէք»։

Եւ այս առակն ասաց.—«Մի մարդ իւր այգում թզենի էր տնկել։ Եկաւ, նրա վերայ պտուղ որոնեց և չգտնելով՝ դարձաւ այգեպանին ասաց.—«Ահա, սրանով երրորդ տարին է, որ գալիս եմ և դրա վերայ պտուղ չեմ գտնում։ Կտրիր այդ ծառը, որովհետև իզուր տեղ է բռնում»։

Այգեպանը պատասխանեց ու ասաց.—«Տէր, թող այս տարի էլ մնայ, ես շուրջը կը-փորեմ և աղբ կածեմ, թերևս պտուղ տայ, եթէ չտուեց, հետևեալ տարին կը կտրես»։

թիւն և խռովութիւն յարուցին։ Պիղատոսը ստիպուեց միջամտել և զօրք ուղարկեց խռովութիւնը դադարացնելու համար։ Գալիլիացիները սկսեցին դիմադրել և նոյն իսկ զէնք գործ դնել զօրքի դէմ, որն էլ իւր հերթում կոտորեց մեծ թուով Գալիլիացիներ։ Այսպիսով նրանց արիւնն էլ խառնուեցաւ զոհերի արեան հետ։

84.

ԿԱՐԿԱՄՈՒԱԾ ԿՆՈՋ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Ղուկ. ժգ. 10-17 Մի շաբաթ օր, երբ Յիսուսն ուսուցանում էր ժողովարաններից մինում, նրա մօտ մի կին բերին, որ տասն և ութ տարուց ի վեր հիւանդութեան ոգի ունէր, կարկամուած էր և ամենևին չէր կարողանում ուղղուել։ Յիսուսը տեսնելով նրան, իւր մօտ կանչեց ու ասաց.— «Ա՛յ կին, արձակուած ես քո հիւանդութիւնից»։

Նա դրեց իւր ձեռքը կնոջ վերայ և կինն իսկոյն ուղղուեցաւ և փառաւորում էր Աստուծուն։ Ժողովրդապետը բարկանալով, որ Յիսուսը շաբաթ օրը բժշկեց, դիմեց ժողովրդին և ասաց.—«Գործելու համար վեց օր կայ, այդ օրերը պէտք է գալ և բժշկուել և ո՛չ թէ շաբաթ օրը»։ Տէրը նրան պատասխանեց. — «Կեղծաւորնե՛ր, մի՞թէ ձեզնից իւրաքանչիւրդ շաբաթ օրը չէ՞ արձակում մսրից իւր եզը կամ էշը և չի՞ տանում ջուր տալու։ Իսկ սրան, որ Աբրահամի աղջիկ էր և որին սատանան ահա տասն և ութ տարի է որ կապել է, հարկաւոր չէ՞ր արդեօք թէկուզ շաբաթ օրով կապանքներից արձակել»։

Երբ այս ասաց, իւր բոլոր հակառակորդները ամօթով մնացին, իսկ ժողովուրդն ուրախանում էր այն փառաւոր գործերի համար, որ նրանով էին գործւում։

85.

ԱՒԵՏԱՐԱՆԻ ԸՆՏՐԵԱԼՆԵՐԸ.—ՅԻՍՈՒՍԻՆ ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ ԵՆ ՀԵՐՈՎԴԷՍԻՑ։—ՅԻՍՈՒՍԸ ԳՈՒՇԱԿՈՒՄ Է ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՆԿՈՒՄԸ

Ղուկ. ժգ. 22-35 Յիսուսը շրջում էր քաղաքներն ու գիւղերը և ուսուցանում էր, ժողովրդականներից մինը ասաց նրան։—«Տէ՛ր, մի՞թէ քչերն են, որ պէտք է փրկուին»։ Յիսուսը պատասխանեց.—«Ջանացէք նեղ դռնով մտնել, որովհետև ասումեմ ձեզ, շատերը կցանկանան մտնել, բայց չեն կարողանայ։ Երբ տանտէրը կմտնի ու դուռը կփակէ, այն ժամանակ դուք դուրսը կանգնած՝ կսկսէք դուռը ծեծել և ասել.—Տէ՛ր, Տէ՛ր, բա՛ց մեզ դուռը։ Նա ձեզ կպատասխանէ.—Չեմ ճանաչում որտեղից էք։

Այն ժամանակ դուք կասէք.—Մենք քո առաջ կերանք ու խմեցինք և դու մեր հրապարակներումն էիր ուսուցանում։ Բայց նա կասէ.—Ասում եմ ձեզ, որ չեմ ճանաչում որտեղից էք, հեռացէք ինձնից անիրաւութեան մշակներ։ Լացն ու ատամների կրճտելն այն ժամանակ կըլինի, երբ Աբրահամին, Իսահակին, Յակովբին և բոլոր մարգարէներին Աստուծու Արքայութեան մէջ կտեսնէք, իսկ ձեզ՝ դուրս վռնդած։ Արևելքից և արևմուտքից, հիւսիսից ու հարաւից կգան և Աստուծու Արքայութեան մէջ կբազմեն։ Եւ ահա, կան յետիններ, որ առաջիններ կլինեն և կան առաջիններ, որ յետիններ կլինեն»։

Նոյն օրը փարիսեցիներից ոմանք մօտեցան Յիսուսին և ասացին. — «Դուրս եկ, հեռացիր այստեղից, որովհետև Հերովդէսը կամենում է քեզ սպանել»։ Յիսուսն ասաց նրանց.—«Գընացէք և այն աղուէսին ասացէք, որ ահա ես դևեր եմ հանում և բժշկութիւններ կատարում այսօր և վաղը. և երրորդ օրը կվերջացնեմ։ Յամենայն դէպս ես պէտք է շրջեմ այսօր, վաղը և հետևեալ օրը, որովհետև անկարելի է որ մարգարէն Երուսաղէմից դուրսը սպանուի։

Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորում էիր մարգարէներին և քարկոծում քեզ մօտ ուղարկուածներին. քանի՞ անգամ կամեցայ հաւաքել քո որդոց ինչպէս հաւն է իւր ձագերին թևերի տակ հաւաքում, բայց դուք չկամեցաք։ Ուրեմն թող ձեր տունը աւերակ մնայ ձեզ։

Բայց ասում եմ ձեզ, որ դուք այլևս չէք տեսնի ինձ, մինչև այն օրը՝ երբ կասէք. — Օրհնեա՛լ է Տիրոջ անունով եկողը»։

86.

ՋՐԳՈՂԵԱԼԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ.—ԿՈՉՆԱԿԱՆՆԵՐԻ, ԿՈՉՆԱՏԻՐՈՋ ԵՒ ԸՆԹՐԻՔԻ ԱՌԱԿՆԵՐԸ

Ղուկ. ժզ. 1-24 Մի շաբաթ օր, Յիսուսը փարիսեցի գլխաւորներից մինի տունն գնաց ճաշելու, ուր նրան սպասում էին։ Այնտեղ ջրգողութիւն ունեցող մի մարդ կար։ Յիսուսն օրինականներին ու փարիսեցիներին հարցրեց.—«Կարելի՞ է արդեօք

շաբաթ օրը բշժկել»։ Նրանք լուռ կացան, իսկ Յիսուսը դիպչելով նրան, բժշկեց ու արձակեց։

Եւ ասաց նրանց.—«Եթէ ձեզնից մինի էշը կամ եզը օրը շաբաթ ջրհորն ընկնի, իսկոյն չի՞ հանի արդեօք»։

Նրանք չկարողացան այս խօսքին պատասխանել։ Յիսուսը նկատելով որ կոչնականները (հրաւիրուածները), նստելու համար առաջին տեղերն են ընտրում, հետևեալ առակը պատմեց. —«Եթէ քեզ հարսանիք կամ խնջոյք հրաւիրեն, առաջին տեղը չնստես, գուցէ քեզնից աւելի պատուաւորագոյն անձն հրաւիրուած լինի և կոչնատէրը նրան առաջին տեղը տալու համար գայ և քեզ ասէ,—«Տեղդ սրան տուր», Այն ժամանակ ամօթով վեր պիտի կենաս և յետին տեղը բռնես։

Բայց երբ հրաւիրուես, գու գնայ յետին տեղը նստիր, որպէս զի կոչնատէրը գայ և քեզ ասէ. —«Բարեկամ, վերև համեցէք»։ Այն ժամանակ, հետդ նստողների առաջ քեզ համար պատիւ կըլինի։

Որովհետև ինքն իրեն բարձրացնողը՝ կըխոնարհի և իրեն խոնարհեցնողը՝ կբարձրանայ»։

Կոչնատիրոջն էլ հետևեալ առակն ասաց. — «Երբ ճաշ կամ ընթրիք ես տալիս, ո՛չ բարեկամներիդ կանչիր, ո՛չ եղբայրներիդ, ո՛չ ազգականներիդ, ո՛չ դրացիներիդ և ո՛չ էլ հարուստներին որ չլինի թէ նրանք էլ փոխարէնը քեզ հրաւիրեն և այդ հատուցումն լինի քեզ։

Այլ երբ հացկերոյթ տաս, դու կանչիր աղքատներին, խեղանդամներին, կաղերին ու կոյրերին և երանելի կլինես, որովհետև թէև նրանք չեն կարող քեզ փոխարէնը հատուցանել բայց արդարների յարութեան ժամանակ՝ փոխարէնը կհատուցուի քեզ»։

Սեղան նստողներից մինը լսելով այդ առակը՝ ասաց.—«Երանի՜ նրան ով որ Աստուծու Արքայութեան մէջ ճաշ կուտէ»։

Յիսուսը նրան էլ հեռևեալ առակով պատասխանեց.—«Մի մարդ ընթրիք պատրաստեց և շատերի հրաւիրեց։ Երբ ընթրելու ժամանակն հասաւ, իւր ծառաներին ուղարկեց, որ հրաւիրուածներին կանչէ ասելով.—«Եկէք, որովհետև ամենն բան պատրաստ է»։

Ամենքն էլ, կարծես խօսք կապած, սկսեցին հրաժարուել։ Մինն ասաց.—«Արտ եմ գնել, գնում եմ տեսնելու, ուստի աղաչում եմ ինձ հրաժարուած համարիր։ Միւսն ասաց.—«Հինգ լուծ եզն եմ գնել, գնում եմ նրանց փորձելու, աղաչում եմ ինձ հրաժարուած համարիր»։ Երրորդն ասաց.—«Ամուսնացել եմ և այդ պատճառով չեմ կարող գալ»։ Ծառան վերադարձաւ և այդ բոլորը պատմեց։

Տանտէրը բարկանալով, ծառային ասաց.—«Շուտ, դուրս եկ հրապարակներն ու քաղաքի փողոցները և բեր այստեղ աղքատներին, խեղանդամներին, կաղերին և կոյրերին»։

Ծառան վերադարձաւ ու ասաց.—«Տէր,

հրամանդ կատարեցի, բայց դեռ էլի տեղ կայ»։

Այն ժամանակ տէրն ասաց ծառային.—դուրս եկ ճանապարհներն ու ցանկապատները և ո՛ւմ էլ գտնես ստիպիր որ գան, որպէս զի տունս լցուի։ Որովհետև ասում եմ ձեզ, այն հրաւիրեալներից և ոչ մինը չէ կարող ընթրիքիս համն առնել»։

87.

ՅԻՍՈՒՍՆ ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ ՆԱՒԱԿԱՏԵԱՑ ՏՕՆԻՆ

Յովհ. ժ. 22-45 Ձմեռն էր։ Երուսաղէմումն արդէն սկսուել էր նաւակատեաց տօնը։ Յիսուսը շրջում էր տաճարի մէջ Սողոմոնի սրահում։ Հրէաները նրան շրջապատեցին ու ասացին.—«Մինչև երբ պէտք է հոգիներս քաղես, եթէ դու ես Քրիստոսը ասա՛ մեզ համարձակ»։

Յիսուսը պատասխան տուեց ու ասաց.—«Արդէն ասացի ձեզ և դուք չէք հաւատում ինձ, այն գործերը որ Հօրս անունով եմ գործում, հենց նրանք են իմ մասին վկայում։ Բայց դուք չէք հաւատում, որովհետև ինչպէս ասացի, դուք իմ ոչխարներից չէք։ Իմ ոչխարներին ես ճանաչում եմ, նրանք լսում են ձայնս և գալիս են իմ յետևից. և ես յաւիտենական կեանք եմ տալիս նրանց։ Նրանք չեն կորչի յաւիտեան և ոչ ոք չէ կարող նրանց իմ ձեռքից յափշտակել։ Իմ Հայրը, որ նրանց ինձ տուեց, ամենից մեծ է և ոչ ոք չէ կարող նրանց իմ Հօր ձեռքից յափշտակել։ Ես և Հայրս մէկ ենք»։

Հրէաները քարեր վերցրին, որ նրան քարկոծեն։ Յիսուսը հարցրեց նրանց.—«Ես իմ Հօրից ձեզ շատ բարի գործեր ցոյց տուի, այն գործերից ո՞րի համար էք ինձ քարկոծում»։ Հրէաները պատասխանեցին. «Մենք քեզ բարի գործերի համար չենք քարկոծում, այլ Աստուծուն անարգելուդ համար, որ դու մարդ լինելով, քեզ Աստուծու տեղ ես դնում»։ Յիսուսը պատասխանեց ու ասաց.—«Ձեր օրէնքի մէջ չէ՞ գրուած, թէ ես ասացի որ դուք աստուածներ էք։[1]) Եթէ Նա աստուածներ անուանեց նրանց, որոնց մօտ Աստուծու խօսքն եղաւ՝ (և անկարելի է որ գրուածը ջնջուի), հապա էլ ինչո՞ւ էք Հօրից Սրբուածին և աշխարհ Ուղարկուածին ասում, թէ Աստուծուն ես անարգում. ինչ է որ ասացի ձեզ, թէ ես Աստուծու Որդին եմ։

Եթէ ես Հօրս գործերը չեմ գործում, մի՛ հաւատաք ինձ։ Իսկ եթէ գործում եմ և ինձ չէք հաւատում, գոնէ գործերիս հաւատացէք, որպէս զի գիտենաք և հաւատաք, որ Հայրս իմ մէջ է և ես՝ Հօրս մէջ»։

Այն ժամանակ կրկին կամեցան նրան բռնել, բայց նա դուրս պրծաւ նրանց ձեռքից և դարձեալ Յորդանանի միւս կողմն անցաւ, ուր առաջ Յովհաննէսն էր մկրտում և այնտեղ բնակուեցաւ։

Շատերն եկան նրա մօտ և ասում էին.—«Յովհաննէսը թէև ոչ մի հրաշք չգործեց, բայց

[1]) Սաղմոս ՁԽ. 6.

ինչ որ սրա մասին ասաց, բոլորն էլ ճշմարիտ էր»։ Եւ այնտեղ շատ մարդիկ հաւատացին նրան։

88.

ՅԻՍՈՒՍԻՆ ԱՇԱԿԵՐՏԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ղուկ. ԺԳ. 26-35 Յիսուսի յետևից մեծ բազմութիւն էր գընում. նա դարձաւ ժողովրդին ու ասաց.—«Եթէ ինձ մօտ եկողը չի ատի իւր հօրն ու մօրը, կընոջն ու որդոց, երբօրն ու քրոջը, նա՛ և իրեն, չի կարող իմ աշակերտը լինել։

Եւ ով որ չի վերցնի իւր խաչն ու գայ իմ յետևից, չի կարող իմ աշակերտ լինել։

Ձեզնից մէկն եթէ կամենայ մի աշտարակ շինել, մի՞թէ վաղօրօք չի նստի ծախքերի հաշիւն անելու և իմանալու թէ արդեօք ունի՞ այնքան կարողութիւն, որ շինութիւնն աւարտէ։ Այլապէս, եթէ հիմքը դրեց ու չկարողացաւ վերջացնել, չէ՞ որ այն ժամանակ տեսնողները կսկսեն ծաղրել նրան ու ասել.—Թէ այս մարդը սկսեց շինել բայց չկարողացաւ վերջացնել։

Եւ կամ եթէ մի թագաւոր կամենայ պատերազմել մի ուրիշ թագաւորի հետ, մի՞թէ վաղօրօք չի մտածի թէ արդեօք կարող է՞ ինքը տասն հազարով դիմադրել քսան հազարով իւր դէմ դուրս եկող թագաւորին։ Չէ՞ որ հակառակ դէպքում, քանի դեռ հակառակորդը հեռու է, պագամաւորներ կուղարկէ նրա մօտ և հաշտութիւն կխնդրէ։

Այսպէս էլ ձեզնից իւրաքանչիւրը, ով իւր բոլոր ունեցածից չի հրաժարուի, նա չէ կարող իմ աշակերտը լինել։

Աղը լաւ բան է, բայց եթէ իւր համը կորցնէ, ոչ մի կերպ չես կարող նրան իւր համը տալ և այնուհետև պէտք է դէն ձգես, որովհետև նոյն իսկ ոչ հողի և ոչ էլ աղբի տեղ կարող է ծառայել։ Ով լսելու ականջ ունի՝ թող լսէ»։

89.

ԿՈՐԱԾ ՈՉԽԱՐԻ. ԿՈՐԱԾ ԴՐԱՄԻ ԵՒ ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ԱՌԱԿՆԵՐԸ

Ղուկ. ԺԵ. 1-32 Բոլոր մաքսաւորներն ու մեղաւորները մօտենալով Յիսուսին՝ լսում էին նորան։ Իսկ փարիսեցիներն ու դպիրները տրտնջում էին և ասում.—«Ինչու է սա մեղաւորներին ընդունում և նրանց հետ ուտում»։ Յիսուսն հետևեալ առակը պատմեց նրանց.—«Եթէ ձեզնից մինը հարիւր ոչխար ունենայ և մինին կորցնէ, արդեօք չի՞ թողնի իննսուն և ինն անապատում և չի գնայ այն կորածի յետևից որպէս զի գտնէ նրան։ Եւ երբ գտնէ, ուրախանալով իւր ուսերի վերայ չի՞ դնի և տուն գնալով բարեկամներին ու դրացիներին չի՞ կանչի և չի՞ ասի արդեօք, թէ ուրախացէք ինձ հետ, որովհետև իմ կորած ոչխարը գտայ։ Ասում եմ ձեզ, այսպէս էլ մէկ ապաշխարող մեղաւորի համար աւելի մեծ ուրախութիւն կլինի երկնքումը քան իննսուն և ինն

արդարների համար, որոնք ապաշխարութեան կարիք չունին։

Եւ կամ եթէ մի կին տասը դրամ ունենայ և մինը կորցնէ, արդեօք ճրագը չի՞ վառի, տունը չի՞ աւելի և զգուշութեամբ չի՞ որոնի մինչև որ գտնէ։ Եւ երբ գտնէ, բարեկամներին և դրացիներին չի՞ կանչի ու չի՞ ասի արդեօք թէ՝—ուրախացէք ինձ հետ, որովհետև կորած դրամս գտայ։

Ասում եմ ձեզ, այսպէս էլ Աստուծու հրեշտակների մօտ ուրախութիւն կլինի այն մեղաւորի համար, որ կապաշխարէ»։ Եւ այս առակն էլ ասաց.—«Մի մարդ երկու որդի ունէր. նրանցից փոքրը հօրն ասաց.—Քո ստացուածքից ինձ հասնելի բաժինը տուր։

Նա էլ իւր ունեցածը բաժանեց նրանց։

Շատ օր չանցած, փոքր որդին հաւաքեց բոլորը և հեռու աշխարհ գնաց։ Նա այնտեղ անառակ կեանք վարելով՝ իւր կարողութիւնը փըչացրեց։ Երբ ամենը սպառեց, այն աշխարհումն էլ սաստիկ սով սկսուեց. նա ընկաւ չքաւորութեան մէջ։ Եւ գնաց ու քաղաքացիներից մինի մօտ ծառայ մտաւ, սա էլ նրան իւր ագարակն ուղարկեց, իւր խոզերն արածացնելու։ Նա շատ ուրախ կլինէր, եթէ գոնէ կարողանար իւր փորը խոզերի կերած խոզակաղնով լցնել, բայց այդ էլ տուող չկար նրան։

Եւ խելքի գալով՝ ասաց.—Հօրս տանը որքան փորը կուշտ վարձկաններ կան, իսկ ես

այստեղ սովամահ եմ լինում։ Վեր կենամ, հօրս մօտ գնամ և նրան ասեմ.—Հայր, ես մեղանչեցի երկնքի դէմ և քո առաջ, ես այլ ևս արժանի չեմ քո որդին կոչուելու, ընդունիր ինձ քո վարձկանների թւում։

Վերկացաւ և հօր մօտ գնաց։ Հայրը հէնց որ հեռուից տեսաւ նրան՝ խղճաց։ Վերկացաւ, վազեց նրա առաջ, վզովն ընկաւ և սկսեց համբուրել։ Որդին նրան ասաց.—Հայր, ես մեղանչեցի երկնքի դէմ և քո առաջ, ես այլևս արժանի չեմ քո որդիդ կոչուելու։

Իսկ հայրն ասաց իւր ծառաներին. Բերէք ամենալաւ պատմուճանը և հագցրէք սրան, մատին մատանի դրէք և ոտքերին կօշիկներ հագցրէք։ Մսացու եզը բերէք և մորթեցէք, ուտենք և ուրախանանք. որովհետև իմ այս որդին մեռած էր՝ կենդանացաւ. կորած էր և գտնուեցաւ։

Եւ սկսեցին ուրախանալ։

Նրա մեծ որդին ագարակումն էր. վերադառնալիս, երբ տանը մօտեցաւ, երգերի ու պարերի ձայն լսեց։ Կանչելով ծառաներից մինին, հարցրեց.—«Սա ի՞նչ բան է»։ Ծառան էլ ասաց.—«Եղբայրդ եկել է և որովհետև հայրդ ողջ առողջ գտաւ նրան, հրամայեց մսացու եզը մորթել»։

Որդին բարկացաւ և չկամեցաւ տուն մըտնել, բայց հայրը դուրս գալով՝ կանչեց նրան։

Մեծ որդին պատասխանեց հօրն ու ասաց.—Այս քանի՞ տարի է, որ ծառայում եմ քեզ,

ամենևին դուրս չեմ եկել քո պատուէրներից և ոչ մի ուլ էլ չտուիր, որ բարեկամներիս հետ ուրախութիւն անէի։ Իսկ երբ եկաւ քո այս որդին, որ վատնեց կարողութիւնդ պոռնիկների մէջ, դրա համար մսացու եզը մորթեցիր»։

Հայրը պատասխանեց.—«Որդեակ իմ, դու միշտ ինձ մօտ ես և բոլոր ունեցածս քոնն է։ Բայց հարկաւոր էր ուրախանալ ու խնդալ, որովհետև քո այս եղբայրը մեռած էր ու կենդանացաւ, կորած էր և գտնուեցաւ»։

90.

ԱՆԻՐԱՒ ՏՆՏԵՍԻ ԱՌԱԿը.—ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐԻ ԶԱՑՐՈՑԹը

Ղուկ. ԺԶ. 1-17 Յիսուսն իւր աշակերտներին ասաց.—«Մի հարուստ մարդ մի տնտես ունէր, սրան ամբաստանեցին որպէս թէ փչացնում է տիրոջ կարողութիւնը։ Տէրը կանչեց նրան ու ասաց.—«Այդ ի՞նչ եմ լսում քո մասին, տուր ինձ տնտեսութեանդ հաշիւը, որովհետև դու այլևս չես կարող տանս տնտեսը լինել»։

Իսկ տնտեսն իւր մտքումն ասաց.—Տէրս արձակում է ինձ իմ պաշտօնից. աշխատել չեմ կարող, մուրալ ամաչում եմ։ Երբ պաշտօնից արձակուեմ, այն ժամանակ գիտեմ թէ ինչ կանեմ, որպէս զի ինձ իրենց տներն ընդունեն։ Եւ կանչելով իւր տիրոջ պարտականներից իւրաքանչիւրին առանձին, ասաց առաջնին.—«Տիրոջս

որքան ես պարտ»։ Նա ասաց.—«Հարիւր մար[1]) ձէթ»։ Տնտեսը վրայ բերեց.—«Առ թուղթդ և նստիր շուտով յիսուն գրիր»։ Յետոյ դարձաւ միւսին.—«Դու որքան ես պարտ»։ Նա պատասխանեց.—«Հարիւր քոռ[2]) ցորեն»։ Տնտեսն ասաց.—«Առ թուղթդ և նստիր շուտով ութսուն գրիր»։

Եւ տէրը գովեց անիրաւ տնտեսին, որ իմաստութեամբ վարուեց. որովհետև այս աշխարհի որդիքն իրենց ազգի մէջ աւելի խելացի են, քան լուսոյ որդիքը։

Եւ ես ասում եմ ձեզ.—«Անիրաւ մամոնայով ձեզ համար բարեկամներ ձեռք բերէք, որ երբ աղքատանաք, նրանք ձեզ յաւիտենական յարկերն ընդունեն։

Փոքր բանի մէջ հաւատարիմ եղողը՝ շատի մէջ էլ հաւատարիմ է. և ով փոքրի մէջ անիրաւ է, շատի մէջ էլ անիրաւ է։ Եւ այսպէս, եթէ անիրաւ մամոնայի մէջ հաւատարիմ չեղաք, ճշմարիտն ով կհաւատայ ձեզ։ Եւ եթէ օտարի բանում հաւատարիմ չեղաք, ձերն ով կտայ ձեզ։ Ոչ մի ծառայ չի կարող երկու տիրոջ ծառայել, որովհետև կամ մինին պէտք է ատէ՝ միւսին սիրէ, կամ մինին պէտք է պատուի՝ միւսին արհամարէ։ Չէք կարող ծառայել Աստուծուն և մամոնային»։

Արծաթասէր փարիսեցիները լսելով այս ամենը, ծաղրում էին նրան։

Յիսուսն ասաց նրանց.—«Դուք ձեզ թէև

[1]) Մար=մօտաւորապէս մի թունգի։
[2]) Քոռ=մօտաւորապէս մէկ թաղար։

արդարացնում էք մարդկանց առաջ, բայց Աստուած գիտէ ձեր սրտերը, որովհետև ինչոր մարդկանց առաջ բարձր է, Աստուծու առաջ պիղծ է։ Օրէնքն ու մարգարէները մինչև Յովհաննէսն էին, նրանից յետոյ Աստուծու Արքայութիւնն է քարոզւում, որի մէջ մտնելու համար, ամեն մարդ պէտք է ոյժ և ջանք գործ դնէ։ Երկինքն ու երկիրը թերևս կործանուին, բայց օրէնքից մի նշանախեց անգամ չի ընկնի»

91.

ԽՕՍՐ ԱՊԱՀԱՐՁԱՆԻ, ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՄՈՒՐԻՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Մատթ.ժթ 3-12 **Փ**արիսեցիները Յիսուսին փորձելու համար հարցրին.—«Արդեօք, մարդը կարող է՞ ամենայն մի պատճառով իւր կնոջն արձակել»։

Յիսուսը պատասխանեց ու ասաց.—«Դուք չէ՞ք կարդացել, որ Ստեղծողն հենց սկզբից արու և էգ ստեղծեց նրանց և ասաց.—Այս պատճառով մարդն իւր հօրն ու մօրը պէտք թողնի և իւր կնոջ յետևից գնայ և երկուսը մի մարմին պէտք է լինին. ուստի, նրանք երկու չեն, այլ մի մարմին։ Այսպէս ուրեմն, որ Աստուած միացրեց, թող մարդ չբաժանէ»։[1])

[1]) Համեմատել.—«Ադամն ասաց.—այժմ սա ոսկրից՝ ոսկրէ և մարմնից՝ մարմին. սա պէտք է կին կոչուի, որովհետև իւր մարդուց առնուեցաւ։ Դրա համար էլ մարդ իւր հօրն ու մօրը պէտք է թողնի և իւր կնոջ յետևից գնայ՝ և երկուսը մի մարմին պէտք է լինին։ (Ծննդ. բ. 23-24).

Փարիսեցիներն ասացին. — «Հապա Մովսէսն ինչու պատուիրեց մեզ արձակման թուղթ տալ և արձակել»։[1])

Ասաց նրանց. — «Մովսէսը ձեր խստասրտութեան համար հրամայեց որ ձեր կանանցն արձակէք, բայց սկզբում այդպէս չէ եղել։ Բայց ես ասում եմ ձեզ, ով որ առանց պոռնկութեան պատճառի իւր կնոջն արձակէ և ուրիշին առնէ, շնութիւն է անում և ով որ արձակուածին առնէ, նա էլ շնութիւն է անում»։

Աշակերտներն ասացին. «Եթէ մարդ այդպիսի պարտականութիւն ունի դէպի կինը, ուրեմն լաւ է չամուսնանալ։» Յիսուսն ասաց. — «Ամենքին չէ կարող բաւականացնել այդ խօսքը, այլ նրանց միայն, որոնց տրուած է։ Որովհետև կան ի ծնէ ներքինիներ և կան ներքինիներ որոնց մարդիկն են ներքինիացրել և կան ներքինիներ, որոնք իրենք են իրենց ներքինիացրել Երկնքի Արքայութեան համար։ Ով որ կը կարողանայ տանել, թող տանի»։

92.

ՄԵԾԱՏԱՆ ԵՒ ԱՂՔԱՏ ՂԱԶԱՐՈՍԻ ԱՌԱԿԸ

Ղուկ. ժզ. 19-31 «Մի հարուստ մարդ կար, որ բեհեզ ու ծիրանի էր հագնում և ամեն օր փառաւոր ու-

[1]) Եթէ մինը կին առնի ..... բայց կինը դիւր չգայ իրեն՝ նրա վերայ անարգական որեւէ բան գտնելով, այն ժամանակ թող նրա ձեռքին արձակման թուղթ տայ՝ և իւր անից հեռացնէ։ (Բ. օր. իգ. 1.)։

բախութիւններ էր անում։ Նրա դրանն ընկած էր մարմինը վէրքերով ծածկուած մի աղքատ մարդ՝ Ղազարոս[1]) անունով։ Նրա ցանկութիւնն էր գոնէ հարստի սեղանից թափուած փշրանքներով կշտանալ. իսկ շները գալիս էին ու լիզում նրա վէրքերը։

Աղքատը մեռաւ և հրեշտակները նրան Աբրահամի գոգը տարան։ Մեծատունն էլ մեռաւ և նրան թաղեցին։ Դժոխքում, տանջանքների մէջ լինելով, նա բարձրացրեց իւր աչքերը, տեսաւ հեռուից Աբրահամին և Ղազարոսին նրա գոգում նստած։ Մեծատունն աղաղակեց ու ասաց. — «Հայր Աբրահամ, ողորմիր ինձ և Ղազարոսին ուղարկիր, որ իւր մատի ծայրը թաթախէ ջրի մէջ և զովացնէ լեզուս, որովհետև այս տաքութեան մէջ պապակւում եմ»։

Աբրահամն ասաց. — «Որդեակ, յիշիր որ կենդանութեանդ ժամանակ դու բարիք ստացար, իսկ Ղազարոսը տանջանք. այժմ սա այստեղ մխիթարւում է, իսկ դու տանջւում։ Բացի սրանից մեր և ձեր մէջ մի մեծ անդունդ կայ, այնպէս որ ցանկացողը ոչ այստեղից ձեզ մօտ կարող է գալ և ոչ այդտեղից՝ մեզ մօտ»։ Այն ժա-

[1]) Ղազարոս կամ Լազար անունը եբրայական Լէ-օզէր բառնէ, որ նշանակում է անօգնական։ Աղքատ Ղազարոսը արևմտեան ազգերի մէջ ընդունուած է որպէս աղքատների պաշտպան։ Ս. Ղազարոսի տօն էլ սահմանուեցաւ։ Ժամանակին հիւանդանոցները, անկելանոցները և զանազան վարակիչ հիւանդութիւնների դէմ հաստատուած հիմնարկութիւնները նրա անունով նուիրագործուեցան։ Այժմեան հիւանդանոցների Լազարէտ կոչուիլը, Ղազարոս և կամ Լազար անունից է վերցրած։

մանակ մեծատունն ասաց.—«Ուրեմն, աղաչում եմ քեզ հայր, ուղարկիր դրան հօրս տունն, այնտեղ ես հինգ եղբայր ունիմ, թող գնայ նրանց վկայութիւն տայ, որ չլինի թէ նրանք էլ այս տանջանքների վայրը գան»։

Աբրահամն ասաց.—«Նրանք Մովսէս և մարգարէներ ունին, թող նրանց լսեն»։ Նա էլ ասաց.—«Ո՛չ, հայր Աբրահամ, եթէ նրանց մօտ մեռելներից մինը գնայ, կապաշխարեն»։ Այն ժամանակ Աբրահամն ասաց.—«Եթէ Մովսէսին ու մարգարէներին չեն լսում, մեռելներից մինն էլ որ յարութիւն առնի, դարձեալ չեն հաւատայ»։

93.

ՏԱՍՆ ԲՈՐՈՏՆԵՐԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Ղուկ. ժէ. 11-19 Յիսուն Երուսաղէմ գնալիս Գալիլիայի և Սամարիայի միջովն անցաւ։ Երբ պէտք է գիւղերից մինը մտնէր, տասն բորոտներ պատահեցան նրան, որոնք հեռու կանգնած, բարձրացրին ձայներն ու աղաղակեցին.—«Յիսուս վարդապետ, ողորմիր մեզ»։ Յիսուսը տեսնելով նրանց՝ ասաց.—»Գնացէք ու ձեր անձերը քահանաներին ցոյց տուէք»։

Երբ նրանք գնացին, իսկոյն բժշկուեցան։ Բժշկուելուց յետոյ, նրանցից մինը վերադարձաւ և սկսեց բարձրաձայն փառաւորել Աստուծուն և երեսի վերայ ընկնելով նրա ոտքերի առաջ՝ շնորհակալութիւն յայտնեց Յիսուսին։ Եկողը սամարացի էր։ Յիսուսը պատասխան տուեց ու ասաց.—«Չէ՞ որ տասն էլ բժշկուեցան, հապա ինն ո՞ւր են. ի՞նչու բացի այս օտարազգուց, միւսներն էլ չվերադարձան Աստուծուն փառք տալու»։

Եւ նրան ասաց.—«Վե՛ր կաց և գնա, քո հաւատը քեզ փրկեց»։

94.

ՄԱՐԴՈՒ ՈՐԴՈՒ ԳԱԼՈՒՍՏԸ

Ղուկ. ժէ. 20-37 Փարիսեցիներից հարց տրուեցաւ Յիսուսին, թէ ե՞րբ է գալու Աստուծու Արքայութիւնը։ Յիսուսը պատասխանեց։ «Աստուծու Արքայութիւնը տեսանելի կերպով չէ գալու. և ոչ էլ կասեն թէ ահա նա այստեղ է կամ այնտեղ. որովհետև Աստուծու Արքայութիւնը ձեր ներսումն է»։

Աշակերտներին էլ ասաց.—«Օրեր կգան, երբ կցանկանաք Մարդու Որդու օրերից գոնէ մէկը տեսնել և չէք տեսնի։ Եւ կասեն ձեզ.—ահա այստեղ է կամ ահա այնտեղ, բայց դուք չգնաք և նրանց չհետևէք. որովհետև ինչպէս փայլակը երկնքի մի ծայրից փայլատակելով, մինչև երկնքի միւս ծայրն է լուսաւորում, այդպէս էլ Մարդու Որդու յայտնուելու օրը կլինի։ Բայց նախ, այս ազգից նա շատ չարչարանքներ պէտք է կրէ և անարգուի։

Ինչպէս Նոյի օրերը մարդիկ ուտում էին ու խմում, կանայք էին առնում ու մարդու գնում,

բայց երբ Նոյը տապան մտաւ, ջրհեղեղն եկաւ ու ամենքին խեղդեց, այդպէս էլ Մարդու Որդու յայտնուելու օրը կլինի։ Եւ ինչպէս Ղովտի օրերումն եղաւ, երբ մարդիկ ուտում, խմում, առնում, ծախում, տնկում ու շինում էին, բայց երբ Ղովտը Սոդոմից դուրս եկաւ, իսկոյն երկնքից կրակ և ծծումբ տեղաց և բոլորին ոչընչացրեց, այդպէս էլ Մարդու Որդու յայտնուելու օրը կլինի։

Այն օրը ով որ տանիքի վերայ կլինի, իսկ նրա իրերը տանը, թող չիջնի իրերը վերցնելու. և ով որ դաշտումը կլինի, թող չվերադառնայ։ Յիշեցէք Ղովտի կնոջը։

Ով որ կցանկանայ իւր կեանքն ազատել, նա կը կորցնի, իսկ կորցնողը՝ իւր կեանքը կազատէ։ Ասում եմ ձեզ, այդ գիշերը, միևնոյն անկողնում պառկած երկու հոգուց մինը կառնուի՝ միւսը կթողնուի։

Աղօրիքի վերայ աղացող երկու հոգուց մինը կառնուի՝ միւսը կթողնուի. և հանդումը միասին աշխատող երկու մշակներից մինը կառնուի՝ միւսը կթողնուի»։

Հարցրին Յիսուսին ու ասացին.—«Տէր, ո՞ւր և ուր պիտի լինեն այդ բաները»։

Նա պատասխանեց.—«Ուր որ դիակ կայ, արծիւներն այնտեղ կժողովուին»։

95.

ԱՆԻՐԱՒ ԴԱՏԱՒՈՐԻ ԱՌԱԿԸ։—ՓԱՐԻՍԵՑԻՆ ՈՒ ՄԱՔՍԱՒՈՐԸ

Ղուկ. ԺԸ. 1-14 Յիսուսը նրանց մի առակ էլ պատմեց այն մասին, որ հարկաւոր է ամեն ժամանակ աղօթել և չձանձրանալ։—«Մի քաղաքում, ասաց Յիսուսը, մի դատաւոր կար, որ ոչ Աստուածանից էր վախենում և ոչ մարդկանցից ամաչում։ Նոյն քաղաքում մի այրի կին էլ կար, որ գալիս էր նրա մօտ և ասում.—«Պաշտպանիր ինձ իմ թշնամուց»։

Բայց դատաւորն երկար ժամանակ չկամեցաւ նրան բաւականութիւն տալ։ Իսկ յետոյ ինքն իրան ասաց.—«Թէև ես ոչ Աստուածանից եմ վախենում և ոչ մարդկանցից ամաչում, բայց որովհետև այս այրին դադար չէ տալիս ինձ, պաշտպանեմ սրան, որպէս զի ամեն անգամ չգայ ու ինձ ձանձրացնի».

Եւ Տէրն ասաց.—«Լսում էք թէ անիրաւ դատաւորն ինչ է ասում»։

Արդեօք, Աստուած չի՞ պաշտպանի իւր ծառաներին, որոնք օր ու գիշեր նրան են աղաչում, թէև ուշացնի էլ իւր պաշտպանութիւնը։ Այո, ասում եմ ձեզ, որ նրանց շուտով կպաշտպանէ։

Բայց երբ Մարդու Որդին գայ, հաւատք կը գտնէ՞ արդեօք երկրի վերայ»։

Ոմանց համար էլ, որոնք վստահ էին իրենց վերայ թէ արդար են և անարգում էին ուրիշ-

ներին, այս առակն ասաց. - «Երկու մարդ գնացին տաճարն աղօթելու, մինը փարիսեցի էր, միւսը մաքսաւոր։ Փարիսեցին մի կողմ կանգնած, այս աղօթքն էր անում առանձին.—«Աստուած իմ, շնորհակալ եմ քեզնից, որ ուրիշների նման յափշտակող, անիրաւ, շուն կամ այս մաքսաւորի նման չեմ։ Շաբաթն երկու անգամ ծոմ եմ պահում և իմ բոլոր ստացուածքիցս էլ տասանորդ եմ տալիս»։ Իսկ մաքսաւորը միւս կողմը կանգնած, չէր կամենում մինչև անգամ աչքերը դէպի երկինք բարձրացնել, այլ իւր կուրծքը ծեծելով ասում էր. — «Աստուած, քաւիր ինձ մեղաւորիս»։

Ասում եմ ձեզ, որ սա փարիսեցուց աւելի արդարացած գնաց իւր տուն, որովհետև իրեն բարձրացնողը՝ կխոնարհի, իսկ իրեն խոնարհեցնողը՝ կբարձրանայ։

96.

ՅԻՍՈՒՍՆ ՈՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ.—ՀԱՐՈՒՍՏ ԻՇԽԱՆԸ

Մարկ. ժ. 13-18 Այդ ժամանակ նրա մօտ մանուկներ բերին, որ իւր ձեռքը դնէ նրանց վերայ եւ օրհնէ։ Բայց աշակերտները յանդիմանում էին բերողներին։

Յիսուսը բարկանալով, սաստեց նրանց ու ասաց.—«Թոյլ տուէք այդ մանուկներին և մի արգելէք դրանց ինձ մօտ գալու, որովհետև Երկնքի Արքայութիւնն այդպիսիներինն է։

Ճշմարիտն եմ ասում ձեզ, ով որ մանկան

ՅԻՍՈՒՍՆ ՈՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

նման չի ընդունի Երկնքի Արքայութիւնը, նա այնտեղ չի կարող մտնել։ Եւ գրկելով մանուկներին, ձեռքը դրեց նրանց վերայ և օրհնեց։

Երբ նա դուրս գալով այնտեղից կամենում էր ճանապարհուել, մի հարուստ երիտասարդ առաջ վազելով, ծունր դրեց և հարցրեց.—«Բարի վարդապետ, ի՞նչ անեմ, որ յաւիտենական կեանք ժառանգեմ»։ Յիսուսն ասաց.—«Ինչո՞ւ ես ինձ բարի ասում. բարին միայն Աստուած է։

Մատթ. ժթ. 17-19 Եթէ կամենում ես յաւիտենական կեանքը մտնել, պատուիրանները պահիր»։

Եւ նա ասաց. «Ո՞ր պատուիրանները»։

Յիսուսը պատասխանեց.—«Մի սպանիր, մի շնար, մի գողանար, սուտ մի վկայիր։ Պատուիր քո հօրն ու մօրը և սիրիր ընկերոջդ, ինչպէս քո անձը»։

Մարկ. ժ. 20-27 Նա պատասխանեց ու ասաց. «Վարդապետ, այդ բոլորը մանկութիւնից ի վեր, կատարել եմ, արդ, էլ ի՞նչ է պակաս ինձ»։

Յիսուսը նայելով նրան՝ սիրեց ու ասաց.—«Քեզ մէկ բան է պակաս. եթէ կամենում ես կատարեալ լինել. գնա, ծախիր ունեցածդ և տուր աղքատներին. այն ժամանակ երկնքումը գանձ կունենաս. վերցրու խաչը և եկ իմ յետեւից»։ Նա այդ խօսքերից խոժոռելով, տրտմած հեռացաւ, որովհետև մեծ կարողութեան տէր էր։

Յիսուսն իւր շուրջը նայելուց յետոյ աշակերտներին ասաց.—«Որքան դժուար է հարստութիւն ունեցողների համար Երկնքի Արքայութիւնը մտնել»։

Աշակերտները զարմացել էին այդ խօսքերի վերայ։ Յիսուսը պատասխան տուեց նրանց, ու ասաց.—«Որդիք, որքան դժուար է հարստութեան վերայ յոյս դնողներին Աստուծու Արքայութիւնը մտնել։ Աւելի շուտ մալոխը (հաստ թոկը) ասեղի ծակը կմտնի, քան թէ հարուստը Աստուծու Արքայութիւնը»։

Աշակերտներն աւելի ևս զարմացան ու միմեանց էին ասում.—«Ուրեմն էլ ո՞վ կարող է փրկուել»,

Յիսուսը նայելով նրանց, ասաց.—«Մարդկանց համար անհնարին է այդ, բայց Աստուծու համար ամեն բան հնարաւոր է»։

97.

ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ՎԱՐՁԸ.—ԱՅԳՈՒ ՄՇԱԿՆԵՐԻ ԱՌԱԿԸ

Մատթ. ժթ 27-30 Այդ խօսակցութիւնից յետոյ, Պետրոսն հարցրեց Յիսուսից.—«Ահա մենք ամեն բան թողինք և եկանք քո յետևից. արդ, մեզ ի՞նչ է լինելու»։

Յիսուսը պատասխան տուեց ու ասաց.—«Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ միւս անգամ գալըստեան ժամանակ, երբ Մարդու Որդին իւր փառքի աթոռի վերայ կնստի, դուք էլ իմ յետևից եկողներդ —տասներկու աթոռի վերայ կը նստէք՝ Իսրայէլի տասներկու ցեղերը դատելու։

Եւ ով որ թողեց իւր տունը կամ եղբայրներին ու քոյրերին կամ հօրն ու մօրը կամ կնոջն ու որդոցը և կամ իւր արտերը՝ իմ անուան համար, փոխարէնը հարիւրապատիկ կըստանայ և յաւիտենական կեանք կժառանգէ։ Եւ շատ առաջիններ յետիններ կլինեն և յետինները՝ առաջիններ։

Մատթ. ի. 1-16 Որովհետև Երկնքի Արքայութիւնը նման է այն տանուտիրոջ, որն առաւօտեան շատ վաղ դուրս եկաւ, իւր այգու համար մշակներ վարձելու։ Եւ մշակների հետ օրը մի դահեկան վարձ խօսելով, ուղարկեց նրանց իւր այգին։ Ժամի երեքին[1]) դուրս գալով, ուրիշ մշակներ էլ տեսաւ, որոնք պարապ կանգնած էին հրապարակում և ասաց նրանց. — «Դուք էլ գնացէք իմ այգին և ինչ որ պէտք է կտամ»։ Նրանք էլ գընացին։

Դուրս գալով դարձեալ ժամի վեցին և ինէին, նոյնն արաւ։ Վերջապէս ժամի տասն և մէկին դուրս գալով՝ ուրիշ մշակներ էլ գտաւ, որոնք կանգնել էին պարապ և ասաց նրանց. — «Ի՞նչու էք ամբողջ օրը պարապ մնացել»։ Նրանք ասացին. — «Որովհետև մեզ վարձող չեղաւ»։ Ասաց նրանց. — «Դուք էլ գնացէք իմ այգին և ինչ որ հարկաւոր է կտատնաք»։ Երեկոյեան, այգու տէրն իւր վերակացուին ասաց. — «Կանչիր մշակ-

[1]) Երրորդ ժամը՝ մեր ժամի ինն է (առաւօտեան)։ Վերջին անգամ այգու տէրը դուրս եկաւ տանուտէրերորդ ժամին՝ որ ասել է մեր երեկոյեան 5 ժամին։ Հրէից ժամերը մերին հաւասարացնելու համար, հարկաւոր է աւելացնել 6 ժամ։

ներին և տուր նրանց վարձը, յետիններից սկըսած մինչև առաջինները»։

Ժամի տասներկուսին եկողները մօտեցան և նրանցից իւրաքանչիւրը մէկ դահեկան ստացան։ Առաջիններն էլ եկան և կարծում էին թէ աւելի կստանան, բայց նրանց էլ մի մի դահեկան տրուեցաւ։ Դահեկանն ստանալով, սկսեցին տանտիրոջ դէմ տրտնջալ և ասել. — «Յետինները մի ժամ աշխատեցին և նրանց մեզ հետ հաւասարացրիր, որ օրուան ծանրութիւնն ու տաքութիւնը քաշեցինք»։

Նա պատասխան տուեց նրանցից մինին ու ասաց. — «Ընկեր, ես քեզ չեմ զրկում. չէ՞ որ դու մի դահեկանով[1]) խօսեցիր ինձ հետ. ուրեմն ըստացիր դահեկանդ ու գնայ։ Ես ցանկանում եմ որ յետիններին էլ այնքան տամ, որքան ձեզ տուի։ Մի՞թէ ես իշխանութիւն չունիմ ունեցածիս վերայ և ուզածս անելու. թէ՞ աչքդ չէ վերցնում, որ ես առատաձեռն եմ։

Այսպէս, յետինները կլինեն առաջիններ և առաջինները՝ յետիններ. որովհետև շատերն են կանչուած, բայց քչերն են ընտրուած»։

98.

ՀԱՒԱՏՔ ԵՒ ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ

Ղուկ. ժէ. 5-10 Առաքեալներն Յիսուսին՝ ասացին. — «Աւելացրու մեր հաւատը»։ Տէրն ասաց. — «Եթէ մա-

[1]) Մի դահեկանը = 60 կոպէկին։

նանեխի հատիկի չափ հաւատ ունենայիք և այս թթենուն ասէիք պոկուիր տեղիցդ և ծովի մէջ տնկուիր, կենդանդուէր ձեզ։ Ձեզնից որը, եթէ մի հողագործ կամ հովիւ ծառայ ունենայ և նա ագարակից տուն վերադառնայ, կասէ նրան թէ համեցէք սեղան նստիր։ Արդեօք նրան չի՞ ասի, թէ նախ ընթրիքս պատրաստիր և գոտիդ կապած ծառայիր ինձ, մինչև որ ես ուտեմ ու խմեմ և յետոյ դու էլ կեր ու խմիր։ Մի՞թէ նա ծառային շնորհակալութիւն կյայտնի, իւր հրամանները կատարելուն համար։

Այդպէս էլ դուք, երբ ձեզ հրամայուածը կատարէք, ասացէք.—«Մենք անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք անելու՝ արինք»։

99.

ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Յովհ. ժ. 1-44 Մարիամի և նրա քոյր Մարթայի գիւղում —Բեթանիայում, Ղազարոս անունով մինը՝ հիւանդ էր։ (Հիւանդ Ղազարոսը այն Մարիամի եղբայրն էր, որ Տիրոջն իւղով օծեց և նրա ոտքերը մազերով սրբեց։) Ղազարոսի քոյրերը մարդ ուղարկեցին Յիսուսի մօտ, որ ասեն թէ Ղազարոսը, որին դու սիրում ես՝ հիւանդ է։ Յիսուսը լսելով այս՝ ասաց.—«Այս հիւանդութիւնը մահուան համար չէ, այլ Աստուծու փառքի համար, որ Մարդու Որդին նրանով փառաւորուի»։

Յիսուսը սիրում էր Մարթային, նրա քոյր Մարիամին և Ղազարոսին։ Երբ լսեց որ Ղազարոսը հիւանդ է, երկու օր էլ մնաց այնտեղ։ Նրանից յետոյ իւր աշակերտներին ասաց.—«Եկէք նորից Հրէաստան գնանք»։

Աշակերտներն ասացին.—«Ռաբբի՛, հէնց նոր էր որ հրէաներն ուզում էին քեզ քարկոծել և դու դարձեալ այնտեղ ես գնո՞ւմ»։ Յիսուսը պատասխանեց.—«Չէ՞ որ օրը տասներկու ժամ է։ Ցերեկով գնացողը՝ չի գայթակղուի, որովհետև տեսնում է այս աշխարհի լոյսը, բայց եթէ գիշերով գնայ՝ կգայթակղուի, որովհետև նրա հետ լոյս չկայ»։

Ասելով այս՝ դարձաւ աշակերտներին ու ասաց.—«Մեր բարկամ Ղազարոսը քնել է և ես գնում եմ, որ նրան արթնացնեմ»։

Աշակերտներն ասացին.—«Տէ՛ր, եթէ քնած է, ուրեմն կարթնանայ»։

Յիսուսը նրա մահուան քնի համար էր ասում, իսկ նրանք այնպէս կարծեցին, թէ սովորական քնի մասին է խօսում։ Այն ժամանակ Յիսուսը յայտնապէս ասաց.—«Ղազարոսը մեռաւ և ես ուրախ եմ ձեզ համար, որ ես այնտեղ չէի, որպէս զի հաւատաք։ բայց եկէք գնանք նրա մօտ»,

Այն ժամանակ Թովմասը, որ երկոբեակ էր կոչւում, աշակերտներին՝ ասաց.—«Եկէք մենք էլ գնանք և նրա հետ մեռնենք»։

Յիսուսն եկաւ Բեթանիա և գտաւ Ղազարո-

սին չորս օրուան մեռած և գերեզման դրուած։

Բեթանիան տասնեհինգ ասպարիզով էր միայն հեռի Երուսաղէմից։ Հրէաներից շատերն էին եկել Մարթայի և Մարիամի մօտ, եղբօր համար նրանց մխիթարելու։ Մարթան Յիսուսի գալը լսելով՝ նրան դիմաւորելու գնաց, իսկ Մարիամը տանը մնաց։ Մարթան ասաց Յիսուսին.—«Տէր, եթէ դու այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնի, բայց գիտեմ, որ այժմ էլ ինչ որ խնդրես Աստուծուց՝ կստանաս»։ Յիսուսն ասաց.—«Քո եղբայրը յարութիւն կառնի»։ Մարթան ասաց.—«Գիտեմ որ յարութեան ժամանակը—վերջին օրը՝ յարութիւն կառնի»։ [1]) Յիսուսն ասաց նրան. — «Ես եմ յարութիւնը և կեանքը. ինձ հաւատացողը եթէ մեռնի էլ՝ կապրի. և նա որ կենդանի է ու հաւատում է ինձ, յաւիտեան չի մեռնի։ Դու հաւատում ե՞ս այս բանին։» Մարթան պատասխանեց.—«Այո՛ Տէր, ես արդէն հաւատացել եմ որ դու ես Քրիստոսը — Աստուծու Որդին, որ գալու էիր աշխարհ»։ Ասելով այս, նա գնաց իւր քոյր Մարիամին ծածուկ կանչեց և ասաց.—«Վարդապետն եկել է և քեզ է կանչում»։ Մարիամը վերկացաւ և եկաւ Յիսուսի մօտ։

Յիսուսը դեռ գիւղը չէր մտել, այլ այն-

[1]) Հրէաներն էլ ընդունում և սպասում էին վերջին յարութեանը, համաձայն մարգարէութեան.—«Հողի մէջ քնածներից շատերը՝ յարութիւն պէտք է առնեն, ոմանք յաւիտենական կեանքի համար և ոմանք էլ յաւիտենական անարգանքի և նախատինքի համար։ (Դանիէլ մր. 2.)

տեղ էր, որտեղ Մարթան դիմաւորել էր նրան։

Հրէաներն էլ, որոնք տանն էին և մխիթարում էին նրան, տեսնելով որ Մարիամը շուտով վերկացաւ ու գնաց, իրանք էլ նրա յետեւից գնացին, կարծելով թէ գերեզմանն է գնում լաց լինելու։

Մարիամը երբ Յիսուսի մօտ եկաւ ու տեսաւ նրան, նրա ոտքերն ընկաւ ու ասաց. — «Տէր, եթէ այստեղ պատահէիր իմ եղբայրը չէր մեռնի»։ Յիսուսը տեսնելով որ նա լաց է լինում, ինչպէս և նրա հետ եղող հրէաները, սաստիկ յուզուեցաւ և հառաչելով ասաց.—«Ո՞ւր էք դրել նրան»։ Ասացին նրան.—«Տէր, եկ և տես»։ Եւ Յիսուսն արտասուեց։

Հրէաներն ասում էին.—«Տեսէք թէ որքան էր սիրում նրան»։ Նրանցից ոմանք էլ ասում էին,—«Սա որ կոյրի աչքերը բացեց, մի՞թէ չէր կարող այնպէս անել, որ սա չմեռնէր»։

Յիսուսն յուզուած մօտեցաւ գերեզմանին։ Դա մի այր էր և վրան մի քար դրուած։ Յիսուսն ասաց.—«Մի կողմ գլորեցէք քարը»։ Մեռելի քոյր Մարթան ասաց.—«Տէր, արդէն հոտած կլինի, որովհետև չորս օր է արդէն որ մեռել է»։ Յիսուսն ասաց։—«Չասացի՞ քեզ, որ եթէ հաւատաս, Աստուծու փառքը կտեսնես»։

Երբ քարը վերցրին, Յիսուսը բարձրացրեց իւր աչքերն ու ասաց.—«Հա՛յր, շնորհակալ եմ քեզնից, որ լսեցիր ինձ։ Ես գիտեմ, որ ամէն ժամանակ լսում ես ինձ, բայց շուրջս հաւա-

քուած այս ժողովրդի համար եմ ասում, որ հաւատան թէ Դու ուղարկեցիր ինձ»։

Ասելով այս, բարձր ձայնով կանչեց ու ասաց.—«Ղազարէ, դուրս եկ այդ տեղից»։

Եւ մեռելը դուրս եկաւ ոտքերն ու ձեռքերը երիզապնդով փաթաթած և երեսը վարշամակով պատած։ Յիսուսն ասաց նրանց.—«Արձակեցէք դրան և թողէք որ գնայ».

100.

ԿԱՅԻԱՓԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ.—ՅԻՍՈՒՍՆ ԱՌԱՆՁՆԱ-ՆՈՒՄ Է ԵՓՐԱՅԻՄ

Յովհ. ժա. 45-56 Մարիամի մօտ եկած հրէաներից շատերը Յիսուսի արածը տեսնելով՝ հաւատացին նրան։ Իսկ նրանցից մի քանիսը գնացին փարիսեցիների մօտ և պատմեցին նրանց Յիսուսի արածը։

Քահանայապետներն ու փարիսեցիները ատեան հաւաքուեցան և ասացին.—«Այդ Մարդը շատ հրաշքներ է գործում, եթէ միջոցների չդիմենք և թողնենք նրան այդպէս, այն ժամանակ ամենքն էլ կհաւատան նրան և Հռոմէները կգան և մեր ազգն ու երկիրը կոչրեն»։

Նրանցից մինը, Կայիափա անունով, որ այն տարուան քահանայապետն էր. ասաց.—«Դուք ոչինչ չգիտէք և չէք էլ հասկանում, որ աւելի լաւ է մի մարդ մեռնի ժողովրդի համար, քան թէ բոլոր ազգը կորչի»։

Բայց այս բանը ոչ թէ իրենից ասաց, այլ

այն տարուան քահանայապետը լինելով, մարգարէացաւ, որ Յիսուսը ազգի համար պէտք է մեռնէր, և ոչ միայն ազգի համար, այլ և որ Աստուծու ցիրուցան եղած որդոցն էլ մի տեղ ժողովէր։

Այդ օրուանից արդէն որոշեցին որ Նրան սպանեն։

Յիսուսն այնուհետև այլ ևս համարձակ չէր շրջում հրէաների մէջ, այլ այնտեղից անցաւ անապատի մօտ գտնուած Եփրայիմ քաղաքը և իւր աշակերտների հետ այնտեղ մնաց։

Մօտենում էր հրէից զատիկը։ Շատերն այն գաւառից, դեռ զատկից առաջ, Երուսաղէմ ճանապարհուեցին՝ որպէս զի իրենց անձերը մաքրեն։

Այնտեղ Յիսուսին էին որոնում և տաճարում եղած ժամանակ՝ հարցնում էին իրար.—«Ի՞նչպէս է թւում ձեզ, մի՞թէ Նա այս տօնին չէ գալու»։

Իսկ քահանայապետներն ու փարիսեցիները պատուիրել էին, որ եթէ մինը Նրա տեղն իմանայ, իսկոյն իմաց տայ, որ Նրան բռնեն։

101.

ՄԱՀՈՒԱՆ ԿԱՆԽԱԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ։—ՅԱԿՈՎԲՈՍԻ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՄՕՐ ԽՆԴՐՈՒԱԾԸ

Մարկ. ժ. 32-34 Ճանապարհին, Երուսաղէմ գնալիս, Յիսուսը գնում էր աշակերտների առջևից, իսկ զարմա-

ցած աշակերտները վախվխելով հետևում էին Նրան։

Եւ տասերկուսին իւր մօտ կանչելով և յայտնելով. թէ ինչ բաներ են պատահելու իրեն՝ ասաց. —«Ահա Երուսաղէմ ենք գնում. Մարդու Որդին կմատնուի քահանայապետների և դպիրների ձեռքը և նրան մահուան կդատապարտեն և հեթանոսների ձեռքը կմատնեն, կծաղրեն նրան ու կծեծեն, կթքեն նրա վերայ ու կսպանեն. և երրորդ օրը յարութիւն կառնի»։

Ղուկ. ժը. 34 Աշակերտները սրանից ոչինչ չհասկացան։ Այդ խօսքերի նշանակութիւնը մութն էր նրանց համար, այդ պատճառով էլ գլխի չընկան։

Մատ. ի. 20-28 Այն ժամանակ մօտեցաւ Զեբեթիայի որդոց մայրն իւր որդոց հետ, երկրպագում և նրանից բան էր խնդրում։ Յիսուսն ասաց նրան.—«Ի՞նչ ես կամենում»։ Նա ասաց.—«Ասա՛, որ այս իմ երկու որդիքս Քո Արքայութեան մէջ՝ մինը աջ կողմդ նստի, միւսը ձախ»։ Պատասխան տուեց Յիսուսն ու ասաց.—«Չգիտէք թէ ինչ էք խնդրում. կարող էք արդեօք այն բաժակը խըմել կամ այն մկրտութեամբ մկրտուել, որով ես պէտք է մկրտուիմ»։ Ասացին նրան. —«Կարող ենք»։ Յիսուսն ասաց.—«Իմ բաժակը կարող էք խմել և մկրտութեամբս, որով ես պէտք է մկրտուիմ՝ մկրտուել. բայց իմ աջ ու ձախ կողմը նստելու իրաւունք տուողը ոչ թէ ես եմ, այլ իմ Հայրը, որ շնորհում է նրանց, որոնց համար հենց սկզբից պատրաստուած է»։

Միւս տասն աշակերտները լսելով այդ բարկացան երկու եղբայրների վերայ։ Յիսուսն իւր մօտ կանչեց ու ասաց.—«Դուք գիտէք որ ազգերին իշխաններն են տիրում և մեծամեծներն իշխում. բայց ձեր մէջ այդպէս չպէտք է լինի։ Ով որ ձեզնից կամենում է մեծ լինել, թող ձեր սպասաւորը լինի. և ով որ կամենում է առաջինը լինել, թող ձեր ծառան լինի։

Մարդու Որդին չեկաւ որ իրեն ծառայեն, այլ որ ինքը ծառայէ և իւր անձը շատերի համար փրկանք տայ»։

102.

ԵՐԻՔՈՎԻ ԿՈՅՐԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Ղուկ. ժը. 35-43 Երբ Յիսուսը մօտենում էր Երիքովին, ճանապարհի վերայ մի կոյր մուրացկան էր նստած, որ լսելով թէ իւր մօտով բազմութիւն է անցնում, հարցրեց թէ ի՞նչ բան է այդ։

Նրան պատմեցին որ Յիսուս Նազովրեցին է անցնում։ Այդ ժամանակ նա աղաղակեց ու ասաց.—«Յիսո՛ւս, Դաւթի որդի, ողորմիր ինձ»։

Առջևից գնացողները սաստում էին նրան որ լռէ, իսկ նա աւելի էր աղաղակում և ասում. —«Դաւթի որդի, ողորմիր ինձ»։

Յիսուսը կանգ առաւ և հրամայեց նրան իւր մօտ բերել։ Երբ նա մօտեցաւ, Յիսուսն հարցրեց.—«Ի՞նչ ես կամենում, որ քեզ անեմ»։ Նա ասաց.—«Տէր, աչքերս բացիր, որ տեսնեմ»։

Յիսուսն ասաց նրան.—«Տես, քո հաւատը

քեզ ապրեցրեց»։ Նա իսկոյն սկսեց տեսնել և Աստուծուն փառք տալով՝ գնաց Նրա յետևից։

Ամբողջ ժողովուրդը տեսնելով այդ, սկսեցին փառաբանել Աստուծուն։

103.

ՅԻՍՈՒՍՆ ՈՒ ԶԱԿԷՔԷՈՍ ՄԱՔՍԱՊԵՏԸ

Ղուկ. ԺԹ. 1-10 Յիսուսը մտաւ Երիքով և շրջում էր այնտեղ։ Մի մարդ Զակքէոս անունով, որ մաքսապետ էր և շատ էլ հարուստ, կամենում էր տեսնել թէ ո՞վ է Յիսուսը. բայց բազմութեան պատճառով չէր կարողանում տեսնել, որովհետև կարճ էր հասակով։ Նա առաջ վազելով՝ բարձրացաւ ժանտաթզենու վերայ, որ Յիսուսին տեսնի, որովհետև Յիսուսը հենց այդ ճանապարհով պիտի անցնէր։

Յիսուսն երբ այն տեղին մօտեցաւ, վեր նայեց և ասաց նրան.—«Զա՛քէ, շտապի՛ր, իջի՛ր ծառից, որովհետև այսօր պէտք է քո տունն իջևանեմ»։ Նա շտապով իջաւ և ուրախութեամբ ընդունեց նրան։

Եւ բոլորն էլ տեսնելով այդ, սկսեցին տրտնջալ որ մեղաւոր մարդու տուն գնաց իջևանելու։ Զակքէոսը վեր կենալով, ասաց Տիրոջը.—«Տէ՛ր, ունեցածիս կէսը աղքատներին կը տամ և եթէ մինչև զրկել եմ, քառապատիկը կվճարեմ»։

Յիսուսն ասաց նրան.—«Այսօր եղաւ այս

տան փրկութիւնը, որովհետև սա էլ Աբրահամի որդի է։ Մարդու Որդին եկաւ կորածներին գտնելու և փրկելու»։

104.

ՄՆԱՍՆԵՐԻ ԱՌԱԿԸ

Ղուկ. ԺԹ. 11-27 Որովհետև Յիսուսն արդէն մօտեցել էր Երուսաղէմին և ժողովուրդն էլ կարծում էր թէ շուտով յայտնուելու է Աստուծու Արքայութիւնը, ուստի և իրեն լսողներին հետևեալ առակն ասաց.—«Մի ազնուական հեռու աշխարհ գնաց որ իւր թագաւորութիւնն ստանայ և ապա վերադառնայ։

Կանչելով իւր ծառաներին, տասն մնաս[1]) տուեց նրանց ու ասաց.—«Շահեցրէ՛ք մինչև գալը»։ Բայց որովհետև քաղաքացիները նրան ատում էին, ուստի և նրա հետևից դեսպաններ ուղարկեցին որ ասեն.—«Մենք չենք ուզում, որ դու մեզ վերայ թագաւորես»։ Երբ նա թագաւորութիւնն ստանալուց յետոյ վերադարձաւ, կանչեց այն ծառաներին, որոնց արծաթ էր տուել իմանալու թէ՝ ով որքան է շահեցրել։

Առաջինն եկաւ ու ասաց.—«Տէ՛ր, քո մնասը տասը մնաս բերեց»։ Ասաց նրան.—«Ազնիւ և բարի ծառայ, որովհետև փոքր բանում հաւատարիմ եղար, տասն քաղաքների վերայ իշխանութիւն ունեցիր»։ Երկրորդն եկաւ ու ասաց.—

1) Երբ. արծաթ մնասը = 100 ռուբլուն։

«Տէր, քո մեասը հինգ մեաս բերեց»։ Ասաց նը-
րան.—«Դու էլ հինգ քաղաքների վերայ եղիր»։
Երրորդն ասաց.—«Տէր, ահա քո մեասը, որ քեզ-
նից վախենալով թաշկինակիս մէջ փաթաթած
էի պահում, որովհետև դու մի խիստ մարդ ես,
չդրած բանդ վերցնում ես և չցանածդ՝ հնձում»։
Տէրն ասաց նրան.—«Քո բերանով պէտք է դա-
տեմ քեզ, անհաւատ ծառայ. որ գիտէիր թէ ես
խիստ մարդ եմ և չդրածս վերցնում և չցանա-
ծըս հնձում եմ, էլ ինչու համար արծաթս սե-
ղանաւորին չտուիր, որ գայի ու տոկոսով պա-
հանջէի նրանից»։ Եւ ծառաներին ասաց.—«Վեր-
ցրէք նրանից մեասը և տարէք ու տասն մեաս
ունեցողին տուէք»։

Ծառաներն ասացին նրան.—«Տէր, նա տա-
սը մեաս ունի»։ Յիսուսն ասաց.—«Ասում եմ
ձեզ, որ ունեցողին կտրուի, իսկ չունեցողից՝
ունեցածն էլ կառնուի։ Իսկ իմ թշնամիներիս,
որոնք չէին ուզում որ ես իրենց վերայ թագա-
ւորեմ, բերէք այստեղ և իմ առաջ սպանեցէք»։

Ասելով այս, նա առաջ գնաց ու Երուսաղէմ
ճանապարհուեց։

105.

ԲԱՐՏԻՄԷՈՍ ԿՈՅՐԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Մարկ. ժ. 46-52 Երբ Յիսուսն աշակերտներով և շատ ժո-
ղովրդով դուրս էր գալիս Երիքովից, ճանապար-
հի վերայ նստած էր Բարտիմէոս անունով մի

մուրացկան։ Երբ սա իմացաւ թէ անցնողը Յի-
սուս Նազովրեցին է, սկսեց աղաղակել ու ասել.
—«Յիսուս, Դաւթի որդի, ողորմիր ինձ»։ Շա-
տերն սկսեցին սաստել նրան որ լռէ, բայց նա
աւելի էր աղաղակում.—«Դաւթի որդի, ողորմիր
ինձ»։

Յիսուսը կանգ առաւ և հրամայեց որ նրան
կանչեն։ Կոյրին կանչեցին ու ասացին.—«Քաջ
եղիր, վեր կաց, կանչում է քեզ»։

Նա իւր շորը ցած ձգեց վրայից, վեր կա-
ցաւ և Յիսուսի մօտ եկաւ։ Յիսուսը նրան հար-
ցրեց.—«Ի՞նչ ես կամենում որ քեզ անեմ»։
Կոյրն ասաց.—«Որ տեսնեմ»։

Յիսուսն ասաց.—«Գնա, քո հաւատը քեզ
փրկեց»։ Նա սկսեց տեսնել և գնաց Յիսուսի
յետևից։

106.

ՅԻՍՈՒՍԸ ՍԻՄՈՆ ԲՈՐՈՏԻ ՏԱՆԸ

Յովհ. ժբ. 1 Զատկից վեց օր առաջ, Յիսուսն եկաւ Բե-
թանիա, որտեղ բնակւում էր մեռած Ղազարոսը,
որին նա յարութիւն էր տուել։
Մատթ. իզ 6 Եւ իջաւ Սիմոն բորոտի տանը։
Յովհ. ժբ. 2-6 Այնտեղ նրա համար ընթրիք պատրաստե-
ցին։ Հրաւիրեալների թւումն էին Մարթան, որ
ծառայում էր սեղանի վերայ, Ղազարոսը որ սե-
ղան նստողներից մինն էր և Մարիամը, որ վերց-
նելով մի լիտր նարդոսի թանկագին ու անու-

շահոտ իւղ, շիշը կոտրեց[1]) և իւղը Յիսուսի գլխին թափելով, միևնոյն ժամանակ սկսեց օծել նրա ոտքերը և իւր մազերով սրբել։ Տունն իւղի անուշահոտութեամբ լցուեցաւ։

Այն ժամանակ աշակերտներից մինը՝ Յուդա Իսկարիովտացին, որ պէտք է մատնէր Նրան՝ ասաց.—«Այդ իւղը պէտք է երեք հարիւր դենարով[2]) ծախուէր և դումարն աղքատներին տրուէր»։ Նա այդ բանն ասաց ոչ թէ այն պատճառով որ աղքատների մասին էր հոգս քաշում, այլ որ գող էր և դանձարկղն էլ իւր մօտ լինելով՝ ձգուած փողերն ինքն էր պահում։

Մատթ.իգ 10-13 Յիսուսը լսելով այս՝ ասաց.—Ի՞նչու էք այդ կնոջը վշտացնում, նա մի բարի գործ արեց իմ վերաբերմամբ. աղքատներն ամեն ժամանակ ձեզ մօտ են, բայց ես միշտ ձեզ մօտ չեմ լինելու։ Դա այդ իւղն իմ մարմնի վերայ թափեց և օծեց ի նշան իմ թաղման։ Բայց ճշմարիտն եմ ասում ձեզ, ամբողջ աշխարհի մէջ ուր էլ որ քարոզուի իմ Աւետարանը, կխօսուի այդ մասին և կյիշուի դրա յիշատակը»։

Յովհ. ժբ. 9-41 Հրէաներից շատերն երբ իմացան որ Յիսուսը այնտեղ է, եկան ոչ միայն Յիսուսին, այլ և Ղազարոսին էլ տեսնելու, որին նա յարութիւն էր տուել։ Քահանայապետները խորհուրդ արին որ Ղազարոսին էլ սպանեն, որովհետև շատերը Ղազարոսի պատճառով էին գնում Յիսուսի մօտ և հաւատում։

---

1) Մարկ. գլխ. ժդ. 3.
2) Դենար—մէկ դահեկան = 60 կոպ.

107.

ՅԻՍՈՒՍԻ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՄՈՒՏՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄ.—ՅԻՍՈՒՍԸ ՏԱՃԱՐՈՒՄ

Մատթ.իա 1-3 Երբ Երուսաղէմին մօտեցան և եկան Բեթփագէ – Ձիթենեաց լեռան մօտ, այն ժամանակ Յիսուսն իւր աշակերտներից երկուսին ուղարկելով՝ ասաց.—«Գնացէք այն գիւղը, որ առաջներիդ է և կգտնէք այնտեղ մի կապած էշ և նրա հետ էլ աւանակը, արձակեցէք և բերէք ինձ մօտ և եթէ ձեզ բան ասող լինի, ասացէք Տիրոջն հարկաւոր են. և շուտով կուղարկէ նրանց»։

Մատթ.իա 6-9 Աշակերտները գնացին և այնպէս արին, ինչպէս հրամայել էր նրանց Յիսուսը։ Էշն ու աւանակը բերին ու իրենց շորերը նրանց վրայ ձգեցին. Յիսուսը նստեց նրանց վերայ։

Ոմանք ծառերի ոստերը կտրատելով, տարածում էին ճանապարհի վերայ։ Իսկ նրա առջևից ու յետևից գնացողները՝ աղաղակում էին ու ասում.—«Ովսաննա[1]). Օրհնեալ է Տիրոջ անունով եկողը։ Օրհնեալ է Տիրոջ անունով եկող մեր հայր Դաւթի թագաւորութիւնը։ Խաղաղութիւն յերկինս և փառք 'ի բարձունս»։

Մարկ. ժա. 9-10 Ղուկ. ժթ.38.

Մատթ.իա 4-5 Եւ այս բոլորն եղաւ, որ կատարուի Մարգարէի ասածը թէ—Ասացէք Սիօնի աղջկան, ահա քո թագաւորը գալիս է քեզ մօտ հեզ և էշի ու իշու աւանակի վերայ նստած[2])։

---

1) Ովսաննա նշ. թող օրհնուի, օրհնեալ լինի։
2) Տես 25-րդ մարգ.

Յովհ. ԺԲ. 16-18 Նրա աշակերտներն առաջ չհասկացան այս բանը, բայց երբ Յիսուսը փառաւորուեցաւ, այդ ժամանակ միայն յիշեցին, որ այդ բաները այն պատճառով տեղի ունեցան, որ այդպէս էր գրուած Յիսուսի մասին։ Նրա հետ եղող ժողովուրդը վկայում էր որ նա էր Ղազարոսին գերեզմանից կոչողը և մեռելներից յարութիւն տուողը։ Հենց ժողովրդի Յիսուսի առաջ դուրս գալու պատճառն էլ այն էր, որ լսել էր արդէն թէ այդ հրաշքը (Ղազարոսին յարութիւն տալը) Նա է գործել։

Ղուկ. ԺԹ. 41-44 Յիսուսը Զիթենեաց լերան գագաթը հասնելով, տեսաւ քաղաքը, լացեց նրա վերայ ու ասաց.—«Գոնէ դու այսօր հասկանայիր քո խաղաղութիւնը՝ բայց այժմ ծածկուած է այդ քո աչքերից։ Կը գան օրեր, երբ թշնամիներդ քո շուրջդ պատնէշ կը կանգնեցնեն, կշրջապատեն քեզ և ամեն կողմից կնեղեն։ Կաւերեն քեզ, որդոցդ քո մէջ կը կոտորեն և քարը քարի վերայ չեն թողնի, որովհետև դու չճանաչեցիր քո այցելութեանդ ժամանակը»։[1])

Մատթ. ԻԱ 10-11, 14-15 Երբ Երուսաղէմ մտաւ, ամբողջ քաղաքը դղրդաց ու ասաց.—«Ո՞վ է սա»։ Ժողովուրդն ասաց.—«Սա Գալիլիայի Նազարէթ քաղաքի մարգարէ Յիսուսն է»։

Յիսուսը մտաւ տաճարը, ուր մօտեցան նը-

[1]) Այսինքն չուզեցիր Աստուծու այցելութեան ժամանակն իմանալ, չկամեցար Աստուծու ողորմութեան պատեհութիւնից օգտուել, դրա համար էլ Աստուծու արդար վրէժխնդրութեանը մատնուեցար։

րան կոյրեր ու կաղեր, որոնց և բժշկեց։ Երբ քահանայապետներն ու դպիրները տեսան նրա գործած զարմանալի հրաշքները և այն մանուկներին որոնք աղաղակում էին տաճարում և ասում.—«Ո՛վսաննա, օրհնութիւն Դաւթի որդուն»։ Բարկացան ու ասացին նրան.—«Լսում ե՞ս թէ ինչ են ասում, սաստիր դրանց»։

Ղուկ. ԺԹ. 40 Յիսուսը պատասխանեց.—«Ասում եմ ձեզ, որ եթէ դրանք լռեն, քարերը կաղաղակեն։ Եւ դուք չէ՞ք կարդացել արդեօք այն տեղն ուր ա-

Մատթ. ԻԱ. 16-17 սուած է—«Տղաների և ծծկեր մանուկների բերանից կատարեցիր օրհնութիւնը»։[1])

Եւ թողնելով նրանց, քաղաքից դուրս ելաւ ու գնաց Բեթանիա և գիշերը այնտեղ մնաց։

108.

ԱՆՊՏՈՒՂ ԹԶԵՆԻՆ։—ՏԱՃԱՐԻ ՄԱՔՐՈՒԻԼԸ.—ՀԱՍՏԱՏՈՒՆ ՀԱՒԱՏԻ ԵՒ ԱՆԿԵՂԾ ԱՂՕԹՔԻ ՈՅԺԸ.—ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Մարկ. ԺԱ. 11-33 Հետևեալ օրն առաւօտեան, երբ դուրս էին գալիս Բեթանիայից՝ Յիսուսը քաղցեցաւ։

Եւ հեռուից մի տերևալից թզենի տեսնելով մօտեցաւ նրան՝ վրան մի բան գտնելու. բայց երբ բացի տերևներից ոչինչ չգտաւ, որովհետև թուզի ժամանակը չէր՝ ասաց.—«Սրանից յետոյ քեզնից ոչ ոք պտուղ չուտէ յաւիտեան»։ Եւ իւր աշակերտները լսում էին։

[1]) Սաղմոս. ը. 3.

Եկան Երուսաղէմ և Յիսուսը տաճարը մըտնելով, դուրս արաւ տաճարում առուծախս անողներին, հատավաճառների[1]) սեղանները ցըրուեց և աղաւնիվաճառների աթոռները կործանեց։ Եւ ոչ ոքի չէր թողնում ոչ մի աման տաճարի միջով անց կացնելու։

Եւ սովորեցնում էր նրանց ու ասում. — «Գրուած է որ իմ տունը բոլոր հեթանոսների համար աղօթքի տուն պէտք է համարուի և դուք աւազակների բուն էք դարձրել։»[2]) Քահանայապետներն ու դպիրները լսելով այս, մտածում էին թէ ինչպէս կորցնեն նրան, բայց վախենում էին նրանից, որովհետև բոլոր ժողովուրդը զարմացել էր նրա վարդապետութեան վերայ։

Երեկոյեան քաղաքից դուրս եկան։

Հետևեալ օրն առաւօտեան, երբ նոյն տեղովն էին անցնում, թզենուն արմատից չորացած տեսան։

Պետրոսն յիշեց (նախընթաց օրուան անցքը) և Յիսուսին ասաց. — «Ռաբբի, տես, այն թզենին որին անիծեցիր, արդէն չորացել է»։

Յիսուսը պատասխան տուեց նրան ու ասաց. — «Աստուծու հաւատքն[3]) ունեցէք։ Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ եթէ մինն այս լերանն ասէ շարժուիր տեղից ու ծովը ընկիր և իւր սրտի մէջ չերկմտի, այլ հաւատայ որ լինելու է իւր ասածը, կլինի նրան

[1]) Դրամ փոխողների և մանրացնողների։
[2]) Մարգ. Եսայի ծգ. 7.—«Իմ տունը բոլոր հեթանոսների համար աղօթքի տուն պէտք է կոչուի»։
[3]) Այսինքն—հաստատուն հաւատ։

ինչ էլ որ ասելու լինի։ Այս պատճառով ասում եմ ձեզ, ամենայն մի բան, որի համար աղօթքով կխնդրէք և կհաւատաք որ պէտք է առնէք, կստանաք։

Եւ երբ աղօթքի կենաք, ներեցէք եթէ մէկի դէմ որևէ բան ունիք, որպէս զի ձեր երկնաւոր Հայրն էլ ներէ ձեզ՝ ձեր յանցանքները։ Եթէ դուք չէք ների, ձեր երկնաւոր Հայրն էլ չի ների ձեր յանցանքները»։

Նորից Երուսաղէմ եկան և երբ նա շրջում էր տաճարում, քահանայապետները, դպիրներն ու ծերերը նրա մօտ եկան ու հարցրին.—«Ի՞նչ իշխանութեամբ ես անում այդ բաները և ո՞վ տուեց քեզ այդ իշխանութիւնը»։

Յիսուսն էլ պատասխանեց ու ասաց.—«Ես էլ ձեզնից մի բան կհարցնեմ, եթէ կասէք ինձ, ես էլ կասեմ ձեզ թէ ինչ իշխանութեամբ եմ այս բաներն անում։ — «Յովհաննէսի մկրտութիւնն երկնքից էր թէ՞ մարդկանցից։ Պատասխանեցէք այս հարցին»։

Խորհրդակցում էին իրար հետ և ասում.— «Եթէ ասենք երկնքից էր, կասէ.— հապա ի՞նչու չհաւատացիք նրան։ Եթէ ասենք մարդկանցից էր, ժողովրդից ենք վախենում. որովհետև ամենքն էլ ընդունում էին որ յիրաւի Յովհաննէսը մարգարէ էր»։

Պատասխանեցին Յիսուսին. — «Չգիտենք»։ Յիսուսն էլ պատասխանեց.—«Ես էլ ձեզ չեմ ասի. թէ ի՞նչ իշխանութեամբ եմ անում այս բաները։

109.

ԵՐԿՈՒ ՈՐԴՈՑ ԵՒ ՉԱՐ ՄՇԱԿՆԵՐԻ ԱՌԱԿՆԵՐԸ

Մարկ. ժբ. 1 Եւ սկսեց նրանց հետ առակներով խօսել։
Մատթ. իա 28-46 Մի մարդ երկու որդի ունէր, մօտենալով առաջնին՝ ասաց.—«Որդեակ, գնա այսօր այգումս աշխատիր»։ Նա պատասխանեց ու ասաց. — «Կերթամ հայր»։ Բայց չգնաց։ Մօտեցաւ միւսին և նոյնն առաջարկեց։ Նա պատասխան տուեց ու ասաց.—«Չեմ գնայ»։ Բայց յետոյ զղջաց ու գնաց այգին։ Արդ, երկուսից որը կատարեց հօր կամքը։ Ասացին.—«Յետինը»։

Յիսուսն ասաց նրանց.—«Ճշմարիտն եմ ասում ձեզ, ու մաքսաւորներն ու պոռնիկները ձեզնից առաջ կմտնեն Երկնքի Արքայութիւնը. որովհետև Յովհաննէսն արդարութեան ճանապարհով եկաւ և դուք նրան չհաւատացիք, իսկ մաքսաւորներն ու պոռնիկներն հաւատացին, դուք տեսաք և չզղջացիք, որպէս զի գոնէ յետոյ հաւատայիք»։

Հետևեալ առակն էլ լսեցէք.—«Մի տանուտէր այգի տնկեց և ցանկով պատեց, մէջը հնձան փորեց և աշտարակ շինեց և յանձնելով այգին մշակներին, ինքը գնաց օտար երկիր։ Երբ պտղի ժամանակն եկաւ, իւր ծառաներին ուղարկեց մշակների մօտ, որ պտուղն ստանան։

Մշակները բռնելով նրա ծառաներին, ոմանց տանջեցին, ոմանց սպանեցին և ոմանց էլ

քարկոծեցին։ Տէրն այս անգամ առաջուանից աւելի ծառաներ ուղարկեց, նրանց հետ էլ այնպէս վարուեցան։

Վերջը մշակների մօտ իւր որդուն ուղարկեց մտածելով որ գուցէ իւր որդուցն ամաչեն։ Մշակներն երբ որդուն տեսան, մտքներումն ասացին. —«Ժառանգը սա է, եկէք սպանենք սրան և խլենք ժառանգութիւնը»։ Եւ բռնելով նրան այգուց դուրս տարան ու սպանեցին։

«Արդ, այգու Տէրը որ գայ, ի՞նչ կանէ մշակներին»։ Ասացին նրան.—«Չարերին չարաչար կերպով կը կորցնի և այդին այնպիսի մշակների կյանձնի, որոնք պտուղն իւր ժամանակին կը հասցնեն տիրոջը»։

Յիսուսն ասաց նրանց.—«Երբևիցէ չէ՞ք կարդացել գրքի մէջ, թէ այն քարը, որ շինողներն անարգեցին, նա եղաւ անկեան գլուխը, սա Տիրոջից եղաւ և զարմանալի է մեր աչքերին։[1]) Այս պատճառով ասում եմ ձեզ, որ Աստուծու Արքայութիւնը կխլուի ձեզնից և կտրուի այն ազգին, որ պտուղներ կբերէ։

Ով այս քարի վերայ ընկնի՝ կփշրուի. և ում վերայ ընկնի՝ կջարդէ նրան»։

Երբ քահանայապետները, դպիրներն ու փարիսեցիները նրա առակները լսեցին, իմացան որ իրանց համար է ասում։ Կամենում էին նրան բռնել, բայց ժողովրդից էին վախենում, որովհետև նրան մարգարէի տեղ էին ընդունում։

---

1) Սաղմ. ճժէ. 22.

110.

ԹԱԳԱՒՈՐԻ ՈՐԴՈՒ ՀԱՐՍԱՆԵԱՑ ԱՌԱԿԸ

Մատթ.իբ 1-14 Այս առակն էլ ասաց.—«Երկնքի Արքայութիւնը նման է այն թագաւորին, որ իւր որդու հարսանիքն արաւ և ուղարկեց իւր ծառաներին հրաւիրուածներին հարսանիք կանչելու. բայց հրաւիրեալները չկամեցան գալ։

Նորից ուրիշ ծառաներ ուղարկեց և պատուիրեց՝ ասելով.—«Գնացէք, հրաւիրեալներին ասացէք որ ճաշը պատրաստ է, զուարակներս ու պարարակներս մորթուած են և ամեն բան պատրաստ է, եկէք հարսանիք»։

Իսկ նրանք անհոգ գնուելով, որն իւր ագարակը գնաց, որն իւր առևտրին, իսկ ոմանք էլ բռնելով նրա ծառաներին, նախատեցին ու սպանեցին։

Թագաւորը լսելով այս, բարկացաւ և զօրք ուղարկելով, սպանողներին սատակեցնել տուեց և նրանց քաղաքները այրեց։ Այն ժամանակ իւր ծառաներին ասաց.—«Հարսանիքը պատրաստ է, բայց հրաւիրուածներն արժանի չէին։ Ուստի, գնացէք ճանապարհի գլուխները և որոնց գտնէք՝ հարսանիք կանչեցէք։

Ծառաները դուրս գալով ճանապարհները, հաւաքեցին ամենքին—ում և գտան,—թէ չարերին, թէ բարիներին և հարսանիքը բազմութեամբ լցուեցաւ։

Երբ թագաւորը ներս մտաւ բազմութիւնը տեսնելու, նկատեց որ մի մարդ հարսանիքի շոր չէր հագել և նրան ասաց.—«Ընկեր, ինչու եկար այստեղ, երբ հարսանիքի շոր չունէիր», Եւ նա պապանձուեցաւ։

Այն ժամանակ թագաւորն ասաց սպասաւորներին.—«Կապեցէք դրա ոտքերն ու ձեռքերը և դրսի խաւարը տարէք, թողայնտեղ լաց լինի և ատամները կրճատցնէ. որովհետև շատերն են կանչուած, բայց քչերն են ընտրուած։

111.

ԿԱՅՍՐԻՆԸ՝ ԿԱՅՍՐԻՆ ՏՈՒԷՔ, ԻՍԿ ԱՍՏՈՒԾՈՒՆԸ՝ ԱՍՏՈՒԾՈՒՆ

Մատթ.իբ. 15-22 Այն ժամանակ փարիսեցիները գնացին և խորհուրդ արին թէ ինչպէս նրան որոգայթ դնեն խօսքով։

Եւ իրենց աշակերտներին հերովդիանոսների հետ ի միասին Նրա մօտ ուղարկեցին ու ասացին.—«Վարդապետ, գիտէինք որ ճշմարիտ ես և Աստուծու ճանապարհը ճշմարտութեամբ ես ուսուցանում, ոչ ոք փոյթդ չէ և մարդկանց երեսպաշտութիւն չես անում, ուստի ասա՛ մեզ, ինչ ես կարծում, հարկաւոր է կայսեր հարկ տալ թէ՞ ոչ»։ Յիսուսն իմանալով նրանց խորամանկութիւնը՝ ասաց.—«Կեղծաւորներ, ինչու էք ինձ փորձում, ցոյց տուէք ինձ հարկի դահեկանը»։

Եւ նրանք մի դահեկան բերին։ Յիսուսն ասաց նրանց.—«Ո՞ւմն է այս պատկերը կամ գիրը»։ Ասացին.—«Կայսրինը»։

Այն ժամանակ ասաց.—«Գնացէք, կայսրինը՝ կայսրին տուէք, իսկ Աստուծունը՝ Աստուծուն,

Երբ այս պատասխանը լսեցին՝ զարմացան և թողին նրան ու գնացին։

112.

ԵՕԹՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԿԻՆԸ

Մատթ. իբ 23-33 Յիսուսի մօտ Սադուկեցիներ եկան, որոնք ասում էին թէ յարութիւն չկայ։ Հարցրին նրան ու ասացին.—«Վարդապետ, Մովսէսն ասաց, որ եթէ մինը անորդի մեռնի, նրա կնոջը թող նրա եղբայրն առնէ և եղբօր համար զաւակ յարուցանէ։[1]) Արդ, մեզ մօտ եօթն եղբայրներ կային. առաջինը կին առաւ և անզաւակ մեռաւ։ Նրա կնոջը երկրորդն առաւ, որ նոյնպէս անզաւակ մեռաւ։ Մեռան նաև երրորդն ու չորրորդը մինչև եօթներորդը։ Ամենից վերջը կինը մեռաւ։ Արդ, յարութեան ժամանակ այդ կինը եօթն եղբայրներից որինն է լինելու, քանի որ ամենքի էլ կինն էր եղել»։

Յիսուսը պատասխան տուեց ու ասաց.—

[1]) Բ. Օր. իե. 5-10 Մովսէսի օրէնքով հրամայուած էր, որ եթէ մէկը ամուսնանար և անորդի մեռնէր, մեռնողի եղբայրը պարտաւոր էր նրա այրուն իրեն կնութեան առնել և նրանից ծնուած զաւակը մեռած եղբօր զաւակ համարել և մեռնողի ժառանգը ճանաչել, որպէս զի անորդի մեռած մարդու ցեղը չկորչի։

«Մոլորուածներ, ոչ գրածն էք հասկանում և ոչ էլ Աստուծու զօրութիւնը։ Որովհետև յարութեան ժամանակ ոչ կին են առնում և ոչ մարդու գնում, այլ հրեշտակների պէս են երկնքում։

Արդեօք դուք չէք կարդացել մեռելների յարութեան մասին Աստուծու ձեզ ասած խօսքը թէ, ես եմ Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածն ու Յակովբի Աստուածը[1])։ Աստուած մեռելների Աստուածը չէ, այլ կենդանիներինը»։

Այս ամենը լսող ժողովուրդը զարմանում էր նրա վարդապետութեան վերայ։

113.

ԹԻ Ո՞ՐՆ Է ՄԵԾ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ

Մարկ. ժբ. 28-34 Դպիրներից մինը, որ լսում էր Յիսուսի և փարիսեցիների վէճը՝ մօտեցաւ Յիսուսին և տեսնելով որ նա լաւ պատասխանեց նրանց՝ հարցրեց.—«Ո՞րն է ամենից առաջին պատուիրանը» Յիսուսը պատասխանեց.—«Պատուիրաններից ամենից առաջինն այս է։—Լսիր Իսրայէլ, մեր Տէր Աստուածը մէկ Տէր է։ Եւ սիրիր քո Տէր Աստուածն քո բոլոր սրտով, բոլոր անձով, բոլոր մտքով և բոլոր զօրութեամբդ.[2]) ահա այս է առաջին պատուիրանը։

Երկրորդն էլ սրա նման է.—«Սիրիր քո ընկերոջդ քո անձի պէս»[3])—Սրանից աւելի մեծ պա-

[1]) Ելից գ. 6.
[2]) Բ. Օրէնաց գ. 5.
[3]) Ղևտ. ժթ. 18.

տուիրան չկայ»։ Դպիրն ասաց նրան.—«Լաւ, վարդապետ, ճշմարիտն ասացիր թէ Աստուած մէկ է և բացի Նրանից ուրիշը չկայ. և բոլոր սրտով, բոլոր մտքով, բոլոր անձով և բոլոր զօրութեամբ նրան սիրելն ու ընկերոջն էլ անձի պէս սիրելը՝ ողջակէզներից ու զոհերից աւելի է»։

Եւ Յիսուսը տեսնելով որ իմաստութեամբ պատասխանեց, ասաց նրան.—«Աստուծու Արքայութիւնից հեռու չես»։

114.

ԴԱՒԻԹ ԵՒ ԴԱՒԻԹԻ ՈՐԴԻ

Մատթ. իբ 41-46 Երբ փարիսեցիները ժողովեցան, Յիսուսը հարցրեց նրանց ու ասաց.—«Ի՞նչ կարծիք ունիք Քրիստոսի մասին. Նա ո՞ւմ որդին է»։

Ասացին նրան.—«Դաւթի որդին է»։

Յիսուսն ասաց.—«Բայց ի՞նչպէս է որ Դաւիթը նրան հոգով Տէր է կոչում և ասում.—«Ասաց Տէրն իմ Տիրոջը նստիր աջ կողմս, մինչև որ քո թշնամիներին ոտքերիդ պատուանդանը դարձնեմ։»[1]) Եւ այսպէս, եթէ Դաւիթը նրան Տէր է կոչում, էլ նա ի՞նչպէս կարող է նրա որդին լինել»։

Եւ ոչ ոք չկարողացաւ նրան պատասխանել։ Եւ այն օրից, էլ ոչ ոք չէր համարձակւում նրանից որև է բան հարցնել։

---

[1]) Սաղմ. ճԹ. 1 (տես մարգ. շարք. № 52)։

115.

ՎԱՅԵՐ ԴՊԻՐՆԵՐԻ ԵՒ ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐԻ ԴԷՄ

Մատթ. իգ 1-39 Այն ժամանակ Յիսուսը ժողովրդի և աշակերտների հետ խօսեց ու ասաց.—«Մովսէսի աթոռի վերայ դպիրներն ու փարիսեցիները նստեցին։ Այն բոլորը, ինչ որ ձեզ ասեն, արէք ու պահեցէք, բայց նրանց արածները մի անէք, որովհետև իրենց ասածները իրենք չեն կատարում։ Ծանր ու դժուարակիր բեռներ են կապում ու մարդկանց ուսերի վրայ դնում, իսկ իրենք չեն ուզում մատով շարժել։ Իրենց բոլոր գործերը մարդկանց ցոյց տալու համար են անում. լայնացնում են իրենց գրապանակները և երկարացնում իրենց հանդերձի քղանցքները։ Ընթրիքների ժամանակ սիրում են բարձր տեղերը նստել և ժողովարաններում՝ նախաթոռների վերայ։ Սիրում են հրապարակներում ողջոյներ ստանալ և մարդկանցից Ռաբբի, Ռաբբի, կոչուիլ։

Բայց դուք ոչ ոքի վարդապետ մի կոչէք, որովհետև դուք մէկ Ուսուցիչ ունիք և ամենքդ էլ եղբայրներ էք։ Երկրի վերայ դուք ոչ ոքի Հայր մի կոչէք, որովհետև ձեր Հայրը երկնքումն է։ Եւ դուք մի կոչուէք ուսուցիչներ, որովհետև ձեր ուսուցիչը Քրիստոսն է։ Ձեզնից մեծը՝ թող ձեր ծառան լինի, որովհետև իրեն բարձրացնողը՝ կըխոնարհի, իսկ իրեն խոնարհեցնողը՝ կըբարձրանայ։

Վա՜յ ձեզ դպիրներ ու փարիսեցիներ՝ կեղծաւորներ, որ Երկնքի Արքայութիւնը փակում էք մարդկանց առաջ, դուք չէք մտնում և մտնողներին էլ թոյլ չէք տալիս։

Վա՜յ ձեզ դպիրներ ու փարիսեցիներ՝ կեղծաւորներ, որ այրիների տներն էք ուտում և կեղծաւորութեամբ ձեր աղօթքներն երկարացնում, այդ բանի համար դուք աւելի կդատապարտուիք։

Վա՜յ ձեզ դպիրներ ու փարիսեցիներ՝ կեղծաւորներ, որ ծով ու ցամաք էք պտտւում, որևէ մէկին նորահաւատ դարձնելու և երբ յաջողւում է, նրան ձեզնից երկու անգամ աւելի գեհենի որդի էք դարձնում։

Վա՜յ ձեզ կոյր առաջնորդներ, որ ասում էք թէ տաճարի վերայ երդուիլը ոչինչ է, իսկ տաճարի մէջ եղած ոսկու վերայ երդուիլը՝ զօրաւոր։ Անմիտներ ու կոյրեր, որն է մեծը, ոսկին թէ՞ տաճարը, որ սրբացնում է ոսկին։ Եւ կամ ասում էք, սեղանի վերայ երդուիլը ոչինչ է, իսկ սեղանի վերայ մատուցած պատարագով երդուիլը՝ զօրաւոր։ Յիմարներ ու կոյրեր, որն է մեծը պատարագը թէ՞ սեղանը, որ սրբացնում է պատարագը։ Եւ այսպէս, ով սեղանի վերայ է երդւում, նա երդւում է սեղանի և նրա վրայի բոլոր բաների վերայ. և ով որ տաճարի վերայ է երդւում, նա երդւում է տաճարի և նրա մէջ Բնակուողի վերայ. և ով որ երկնքի վերայ է երդւում, նա երդւում է Աստուծու աթոռի և նրա վերայ Նստողի վերայ։

Վա՜յ ձեզ դպիրներ և փարիսեցիներ՝ կեղծաւորներ, որ անանուխից, սամիթից ու չամանից[1]) տասանորդ էք վճարում, բայց թողնում էք օրէնքի ծանրագոյնները.—դատաստանը, ողորմութիւնն ու հաւատքը, այս պէտք.էր անել և այն՝ չթողնել։

Կոյր առաջնորդներ, որ մժղուկը քամում էք, ուղտը կլանում։

Վա՜յ ձեզ դպիրներ ու փարիսեցիներ՝ կեղծաւորներ, որ բաժակի ու պնակի դուրսն էք մաքրում, այն ինչ ներսից յափշտակութեամբ և անիրաւութեամբ լի են։ Կոյր փարիսեցի, նախ բաժակի ու պնակի ներսը մաքրիր, որ դրսից էլ մաքուր լինի։

Վա՜յ ձեզ դպիրներ ու փարիսեցիներ՝ կեղծաւորներ, որ ծեփած գերեզմանների էք նմանում, որոնք դրսից գեղեցիկ են երևում և ներսից մեռելի ոսկորներով ու ամենայն տեսակ պղծութիւնով լի են։ Նոյնպէս էլ դուք, մարդկանց դրսից արդար էք երևում, իսկ ներսից կեղծաւորութիւնով և անօրէնութիւնով լի էք։

Վա՜յ ձեզ դպիրներ ու փարիսեցիներ՝ կեղծաւորներ, որ մարգարէների շերիմներն էք շինում և արդարների գերեզմանները զարդարում և ասում էք, որ եթէ մենք մեր հայրերի օրերում լինէինք, մարգարէների արեան թափուելուն մասնակից չէինք լինի։ Ուրեմն դուք վկայում էք ձեզ համար, որ մարգարէներ կոտո-

1) Անանուխ-նանխայ. սամիթ-չուիթ. չամանչ-համեմ։

բողնելի որդիքն էք, ուստի և լցրէք ձեր հայրերի չափը։

Օձեր և իժերի ծնունդներ, ինչպէս պէտք է փախչէք գեհենի դատապարտութիւնից։ Այդ պատճառով, ահա ուղարկում եմ ձեզ մօտ մարգարէներ, իմաստուններ և դպիրներ. և դուք նրանցից ոմանց կսպանէք և կխաչէք և ոմանց էլ ձեր ժողովարաններում կտանջէք և քաղաքից քաղաք կհալածէք. և թող երկրի վերայ թափուած բոլոր արդար արիւնը ձեզ վերայ գայ՝ արդար Աբէլի արիւնից մինչև Բարաքիայի որդի Զաքարիայի արիւնը, որին տաճարի և սեղանի մէջ տեղը սպանեցիք։

Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ այս բոլորը կգայ այս ազգի վերայ։

Երուսաղէմ, Երուսաղէմ, որ մարգարէներ էիր կոտորում և քեզ մօտ ուղարկուածներին քարկոծում, քանի՞ անգամ կամեցայ քո մանուկներին հաւաքել՝ ինչպէս թխսկանն է իւր ձագերին թևերի տակ հաւաքում, բայց դուք չկամեցաք։

Ահա ձեր տունը ձեզ աւերակ մնայ։ Որովհետև ասում եմ ձեզ, որ այսուհետև այլ ևս չէք տեսնելու ինձ, մինչև որ ասէք.—Օրհնեալ է Տիրոջ անունով եկողը։

116.

ԱՑՐԻ ԿՆՈՋ ԼՈՒՄԱՆ

Մարկ. ժբ. 41-44 Յիսուսը գանձանակի դիմացը նստած դիտում էր, թէ ինչպէս ժողովուրդը գանձանակի մէջ փող էր ձգում։

Շատ հարուստներ շատ փող էին ձգում։ Մի այրի կին եկաւ և երկու լումայ ձգեց, որ մի նաքարակիտ է։

Յիսուսն աշակերտներին իւր մօտ կանչելով՝ ասաց.—«Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ այս աղքատ այրին գանձանակ ձգողներից ամենից շատ տուեց։ Որովհետև ամենքն էլ աւելացածից ձգեցին, իսկ սա չքաւոր լինելով հանդերձ իւր բոլորը ունեցածը՝ իւր բոլոր ապրուստը ձգեց»։

117.

ՀԵԹԱՆՈՍ ՈՒԽՏԱՒՈՐՆԵՐ.—ՑՈՐԵՆԻ ՀԱՏԻԿԸ, ՈՐՊԷՍ ՅԻՍՈՒՍԻ ՓԱՌԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿ.—ԵՐԿՐՆԲԻՑ ԵԿԱԾ ՁԱՅՆԸ.—ՄԵՍԻԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ.—ՎԵՐՋԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յովհ. ժբ. 20-36 Տօնին եկած ուխտաւորների մէջ մի քանի հեթանոսներ էլ կային, որոնք Գալիլիայի Բեթսայիդացի Փիլիպպոսի մօտ գալով, աղաչեցին նրան ու ասացին.—«Տէր, կամենում ենք Յիսուսին տեսնել»։ Փիլիպպոսն եկաւ ու Անդրիասին յայտնեց և Անդրիասն ու Փիլիպպոսը Յիսուսին ասացին։ Յիսուսը պատասխան տուեց ու ասաց.—«Մարդու Որդու փառաւորուելու ժամն հասաւ։ Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում ձեզ, որ եթէ ցորենի հատիկը հողի մէջ չընկնի ու չմեռնի, ինքն մենակ կմնայ, բայց եթէ մեռնի՝ շատ արդիւնք կտայ։ Իւր անձը սիրողը՝ կը կորցնի նրան

և այս աշխարհում իւր անձն ատողը՝ յաւիտենական կեանքի համար կպահէ նրան։ Ինձ ծառայողը թող իմ յետևից գայ. և ուր ես եմ, իմ ծառան էլ այնտեղ կլինի և ինձ ծառայողին՝ կպատուի Հայրս։

Բայց այժմ անձս խռոված է և ի՞նչ ասեմ. —Հայր, ազատիր ինձ այս ժամից, բայց ես հենց այս ժամի համար եկայ։ Հայր, փառաւորիր Քո անունը»։

Այդ ժամանակ մի ձայն եկաւ երկնքից.— «Փառաւորեցի և դարձեալ պէտք է փառաւորեմ»։

Ժողովուրդը որ կանգնած լսում էր այս՝ ասաց.—«Որոտմունք է այս»։ Ոմանք էլ ասում էին.—«Նրա հետ հրեշտակը խօսեց։»

Յիսուսը պատասխանեց և ասաց. — «Այս ձայնն ինձ համար չեկաւ, այլ ձեզ համար։ Այս աշխարհի դատաստանն այժմս է և այժմ դուրս կձգուի այս աշխարհի իշխանը։ Եւ երբ ես երկրից բարձրանամ, ամենքին էլ ինձ մօտ կքաշեմ»։ Այս ասաց, որ հասկացնէ թէ որպիսի մահով պէտք է մեռնի։

Ժողովուրդը պատասխանեց նրան.—«Մենք օրէնքից լսել ենք, որ Քրիստոսը յաւիտեան կըմնայ և դու ինչպէս ես ասում, թէ Մարդու Որդին պէտք բարձրանայ.—Ո՞վ է այն Մարդու Որդին»։

Յիսուսն ասաց նրանց.—«Մի փոքր ժամանակ էլ լոյսը ձեզ հետ է, քանի լոյս ունիք, գնացէք, որ չլինի թէ մութը ձեզ վրայ հասնի,

որովհետև խաւարի մէջ գնացողը՝ չգիտէ թէ ուր է գնում։ Քանի լոյսը հետներդ է, հաւատացէք այդ լոյսին, որ լոյսի որդիք լինիք»։

Յովհ. ԺԲ. 44-50 Ասելով այս, հանդիսաւոր կերպով աւելացրեց.—«Ինձ հաւատացողը ոչ թէ ինձ է հաւատում, այլ ինձ Ուղարկողին։ Եւ ինձ տեսնողը, ինձ Ուղարկողին է տեսնում։ Ես լոյս եկայ աշխարհ, որպէս զի ինձ հաւատացողները, խաւարի մէջ չմնան։ Եւ եթէ ոք մին իմ խօսքերը լսէ և չհաւատայ, ես նրան չեմ դատապարտի. որովհետև ես եկայ ոչ թէ աշխարհը դատելու, այլ աշխարհը փրկելու։ Ինձ մերժողն ու խօսքերս չընդունողը՝ իրեն համար դատաւոր ունի այն խօսքը, որ ես խօսեցի. նա կդատէ նրան վերջին օրը։ Որովհետև ես ոչ թէ ինձնից խօսեցի, այլ ինձ Ուղարկող Հայրը պատուիրեց, թէ ես ինչ պէտք է ասեմ և ինչ խօսեմ։ Եւ ես գիտեմ, որ Նրա պատուէրը յաւիտենական կեանք է և ինչ որ խօսում եմ այնպէս եմ խօսում, ինչպէս իմ Հայրն ասաց ինձ»։

Ղուկ. ԻԱ. 37-38 Յիսուսը ցերեկները տաճարումն էր ուսուցանում, իսկ գիշերները դուրս գալով՝ բարձրանում էր Ձիթենեաց կոչուած լեռը և այնտեղ էր անցկացնում։ Առաւօտը բոլոր ժողովուրդը շտապում էր տաճար Նրան լսելու համար։

118.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆԸ

Յովհ. ԺԲ. 37-43 Թէև Յիսուսը նրանց (հրէաների) առաջ

այդչափ հրաշքներ գործեց, բայց նրանք չհաւատացին նրան, որ կատարուի Եսայեա մարգարէի ասածը թէ.—Տէր, մեր խօսքին ո՞վ հաւատաց և Տիրոջ բազուկը ո՞ւմ յայտնուեցաւ։[1]) Նրան այն պատճառով չէին կարողանում հաւատալ, որ ինչպէս Եսայեա մարգարէն ասաց դարձեալ.—Այս ազգը իւր աչքերը կուրացրեց և իւր սիրտը քարացրեց. աչքերով չէ տեսնում և սրտով չէ իմանում և դարձի չէ գալիս, որպէս զի ես նրանց բժշկեմ։[2])

Այս խօսքերն Եսային այն ժամանակն ասաց, երբ Նրա փառքը տեսաւ և Նրա մասին խօսեց։

Բայց այնուամենայնիւ իշխանների շատերը նրան հաւատացին, թէ և նրանք էլ փարիսեցիների վախից չէին յայտնում, որպէս զի ժողովրդանոցից չվռնդուին։ Որովհետև նրանք մարդկային փառքն աւելի սիրեցին, քան Աստուծու փառքը։

119.

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՒԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ. —ԳԱԼՍՏԵԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ.—ՀՍԿՈՒՄՆ

Մարկ. ժգ. 1–3 Երբ Յիսուսը դուրս էր գալիս տաճարից, աշակերտներից մինն ասաց նրան.—Վարդապետ,

[1]) Բառացին.—«Տէր, ո՞վ հաւատաց մեր տուած լուրին. և Տիրոջ բազուկը ո՞ւմ յայտնուեցաւ»։ (Եսայի ծգ. 1.)։

[2]) Բառացին.—«Այդ ժողովրդի սիրտը թանձրացաւ, իրենց ականջներով ծանր լսեցին և իրենց աչքերը փակեցին, որ աչքով չտեսնեն երբէք, ականջով չլսեն և սրտով չիմանան, չդառնան (դարձի չգան), որ ես բժշկեմ նրանց։ (Եսայի զ. 10.)։

տես ինչ ընտիր քարերով է շինած և որպիսի հոյակապ շինութիւն է այս տաճարը։ Յիսուսը պատասխան տուեց նրան ու ասաց.—«Տեսնում ես այս շինութիւնը, ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում ձեզ, որ այս բոլորը կքանդուի և այստեղ ոչ մի բան քար քարի վերայ չի մնայ»։

Եւ մինչդեռ նա նստած էր Ձիթենեաց լերան վերայ, տաճարի դիմացը՝ Պետրոսը, Յակոբոսը, Յովհաննէսն ու Անդրիասը հարցրին նրան առանձին.—«Ասա՛ մեզ՝ երբ կլինի այդ և
Մատթ. իդ. 3–7 քո գալստեանդ ու աշխարհիս վերջի նշանն ինչ պէտք է լինի»։ Յիսուսը պատասխանեց տուեց նրանց ու ասաց.—«Զգոյշ կացէք, մի գուցէ ոք մին ձեզ խաբէ, որովհետև շատերը կգան իմ անունով և կասեն թէ ես եմ Քրիստոսը և շատերին կմոլորեցնեն։ Եւ կլսէք պատերազմներ և պատերազմների համբաւներ. զգոյշ կացէք որ չխաբուիք, որովհետև այդ բոլորը պէտք է լինի, բայց դեռ վերջը չէ։ Ազգն ազգի վերայ կբարձրանայ և թագաւորութիւնը՝ թագաւորութեան վերայ. զանազան տեղեր սովեր, մահտարաժամներ և երկրաշարժներ կլինին։

Ղուկ. իա. 11 Երկնքից էլ սոսկալի երևոյթներ և մեծամեծ նշաններ կլինին։

Մատթ. իդ. 8. Ղուկ. իա. 12–18 Սակայն այս բոլորը դեռ ցաւերի սկիզբն է։ Ամենից առաջ իրենց ձեռքերը ձեզ վերայ կդնեն, կսկսեն հալածել, մատնելով ձեզ ժողովրդանոցներին ու բանտերին և տանելով ձեզ թագաւորների ու դատաւորների առաջ՝ իմ ան-

ուան համար։ Եւ այս բաները ձեզ համար վրկայութիւն կլինի։

Արդ ձեր սրտերի մէջ դրէք, որ առաջուց չմտածէք թէ ինչ պէտք է պատասխանէք։ Որովհետև ես ձեզ այնպիսի բերան և իմաստութիւն կտամ, որ ձեր հակառակորդներից և ոչ մինը չի կարող հակառակել կամ պատասխան տալ։

Ձեր ծնողներից ու եղբայրներից, ազգականներից ու բարեկամներից կմատնուիք և ձեզնից միքանիսներդ էլ կսպանուիք։ Եւ իմ անուան համար բոլորին ատելի կլինիք բայց ձեր գլխից մի մազ անգամ չի պակասի։

Մատթ. իդ 10-14 Այն ժամանակ շատերը կդայթակղուին, իրար կմատնեն և իրար կատեն։ Շատ սուտ մարգարէներ դուրս կգան և շատերին կմոլորեցնեն։ Անօրէնութեան շատանալու պատճառով, շատերի սէրը կպակասի։ Բայց ով որ մինչև վերջը համբերէ՝ նա կապրի։ Եւ Արքայութեան Աւետարանը ամբողջ տիեզերքում կքարոզուի՝ բոլոր հեթանոսներին վկայութիւն լինելու համար և դրանից յետոյ միայն կգայ վերջը։

Ղուկ. իա. 20-22 Երբ Երուսաղէմը զօրքերով շրջապատուած տեսնէք, իմացէք որ մօտ է աւերումը։ Այն ժամանակ Հրէաստանում եղողները թող լեռները փախչեն, քաղաքում եղողները թող չհեռանան քաղաքից և շրջակայքում եղողները թող քաղաք չմտնեն, որովհետև այն օրերը վրէժխնդրութեան օրեր են, որ բոլոր գրուածները կատարուին։

Մատթ. իդ 19-21 Բայց վայ յղիներին և ստնտուներին այն օրերում։ Աղօթեցէք, որ ձեր փախուստը ոչ

Ղուկ. իա. 23-26 ձմեռ ժամանակ լինի և ոչ էլ շաբաթ օրով, որովհետև այն ժամանակ այնպիսի մեծ նեղութիւն կլինի երկրի վերայ և բարկութիւն այս ժողովրդի վերայ, որպիսին չէ եղել աշխարհիս սկզբից մինչև այժմ և ոչ էլ կլինի։ Սրի բերանով պէտք է ընկնեն և բոլոր ազգերի մէջ գերի տարուին։ Երուսաղէմը ազգերից ոտնակոխ կլինի, մինչև ժամանակի լրանալը։

Արեգակի, լուսնի և աստղերի մէջ նշաններ կերևան, երկրի վերայ ազգերը կվհատին ու կշուարին, ծովը կաղմկուի և կյուզուի. մարդիկ վախից և աշխարհին գալիք դժբաղդութիւններին սպասելուց՝ վերջին շնչում կլինին, որովհետև երկնքի զօրութիւնները պիտի շարժուին։

Մատթ. իդ. 22-31 Եւ եթէ այս օրերը չկարճուէին, ոչ մի մարմին չէր կարող ապրել, բայց ընտրեալների համար այդ օրերը կըկարճուին։

Այն ժամանակ եթէ մէկն ասէ ձեզ, թէ ահա այստեղ է Քրիստոսը կամ այնտեղ՝ չհաւատաք, որովհետև սուտ Քրիստոսներ և սուտ մարգարէներ դուրս կգան ու մեծամեծ նշաններ ու հրաշքներ կգործեն, որպէս զի եթէ կարելի է ընտրեալներին էլ մոլորեցնեն։

Ահա ձեզ առաջուց եմ ասում։

Եւ այսպէս եթէ ասեն ահա Նա անապատումն է, մի գնաք. և եթէ ասեն, ներսի սենեակներումն է՝ մի հաւատաք։ Ինչպէս փայլա-

կը արևելքից մինչև արևմուտք է փայլատակում, Մարդու Որդու գալուստն էլ այդպէս կըլինի։ Որովհետև որտեղ դիակ կայ ընկած, արծիւներն էլ այնտեղ են ժողովւում։ Շուտով, այն նեղութեան օրերից յետոյ, արեգակը կխաւարի, լուսինն էլ չի տայ իր լոյսը, աստղերն էլ երկնքից կթափուին և երկնքի զօրութիւնները կշարժուին։ Ապա կերևայ երկնքումը Մարդու Որդու նշանը և այն ժամանակ բոլոր ազգերը կրկոծեն և Մարդու Որդուն, զօրութեամբ և մեծ փառքով երկնքի ամպերի վերայ եկած կտեսնեն։

Եւ իւր հրեշտակներին կուղարկէ մեծաձայն փողով, որոնք կհաւաքեն նրա ընտրեալներին չորս հովերից՝ երկրի մի ծայրից մինչև միւս ծայրը»։

Ղուկ. իա. 29-31 Եւ այս առակն ասաց. — «Նայեցէք թզենուն և բոլոր ծառերին. երբ տեսնում էք որ երևում են պտուղներն ու սկսում ծաղկել, իմանում էք որ մօտեցել ամառը է։ Այդպէս էլ դուք, երբ այս ամենը եղած տեսնէք, իմացէք որ մօտեցել է Աստուծու Արքայութիւնը։

Մատթ. իդ 34-36 Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ այս ազգը չի անցնի, մինչև որ այս բոլորը կատարուի։ Երկինքն ու երկիրը կանցնեն, բայց իմ խօսքերը չեն անցի։ Միայն թէ, այն օրն ու ժամը ոչ ոք չգիտէ. ոչ երկնքի հրեշտակները և ոչ Որդին. այլ միայն Հայրը։

Մատթ. իդ 42-44 Արթուն կացէք, որովհետև չգիտէք թէ ձեր Տէրն երբ է գալու։ Դուք գիտէք որ եթէ տա-

նուտէրն իմանար, թէ գողն երբ է գալու, կըհսկէր և թոյլ չէր տայ, որ իւր տունը ծակեն։ Այդ պատճառով դուք էլ պատրաստ կացէք, որովհետև Մարդու Որդին այն ժամին կգայ, որ չէիք սպասում։

Ղուկ. իա. 34-36 Զգոյշ պահեցէք ձեզ, մի գուցէ ձեր սրտերը շուայտութեամբ, արբեցողութեամբ և աշխարհային հոգսերով ծանրանան և մի գուցէ ձեզ այն օրն յանկարծակի հասնի։ Որովհետև նա երկրիս երեսին բնակուածների վերայ որոգայթի պէս կհասնի։ Ուրեմն այսուհետև արթուն կացէք և ամեն ժամանակ աղօթեցէք, որ արժանանաք գալիք դժբաղդութիւններից ազատուելու և Մարդու Որդու առաջ կանգնելու։

Մարկ. ժգ. 35,36, 37 Որովհետև դուք չգիտէք թէ տանտէրը երեկոյեան է գալու թէ՞ կէս գիշերին. հաւախօսին թէ՞ առաւօտեան։ Իսկ ինչ որ ձեզ եմ ասում, ամենքին եմ ասում։—Արթուն կացէք, որպէսզի եթէ յանկարծակի գալու լինի, ձեզ քնած չըգտնի»։

120.

ՏԱՍԸ ԿՈՅՍԵՐԻ ԵՒ ՔԱՆԴԱՐՆԵՐԻ ԱՌԱԿը

Մատթ. իե 1-30 Այն ժամանակ Երկնքի Արքայութիւնը տասը կոյսերին կնմանի, որոնք իրենց լապտերները վերցնելով փեսայի և հարսի առաջ դուրս եկան։ Նրանցից հինգը յիմար էին և հինգը իմաստուն։ Յիմարներն իրենց լապտերները վերց-

ին և հետները ձէթ չվերցրին։ Իսկ իմաստուն-ներն իրենց լապտերների հետ ձէթ էլ վերցրին։ Եւ որովհետև փեսան ուշացաւ, ամենքն էլ թըմ-բեցան ու քնեցին։ Բայց գիշերուան կէսին ձայն լսուեցաւ.— «Ահա փեսան գալիս է, դուրս եկէք նրա առաջ»։

Այն ժամանակ բոլոր կոյսերն էլ վերկացան և իրենց լապտերները պատրաստեցին։ Յիմար-ներն իմաստուններին ասացին.— «Ձեր ձէթից մեզ էլ տուէք, որովհետև մեր լապտերները հանգչելու վրայ են»։

Իմաստունները պատասխանեցին.—«Գուցէ մեր ունեցածը մեզ էլ և ձեզ էլ չբաւականա-նայ, աւելի լաւ է վաճառականների մօտ գնա-ցէք և ձեզ համար ձէթ գնեցէք»։ Երբ նրանք ձէթ գնելու գնացին, փեսան եկաւ, պատրաստ եղողները նրա հետ հարսանիք մտան և դուռը փակուեցաւ։ Յետոյ միւս կոյսերն էլ եկան և ասացին.—«Տէր, տէր, բաց մեզ դուռը»։

Նա էլ պատասխանեց ու ասաց. — «Ճշմա-րիտն եմ ասում, որ ձեզ չեմ ճանաչում»։

Ուրեմն արթուն կացէք, քանի որ ոչ օրը գիտէք և ոչ ժամը։ Որովհետև Նա կվարուի այն մարդու նման, որ օտար երկիր գնալիս, իւր ծառաներին կանչեց և իւր հարստութիւնը նրանց յանձնեց։ Մէկին տուեց հինգ քանքար[1]) մէկին՝ երկու և մէկին՝ մի քանքար. իւրաքանչիւրին իւր կարողութեան չափ և ինքը գնաց։

[1]) Երբ. քանքար կամ տաղանդը (արծաթը)=2000 բուբլուն։

Հինգ քանքար ստացողը գնաց գործադրեց այն և հինգ քանքար էլ աշխատեց։ Երկու քան-քար ստացողն էլ, ուրիշ երկու քանքար աշխա-տեց։ Իսկ մի քանքար ստացողը՝ գնաց, գետի-նը փորեց և իւր տիրոջ տուած արծաթը՝ մէջը թաղեց։

Բաւական ժամանակ անցնելուց յետոյ ծա-ռաների տէրն եկաւ և հաշիւ պահանջեց։ Հինգ քանքար ստացողն եկաւ և աշխատած հինգ քան-քարն էլ հետը բերելով՝ ասաց.—«Տէր, դու ինձ հինգ քանքար տուիր, ահա հինգն էլ աշխատե-ցի»։

Տէրն ասաց նրան.—«Շատ լաւ, բարի և հա-ւատարիմ ծառայ, որովհետև քչի մէջ հաւատա-րիմ եղար, շատի վերայ կնշանակեմ քեզ. գնա և մասնակցիր տիրոջդ ուրախութեանը»։ Երկու քանքար ստացողը մօտենալով՝ ասաց. — «Տէր, դու ինձ երկու քանքար տուիր, ահա երկուսն էլ աշխատեցի»։ Տէրն ասաց նրան. — «Շատ լաւ, բարի և հաւատարիմ ծառայ, որովհետև քչի մէջ հաւատարիմ եղար, շատի վերայ կնշանակեմ քեզ, դու էլ մասնակցիր տիրոջդ ուրախութեանը»։

Մէկ քանքար ստացողն ասաց.—«Տէր, գի-տէի որ դու խիստ մարդ ես, որտեղ չես ցա-նել՝ հնձում ես. և որտեղ չես փռել՝ հաւաքում ես, վախեցայ քեզնից և քանքարդ գետնի տակ պահեցի, ահա. առ տուածդ»։ Տէրը պատասխա-նեց ու ասաց.—«Խարդախ և ծոյլ ծառայ, եթէ գիտէիր որ ես հնձում եմ, որտեղ չեմ ցանել և

հաւաքում եմ՝ որտեղ չեմ փռել, դու պէտք է արծաթս սեղանաւորին տայիր, որ ես գալուս պէս, արծաթս տոկոսով պահանջէի։

Քանքարս վերցրէք դրանից և տասն քանքար ունեցողին տուէք. որովհետև ունեցողին կըտրուի և կաւելանայ, իսկ չունեցողից՝ ունեցածըն էլ կառնուի։ Իսկ այս անպիտան ծառային դրսի խաւարը ձգեցէք, թող այնտեղ լաց լինի և ատամները կըրճատացնէ»։

121.

ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Մատթ. ԺԵ 31-46 Երբ Մարդու Որդին իւր փառքով կգայ և բոլոր հրեշտակներ էլ նրա հետ, այն ժամանակ իւր փառքի աթոռի վերայ կնստի։ Բոլոր ազգերն էլ կժողովուին նրա առաջ և նա նրանց միմեանցից կզատէ այնպէս, ինչպէս հովիւն է զատում ոչխարներին այծերից։ Ոչխարներին իւր աջ կողմը կը կանգնացնէ, իսկ այծերին՝ ձախ։

Այն ժամանակ Թագաւորն իւր աջ կողմը եղածներին կասէ.—«Եկէք իմ Հօր օրհնուածներ և ժառանգեցէք աշխարհիս սկզբից ձեզ համար պատրաստած Արքայութիւնը։ Որովհետև քաղցած էի և կերակրեցիք ինձ. ծարաւ էի՝ խմացրիք. օտար էի և ձեր տունը ընդունեցիք. մերկ էի՝ հագցրիք ինձ. հիւանդ էի՝ խնամեցիք. բանտուած էի՝ ինձ տեսութեան եկաք»։

Այն ժամանակ արդարները կասեն.—«Տէր,

երբ տեսանք քեզ քաղցած և կերակրեցինք. ծարաւ և խմացրինք. երբ տեսանք քեզ օտար և մեր տուն ընդունեցինք և կամ մերկ և հագցրինք. երբ տեսանք քեզ հիւանդ կամ բանտի մէջ և տեսութեան եկանք»։

Այն ժամանակ Թագաւորը պատասխան կըտայ ու կասէ.—«Ճշմարիտն եմ ասում ձեզ, ինչ որ իմ փոքր եղբայրներից մինին արիք, նշանակում է ինձ արիք»։

Յետոյ ձախ կողմը եղածներին կասէ.—«Հեռացէք ինձնից անիծուածներ դէպի յաւիտենական կրակը, որ պատրաստուած է սատանայի և նրա հրեշտակների համար։ Որովհետև քաղցած էի՝ չկերակրեցիք, ծարաւ էի՝ չխմացրիք, օտար էի՝ ձեր տուն չընդունեցիք, մերկ էի՝ չհագցրիք, հիւանդ և բանտուած էի՝ ինձ այցելութեան չեկաք»։

Նրանք էլ կպատասխանեն.—«Տէր, երբ տեսանք քեզ քաղցած կամ ծարաւ, կամ օտար, կամ մերկ, կամ հիւանդ, կամ բանտի մէջ և չըծառայեցինք»։ Այն ժամանակ պատասխան կտայ նրանց ու կասէ.—«Ճշմարիտն եմ ասում ձեզ, ինչ որ այս փոքրիկներից մինին չարիք, նըշանակում է ինձ չարիք»։

Նրանք կերթան յաւիտենական տանջանքը, իսկ արդարները՝ յաւիտենական կեանքը։

122.

ԽԱՉՈՒԵԼՈՒ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ.—ԱՆԵԳՐԻՈՆԻ ԴՈՒՄԱՐՈՒՄԸ.—ՅՈՒԴԱՅԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ

Մատթ. իգ 1-5 Երբ Յիսուսն իւր խօսքերը վերջացրեց՝ աշակերտներին ասաց.—«Գիտէք, երկու օրից յետոյ զատիկ կլինի և Մարդու Որդին կմատնուի խաչը բարձրանալու»։

Այն ժամանակ քահանայապետները, դպիրներն ու ժողովրդի ծերերը Կայիափա քահանայապետի սրահը ժողովեցան և խորհուրդ արին, որ նենգութեամբ բռնեն Յիսուսին ու սպանեն։ Բայց ասում էին.—Միայն ոչ այս ոնին, որպէս զի ժողովրդի մէջ խռովութիւն չընկնի։

Մատթ. իգ 14-16 Այն ժամանակ տասներկուսից մինը—Յուդա Իսկարիովտացին, գնաց քահանայապետների մօտ և ասաց.—«Ինձ ինչ կտաք, որ ես Նրան ձեր ձեռքը մատնեմ»։[1]) Եւ նրանք երեսուն արծաթ կշռեցին։[2]) Սրանից յետոյ Յուդան յարմար ժամանակ էր որոնում, որ Յիսուսին նրանց ձեռքը մատնէ։

---

[1]) Համեմատել մարգ. շարքում № 32-ի հետ։

[2]) Երեսուն արծաթը կամ երեսուն կրկինսատեր արծաթը, որ մեր դրամով անում է մօտ 50 ռուբլի (հաշուելով կրկինսատերը 1 ր. 60 կ.) հին օրէնքով որևէ տարուկի արեան գինն էր համարում. (եթէ եզը մի աղախնի կամ ծառայի խփէց, նրանց տիրոջը երեսուն կրկինսատեր արծաթ պէտք է վճարուի. (Ել. իա. 32.)։ Ըստ մարգարէութեան, Յիսուսն երեսուն արծաթով պէտք է վաճառուէր. տես մարգ. շարքում № 38-ը։

VI

ՁԱՐԲՈՐԴ ԵՒ ՎԵՐՋԻՆ ՁՈՏԻԿ

123.

ՁԱՏԿԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ.—ՁԱՏԿԱԿԱՆ ԸՆԹՐԻՔ.—ԸՆԹՐԻՔԻ ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱԿԸ

Ղուկ. իբ. 7-10 Եկաւ բաղարջակերաց ոնը, երբ ըստ օրէնի զատկական գառը պէտք է մորթուէր։ Յիսուսն ուղարկեց Պետրոսին և Յովհաննէսին ասելով.—«Գնացէք, զատկական ընթրիք պատրաստեցէք մեզ համար, որ ուտենք»։ Նրանք էլ հարցրին.—«Ո՞րտեղ ես կամենում որ պատրաստենք»։ Յիսուսն ասաց.—«Երբ քաղաք կմտնէք, այնտեղ ջրի սափորն ուսին դրած մի մարդ կը-պատահի ձեզ, գնացէք նրա յետևից և մտէք այն տունը՝ ուր նա կմտնի և ասացէք տանտիրոջը.—

Մատթ. իգ. 18 Վարդապետն ասում է, որ իմ ժամանակն հասել է և իմ աշակերտների հետ քեզ մօտ եմ զատիկն անելու։

Ղուկ. իբ. 12-18 Նա ձեզ մի մեծ և զարդարած վերնատուն ցոյց կտայ, այնտեղ պատրաստեցէք»։ Աշակերտները գնացին և ասածի համաձայն գտնելով պատրաստեցին զատկական ընթրիքը։ Երբ ժամը

հասաւ, Յիսուսն իւր տասներկու աշակերտների հետ սեղան նստեց և դառնալով նրանց՝ ասաց. —«Ցանկանալով ցանկացայ չարչարուելուցս առաջ՝ այս զատիկն էլ ձեզ հետ ուտել։ Բայց ասում եմ ձեզ, որ այլ ևս չեմ ուտելու սրանից, մինչև որ Աստուծու Արքայութեան մէջ կատարուի»։

Եւ վերցնելով բաժակը, գոհացաւ և ասաց. —«Առէք այս և բաժանեցէք ձեր մէջ։ Ասում եմ ձեզ, որ այսուհետև որթի բերքից այլ ևս չեմ խմելու, մինչև որ Աստուծու Արքայութիւնը գայ»։

124.

ՈՏՆԱԼՈՒԱՑ.—ՄԱՏՆՈՒԹԵԱՆ ՅԱՑՏՆՈՒԻԼԸ

Յովհ. ԺԳ. 1-21 Զատկի տօնից առաջ Յիսուսը գիտէր, որ այս աշխարհից իւր Հօր մօտ փոխուելու ժամն արդէն հասել է։ Իրեններին, որոնք այս աշխարհից էին և որոնց սիրում էր, մինչև վերջն էլ սիրեց։ Ընթրիքի ժամանակ (սատանան արդէն Յուդա Իսկարիովտացու սրտի մէջ Յիսուսին մատնելու միտքն էր դրել) Յիսուսը գիտենալով որ Հայրն ամեն բան իւր ձեռքը տուեց և թէ ինքը Աստուծուց եկաւ և Աստուծու մօտ է գընում, ընթրիքից վեր կացաւ, վրայի հանդերձը հանեց և մի սրբիչ վերցնելով՝ մէջքին կապեց։ Յետոյ կոնքի մէջ ջուր ածելով, սկսեց աշակերտների ոտքերը լուանալ և կապած սրբիչով սրբել։ Մօտեցաւ Սիմոն Պետրոսին և նա Յիսու-



Յիսուսի մատնութիւնը

սին ասաց.—«Տէր, դու պէտք է լուանաս ոտքերս»։ Յիսուսը պատասխանեց ու ասաց.— «Դու այժմ չգիտես թէ ես ինչ եմ անում, բայց յետոյ կիմանաս»։ Պետրոսն ասաց նրան.«—Դու յաւիտեան չես լուանայ իմ ոտքերը»։ Յիսուսը պատասխանեց.—«Եթէ չլուանամ, դու ինձ հետ բաժին չես ունենայ»։ Սիմոն Պետրոսն ասաց.— Տէր, ոչ միայն ոտքերս, այլ և ձեռքերս ու գլուխս էլ լուայ»։ Յիսուսն ասաց նրան. — «Լուացածին միայն ոտքերն է հարկաւոր լուանալ, որովհետև բոլորովին մաքուր է և դուք մաքուր էք, բայց ոչ ամենքդ»։ Որովհետև նա գիտէր որ Յուդան մատնել է իրեն, այդ պատճառով էլ ասաց, որ դուք մաքուր էք, բայց ոչ ամենքդ։

Երբ նրանց ոտքերը լուաց, իւր հանդերձը հագաւ, նորից սեղան բազմեց ու ասաց.—«Գիտէք ինչ արի ձեզ։ Դուք ինձ վարդապետ և Տէր էք անուանում և ուղիղ էք ասում, որովհետև հենց այդպէս էլ է. և եթէ ես —ձեր Տէրն ու ուսուցիչը—ձեր ոտքերը լուացի, դուք էլ իրար ոտքերը պէտք է լուանաք։ Որովհետև ես ձեզ օրինակ տուեցի, որպէս զի դուք էլ անէք այն, ինչ որ ես ձեզ արի։ Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում ձեզ, որ ոչ ծառան է իւր տիրոջից մեծ, և ոչ էլ Ուղարկուածը՝ իւր Ուղարկողից։ Եթէ դուք գիտէք այս, երանելի էք թէ որ կատարէք։ Ձեր ամենից համար չեմ ասում, որովհետև ես ճանաչում եմ իմ ընտրածներին. բայց թող գը-

ուածը կատարուի. որ ասում է թէ.—Նա որ ինձ հետ հաց կերաւ, ինձ դաւաճանեց։[1]) Այժմեանից եմ ասում ձեզ. քանի որ դեռ չէ եղել. որպէս զի երբ լինի՝ հաւատաք թէ այն ես եմ։ Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում ձեզ, որ իմ ուղարկածներին ընդունողը, ինձ է ընդունում։ Ասելով այս, Յիսուսը հոգով յուզուեց և վկայեց ասելով,—Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում ձեզ, որ ձեզնից մինը ինձ պէտք է մատնի։

Մարկ. ժդ. 21 Մարդու Որդին կերթայ, ինչպէս և գրուած է նրա համար. բայց վայ այն մարդուն, որի ձեռքով կմատնուի Մարդու Որդին. լաւ էր, որ ամենևին չծնուէր այն մարդը։

Յովհ. ժդ. 22 Այն ժամանակ տարակուսած աշակերտներն իրար էին նայում, թէ որի մասին է այդ խօսքը։ Եւ սկսեցին տրտմել և ամեն մէկը նրանցից

Մարկ. ժդ. 19 հարցնել.—«Մի՞թէ ես եմ։ Եւ միւսը՝ մի՞թէ ես եմ»։

Յով. ժդ. 23-26 Աշակերտներից մինը, որին սիրում էր Յիսուսը, նստած էր Յիսուսի մօտ, Սիմոն Պետրոսը նրան աչքով արաւ, որ հարցնէ, թէ ո՞վ է նա.—ո՞ւմ մասին է խօսքը։ Նա էլ Յիսուսի կրծքի վերայ ընկնելով հարցրեց.—«Տէր, ո՞վ է նա»։ Յիսուսը պատասխան տուեց նրան ու ասաց.—«Նա է, որին թրջած հացի պատառը կտամ»։

Եւ պատառը թրջելով տուեց Յուդա Իսկարիովտացուն։

---

[1]) Սաղմոս խ. 10։

Այդ պատառից յետոյ, սատանան նրա մէջ մտաւ։

Մատթ. իզ 25 Յուդան էլ հարցրեց.—«Մի՞թէ ես եմ, վարդապետ»։ Յիսուսը նրան ասաց.—«Դու ասացիր»։

Յովհ. ժզ. 27-30 Եւ աւելացրեց.—«Ինչ որ անելու ես, շուտով արա»։ Սեղան նստողներից և ոչ մինը չը հասկացաւ, թէ այդ ի՞նչու համար ասաց նրան։ Ոմանք կարծեցին թէ որովհետև փողի արկղը Յուդան էր պահում, Յիսուսը նրան ասաց, որ ինչ որ հարկաւոր է մեզ այս տօնին, գնա դնիր և կամ մի բան տուր աղքատներին։

Յուդան պատառն ընդունելով, շուտով դուրս գնաց. արդէն գիշեր էր։

125.

ՄԵԾՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ.—ՄԱՐՄՆԻ ԵՒ ԱՐԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ. — ԲԱԺԱՆՄԱՆ ԽՕՍՔԵՐ.—ՊԵՏՐՈՍԻ ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹԻՒՆԸ.—ՄԷՋՆԱԴԷՊ ՁԷՆՔԻ ՄԱՍԻՆ

Ղուկ. իբ. 24-30 Աշակերտների մէջ հակառակութիւն ընկաւ թէ նրանցից ո՞րն է մեծ համարուելու։ Յիսուսը նրանց ասաց.—«Ազգերի թագաւորներն են տիրում նրանց և որոնք իշխում են նրանց, բարերարներ են կոչւում։ Բայց դուք այդպէս պէտք չլինէք։ Ձեր միջի մեծը, թող փոքրի պէս լինի և առաջնորդը՝ սպասաւորի պէս։ Ո՞վ է մեծը, սեղան նստողը թէ՞ սպասաւորը. չէ՞ որ սեղան նստողը։ Բայց ես ձեր մէջ սպասաւորի պէս եմ։ Դուք էիք, որ փորձութիւններիս մէջ ընկերացաք

ինձ, այդ պատճառով էլ ինչպէս որ Հայրս Արքայութիւն խոստացաւ ինձ, ես էլ ձեզ եմ խոստանում, որ դուք իմ Արքայութեան մէջ իմ սեղանից ուտէք ու խմէք և տասներկու աթոռների վերայ նստելով՝ Իսրայէլի տասներկու ցեղերը դատէք»։

Մատթ. իզ 26-28 Երբ դեռ ընթրում էին նրանք, Յիսուսը հացն առաւ, օրհնեց, կոտրեց և աշակերտներին տալով՝ ասաց. «Առէք կերէք, այս իմ մարմինն է»։ Եւ վերցնելով բաժակը գոհացաւ, տուեց նրանց և ասաց.—«Խմեցէք ամենքդ էլ սրանից, որովհետև այս իմ արիւնն է նոր ուխտի, որ շատերի մեղքերի թողութեան համար է թափւում։

Ղուկ. իբ. 19 Այս իմ յիշատակի համար արէք»։

Յովհ. ժզ. 31-38 Սրանից յետոյ Յիսուսն ասաց.—«Այժմ փառաւորուեցաւ Մարդու Որդին և Աստուած փառաւորուեցաւ Նրանով։ Եթէ Աստուած փառաւորուեցաւ Նրանով, Աստուած էլ նրան իւր անձով կփառաւորէ. և շուտով կփառաւորէ նրան։

Որդեակք իմ, մի փոքր ժամանակ էլ ձեզ հետ եմ։ Ինձ կորոնէք և ինչպէս հրէաներին ասացի,—թէ ուր որ ես գնում եմ դուք չէք կարող գալ.—այժմ էլ ձեզ եմ ասում։ Նոր պատուիրան եմ տալիս ձեզ.—Սիրեցէք միմեանց։ Ինչպէս ես ձեզ սիրեցի, այնպէս էլ դուք սիրեցէք իրար։ Իրարու վերայ սէր ունենալով միայն՝ պէտք է իմանան ամենքը, որ դուք իմ աշակերտներս էք»։

Սիմոն Պետրոսն ասաց նրան.—«Տէր, ո՞ւր

ես գնում»։ Յիսուսը պատասխանեց.—«Ուր որ գնում եմ ես, դու այժմ իմ յետևից գալ չես կարող, բայց յետոյ կգաս իմ յետևից»։ Պետրոսն ասաց.—«Տէր, ինչու այժմ չեմ կարող գալ քո յետևից. ես կեանքս էլ կզոհեմ քեզ համար»։

Ղուկ. իբ. 31-32 Տէրն ասաց.—«Սիմոն, Սիմոն, սատանան ուզեց քեզ[1]) ցորենի նման խարբալել, բայց ես քեզ համար աղօթեցի որ քո հաւատը չպակասի։ Դու ժամանակով դարձի կգաս և եղբայրներիդ կհաստատես»։

Մատթ. իզ 31-32 Եւ դիմելով աշակերտներին՝ ասաց.—«Այս գիշեր, դուք ամենքդ իմ վերաբերմամբ կգայթակղուիք, որովհետև գրուած է—«Կի՛փեմ հովուին և հօտի ոչխարները կցրուին»։[2])

Ղուկ. իբ. 33 Պետրոսը պատասխանեց ու ասաց.—«Տէր, ես պատրաստ եմ քեզ հետ դէպի բանտ ու մահը գնալ։ Եւ եթէ ամենքն էլ գայթակղուին, ես չեմ գայթակղուի»։

Մատթ. իզ. 33

Ղուկ. իբ. 34-38 Բայց Յիսուսը պատասխանեց.—«Պետրէ, այս գիշեր մինչև հաւախօսը, երեք անգամ կուրանաս՝ ասելով որ—«դու ինձ չես ճանաչում»։ Եւ ասաց նրանց.—«Երբ ձեզ առանց քսակի և կօշիկների ուղարկեցի, մի՞թէ որև է բանի կարօտութիւն քաշեցիք»։ Նրանք պատասխանեցին.—«Ո՛չ մի բանի»։ Յիսուսն ասաց.—«Բայց այժմ ով քսակ ունի՝ թող վերցնի. նոյնպէս էլ պարկ։

[1]) Յունարէնում՝ ձ և գ։

[2]) Մարգ. Զաքար. ժգ. 7. տես մարգ. շարքում № 39-ը։

Եւ ով որ սուր չունի, թող իւր հանդերձը ծախէ և իրեն համար սուր գնէ, որովհետև ասում եմ ձեզ, որ ինձ վերայ պէտք է կատարուի այն գրուածը թէ—«անօրէնների հետ համարուեցաւ[1]) որովհետև ինչ որ ինձ համար որոշուած է՝ կատարուելու վերայ է»։

Նրանք ասացին.—«Տէր, ահա այստեղ երկու սուր կայ»։ Յիսուսն ասաց.—«Բաւական են»։

126.

ՀՐԱԺԵՇՏ

ՅԻՍՈՒՍԻ ԽՕՍԱԾ ՎԵՐՋԻՆ ԽՐԱՏՆԵՐԸ, ՅՈՐԴՈՐՆԵՐԸ, ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I.

Յովհ. ժդ. 1-30 Թող չշփոթուին ձեր սրտերը, Աստուծուն հաւատացէք և ինձ հաւատացէք։ Հօրս տանը շատ օթևաններ կան. ապա թէ ոչ, ես ձեզ կասէի՝ թէ գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու։ Եւ եթէ գնամ ու ձեզ համար տեղ պատրաստեմ, դարձեալ կգամ և ձեզ մօտս կառնեմ, որպէս զի ուր ես եմ, դուք էլ այնտեղ լինիք։ Բայց ուր որ գնում եմ գիտէք և ճանապարհն էլ գիտէք»։

Թովմաս ասաց նրան.—«Տէր, չգիտենք թէ ուր ես գնում և ինչպէս կարող ենք ճանապարհն

[1]) Տես մարգ. շարքում № 47-ը։

իմանալ»։ Յիսուսն ասաց նրան. — «Ես եմ ճանապարհը, ճշմարտութիւնն ու կեանքը. ոչ ոք չի կարող Հօրս մօտ գալ՝ եթէ ոչ ինձնով։ Եթէ ինձ ճանաչէիք, իմ հօրս էլ կճանաչէիք. և այսուհետև կճանաչէք նրան»։

Փիլիպպոսն ասաց Նրան.—«Տէր, ցոյց տուր մեզ Հօրը և բաւական է մեզ»։ Յիսուսն ասաց նրան. — «Փիլիպպէ, այսչափ ժամանակ է ձեզ հետ եմ և չճանաչեցիր ինձ։ Ով որ ինձ տեսաւ, նշանակում է Հօրս տեսաւ. և դու ինչու ես ասում, թէ ցոյց տուր մեզ Հօրը։ Մի՞թէ չես հաւատում, որ ես Հօրս մէջ եմ և Հայրս իմ մէջ է։ Այն խօսքերը, որ խօսում եմ ձեզ, ոչ թէ ինձնից եմ խօսում, այլ իմ մէջ բնակած Հայրս է, որ այդ գործերն է գործում։ Հաւատում էք ինձ որ ես Հօրս մէջ եմ և Հայրս իմ մէջ է։ Երէ չեք հաւատում, գոնէ գործերի համար հաւատացէք ինձ։ Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում ձեզ, որ ինձ հաւատացողը, ոչ միայն այն գործերը կգործէ որն ես եմ գործում, այլ և նրանից աւելի մեծերը կգործէ, որովհետև ես Հօրս մօտ եմ գնում։ Եւ իմ անունովս ինչ որ խնդրէք՝ կըկատարեմ այն, որպէս զի Հայրը Որդով փառաւորուի։ Եւ ինչ որ ինձնից խնդրէք՝ կանեմ։ Եթէ ինձ սիրում էք, պատուիրաններս պահեցէք. ես էլ Հօրս կաղաչեմ, որ ուրիշ Մըխիթարիչ տայ ձեզ, որ յաւիտեան ձեզ հետ բընակուի։ Դա ճշմարտութեան Հոգին է, որին այս աշխարհը չի կարող ընդունել, որովհետև չէ տես-

նում նրան և չէ ճանաչում. բայց դուք ճանաչում էք Նրան, որովհետև ձեր մօտն է բնակուում և ձեր մէջը կլինի։ Ձեզ որբ չեմ թողնելու, կգամ ձեզ մօտ։ Մի քիչ ժամանակ էլ և աշխարհն ինձ չի տեսնի, բայց դուք կտեսնէք ինձ, որովհետև ես կենդանի եմ և դուք կենդանի պէտք է լինիք։ Այն օրը դուք կիմանաք, որ ես Հօրս մէջ եմ և դուք իմ մէջ և ես էլ ձեր մէջ։ Նա է իմ պատուիրաններն ընդունողն ու պահողը, որը սիրում է ինձ և Նա, որ ինձ կսիրէ, սիրուած կլինի իմ Հօրից և ես կսիրեմ նրան և նրան կյայտնուիմ»։

Ասաց նրան Յուդան, բայց ոչ Իսկարիովտացին.—«Տէր, ինչպէս է որ դու կամենում ես մեզ յայտնուիլ և ոչ աշխարհին։ Պատասխան տուեց Յիսուսն ու ասաց. —ինձ սիրողը, պէտք է խօսքերս պահէ և Հայրս էլ նրան կսիրէ և մենք նրա մօտ կգնանք և նրա մօտ կօթևանենք։ Ով որ ինձ չէ սիրում, նա իմ խօսքերս էլ չէ պահում. իսկ այն խօսքերը որ լսում էք, ոչ թէ իմս են, այլ ինձ ուղարկող Հօրը։

Այս բաները խօսեցի ձեզ հետ, քանի որ ձեզ մօտ եմ։ Բայց մխիթարիչ Սուրբ Հոգին, որ իմ անունով կուղարկէ Հայրս, Նա ձեզ ամեն բան կուսուցանէ և ինչ որ ձեզ ասացի՝ կյիշեցնէ ձեզ։ Խաղաղութիւն եմ թողնում ձեզ, իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ, բայց ոչ այնպէս, ինչպէս աշխարհն է տալիս։ Ուրեմն թող չվշտանայ սրտերդ և չվախենայ։ Լսեցիք, որ

ասացի ձեզ թէ գնում եմ և դարձեալ պէտք է գամ ձեզ մօտ. եթէ ինձ սիրէիք, պէտք է ուրախանայիք որ ես Հօրս մօտ եմ գնում, որովհետև Հայրս մեծ է ինձնից։ Եւ այժմեանից, դեռ չեղած, ասացի ձեզ որ երբ լինի՝ հաւատաք։ Ձեզ հետ այլևս շատ չեմ խօսելու, որովհետև կգայ այս աշխարհի իշխանը և իմ մէջ բան չի գտնի։ Միայն թէ աշխարհն իմանայ, որ ես սիրում եմ Հօրս և ինչպէս Հայրս ինձ պատուիրեց, այնպէս եմ անում»։

II.

Յովհ. ԺԵ. 1-27 Ես ճշմարիտ որթն[1]) եմ, իսկ մշակն իմ Հայրը։ Ամենայն մի ճիւղ, որ ինձ վրայ է և պտուղ չէ բերում, կտրում է Հայրս։ Իսկ այն ճիւղը որ պտուղ է բերում, մաքրում է նրան, որ աւելի պտղաբեր լինի։ Դուք արդէն սուրբ էք այն խօսքով, որ խօսեցի ձեզ հետ։ Կացէք իմ մէջ և ես ձեր մէջ։ Ինչպէս որ ճիւղն ինքն իրեն չի կարող պտուղ բերել եթէ որթի վերայ հաստատուած չլինի, այնպէս էլ դուք չեք կարող պտուղ բերել եթէ ինձ վերայ հաստատուած չըլինէք։ Ես որթն եմ, իսկ դուք ճիւղերը։ Նա որ հաստատուած է ինձ վերայ և ես էլ նրա վերայ, նա շատ պտուղ կբերի, որովհետև առանց ինձ ոչինչ չէք կարող անել։ Եթէ մինն ինձ վերայ չէ հաստատուած, նա այն դուրս ձգուած

[1]) Խաղողի տունկ, վազ.

ու չորացած ճիւղերին է նման, որոնց ժողովում կրակի մէջ են ձգում ու այրում են։ Եթէ դուք իմ մէջ կենաք և իմ խօսքերն էլ ձեր մէջ մնան, ինչ որ ուզէք՝ խնդրեցէք և կլինի ձեզ։ Հայրս նրանով կփառաւորուի որ դուք շատ պտուղ բերէք և իմ աշակերտները լինիք։ Ինչպէս սիրեց ինձ Հայրս, ես էլ ձեզ սիրեցի. ուրեմն հաստատ կացէք իմ սիրոյ մէջ։ Եթէ իմ պատուիրանները պահէք, իմ սիրոյ մէջ կը կենաք, ինչպէս որ ես իմ Հօրս պատուիրանները պահեցի և Նրա սիրոյ մէջ եմ մնում։

Այս բաները ձեզ հետ խօսեցի, որ իմ ուրախութիւնը ձեր մէջ մնայ և ձեր ուրախութիւնը լցուած լինի։ Այս է իմ պատուէրը, որ դուք իրար սիրէք, ինչպէս ես ձեզ սիրեցի։ Երբ մարդ իւր անձն իւր բարեկամների համար է դնում, սա ամենամեծ սէրն է, որից աւելին չի կարող լինել։ Դուք իմ բարեկամներս էք, եթէ իմ պատուիրանները կատարելու լինէք։ Ես ձեզ ծառայ չեմ անուանում, որովհետև ծառան չը գիտէ, թէ իւր տէրն ինչ է գործում. այլ ձեզ բարեկամ անուանեցի, որովհետև այն ամենը ինչ որ իմ Հօրից լսեցի՝ իմացրի ձեզ։ Ոչ թէ դուք ընտրեցիք ինձ, այլ ես ընտրեցի ձեզ և կարգեցի ձեզ, որ դուք գնաք և պտղաբեր լինիք և ձեր պտուղը մնայ, որպէս զի իմ անունով ինչ որ խնդրէք Հօրից՝ տայ ձեզ։ Միայն այս եմ պատուիրում, որ իրար սիրէք։

Եթէ աշխարհը ձեզ ատեց, իմացէք որ նախ

ինձ ատեց։ Եթէ դուք այս աշխարհից լինէիք, աշխարհն իրենները կսիրէր, բայց որովհետև դուք այս աշխարհից չէք, այլ ես ընտրեցի ձեզ այս աշխարհից, այդ պատճառով էլ աշխարհն ատում է ձեզ։ Յիշեցէք այն խօսքը, որ ասացի ձեզ թէ ծառան մեծ չէ իւր տիրոջից. եթէ ինձ հալածեցին ձեզ էլ կհալածեն. եթէ իմ խօսքը պահեցին, ձերն էլ կպահեն։ Բայց այս ամենը կանեն ձեզ իմ անուանս համար, որովհետև ինձ Ուղարկողին չճանաչեցին։ Եթէ ես եկած ու նրանց հետ խօսած չլինէի, նրանք մեղք չէին ունենայ. բայց այժմ իրենց մեղքին ներում չունին։ Ինձ ատողը, իմ Հօրս է ատում։ Եթէ այն գործերը, որ ուրիշ ոչ ոք գործած չէ, նրանց մէջ գործած չլինէի, նրանք մեղք չէին ունենայ. բայց այժմ տեսան ու ատեցին թէ՛ ինձ և թէ՛ Հօրս։ Եւ այսպիսով կատարուեց նրանց օրէնքի մէջ գրուած այն խօսքը թէ,—զուր տեղն ինձ ատեցին։ Բայց երբ Մխիթարիչը գայ, որ ես Հօրից կուղարկեմ ձեզ—այն ճշմարտութեան Հոգին, որ Հօրից է բղխում—Նա պէտք իմ մասին վկայէ և դուք էլ կվկայէք, որովհետև դուք հենց սկզբից ինձ հետ էք եղել։

Յովհ. ԺԶ. 1-33 Այս բաները ձեզ հետ խօսեցի, որ չդայթակղուիք։ Իրենց ժողովարաններից կարտաքսեն ձեզ. և կգայ ժամանակ, որ ձեզ սպանողը պէտք է կարծէ, թէ Աստուծուն պաշտօն է մատուցանում։ Եւ այս բաները պէտք է անեն ձեզ, որովհետև ոչ Հօրը ճանաչեցին և ոչ ինձ։ Ես ձեզ

հետ այս բաներն այն պատճառով խօսեցի, որ երբ ժամանակը գայ՝ յիշէք, որ ես արդէն ասել եմ ձեզ։

Ես այս բաներն սկզբից չասացի ձեզ, որովհետև ձեզ հետ էի։ Սակայն այժմ ես ինձ Ուղարկողի մօտ եմ գնում. և ձեզնից ոչ մինը չէ հարցնում ինձ, թէ՝ ուր ես գնում։ Բայց որովհետև այս բաները ձեզ հետ խօսեցի, այդ պատճառով էլ ձեր սրտերը տրտմութեամբ լցուեցաւ։ Բայց ես ճշմարիտն եմ ասում ձեզ, որ լաւ է ձեզ համար, եթէ ես գնամ, որովհետև եթէ ես չգնամ, Մխիթարիչն էլ չի գայ ձեզ մօտ. իսկ եթէ գնամ, Նրան ձեզ մօտ կուղարկեմ։ Եւ երբ Նա գայ՝ այս աշխարհին կյանդիմանէ մեղքի, արդարութեան և դատաստանի համար։ Մեղքի համար, որ ինձ չեն հաւատում. արդարութեան համար՝ որ ես Հօրս մօտ եմ գնում և էլ չէք տեսնի ինձ. և դատաստանի համար՝ որ այս աշխարհի իշխանը դատապարտուած է։ Դեռ էլի շատ բան ունիմ ասելու ձեզ, բայց այժմ չէք կարող տանիլ։ Իսկ երբ ինքը՝ Ճշմարտութեան Հոգին գայ, նա ամենայն ճշմարտութեամբ կառաջնորդէ ձեզ, որովհետև Նա ոչ թէ իրենից պէտք է խօսի, այլ ինչ որ լսէ՝ այն պէտք է խօսի ու գալու բաները պատմէ ձեզ։ Նա ինձ կփառաւորէ, որովհետև իմ բաներից կառնի ու կպատմէ ձեզ։ Այն ամենը ինչ որ Հայրս ունի՝ իմս է, այդ պատճառով ասացի ձեզ, որ իմ բաներից կառնի ու ձեզ կպատմի։

Մի փոքր ժամանակից յետոյ այլևս ինձ չէք տեսնի. և մի փոքր ժամանակից յետոյ նորից կտեսնէք ինձ, որովհետև ես Հօրս մօտ եմ գնում»։

Աշակերտներից ոմանք ասում էին իրար.— «Ի՞նչ է այդ, որ ասում է, թէ մի փոքր ժամանակից յետոյ ինձ չէք տեսնի և մի փոքր ժամանակից յետոյ՝ նորից կտեսնէք ինձ. և թէ — ես Հօրս մօտ եմ գնում»։ Եւ ասում էին.—«Ի՞նչ է նշանակում այդ «մի փոքր ժամանակից յետոյ-ն», չգիտենք թէ ինչ է խօսում»։

Յիսուսն իմանալով որ կամենում են իրեն հարցնել, ասաց նրանց.—«Այդ՞ պատճառով էք իրար հարցնում, որ ասացի թէ մի փոքր ժամանակից յետոյ ինձ չէք տեսնի և մի փոքր ժամանակից յետոյ նորից կտեսնէք ինձ։ Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում ձեզ, որ դուք լաց կլինէք և կողբաք, բայց աշխարհս կուրախանայ. դուք կտրտմէք, սակայն ձեր տրտմութիւնը ուրախութեան կփոխուի։ Կինն երբ ծնելու վրայ է՝ տրտում է լինում, որովհետև ժամը հասած է, բայց երբ ծնւում է մանուկը, ուրախութիւնից էլ չէ յիշում առաջուան նեղութիւնը, որովհետև մարդ ծնեց աշխարհ։ Այդպէս էլ դուք, այժմ տրտում էք, բայց ես ձեզ էլի կտեսնեմ և ձեր սրտերը կուրախանան և ձեր ուրախութիւնը ոչ ոք չի հանի ձեզնից։ Այն օրն արդէն դուք այլևս ինձնից ոչինչ չէք հարցնի։ Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում ձեզ, որ իմ անունով ինչ որ խնդրէք

Հօրից կտայ ձեզ։ Մինչև օրս իմ անունով ոչինչ չխնդրեցիք. խնդրեցէք և կստանաք, որ ձեր ուրախութիւնը կատարեալ լինի։ Մինչև օրս ձեզ հետ առակներով խօսեցի, բայց ժամանակ կգայ, երբ ձեզ հետ էլ առակներով չեմ խօսի, այլ յայտնապէս կպատմեմ ձեզ Հօրս մասին։ Այն օրն արդէն ոչ թէ ես կխնդրեմ Հօրից ձեզ համար, այլ դուք կխնդրէք իմ անունով, քանի որ ինքը Հայրս սիրում է ձեզ, որովհետև դուք ինձ սիրեցիք ու հաւատացիք թէ ես Աստուծուց ելայ։ Հօրից ելայ և աշխարհ եկայ, նորից թողնում եմ աշխարհը և Հօրս մօտ եմ գնում»։

Աշակերտներն ասացին նրան.—«Ահա այժմ յայտնապէս ես խօսում. և ոչ մի առակ չես ասում։ Այժմ իմացանք որ Դու ամեն բան գիտես և կարիք չունիս, որ մինը քեզ հարցնի, ահա սրանով ենք իմանում, որ դու Աստուծուց ելար»։

Պատասխան տուեց նրանց Յիսուսն ու ասաց.—«Այժմ էք հաւատում. ահա ժամանակ կգայ և հէնց եկել է, որ ամենքդ էլ ձեր տեղերը կցրուիք և ինձ մենակ կթողնէք. բայց ես մենակ չեմ, որովհետև հայրս ինձ հետ է։

Այս բաները ձեզ հետ խօսեցի, որ ինձնով խաղաղութիւն ունենաք։ Աշխարհում նեղութիւն կունենաք, բայց քաջացէք, որովհետև ես յաղթեցի աշխարհին»։

127.

ՅԻՍՈՒՍԻ ՎԵՐՋԻՆ ԱՂՕԹՔԸ.—ՄԱՂԹԱՆՔՆԵՐ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ, ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐԻ ԵՒ ԱՄԵՆՔԻ ՀԱՄԱՐ

Յովհ. ԺԷ. 1-26 Այս խօսքերից յետոյ, Յիսուսն իւր աչքերը դէպի երկինք բարձրացրեց և ասաց.—«Հայր, ժամանակն հասել է, փառաւորիր Որդուդ, որ քո Որդին էլ քեզ փառաւորէ, որովհետև Դու նրան իշխանութիւն տուիր ամեն մարմնի վերայ, որ յաւիտենական կեանք տայ այն ամենին՝ որ իրեն տուիր։ Այս է յաւիտենական կեանքը, որ ճանաչեն Քեզ—միմեան ճշմարիտ Աստուծուդ և Քո ուղարկած Յիսուս Քրիստոսին։ Ես քեզ փառաւորեցի երկրի վերայ և այն գործերը, որ տուիր ինձ անելու՝ կատարեցի։ Եւ այժմ Հայր, փառաւորիր ինձ Քեզ մօտ այն փառքով, որ ունէի Քեզ մօտ՝ դեռ աշխարհի լինելուցն առաջ։ Քո անունը յայտնեցի այն մարդկանց, որոնց տուիր ինձ աշխարհից։ Քոնն էին և ինձ տուիր և նրանք պահեցին խօսքերդ։ Այժմ իմացան, որ այն ամենը որ ինձ տուիր՝ ես նրանց տուի և նրանք էլ ընդունեցին և ճշմարտութեամբ իմացան, որ ես Քեզնից ելայ և հաւատացին՝ թէ Դու ուղարկեցիր ինձ։

Ես աղաչում եմ ոչ թէ աշխարհի համար, այլ նրանց համար, որոնց տուիր ինձ, որովհետև Քոնն են նրանք։ Եւ ինչ որ իմս է, այն բոլորը Քոնն է. և ինչ որ Քոնն է՝ այն իմս է. և ես

փառաւորուած եմ նրանցով։ Ես այլ ևս աշխարհի մէջ չեմ, բայց նրանք աշխարհի մէջ են. և ես գալիս եմ Քեզ մօտ։ Հայր, Քո անունով սուրբ պահիր նրանց, որոնց տուիր ինձ, որպէս զի մէկ լինին, ինչպէս որ մենք մէկ ենք։ Երբ ես նրանց հետ աշխարհումն էի, ես էի պահում նրանց Քո անունով՝ որով տուիր ինձ և պահեցի. և նրանցից ոչ մինը չկորաւ, բացի այն կորբստեան որդուց, որ գրուածը կատարուի։ Այժմ գալիս եմ Քեզ մօտ և այս բաներն աշխարհումն եմ խօսում, որպէս զի իմ ուրախութիւնը նրանց մէջ կատարեալ լինի։ Ես Քո խօսքդ նրանց տուի և աշխարհս նրանց ատեց, որովհետև նրանք աշխարհից չեն, ինչպէս և ես չեմ աշխարհից։ Չեմ խնդրում, որ սրանց աշխարհից վերցնես, այլ որ սրանց չարիցը պահես։ Սրանք այս աշխարհից չեն, ինչպէս և ես չեմ աշխարհից։ Քո ճշմարտութեամբ սրբիր սրանց, որովհետև Քո խօսքդ ճշմարտութիւն է։ Ինչպէս որ Դու ինձ աշխարհ ուղարկեցիր, ես էլ սրանց աշխարհ ուղարկեցի։ Եւ ես սրանց համար սրբում եմ անձս, որպէս զի սրանք էլ ճշմարտութեամբ սրբուին։

Ո՛չ միայն սրանց համար եմ աղաչում, այլ և սրանց խօսքով բոլոր ինձ հաւատացողների համար, որ ամենքն էլ մէկ լինին, ինչպէս Դու Հայր իմ մէջս և ես Քո մէջդ, այնպէս էլ նրանք մեր մէջը՝ մէկ լինին, որպէս զի աշխարհն հաւատայ որ Դու ուղարկեցիր ինձ։

Այն փառքը, որ տուիր ինձ, ես սրանց տուի,

որ մէկ լինին, ինչպէս որ մենք մէկ ենք։ Ես սրանց մէջ և Դու իմ մէջ, որ իրենք կատարեալ լինին միութեան մէջ և աշխարհն իմանայ որ Դու ուղարկեցիր ինձ և սիրեցիր սրանց, ինչպէս որ ինձ սիրեցիր։ Հայր, որոնց Դու տուիր ինձ, կամենում եմ որ ուր ես եմ՝ դրանք էլ ինձ հետ լինին, որպէս զի տեսնեն այն փառքը, որ ինձ տուիր, որովհետև աշխարհի սկզբից սիրեցիր ինձ։ Հայր, արդարև աշխարհը Քեզ չճանաչեց, բայց ես Քեզ ճանաչեցի և սրանք էլ ճանաչեցին, որ Դու ուղարկեցիր ինձ։ Ես Քո անունը սրանց ճանաչեցրի և պէտք է ճանաչեցնեմ, որ այն սէրը՝ որով Դու ինձ սիրեցիր, նրանց մէջ լինի և ես էլ նրանց մէջ»։

Յովհ. ԺԴ. 31. Եւ դառնալով աշակերտներին՝ ասաց.— «Դէհ, վեր կացէք, գնանք այստեղից»։

128.

ՅԻՍՈՒՍԸ ԳԵԹՍԵՄԱՆԻ ՊԱՐՏԻԶՈՒՄ

Մատթ. ԻԶ 30-36 Յովհ. ԺԸ. 1 Սեղանն օրհնելուց յետոյ, Յիսուսը վեր կացաւ սեղանից և իւր աշակերտների հետ Կեդրոնի ձորի միւս կողմն անցնելով՝ Գեթսեմանի կոչուած պարտէզը մտաւ։

Մատ. ԻԶ. 36-44 Եւ դառնալով աշակերտներին ասաց.— «Նրստեցէք այստեղ, մինչև որ ես գնամ ու աղօթեմ»։ Եւ առնելով իւր հետ Պետրոսին և Զեբեթիայի երկու որդոց, սկսեց տրտմել և վշտանալ։ Այն ժամանակ ասաց նրանց.— «Անձս մահու չափ

ՅԻՍՈՒՍԸ ԳԵԹՍԵՄԱՆԻ ՊԱՐՏԻԶՈՒՄ

արտում է. կացէք այստեղ և արթուն մնացէք ինձ հետ»։ Եւ մի փոքր առաջ անցնելով՝ ընկաւ երեսի վերայ, սկսեց աղօթել՝ ասելով.—«Հայր, եթէ հնարէ թող այս բաժակն անցնի ինձնից, բայց ոչ թէ ինչպէս ես եմ կամենում, այլ ինչպէս Դու»։ Եկաւ աշակերտների մօտ և նրանց քնած գտնելով՝ Պետրոսին ասաց.—«Այդպէս ուրեմն, չկարողացաք գոնէ մի ժամ արթուն մնալ ինձ հետ։ Արթուն կացէք և աղօթեցէք որ փորձութեան մէջ չընկնէք. հոգին յօժար է, բայց մարմինս տկար։[1]) Դարձեալ, երկրորդ անգամ գնաց, աղօթեց ու ասաց.—«Հայր իմ, թող այս բաժակն անցնի ինձնից, իսկ եթէ ոչ՝ կխմեմ. թող Քո կամքը լինի»։ Եւ նորից գալով՝ նրանց քնած գտաւ, որովհետև նրանց աչքերը ծանրացած էին։ Թողեց նրանց ու գնաց, երրորդ անգամ աղօթեց ու նոյն բանն ասաց։

Ղուկ. իբ. 43-44 Եւ երկնքից հրեշտակ երևեցաւ և զօրացնում էր Յիսուսին. և Նա սաստիկ նեղութեան մէջ ընկնելով՝ աւելի ջերմեռանդութեամբ էր աղօթում և քրտինքն արեան մեծ կաթիլների նման ոլոռն-ոլոռն թափւում էր նրա ճակատից։

Մատ. իգ. 45-46 Այն ժամանակ աշակերտների մօտ գալով՝ ասաց նրանց.—«Այսուհետև քնեցէք ու հանգըստացէք, որովհետև ահա հասաւ ժամը և Մարդու Որդին մեղաւորների ձեռքը կմատնուի։ Վեր կացէք, հեռանանք այստեղից, որովհետև ահա մօտենում է մատնիչը»։

[1]) Յունարէնում—«Հոգին յօժար է, բայց մարմինը տկար»։

Յովհ. ժբ. 2-3 Այն տեղը (Գեթսեմանի պարտէզը) Նրան մատնող Յուդան էլ գիտէր, որովհետև Յիսուսն ու իւր աշակերտները շատ անգամ էին ժողովուել այնտեղ։ Յուդան վերցնելով իւր հետ զինուորների մի գունդ և քահանայապետների ու փարիսեցիների սպասաւորների մի բազմութիւն, ջահերով լապտերներով ու զէնքերով մտաւ պարտէզը։

Մատթ. իգ 48-49 Մատնիչը նշան էր տուել նրանց և ասել.—«Որին ես համբուրեմ նա է—նրան բռնեցէք»։ Եւ մօտենալով Յիսուսին՝ ասաց.—«Ողջոյն քեզ վարդապետ»։ Եւ համբուրեց նրան։

Ղուկ. իբ. 48 Բայց Յիսուսն ասաց նրան.—«Յուդա, համբուրելով ես մատնում Մարդու Որդուն»։

Յովհ. ժբ. 4-9 Եւ տեսնելով իւր վերայ եկող ամբոխը՝ առաջներն ելաւ ու ասաց.—«Ո՞ւմ էք ուզում»։ Նրանք պատասխանեցին.—«Յիսուս Նազովրեցուն»։ Յիսուսն ասաց.—«Ես եմ»։ Նրան մատնող Յուդան էլ նրանց հետ էր կանգնած։

Երբ նրանց ասաց թէ Ես եմ, նրանք խսկոյն ետ-ետ գնացին ու գետնի վերայ ընկան։ Յիսուսը նորից հարցրեց նրանց.—«Ո՞ւմ էք ուզում»։ Նրանք ասացին.—«Յիսուս Նազովրեցուն»։ Յիսուսը պատասխանեց.—«Ես արդէն ասացի ձեզ, որ ես եմ. եթէ ինձ էք ուզում, դրանց թողէք որ գնան»։ Որ կատարուի իւր ասած այն խօսքը թէ՝ որոնց ինձ տուիր, նրանցից ոչ մէկին էլ չկորցրի։

Մատթ. իգ 50 Այդ ժամանակ մօտեցան, ձեռք խփեցին Յիսուսին ու բռնեցին նրան։

Յովհ. ժբ. 10 Բայց Սիմոն Պետրոսը, որ սուր ունէր,

դուրս քաշեց և խփելով քահանայապետի ծառային՝ կտրեց նրա աջ ականջը։ Այդ ծառայի անունը Մաղքոս էր։

Մատթ. իզ. 52-54 Այն ժամանակ Յիսուսն ասաց Պետրոսին.— «Սուրդ դիր տեղը, որովհետև սուր վերցնողները՝ սրով էլ կմեռնեն։ Մի՞թէ կարծում ես, որ չեմ կարող Հօրս աղաչել, որ այստեղ աւելի քան տասներկու գունդ հրեշտակներ հասցնէ ինձ։ Հապա էլ ինչպէս պէտք է կատարուի գրուածը. չէ՞ որ այս բանները պէտք է լինեն»։

Ղուկ. իբ. 51 Եւ մօտենալով ծառայի ականջին՝ բժշկեց։

Մատթ. իզ. 55-56 Այն ժամանակ Յիսուսն ասաց ամբոխին.— «Կարծէք թէ աւազակ բռնելու էք եկել՝ սրերով ու բրերով։ Չէ՞ որ միշտ ձեզ հետ տաճարում նստած քարոզում էի, ի՞նչու այն ժամանակ չբռնեցիք ինձ»։ Բայց այս ամենն եղաւ, որ մարգարէների գրուածները կատարուին։ Այն ժամանակ բոլոր աշակերտներն էլ թողին Նրան ու փախան։

129.

ՅԻՍՈՒՍԸ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆԵՐԻ ԱՌԱՋ. — ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՑՈՒԹԻՒՆԸ

Յովհ. իբ. 12 Զինուորները, հազարապետն ու հրէաների ծառաները Յիսուսին բռնեցին ու կապեցին։

Մարկ. իզ. 51-52 Այդ միջոցին, մերկ մարմնի վերայ ծածկոց ձգած մի երիտասարդ հետևում էր Յիսուսին։ Զինուորները նրան էլ էին ուզում բռնել, բայց

նա իւր ծածկոցը նրանց ձեռքը թողնելով, միանգամայն մերկ՝ փախաւ նրանցից։[1])

Յովհ. իբ. 13, 24, 14 Յիսուսին նախ Աննայի մօտ տարան, որ այն տարուան քահանայապետ Կայիափայի անեբրն էր։ Իսկ Աննան էլ նրան կապած Կայիափա քահանայապետի մօտ ուղարկեց։

Սա այն Կայիափան էր, որը հրէաներին խորհուրդ տուեց թէ՝ աւելի լաւ է մի մարդ մեռնի ժողովուրդի համար։

Մատթ. իզ. 57 Յիսուսին երբ Կայիափա քահանայապետի մօտ բերին, այնտեղ արդէն հաւաքուած էին դպիրներն ու ծերերը։

Մարկ. իդ. 55-61 Քահանայապետներն ու ամբողջ ատեանը, Յիսուսի դէմ վկայութիւն էին որոնում, որ նրան սպանեն, բայց չէին գտնում։ Շատ սուտ վկաներ[2]) սկսեցին վկայութիւններ տալ, բայց այդ վկայութիւններն իրար չէին բռնում։ Վկաներից ոմանք վեր կացան ու սուտ վկայելով ասացին.—«Մենք լսեցինք դրանից որ ասում էր թէ, ես այդ ձեռագործ տաճարը կքանդեմ և երեք օրում ուրիշ անձեռագործ տաճար կշինեմ»։ Սակայն այս վկայութիւնն էլ յարմար չեկաւ։ Այն ժամանակ քահանայապետը ոտքի կանգնելով Յիսուսին հարցրեց.—«Արդեօք պատասխան չե՞ս տայ. ի՞նչ են վկայում սրանք քո դէմ»։ Իսկ նա լուռ էր և չէր պատասխանում։

---

1) Ընդհանրապէս կարծում է, որ այդ երիտասարդը Մարկոս Աւետարանիչն էր։

2) Տես մարգ. շարքում № 40.

Յովհ. ԺԸ. 15-16 Սիմոն Պետրոսն ու մի ուրիշ աշակերտ (Յովհաննէսը) հետևում էին Յիսուսին։ Միւս աշակերտը ծանօթ լինելով քահանայապետի հետ, Յիսուսի յետևից ինքն էլ քահանայապետի դաւիթն էր մտել։ Պետրոսը կանգնած էր դուրսը՝ դռան առաջ. քահանայապետին ծանօթ աշակերտը դռնապանին խնդրեց և Պետրոսին էլ ներս մտցրեց։

Յովհ. ԺԸ. 18, 17, 19-23 Այնտեղ կանգնած ծառաներն ու սպասաւորները ցուրտ լինելու պատճառով կրակ էին արել և տաքանում էին. Պետրոսն էլ նրանց հետ սկսեց տաքանալ։ Այդ միջոցին, մի աղջիկ, որ դռնապանուհին էր, Պետրոսին ասաց.—«Մի՞թէ դու էլ այն մարդու աշակերտներից ես»։ Պետրոսն ասաց.—«Ո՛չ»։

Իսկ Աստեղում, քահանայապետը դիմեց Յիսուսին և հարցրեց իւր աշակերտների ու վարդապետութեան մասին։ Յիսուսը պատասխանեց նրան.—«Ես աշխարհին յայտնի խօսեցի, ես միշտ ժողովարաններում և տաճարումն էի ուսուցանում ուր ամեն տեղից հրէաներ էին հաւաքւում և ոչ մի բան ծածուկ չեմ խօսել։ Ինչո՞ւ ես ինձ հարցնում. լսողներին հարցրու թէ ես ինչ եմ խօսել. նրանք գիտեն թէ ես ինչ եմ ասել»։ Երբ նա այդ ասաց, սպասաւորներից մինը, որ կանգնած էր այնտեղ, ապտակեց Յիսուսին՝ ասելով.—«Քահանայապետին այդպէ՞ս ես պատասխանում»։ Յիսուսը նրան ասաց.—«Եթէ չար խօսեցի, վկայիր չարի համար, իսկ եթէ բարի ասացի, էլ ինչո՞ւ ես խփում ինձ»։

Մատթ. ԻԶ 63-65 Քահանայապետն հարցրեց.—«Երդուեցնում եմ քեզ կենդանի Աստուծով որ ասես մեզ, թէ դո՞ւ ես արդեօք Աստուծու Որդի Քրիստոսը»։ Յիսուսն ասաց.—«Դու ասացիր»։ Բայց ասում եմ ձեզ, որ այսուհետև Մարդու Որդուն զօրութեան աջ կողմը նստած և երկնքի ամպերի վերայ եկած կտեսնէք»։ Այն ժամանակ քահանայապետն իւր շորերը պատառեց ու ասաց.—«Հայհոյեց. մեզ էլ ինչ հարկաւոր են վկաներ. ահա հէնց այժմ լսեցինք դրա հայհոյութիւնը։ Ի՞նչ է ձեզ հաճոյ» Նրանք պատասխան տուին ու ասացին.—«Մահապարտ է»։

Մատթ. ԻԶ 71-75 Պետրոսին, որ այդ ժամանակ դուրս էր եկել դաւթից և դռան մօտ էր կանգնել, մի ուրիշ կին տեսաւ, որը դառնալով այնտեղ եղողներին՝ ասաց.—«Սա էլ Յիսուս Նազովրեցու հետն էր»։ Պետրոսը դարձեալ ուրացաւ երդմամբ ու ասաց.—«Ես չեմ էլ ճանաչում այն մարդուն»։

Մի փոքր ժամանակից յետոյ, այնտեղ եղողները մօտեցան Պետրոսին ու ասացին.—«Ցիրաւի դու նրանցից ես, որովհետև հէնց արտասանութիւնից էլ երևում է, որ Գալիլիացի ես»։ Այն ժամանակ Պետրոսն սկսեց անիծել ու երդուել, որ այն մարդուն չէ ճանաչում. և իսկոյն աքաղաղը կանչեց։

Պետրոսը յիշեց Յիսուսի այն խօսքը թէ, մինչև հաւախօսը՝ երեք անգամ կուրանաս ինձ։ Եւ հեռանալով այնտեղից՝ դառն արտասուքով լաց եղաւ։

Մատթ. իզ 67 Վ.ճիռն արձակելոց յետոյ, թքեցին Յիսուսի երեսին և սկսեցին բռունցքով ծեծել ու ապտակահարել։

Ղուկ. իբ. 64-65 Ոմանք էլ ծածկելով նրա աչքերը, խփում էին երեսին և ծաղրելով հարցնում. — «Հապա մարգարէացիր, ո՞վ խփեց քեզ»։ Եւ ուրիշ շատ հայհոյանքներ էին թափում նրա գլխին»։[1])

130.

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺՈՂՈՎԻ ՎՃԻՌԸ.—ՅԻՍՈՒՍԸ ՊԻՂԱՏՈՍ ԴԱՏԱՒՈՐԻ ԵՒ ԱՊԱ ՀԵՐՈՎԴԷՍԻ ԱՌԱՋ

Ղուկ. իբ. 66-71 Առաւօտեան, ժողովրդի ծերերը, քահանայապետներն ու դպիրները Յիսուսին իրենց Ատեանը (Սինեդրիոնը) տարան և ասացին. — «Եթէ դու ես Քրիստոսը, ասա մեզ»։ Յիսուսն ասաց.—Եթէ ասեմ ձեզ, դուք չէք հաւատայ և եթէ մի բան էլ հարցնելու լինիմ, պատասխան չէք տալու և չէք էլ արձակելու ինձ։ Սրանից յետոյ Մարդու Որդին զօրութեան աջ կողմը պէտք է նստի»։ Եւ ամենքն էլ ասացին.—«Ուրեմն Դու ես Աստուծու Որդին»։ Նա էլ պատասխանեց.—«Դուք արդէն ասում էք որ ես եմ»։ Եւ նրանք ասացին.—«Էլ մեզ ինչ վկայութիւն է հարկաւոր, հէնց ինքներս լսեցինք իւր բերանից»։

Մարկ. ժե. 1 Եւ քահանայապետները ծերերի ու դպիրների հետ և ամբողջ ատեանն էլ խորհուրդ արին,

[1]) Տես մարգ. շարքում № 42

և Յիսուսին կապելով տարան Պոնտիոս Պիղատոսի[1]) ձեռքը մատնեցին։

Յովհ. ժը. 28-38 Իրենք ապարանքը չմտան որ չպղծուին, որպէս զի զատիկն ուտեն։ Ուստի և Պիղատոսն ինքը դուրս եկաւ նրանց առաջ և ասաց.—«Ի՞նչ գանգատ ունիք այս մարդու դէմ»։ Նրանք պատասխանեցին.—Եթէ այս մարդը չարագործ չըլինէր, նրան քո ձեռքը չէինք մատնի»։ Պիղատոսն ասաց.—«Տարէք սրան ու ինքներդ ձեր օրէնքով դատեցէք»։ Հրէաներն ասացին.—«Մեզ մարդ սպանելու իրաւունք չէ տուած»։ Եւ կատարուեց Յիսուսի այն խօսքը որ ասաց՝ ցոյց տալով թէ ինքն ինչ մահով պէտք է մեռնէր։ Պիղատոսը նորից ապարանք մտաւ, Յիսուսին կանչեց ու ասաց.—«Դո՞ւ ես հրէից թագաւորը»։

---

[1]) Պիղատոսի իսկական անունն էր Լուկիոս Պոնտիոս Պիղատոս։ Աւետարանների հայ թարգմանութեան մէջ յիշւում է «Պոնտացի» Պիղատոս, անունով, որ շատերին կարծել է տուել թէ Պիղատոսը Ասիայի Պոնտոս նահանգից էր և կամ իտալիայի Պոնտիա կղզուց. բայց սա թիւրիմացութիւն է։ Ճիշտն այն է որ Պիղատոսը Իսպանիայի Սիվիլիա քաղաքից էր, Հռովմայեցիներին յայտնի Պոնտիոսների ազգից և Մարկոս Պոնտիոս Պիղատոսի որդին էր։ Նրա անունը Լուկիոս էր, Պիղատոսը նրա ընտանիքին տրուած մականունն էր, որ նշանակում է Դատաւոր կամ Նետաւոր։

Լուկիոս Պոնտիոսը զինուորական ծառայութեան մէջ առաջնանալով, Տիբերիոս կայսեր Արքունիքի պալատականների շարքն անցաւ և ամուսնացաւ Օդոստոս Ոկտաւիանոս կայսեր Կլաւդիա Պրոկուլա անունով թոռան հետ։ Ամուսնութիւնից յետոյ Տիբերիոս կայսրը նրան, իբրև փեսայի, աւելի առաջացնելու համար Հրէաստանի դատաւոր նշանակեց։ Ինչպէս ժամանակակիցները պատմում են. հրէաները նրան չէին սիրում իւր կաշառակերութիւնների, գործած կամայական սպանութիւնների, անգթութիւնների և հարբստահարութիւնների պատճառով։

Յիսուսը պատասխանեց. — «Դու այդ քեզնից ես ասում թէ ուրիշներն ասացին քեզ իմ մասին»։ Պիղատոսն ասաց, — «Մի՞թէ ես հրէայ եմ. քո ազգն ու քահանայապետները մատնեցին քեզ իմ ձեռքը. ի՞նչ ես արել»։ Յիսուսը պատասխանեց.—«Իմ Արքայութիւնն այս աշխարհից չէ, եթէ Արքայութիւնս այս աշխարհից լինէր, իմ սպասաւորները կը կռուէին և թոյլ չէին տայ որ ես հրէից ձեռքը մատնուիմ։ Բայց այժմ իմ Արքայութիւնն այստեղից չէ»։ Պիղատոսն ասաց.—«Եթէ այդպէս է, ուրեմն դու թագաւոր ոմն ես»։ Յիսուսը պատասխանեց ու ասաց.—«Դու արդէն ասում ես, որ ես թագաւոր եմ. և ես հէնց դրա համար էլ ծնուել և աշխարհ եմ եկել, որ ճշմարտութեան համար վկայեմ. և ով որ ճշմարտութիւնից է՝ նա կլսէ իմ ձայնը»։

Պիղատոսն ասաց նրան. —«Ի՞նչ է ճշմարտութիւնը»։ Ասելով այդ՝ դուրս եկաւ և հրէաներին ասաց.—«Ես սրա մէջ ոչ մի յանցանք չեմ գտնում»։

Մարկ. ժե. 3 Ղուկ. իգ. 5 Քահանայապետներն սկսեցին նրան շատ բանի մէջ մեղադրել[1]). և պնդում էին, որ նա ուսուցանելով ամբողջ Հրէաստանում սկսած Գալիլիայից, գրգռում է ժողովրդին»։

Մատթ. իէ 12-14 Իսկ Յիսուսը քահանայապետների և ծերերի չարախօսութիւններին ամենևին չպատասխանեց։ Այն ժամանակ Պիղատոսն ասաց նրան.—

[1]) Տես մարգ. շարքում № 34.

«Չե՞ս լսում, թէ որքան հակառակ վկայութիւններ են տալիս»։ Յիսուսը նրան էլ չպատասխանեց. այս բանը խիստ զարմացրեց դատաւորին։[2])

Ղուկ. իգ. 6-12 Բայց երբ Գալիլիայի մասին լսեց՝ հարցրեց. —«Մի՞թէ սա Գալիլիացի է»։ Եւ իմանալով որ նա Հերովդէսի իշխանութիւնից է, նրան Հերովդէսի մօտ ուղարկեց, որն այդ օրերում Երուսաղէմումն էր։

Հերովդէսը տեսնելով Յիսուսին, շատ ուրախացաւ, որովհետև նրա մասին շատ բաներ էր լսել, ուստի և սպասում էր որ նրանից մի հրաշք կտեսնի։ Հերովդէսը թէև շատ հարց ու փորձ արեց, բայց Յիսուսը ամենևին չպատասխանեց։ Քահանայապետներն ու դպիրներն այնտեղ կանգնած չարախօսում էին։ Հերովդէսն էլ իւր զօրականների հետ անարգելով ու ծաղրելով նրան, նրա վերայ սպիտակ շոր ձգեց և նորից Պիղատոսի մօտ ուղարկեց։

Պիղատոսն ու Հերովդէսը որ առաջ թշնամի էին, այդ օրուանից բարեկամացան իրար հետ։

131.

ՅԻՍՈՒՍՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՊԻՂԱՏՈՍԻ ԱՌԱՋ

Ղուկ. իգ. 13-16 Պիղատոսը քահանայապետներին, իշխաններին և ժողովրդին կանչեց ու ասաց.—«Դուք այս մարդուն իբրև ժողովուրդ մոլորեցնողի ինձ մօտ բերիք, ես ձեր ներկայութեամբ քննեցի և այս մարդու մէջ չգտայ այն յանցանքները, ինչի

[2]) Տես մարգ. շարքում № 41.

մէջ որ մեղադրում էք։ Հերովդէսն էլ, որի մօտ ուղարկեցի, յանցաւոր չէ գտել և սա մահու արժանի ոչինչ չէ գործել։ Ես սրան կխրատեմ ու կարձակեմ»։

Մատթ. ԺԷ 15-16 Տօնի առթիւ դատաւորը սովորութիւն ունէր մի բանտարկեալ արձակելու, որին ժողովուրդը կը կամենար։ Այն ժամանակ Յեսու Բարաբբա անունով մի նշանաւոր բանտարկեալ կար,
Ղուկ. ԺԳ. 19 որին քաղաքում խռովութիւն յարուցանելուն և սպանութիւն գործելուն համար՝ բանտ էին դրել։

Մատթ. ԺԷ. 17-25 Երբ ժողովուրդը հաւաքուեց, Պիղատոսն ասաց նրանց. - «Երկսից որին էք կամենում որ արձակեմ, Յեսու Բարաբբային թէ՞ Յիսուսին, որ Քրիստոս է կոչւում»։ Պիղատոսն արդէն գիտէր որ նրան նախանձից դրդուած են մատնել։

Պիղատոսն երբ աթոռն էր նստած, նրա կինը մարդ ուղարկեց իր ամուսնուն ասելու — «Այդ արդար մարդու հետ բան չունենաս, որովհետև դրա համար այսօր երազիս մէջ շատ բաներ անցան գլխովս»։ Քահանայապետներն ու ծերերը ժողովրդին համոզեցին, որ Բարաբբային կամենան, իսկ Յիսուսին՝ կորցնեն։ Այն ժամանակ դատաւորն հարցրեց.—«Այս երկսից որի՞ն էք կամենում որ արձակեմ»։ Եւ նրանք պատասխանեցին.—«Բարաբբային»։ Պիղատոսն հարցրեց.—«Բայց ի՞նչ անեմ Քրիստոս կոչուած Յիսուսին»։ Բոլորն էլ աղաղակեցին.—«Թող խաչուի»։ Դատաւորն ասաց.—«Բայց ի՞նչ յանցանք է գործել»։ Նրանք աւելի ևս աղաղակում ու ասում էին.—«Թող խաչուի»։

Պիղատոսը տեսնելով, որ ոչ մի բան չէ օգնում, այլ աւելի սաստկանում է խռովութիւնը. ջուր վերցրեց, ժողովրդի առաջ ձեռքերը լուացու ասաց.—«Ես այդ արդարի արիւնից անպարտ եմ, դուք գիտէք»։ Ամբողջ ժողովուրդը պատասխանեց ու ասաց.—«Թող դրա արիւնը մեր և մեր որդոց վերայ լինի»։

Մատթ. ԺԷ 27-30 Այն ժամանակ դատաւորի զինուորները Յիսուսին ներս տարան պալատ և բոլոր զինուորների գունդը նրա վերայ ժողովեցին. և մերկացնելով նրան՝ վրան կարմիր քղամիդ ձգեցին և փշերից պսակ հիւսելով՝ նրա գլխին դրին և մի եղէգ էլ նրա աջ ձեռքը տալով՝ նրա առաջ

ծունը էին գնում, ծաղրում էին ու ասում. — «Ողջ եղիր, հրէից թագաւոր»։ Եւ թքելով վրան, եղէգը առնում էին ձեռքից և խփում նրա գլխին։

Ցովհ. ԺԹ. 4-15 Պիղատոսը նորից դուրս եկաւ և ասաց նրանց.—«Ահա, ես նրան ձեզ մօտ եմ բերում, որ իմանաք թէ ես նրա մէջ յանցանք չեմ գտնում»։

Այն ժամանակ դուրս բերին Յիսուսին փշէ պսակով և ծիրանիով։ Պիղատոսը դարձաւ ժողովրդին ու ասաց. — «Ահա, Այրդ ցձեզ»։[1]) Երբ քահանայապետներն ու սպասաւորները տեսան, աղաղակ բարձրացրին ու ասացին. — «Խաչիր, խաչիր դրան։ Պիղատոսն ասաց նրանց.—«Ինքներդ տարէք սրան ու խաչեցէք, որովհետև ես սրա մէջ ոչ մի յանցանք չեմ գտնում»։ Հրէաները պատասխան տուին ու ասացին. — «Մենք օրէնք ունինք և մեր օրէնքի համաձայն նա պէտք է մեռնի, որովհետև ինքն իրեն Աստուծու Որդի է համարում»։ Երբ Պիղատոսն այս բանը լսեց, աւելի վախեցաւ։ Նա նորից ապարանք մտաւ և Յիսուսին ասաց. — «Ո՞րտեղացի ես դու»։ Յիսուսը չպատասխանեց։ Պիղատոսն ասաց.—«Ինձ հետ էլ չե՞ս խօսում. չգիտես որ ես իրաւունք ունիմ խաչելու քեզ և իրաւունք ունիմ արձակելու։ Յիսուսը պատասխանեց. — «Դու ինձ վերայ ոչ մի իրաւունք չէիր ունենայ, եթէ վերևից տրուած չլինէր քեզ, այս

[1]) Ահա ձեր մարդը ձեզ։

պատճառով էլ նա է աւելի մեղաւոր, որ ինձ քո ձեռքը մատնեց»։ Եւ սրանից յետոյ Պիղատոսը կամեցաւ նրան արձակել, բայց հրէաներն աղաղակում էին ու ասում.—«Եթէ դրան կարձակես, կայսեր բարեկամը չես. ով իրեն թագաւոր է անուանում նա կայսեր հակառակ է»։ Երբ Պիղատոսն այս խօսքերը լսեց, Յիսուսին դուրս բերեց և նստեց բեմի վերայ — այնտեղ, որ քարահատակ էր կոչւում և եբրայեցերէն կապպաթա։ (Զատկի ուրբաթ օրն էր և մօտ ժամի վեցը կլինէր)։ Պիղատոսն ասաց հրէաներին. — «Ահա ձեր թագաւորը ձեզ»։ Իսկ նրանք աղաղակեցին.—«Վերցրու, հեռացրու դրան մեզնից ու խաչիր»։ Պիղատոսն ասաց նրանց.—«Ձեր թագաւորին խաչե՞մ» — Քահանայապետները պատասխան տուին. — «Մենք բացի կայսրից՝ թագաւոր չունինք»։

Մատթ. ԻԷ. 26 Այն ժամանակ Պիղատոսն արձակեց Բարաբբային իսկ Յիսուսին ձաղկել տալով, տուեց նրանց ձեռքը՝ որ խաչեն։

132.

ԴԷՊԻ ԳՈՂԳՈԹԱ.—ՍԻՄՈՆ ԿԻՐԻՆԱՑԻՆ.—ՅԻՍՈՒՍԻՆ ԽՈՂՁԱՑՈՂ ԿԱՆԱՑՔ.—ՅՈՒԴԱՅԻ ՅՈՒՍԱՀԱՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱԽՃԱՆԸ

Մարկ. ԺԵ. 20 Յիսուսին ծաղրելուց յետոյ, հանեցին վրայից քղամիդը, հագցրին իւր շորերը և դուրս բերելով Պիղատոսի ապարանքից՝ խաչելու տարան։

Յովհ. ԺԹ. 17 Յիսուսն իւր խաչափայտը շալակած, գնում էր Գագաթ անուանուած տեղը, որ Եբրայեցերէն Գողգոթա էր կոչւում։

Մարկ. ԺԵ. 21 Յիսուսի բշնամիները տեսնելով որ Յիսուսը յոգնածութեան պատճառով ծանր խաչն անձամբ տանել չէ կարողանում, այն տեղիցն անցնող Աղեքսանդրի և Ռուփայի հօրը—Սիմոն Կիւրենացուն, որ հանդից էր վերադառնում, պահակ բռնեցին, որ Յիսուսի խաչափայտը տանի։

Ղուկ. ԻԳ. 27-31 Յիսուսի յետևից ժողովրդի և կանանց մեծ բազմութիւն էր գնում։ Կանայք Յիսուսի վերայ լաց ու կոծ էին բարձրացրել։ Յիսուսը դառնալով կանանց՝ ասաց.—«Երուսաղէմի աղջիկներ, իմ վրայ լաց մի լինէք, այլ ձեզ և ձեր որդոց վերայ լացէք, որովհետև կգան օրեր, երբ կասեն.—Երանի՛ այն ամուլներին և այն որովայներին որ չծնան և ստինքներին՝ որ չկերակրեցին։ Այն ժամանակ կսկսեն լեռներին ասել.—Մեզ վերայ ընկէք և բլուրներին՝ ծածկեցէք մեզ։ Եթէ դալար փայտի հետ այսպէս են վարւում, հապա ինչ կանեն չորին»։

Մատթ. ԻԵ 3-10 Այն ժամանակ Յուդան—Նրան մատնողը, տեսնելով որ Յիսուսը դատապարտուեցաւ, զղջաց և արծաթը քահանայապետներին ու ժողովրդի ծերերին վերադարձնելով՝ ասաց.—«Մեղայ, որ արդար արիւն մատնեցի»։ Եւ նրանք ասացին.—«Մեզ ինչ, դու գիտես»։ Եւ Յուդան արծաթը տաճարի մէջ ձգելով՝ յետ դարձաւ ու գնաց խեղդուեցաւ։

Քահանայապետները վերցնելով արծաթն՝ ասացին.—«Արժան չէ, որ այդ կորբանի[1]) մէջ ընդունենք, որովհետև դա արեան գին է»։ Եւ խորհուրդ անելով, բրտի ագարակը գնեցին, որ օտարականների համար իբրև գերեզմանատուն ծառայէ, այս պատճառով էլ այն ագարակը մինչեւ օրս՝ Արեան ագարակ է կոչւում։ Այսպիսով կատարուեցաւ Երեմիա մարգարէի միջոցով ասուածը թէ,—Երեսուն արծաթն առան, որ վաճառուածի գինն էր և որին Իսրայէլի որդիք գնահատեցին և բրտի ագարակին տուին, ինչպէս Տէրն ինձ հրամայեց»։[2])

133.

ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ.—ԱՒԱԶԱԿԻ ԶՂՋՈՒՄԸ.—ԳՐՈՒԱԾՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ.—ՅԻՍՈՒՍԻ ՄԱՀԸ.—ՀՐԱՇԱԼԻ ՆՇԱՆՆԵՐ

Մատթ. ԻԵ 33-34 Երբ Գողգոթա հասան, որ կառափելու տեղ է նշանակում, նրան լեղիի հետ խառնած գինի տուին խմելու. երբ Յիսուսը համն առաւ, չկամեցաւ խմել։

Մարկ. ԺԵ. 25, 27-28 Ժամի երեքն էր, որ նրան խաչեցին։ Նրա հետ երկու աւազակ էլ խաչեցին, մինը աջ և միւսը ձախ կողմը։ Եւ կատարուեցաւ այն գրը-

1) Կորբան նշ. գանձանակ, ուր ձգւում էին տաճարին նուիրուած դրամները։

2) Ճիշտ վկայութիւնը Երեմիա մարգարէինը չէ։ Այդ խառնուած մի վկայութիւն ունի Զաքարիա մարգարէն (ժա. 13.)։ Անշուշտ այդ սխալը առաջացել է առաջին անգամ օրինակողի անուշադրութիւնից։ Տես մարգ. շարքում № 38.

բուածը՝ որ՝ ասում է.—«Անօրէնների հետ համարուեցաւ»։[1])

ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ

[2]) Մարգ Եսայի ԺԳ. 12. Տես. մարգ. շարքում № 47.

Յովհ. ԺԹ. 19-24 Պիղատոսը մի տախտակի վրայ գրեց.— «ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ»։ Եւ խաչի վերայ կախեց։

Այդ տախտակը հրէաներից շատերը կարդացին, որովհետև այն տեղն ուր Յիսուսը խաչուեցաւ քաղաքից մօտ էր. և գրուած էր եբրայեցերէն, դաղմատերէն (լատիներէն) և յունարէն։

Հրէաների քահանայապետները Պիղատոսին ասացին.—«Մի գրի Թագաւոր հրէից, այլ որ ինքն ասաց թէ ես Թագաւոր եմ հրէից»։ Պիղատոսը պատասխանեց ու ասաց.—«Ինչ որ գրեցի՝ գրեցի»։

Զինուորներն երբ Յիսուսին խաչեցին, նրա հանդերձները վերցրին և չորս բաժին արին, իւրաքանչիւր զինուորի մի բաժին։ Իսկ պատմուճանը որովհետև կար չունէր և վերից—վար չորս կողմը հիւսուած էր, իրար ասացին.—«Չըպատռենք այդ, այլ վիճակ ձգենք, ում որ դուրս գայ նրանը լինի»։ Որ կատարուի այն գրուածը թէ—Իմ հանդերձներն իրենց մէջ բաժանեցին և իմ պատմուճանի վերայ վիճակ ձգեցին։[1])

Մատթ. ԻԷ 36, 39-43 Զինուորներն այս բանն արին. և ապա նստան ու սկսեցին պահպանութիւն անել։

Եւ այնտեղից անցնողները հայհոյում էին Նրան և իրենց գլուխները շարժելով ասում.— Վա՜հ, դու որ տաճարը քանդում էիր և երեք օրումը շինում, եթէ Աստուծու Որդի ես ապրեցրու քեզ և իջիր խաչից»։

[1]) Տես մարգ. շարքում № 44.

Քահանայապետներն էլ դպիրների ու ծերերի հետ ծաղրում էին ու ասում.—«Ուրիշներին ապրեցրեց իսկ իրեն չէ կարողանում ապրեցանել. եթէ Իսրայէլի թագաւոր է, թող իջնի խաչից որ հաւատանք իրեն։ Աստուծուն է յուսացել, այժմ թող փրկէ եթէ կամենում է դրան,[1]) որովհետև ասաց, թէ ես Աստուծու Որդին եմ»։

Ղուկ. իգ 34, 39-43. Յիսուսն ասաց.—«Հայր, ներիր սրանց, որովհետև չգիտեն թէ ինչ են անում»։ Իսկ խաչուած չարագործներից մինը հայհոյում էր նրան ու ասում.—«Եթէ դու Քրիստոսն ես, քեզ էլ փրկիր ու մեզ էլ»։ Նրա ընկերը սաստելով պատասխան տուեց ու ասաց.—«Չե՞ս վախենում Աստուծուց. չէ՞ որ դու էլ նոյն պատժի մէջ ես։ Մենք մեր գործածների արժանի հատուցումն ենք ստանում. իսկ սա ոչ մի անիրաւութիւն չէ գործել»։ Եւ դառնալով Յիսուսին՝ ասաց.—«Տէր, յիշիր ինձ, երբ գաս քո թագաւորութեամբ»։

Յիսուսը նրան ասաց.—«Ճշմարիտն եմ ասում քեզ, որ այսօր դու ինձ հետ դրախտում կլինես»։

Յովհ. իթ 25-27. Յիսուսի խաչի մօտ գտնւում էին նրա մայրը, նրա մօրաքոյրը (Սողոմէն), Մարիամ Կղէոփայն և Մարիամ Մագդաղինացին։[2]) Յի-

[1]) Համեմատել.- «Ամենքն էլ, որոնք տեսնում էին ինձ արհամարում էին և շրթունքները բանալով և գլուխները շարժելով ասում.—Տիրոջը յուսացաւ և թող փրկէ նրան. թող ազատէ, որովհետև Նրան կամեցաւ»։ (Սաղմ. իա 8-9)։

[2]) Բնագիրն ասում է.—«Եւ կային առ խաչին Յիսուսի մայ-

սուսը տեսնելով իւր մօրն ու իւր մօտ կանգնած իւր սիրած աշակերտին (Յովհաննէսին) ասաց իւր մօրը.—«Ո՛վ կին, ահա քո որդին»։[1]) Յետոյ աշակերտին ասաց.—«Ահա քո մայրը»։ Այդ օրուանից այն աշակերտն իւր մօտ առաւ Մարիամին։

Մատթ. իէ 45-47, 49 Օրուան վեց ժամից մինչև ինն ժամը ամբողջ երկրին խաւար պատեց և մօտ ինն ժամին Յիսուսը բարձր ձայնով աղաղակեց ու ասաց.—

բրն Նորա և քոյր մօր նորա Մարիամ Կղէոփայայ, և Մարիամ Մագդաղինացի»։ Թարգմանելով ըստ բնագրի՝ ստացւում է—«Յիսուսի խաչի մօտ գտնւում էին Նորա մայրը, Նրա մօրաքոյր Մարիամ Կղէոփայան և Մարիամ Մագդաղինացին»։ Ուրեմն Յովհաննէս Աւետարանիչը բացի Տիրամօրից յիշում է միայն երկու կանանց անուն, մինչդեռ միւս Աւետարանիչները երեք կնոջ անուն են յիշում. այսինքն Մարիամ Մագդաղինացուն, Յակոբի և Յովսէսի մայր Մարիամին, որ ուրիշ տեղ Մարիամ Կղէոփայաս է յիշւում իւր ամուսնու անունամբ և Զեբեթիայի որդոց մօրը—Սողոմէին (Մատթ. իէ 56 և Մարկ. ժե. 40)։ Յովհաննէս Աւետարանիչը երկու կնոջ անունները տալով, անկարելի էր որ մոռանար յիշելու իւր մայր Սողոմէին, որ ըստ միւս Աւետարանիչների նոյնպէս խաչի մօտ գտնուած կանանց թւումն էր։ Եւ նա յիշում է վերոյիշեալ տողում, միայն թէ հարկաւոր է բնագրի մէջ «և քոյր մօր նորա» խօսքից յետոյ մի ս տ ո ր ա կ է ա դնել։ Այն ժամանակ կստացուի հետևեալը —«Եւ կային առ խաչին Յիսուսի Մայրն Նորա, և քոյր մօր Նորա, Մարիամ Կղէոփայա և Մարիամ Մագդաղինացի». որ թարգմանելով կստացուի.—«Յիսուսի խաչի մօտ գտնւում էին Նրա մայրը, Նրա մօրաքոյրը (Սողոմէն, որ Տիրամօր հետ համարիւն մօրաքրոջ որդիներ էին. կամ գրեթէ քոյրեր, ինչպէս սովորաբար համարւում էին) Մարիամ Կղէոփայան և Մարիամ Մագդաղինացին»։ Այդ մի ստորակէտը մի կողմից նախադասութեան միտքն է վերականգնում, միւս կողմից երեք Աւետարանիչներին էլ համաձայնութեան է բերում։ (Տես նաև զրքիս 4-րդ և 98-րդ երեսների ծանօթութիւնները)։

Ի դէպ. ի նկատի ունենալով բնագրի լուսաբանութեան անհրաժեշտութիւնը, զրքիս ընթերցողներին խորհուրդ եմ տալիս ձեռքի տակ ունենալ սրբազան Օրմանեանի «Համապատումը» ուր Աւետարանների բնագիրն է լուսաբանուած։

[1]) Յիսուսն իւր մօրն իւր աշակերտին է յանձնում. այս հան-

«Էլի, էլի լամա Սաբաքթանի—այսինքն Աստուած իմ, Աստուած իմ, ինչու թողիր ինձ»։[1]) Այնտեղ եղողներից ոմանք լսելով այս՝ ասացին.—«Դա Եղիային է կանչում»։ Իսկ կէսն ասում էր—«Թող տեսնենք, կգա՞յ արդեօք Եղիան զրան փրկելու»։

Յովհ. ԺԹ 28-30. Սրանից յետոյ Յիսուսն իմանալով, որ արդէն ամէն բան կատարուած է՝ ասաց.—«Ծարաւ եմ»։ Այնտեղ քացախով լի մի ման կար, սպունգը քացախի մէջ թրջեցին և զոպայի մշակի վերայ դրած, նրա բերանին մօտեցրին։[2]

Յիսուսն երբ լեղիի հետ խառնած քացախի համն առաւ՝ ասաց.—«Այժմ ամէն բան կատարուած է. Հայր, քո ձեռն եմ աւանդում իմ հոգին»։[3]) Եւ խոնարհեցնելով գլուխը՝ հոգին աւանդեց։

Ղուկ. ԻԳ. 46.

Մատթ. ԻԷ 51-54. Եւ ահա տաճարի վարագոյրը վերից վար ճղուեցաւ, երկիրը շարժուեցաւ, քարերը պատռուեցան, գերեզմանները բացուեցան և շատ սուրբ ննջեցեալներ յարութիւն առան և գերեզմաններից դուրս եկողները՝ նրա յարու-

---

դամանքը ցոյց է տալիս, որ սուրբ կոյս Մարիամը ուրիշ որդի չունէր և ոչ էլ խնամող։

[1]) Կամ աւելի ճիշտը—«Էլօի, էլօի, լեմա Սաբաքթանի»—Եբրայեցերէն է և նշանակում է «Աստուած իմ, Աստուած իմ, ինչու թողիր ինձ»։ Համեմատել—«Աստուած, Աստուած իմ, նայիր ինձ, ինչու թողիր ինձ...»։ (Սաղմ. իա. 1.)

[2]) Տես. մարգ. շարքում 35-ը։

[3]) Համեմատել.-«Քո ձեռքն եմ յանձնում իմ հոգին» Սաղմ. լ. 6.)

թիւնից յետոյ մտան սուրբ քաղաքը (Երուսաղէմ) և երևեցան շատերին։

Հարիւրապետն ու Յիսուսի պահապանները այս շարժումն ու եղածները տեսնելով՝ սաստիկ վախեցան ու ասացին.—«Արդարև Սա Աստուծու Որդի էր»։[1])

Ղուկ. ԻԳ 48. Իսկ եկած ժողովուրդը, տեսնելով այդ տեսարանն ու գործերը՝ կուրծք թակելով վերադարձաւ իւր տեղը։

Մատթ. ԻԷ 55-56 Այնտեղ շատ կանայք էլ կային, որոնք Գալիլիայից՝ Յիսուսի յետևից էին եկել նրան ծառայելու և դիտում էին հեռուից. սրանց թւումն էին Մարիամ Մագդաղինացին, Յակովբոսի և Յովսէսի մայր Մարիամը և Զեբեթայի որդոց մայրը։

134.

ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԸ ԵՒ ԹԱՂՄԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ.—ԳԵՐԵԶՄԱՆԻ ԿՆՔՈՒԻԼԸ

Յովհ. ԺԹ 31-37 Հրէաները, որովհետև օրն ուրբաթ էր, որպէս զի խաչուածների մարմինները մինչև շաբաթ օրը խաչի վերայ չմնան,[2]) (այն շաբաթը մեծ օր էր) Պիղատոսին խնդրեցին, որ նրանց սրունքները կոտրատուին և խաչից վեր առնուին։ Զինուորներն եկան և նախ առաջին աւազակի սրունքները կոտրատեցին և ապա նրա հետ խաչ-

---

[1]) Տես մարգ. շարքում № 28.

[2]) Բ. Օր. իա 23.

ԽԱՉԻՑԵՑԱԼԻՆ ՀԻՍՈՒՍԻՑ ՕԺՏՈՎ ԿԱՏՈՒՑԵՔ

ուած միւս աւազակինը։ Բայց երբ Յիսուսին մօտեցան և տեսան որ արդէն մեռած է, նրա սրունքները չկոտրատեցին, այլ զինուորներից մինը (մահը ստուգելու համար) գեղարդով նրա կողը խոցեց, որտեղից իսկոյն արիւն և ջուր բղխեց։

Այս բանը տեսնողն է վկայում և նրա (Յովհաննէսի) վկայութիւնը ճշմարիտ է։ Նա գիտէ որ ճշմարիտ է ասում, որ դուք էլ հաւատաք։ Որովհետև այս բանն եղաւ, որ կատարուի այն գրուածը թէ—Նրա ոսկրը չի փշրուի։[1]) Եւ դարձեալ մի ուրիշ գրուած, որ ասում է թէ—Պէտք է նայեն Նրան՝ որին խոցեցին։[2])

Ղուկ. իգ 50-52 Երբ երեկոյ եղաւ, Յովսէփ անունով Արեմաթացի մի իշխան, որ բարեգործ և արդար մի մարդ էր, որ հրէաների գործերին ու խորհուրդներին չէր մասնակցել և ինքն էլ Աստուծու Արքայութեանը սպասողներից էր, որովհետև աշակերտել էր Յիսուսին թէև ծածուկ՝ հրէաների վախից, սա Պիղատոսի մօտ գնաց և համարձակութիւն ունեցաւ Յիսուսի մարմինը խնդրելու։ Պիղատոսը զարմացաւ, որ այդքան շուտ էր մեռել և հարիւրապետին իւր մօտ կանչելով՝ հարցրեց.—«Ճշմարիտ է՞ որ արդէն մեռել է»։ Երբ հարիւրապետից տեղեկացաւ, մարմինը Յովսէփին շնորհեց։

Յովհ. ժթ. 38
Մարկ. ժե. 43-45

---

[1]) Ել. ժբ. 46.

[2]) Մարգ. Զաք. բժ. 10։ (Ըստ եբրայական բնագրի և ոչ եօթանասնից թարգմ.)։

Յովհ. ԺԹ 39-42 Նիկոդիմոսն էլ եկաւ, որը մի գիշեր առանձին կերպով այցելել էր Յիսուսին և իւր հետ հարիւր լիտր հալուէի հետ խառնած զմուռս բերեց։ Նրանք Յիսուսի մարմինն իջեցրին, խնկեղէնով օծեցին և կտաւով պատանեցին, ինչպէս սովորաբար պատանում էին հրէաները։

Այնտեղ, ուր խաչուեցաւ Յիսուսը, մի պարտէզ կար։ Այդ պարտէզում մի նոր գերեզման կար, որի մէջ դեռ ոչ ոք չէր դրուած։ Եւ որովհետև այդ օրն ուրբաթ էր, մօտ լինելու պատճառով Յիսուսի մարմինը դրին այդ գե-
Մատթ. ԻԷ. 60 րեզմանի մէջ և մի մեծ քար էլ գլորելով գերերմանի դրանը՝ գնացին։[1])

Ղուկ. ԻԳ 55 Այն կանայք էլ, որ Յիսուսի հետ Գալիլիայից էին եկել թէ գերեզմանը տեսան և թէ նրա մարմնի գերեզման դնելը։

Մատթ. ԻԷ 61 Սրանց թուումն էին Մարիամ Մագդաղինացին և միւս Մարիամը (Կղէովպան) որ գերեզմանի դիմացն էին նստած։

Ղուկ. ԻԳ. 56 Վերջապէս այդ կանայքն էլ յետ դարձան և խնկեր ու իւղեր պատրաստեցին, բայց օրէնքի համաձայն, շաբաթ օրն հանգիստ առան։

Մատթ. ԻԷ 62-66 Հետևեալ օրը, որ ուրբաթից յետոյ էր. քահանայապետերն ու փարիսեցիները Պիղատոսի մօտ հաւաքուեցան և ասացին.—«Տէր, յիշեցինք որ այն մոլորեցուցիչը դեռ կենդանի եղած ժամանակ՝ ասում էր թէ երեք օրից յետոյ պէտք է յարութիւն առնեմ։ Ուստի հրամայիր, որ մին-

[1]) Տես մարգ. շարքում 48-ը և 49.

չև երրորդ օրը գերեզմանը զգուշութեամբ պահեն, չլինի թէ աշակերտները գիշերով գան ու (մարմինը) գողանան և ժողովրդին ասեն, թէ մեռելներից յարութիւն առաւ։ Եւ վերջին մոլորութիւնը՝ առաջինից վատ կլինի»։

Պիղատոսն ասաց նրանց.—«Դուք պահապան զինուորներ ունիք, գնացէք և ինչպէս գիտէք պահեցէք»։

Նրանք էլ գնացին, գերեզմանին պահպանութիւն արին և պահապան զինուորների հետ՝ քարը կնքեցին։

135.

ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ.—ԻՐՂԱԲԵՐ ԿԱՆԱՅՔ.—ՅԻՍՈՒՍՆ ՈՒ ՄԱՐԻԱՄ ՄԱԳԴԱՂԻՆԱՑԻՆ.—ՅԻՍՈՒՍՆ ՈՒ ՄՆԱՑԵԱԼ ԿԱՆԱՅՔ.—ՉԱՆՔԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ՍՏԵԼՈՒ

Մատթ. ԻԸ 1-4 Շաբաթ երեկոյեան, որ միաշաբաթն էր լուսանում, Մարիամ Մագդաղինացին և միւս Մարիամը (Կղէովպան) եկան գերեզմանը տեսնելու։ Եւ ահա մեծ շարժում եղաւ, որովհետև Տիրոջ հրեշտակն երկնքից իջնելով՝ գնաց գերեզմանի դռնից քարը մի կողմ գլորեց և նրա վերայ նստեց։ Նրա կերպարանքը փայլակի նման էր և հագուստը ձիւնի նման սպիտակ։ Պահապանները վախից շփոթուեցան և մեռելի նման դարձան։

Մարկ. Ժզ 2-4 Միաշաբաթի առաւօտեան, արևագալին իղդա-

ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՄԱՆԸ

բեր կանայք մօտենալով գերեզմանին՝ ասում էին իրար.—«Ո՞վ պէտք է գերեզմանի քարը գլորէ»։ Եւ նայելով՝ տեսան որ գերեզմանի մեծ քարն արդէն գլորուած է։

Յովհ. ի. 2 Ապա Մարիամ Մագդալինացին առաջ անցաւ և գալով Սիմոն Պետրոսի և այն աշակերտի մօտ, որին սիրում էր Յիսուսը՝ ասաց. —«Տիրոջը գերեզմանից վերցրել են և չգիտեմ թէ ուր են դրել»։

Մարկ. ժզ 5-6 Իսկ մինչ կանայք ներս մտան գերեզմանը և տեսնելով գերեզմանի աջ կողմը սպիտակ շորով մի երիտասարդ նստած՝ զարհուրեցան։ Հրեշտակն ասաց.—«Մի վախենաք, գիտեմ որ խաչուած Յիսուս Նազովրեցուն էք որոնում, Նա այստեղ չէ, յարութիւն առաւ, ահաւասիկ այն տեղը, ուր որ դրին։

Ղուկ. իդ. 6-7 Յիշեցէք Գալիլիայում ձեզ հետ խօսածները, որ յայտնեց թէ Մարդու Որդին պէտք է մեղաւորների ձեռքը մատնուի, խաչը բարձրանայ և երրորդ օրը յարութիւն առնի։

Մատթ. իբ. 7 Ուրեմն շուտով գնացէք և նրա աշակերտներին ասացէք, որ յարութիւն է առել և ձեզնից առաջ Գալիլիա կերթայ. այնտեղ կտեսնէք նրան։ Ահա ասում եմ ձեզ»։

Յովհ. ի. 3-17 Պետրոսն ու միւս աշակերտը (Յովհաննէսը) դուրս եկան ու դէպի գերեզմանն էին գալիս. երկուսն էլ վազում էին։ Բայց միւս աշակերտը Պետրոսից առաջ անցնելով, նրանից առաջ հասաւ գերեզմանին։ Եւ խոնարհուելով տեսաւ, որ

կտաւներն այնտեղ էին, բայց ինքը ներս չմտաւ։ Սիմոն Պետրոսը, որ նրա յետևից էր գալիս, եկաւ ու գերեզմանը մտնելով՝ տեսաւ որ կտաւները մնում են իրենց տեղը, իսկ վարշամակը որ նրա գլխի վերայ էր, ոչ թէ ուրիշ կտաւների հետ էր, այլ առանձին ծալուած՝ միւս կողմն էր դրուած։ Այն ժամանակ միւս աշակերտն էլ (որ առաջ էր հասել գերեզմանին) մտաւ գերեզմանը և տեսաւ ու հաւատաց։ Որովհետև դեռ չգիտէին գրուածը, թէ նա պէտք է մեռելներից յարութիւն առնէ։ Յետոյ աշակերտները վերադարձան իրենց տուն։ Բայց Մարիամը (Մագդաղինացին) գերեզմանի մօտ կանգնած լաց էր լինում։ Լաց լինելու ժամանակ դէպի գերեզմանը խոնարհեցաւ նայելու. և որտեղ առաջ Յիսուսի մարմինն էր դրուած, այնտեղ սպիտակ հանդերձներով երկու հրեշտակներ տեսաւ, որոնցից մինը նստել էր ոտքերի կողմը, իսկ միւսը՝ գլխի։ Հրեշտակներն ասացին նրան.—«Ո՛վ կին, ինչո՞ւ ես լաց լինում։» Ասաց նրանց.—«Այն պատճառով, որ Տիրոջս գերեզմանից վերցրին և չգիտեմ թէ ուր են դրել»։ Այս որ ասաց, յետ նայեց և տեսաւ Յիսուսին, որ կանգնած էր, բայց չիմացաւ թէ Յիսուսն է։ Յիսուսն ասաց նրան.—«Կին, ինչո՞ւ ես լաց լինում, ո՞ւմն ես որոնում»։ Նա կարծելով թէ պարտիզպանն է՝ ասաց նրան.—«Թէ որ դու ես վերցրել նրան, ասա՛ ինձ՝ ո՞ւր դրիր, որ ես վեր առնեմ նրան»։ Յիսուսն ասաց.—«Մարիամ»։ Նա էլ դարձաւ և (եբրայեցե-

րէն) ասաց նրան.—«Ռաբունի» որ վարդապետ է նշանակում։ Յիսուսն ասաց.—«Մի՛ մօտենայ ինձ, որովհետև դեռ Հօրս մօտ չեմ բարձրացել. այլ գնա՛ եղբայրներիս մօտ և ասա՛ նրանց.—«Ես բարձրանում եմ իմ Հօր մօտ և ձեր Հօր մօտ. իմ Աստուծու մօտ և ձեր Աստուծու մօտ»։

Մատթ. իբ 8-10 Իսկ միւս կանայք (Մարիամ Կղէովպան, Սողոմէ Զեբեթիան, Յովհաննա Քուզան և այլք Յիսուսի յարութեան լուրն հրեշտակից առնելուց յետոյ) շտապով դուրս եկան գերեզմանից և վախով ու մեծ ուրախութեամբ վազեցին որ աշակերտներին պատմեն։ Եւ ահա Յիսուսը պատահեց նրանց ու ասաց.—«Ողջոյն ձեզ»։ Եւ նրանք մօտենալով, նրա ոտքերն ընկան ու երկրպագեցին։

Մարկ. ժզ. 10. Ղուկ. իդ. 9. Մինչդեռ տասնեմէկ աշակերտները սգի ու լացի մէջ էին, կանայք եկան և ամէն բան պատմեցին նրանց և ուրիշ շատերին։

Մարկ. ժզ. 11. Երբ նրանք լսեցին թէ Յիսուսը կենդանի է և երևացել է նրանց՝ չհաւատացին։

Ղուկ. իդ. 11-12 Կանանց ասածները նրանց ցնորական խօսքեր թուեցան։ Իսկ Պետրոսը վեր կենալով՝ նորից գերեզմանը վազեց և ներս նայելով՝ միայն կտաւները տեսաւ և անցած-դարձածի վերայ ինքն իրան զարմանալով՝ վերադարձաւ տուն։

Մատթ. իբ 11-15 Պահապան զինուորներից ոմանք քաղաք եկան և պատմեցին քահանայապետներին այն ամենը, ինչ որ եղել էր։ Նրանք էլ ծերերի հետ ժողովուելով՝ խորհուրդ արին և զինուորներին

շատ արծաթ (կաշուք) տալով՝ ասացին.—«Ասացէք թէ երբ մենք քնած էինք. նրա աշակերտները գիշերով եկան ու գողացան նրան. և եթէ այդ լուրը դատաւորի ականջն հասնի, մենք նրան կհաճեցնենք և ձեզ կապահովենք»։ Նրանք էլ վերցնելով արծաթը, ինչպէս սովորեցին՝ այնպէս էլ արին։ Եւ այդ համբաւը մինչև օրս էլ տարածուած է հրէաների մէջ։

136.

ՅԻՍՈՒՍՆ ՈՒ ԷՄՄԱՈՒՍ ԳՆԱՑՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Ղուկ. իդ. 13-32 Նոյն օրն աշակերտներից երկուսը Էմմաուս անունով մի գիւղ էին գնում, որ Երուսաղէմից վաթսուն ասպարիսով հեռու էր։ Նրանք տեղի ունեցած անցքերի մասին էին խօսում ճանապարհին։ Երբ նրանք խօսում ու վիճում էին, Յիսուսն ինքն էլ մօտեցաւ և գնում էր հետները։ Բայց նրանց աչքերը բռնուած էին և չկարողացան նրան ճանաչել։ Յիսուսն ասաց.—«Ի՞նչի մասին էք իրար հետ վիճում և ինչո՞ւ էք տխուր»։ Նրանցից մինը, որ Կղէովպաս էր կոչում՝ պատասխանեց.—«Երևի Երուսաղէմ եկողներից միայն դու ես, որ չգիտես թէ այնտեղ այս օրերս ինչ անցքեր տեղի ունեցան»։ Յիսուսը հարցրեց.—«Ի՞նչ է պատահել որ..»։ Նրանք ասացին.—«Ուրեմն դու չգիտե՞ս Յիսուս Նազովրեցու գործը, որը թէ Աստուծու և թէ ժողովրդի առաջ գործքով ու խօսքով զօրաւոր մարգարէ եղաւ,

որին մեր քահանայապետներն ու իշխանները մահուան դատապարտեցին և խաչեցին։ Իսկ մենք վստահ էինք որ նա պէտք է Իսրայէլի փրկիչը լինէր. բայց այս ամենից յետոյ, ահա այսօր երրորդ օրն է, որ այս անցքերը տեղի ունեցան։ Այլ և մերոնցից մի քանի կանայք մեզ զարմացրին, որոնք առաւօտեան շատ վաղ գերեզմանն էին գնացել և նրա մարմինը չգտնելով՝ եկան ու պատմեցին, որ հրեշտակներ են երևացել իրենց, որոնք և յայտնել են թէ Նա կենդանի է։

Մեզնից միքանիսը գերեզմանը գնացին և գտան այնպէս, ինչպէս կանայքն էին ասել. միայն թէ Իրեն չտեսան»։ Այն ժամանակ Յիսուսն ասաց.—«Անմիտներ և թուլասիրտներ, որ դանդաղել էք հաւատալու այն բաներին, որ մարգարէները նախագուշակեցին։ Չէ՞ որ Քրիստոսն այս չարչարանքները պէտք է կրէր և իւր փառքի մէջ մտնէր»։ Եւ սկսելով Մովսէսից և բոլոր մարգարէներից՝ մեկնում էր նրանց ինչ որ բոլոր գրքերում գրուած էր իրեն համար։ Երբ մօտեցան այն գիւղին ուր գնում էին, նա յայտնեց որ ինքն աւելի հեռուն պիտի գնայ, բայց նրանք ստիպեցին ու ասացին.—«Մնացէ՛ր մեզ մօտ, որովհետև արդէն երեկոյ է և օրն էլ անցել է»։ Նա գիւղը մտաւ և մնաց նրանց մօտ։ Երբ նրանց հետ սեղան նստեց, հացն առաւ՝ օրհնեց և կտրելով տուեց նրանց։ Այդ ժամանակ նրանց աչքերը բացուեցան և ճանաչեցին Նրան։ Բայց Նա անհետացաւ։

Նրանք միմեանց ասացին.—«Կարծես հենց մեր սրտերն էլ վկայում էին, երբ նա ճանապարհին խօսում էր հետներս և բացատրում գրուածները»։

137.

ՅԻՍՈՒՍՆ ԵՐԵՒՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՎԵՐՆԱՏԱՆԸ. —ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ.—ԹՈՎՄԱՍԻ ԹԵՐԱՀԱՒԱՏՈՒԹԻՒՆԸ

Ղուկ. իդ. 33-35 Եմմաուս գնացող աշակերտներն իսկոյն Երուսաղէմ դարձան, ուր հաւաքուած գտան տասնեմէկ առաքեալներին և նրանց հետ եղողներին, (եօթանասուններից շատերին և իւղաբեր կանանց) որոնք ասում էին թէ արդարև Տէրն յարութիւն առաւ և երևեցաւ շատերին։ Կղէոփասն ու իւր ընկերն էլ պատմեցին ճանապարհին պատահածը և թէ ինչպէս ճանաչեցին Նրան՝ հացը կտրատելու ժամանակ.

Մարկ. ժզ. 13. Բայց սրանց պատմածներին էլ չհաւատացին։

Յովհ. ի. 19. Միաշաբաթի երեկոն էր, երբ տասնեմէկ աշակերտները հրէաների վախից դռները փակ պահելով. 'ի մի հաւաքուած՝ խօսում էին։

Ղուկ. իդ. 36-43 Յանկարծ Յիսուսը նրանց մէջ կանգնեց և ասաց.—«Խաղաղութիւն ձեզ, Ես եմ մի վախեցաք»։ Նրանք զարհուրեցան ու վախեցան, կարծեցին թէ ոգի են տեսնում։ Յիսուսն ասաց.—«Ինչո՞ւ էք շփոթուած և ինչո՞ւ են սրտներիդ

մէջ այդպիսի խորհուրդներ ծնւում. տեսէք ձեռքերս ու ոտքերս։ Ես ինքս եմ, շօշափեցէք ինձ ու տեսէք, ոգին մարմին ու ոսկր չունի, բայց տեսնում էք, որ ես ունիմ»։ Ասելով այս, նա ցոյց տուեց իւր ձեռքերն ու ոտքերը։

Եւ մինչդեռ նրանք ուրախութիւնից չէին հաւատում և զարմացել էին՝ ասաց նրանց.—«Կերակուր ունի՞ք այստեղ»։ Նրանք խորոված ձկան կտոր և մեղրի խորիսխ տուին։ Յիսուսը վերցրեց, նրանց ներկայութեամբ կերաւ և մնացածը վերադարձրեց։

Յովհ. ի. 21-29 Նորից դարձաւ աշակերտներին ու ասաց.—«Խաղաղութիւն ձեզ, ինչպէս Հայրս ուղարկեց ինձ, ես էլ ձեզ եմ ուղարկում»։ Ասելով այս՝ փչեց նրանց վերայ ու ասաց.—«Առէք Սուրբ Հոգին։ Եթէ մէկի մեղքերը թողնէք՝ թողնուած լինի և որոնց մեղքերը կապէք՝ կապուած լինի»։

Երբ Յիսուսն եկաւ, տասներկուսից մինը—երկւորեակ կոչուած Թովմասը, նրանց հետ չէր։ Միւս աշակերտներն ասացին նրան.—«Տեսանք Տիրոջը»։ Նա էլ ասաց.—«Մինչև որ ես Նրա ձեռքերի վերայ մեխերի նշանը չտեսնեմ և մատներս մեխերի տեղը չկոխեմ և ձեռքս էլ Նրա աջ կողը չմտցնեմ՝ չեմ հաւատայ»։

Ութ օրից յետոյ, երբ աշակերտները դարձեալ տանն էին և Թովմասն էլ նրանց հետ էր. Յիսուսն եկաւ՝ երբ դռները փակուած էին. կանգնեց նրանց մէջ տեղը և ասաց.—«Խաղաղութիւն ձեզ»։ Յետոյ դարձաւ Թովմասին ու ա-

ասաց.—«Մատներդ բեր ու տես ձեռքերս, բեր ձեռքդ և մտցրու կողս և մի՛ լինիր անհաւատ, այլ հաւատացեալ»։

Թովմասը պատասխան տուեց ու ասաց.—«Տէ՛ր իմ և Աստուած իմ»։ Յիսուսն ասաց նը-րան.—«Որովհետև տեսար ինձ, այդ պատճառով էլ հաւատացիր. բայց երանի՛ նրանց, որ չեն տեսել ու հաւատում են»։

138.

ՅԻՍՈՒՍՆ ԵՐԵՒՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՏԻԲԵՐԱԿԱՆ ԾՈՎԻ ՄՕՏ

Յովհ. իա. 1-14 Սրանից յետոյ Յիսուսն իւր աշակերտնե-րին Տիբերական ծովի ափը երևեցաւ։ Եւ երևե-ցաւ այսպէս։

Երբ Սիմոն Պետրոսը, երկուրեակ կոչուած Թովմասը, Գալիլիայի Կանա քաղաքացի Նաթա-նայէլը, Զեբեթիայի որդիքը և միւս աշակերտ-ներից երկուսը հաւաքուած էին միատեղ, Սիմոն Պետրոսն ասաց.—«Ես ձուկ որսալու եմ գնում»։ Նրանք ասացին.—«Մենք էլ կգանք քեզ հետ»։ Գնացին և իսկոյն նաւ մտան և այն գիշերը ո-չինչ չորսացին։ Երբ առաւօտ եղաւ, Յիսուսը կանգնած էր ծովի ափը. բայց աշակերտները չճանաչեցին թէ Յիսուսն է։

Յիսուսն ասաց նրանց.—«Տղա՛յք, բան ու-նի՞ք ուտելու»։ Նրանք պատասխանեցին.—«Ո՛չ»։ Ասաց նրանց.—«Ուռկանը նաւի աջ կողմը ձգե-

ցէք և կբռնէք»։ Նրանք ձգեցին և ձկների շա-տութիւնից չկարողացան քաշել ուռկանը։

Այն ժամանակ այն աշակերտը (Յովհաննէսը) որին սիրում էր Յիսուսը՝ ասաց Պետրոսին.—«Նա Տէրն է»։ Սիմոն Պետրոսը լսելով որ Տէրն է, որովհետև մերկ էր, իսկոյն վերարկուն վրան առաւ և ծովը նետուեց։ Իսկ միւս աշակերտնե-րը ձկներով լի ուռկանը քարշ տալով՝ նաւով էին գալիս, որովհետև ցամաքից երկու հարիւր կանգուն հեռու էին։ Երբ ցամաք դուրս եկան, վառած կրակ տեսան, վրան մի ձուկ դրած և հաց։ Յիսուսը նրանց ասաց.—«Բերէ՛ք այդ նոր որսած ձկներից»։ Սիմոն Պետրոսը նաւը մտաւ և ցամաք քաշեց հարիւր յիսուն և երեք մեծ մեծ ձկներով լի ուռկանը և չնայելով որ այդ-քան բան կար, ուռկանը չպատռուեցաւ։

Յիսուսը նրանց ասաց.—«Եկէ՛ք ճաշեցէք»։ Աշակերտներից ո՛չ ոք չհամարձակուեցաւ հարց-նել թէ դու ո՞վ ես, որովհետև գիտէին որ նա Տէրն է։ Յիսուսը մօտեցաւ, վերցրեց հացը և տուեց նրանց, նոյնպէս և ձուկը։

Յիսուսն իւր յարութիւնից յետոյ, սրանով երրորդ անգամն էր որ երևում էր իւր աշա-կերտներին։

139.

ՊԵՏՐՈՍԻ ՍԻՐՈՑ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ.—ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՎԱԽՃԱՆԸ

Յովհ. իա, 15-24 Երբ ճաշեցին, Յիսուսն ասաց Սիմոն Պետ-րոսին.—«Սիմո՛ն Յովհանու, ինձ ես աւելի սի-

ըում թէ դրանց»։ Ասաց նրան.—«Տէր, դու գիտես որ քեզ եմ սիրում»։ Յիսուսն ասաց.—«Արածիր գառներս»։

Դարձեալ ասաց նրան.—«Սիմոն Յովհաննու, սիրում ես ինձ»։ Նա ասաց.—«Այո՛ Տէր, դու գիտես որ սիրում եմ քեզ»։ Ասաց նրան.—«Արածիր ոչխարներս»։

Ասաց նրան երրորդ անգամը.—«Սիմոն Յովհաննու, սիրում ես ինձ»։ Պետրոսը տրամեցաւ, որ երեք անգամ հարցրեց թէ սիրում ես ինձ. և ասաց նրան.—«Տէր, դու ամեն բան գիտես և ամենը՝ ճանաչում. և գիտես որ սիրում եմ քեզ»։ Յիսուսն ասաց.—«Արածիր ոչխարներս»։ Եւ աւելացրեց.—«Ճշմարիտ, ճշմարիտն եմ ասում քեզ, որ երբ դու մանուկ էիր գօտիդ ինքդ էիր կապում և ուր որ կամենում էիր՝ այնտեղ էիր գընում։ Բայց երբ ծերանաս, ձեռքերդ պէտք է բարձրացնես և ուրիշները պէտք է կապեն գօտիդ և տանեն այնտեղ՝ ուր որ չես կամենայ»։

Այս ասաց որ ցոյց տայ, թէ Պետրոսն ինչպիսի մահով պէտք է Աստուծուն փառաւորէ։

Այդ ասելուց յետոյ, ասաց նրան.—«Ե՛կ իմ յետևից»։ Երբ Պետրոսը դարձաւ ու տեսաւ որ այն աշակերտը (որին սիրում էր Յիսուսը և որը նրա կրծքին փաթաթուեցաւ ու ասաց.—«Տէր, ո՞վ է, որ քեզ պիտի մատնէ) իւր յետևիցն է գալիս՝ Յիսուսին ասաց.—«Իսկ սա ի՞նչ պէտք է լինի»։ Յիսուսը նրան ասաց.—«Քեզ ինչ, եթէ

ես կամենում եմ որ սա կենայ մինչև իմ գալը.[1]) դու ե՛կ իմ յետևից»։

Այս խօսքն եղբայրներին առիթ տուեց կարծելու, թէ այն աշակերտը պէտք է չմեռնի. Բայց Յիսուսը չասաց թէ չի մեռնի, այլ թէ ես կամենում եմ որ սա կենայ մինչև իմ գալը։

Այս բաների համար վկայողը հենց այդ աշակերտն է, որ այս բոլորը գրեց և գիտենք որ նրա վկայութիւնը ճշմարիտ է։

140.

ՅԻՍՈՒՍՆ ԵՐԵՒՈՒՄ Է ՏԱՍՆԵՒՄԷԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ԳԱԼԻԼԻԱՅԻ ԼԵՐԱՆ ՎԵՐԱՅ.—ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԸ. —ՅԱՐՈՒԹԵԱՆ ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐԵՐԸ

Մատթ. իբ 16–19 Իսկ տասնեմէկ աշակերտները գնացին Գալիլիա, այն լեռը, ուր Յիսուսը նրանց ժամադիր էր եղել։ Երբ նրան տեսան երկրպագեցին նրան և ոմանք երկմտեցան։ Յիսուսը մօտենալով նրանց, խօսեց նրանց հետ ու ասաց.—«Ամեն իշխանութիւն տրուեցաւ ինձ երկնքում և երկրիս վերայ, ինչպէս ուղարկեց ինձ իմ Հայրը, այնպէս էլ ես եմ ուղարկում ձեզ։[2]) Ուրեմն

[1]) Մինչև իմ գալը, այսինքն «միւս անգամ գալուստը» աւելի պարզը՝ մինչև Հին-Ուխտի կործանումը և Նոր-Ուխտի յաղթութիւնը։ Այս մտքով Յիսուսի խօսքը կատարուեց նրանով, որ 60–70 թուականներին երբ արդէն նահատակուած էին միւս առաքեալները, Յովհաննէսը տեսաւ Երուսաղէմի կործանումը և յետոյ միայն հանգեաւ 'ի Տէր։

[2]) «Ինչպէս ուղարկեց ինձ իմ Հայրը, այնպէս էլ ես եմ ուղարկում ձեզ» Այս տողերը չկան Յունարէն թարգմանութեան մէջ։

գնացէք, բոլոր հեթանոսներին աշակերտեցէք և մկրտեցէք նրանց Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով։

Մարկ. ԺԶ. 15-18 Ով որ հաւատայ ու մկրտուի, նա կփրկուի. և ով չի հաւատայ՝ կդատապարտուի։ Եւ հաւատացողներին այս նշանները կուղեկցեն. իմ անունով դեւեր կհանեն, նոր լեզուներ կխօսեն, ձեռքերով օձեր կբռնեն և եթէ մահաթոյն ըմպունեն՝ չեն վնասուի, հիւանդների վերայ ձեռք կդնեն և նրանք կբժշկուին։[1])

Մատթ. ԻԸ 20 Սովորեցրէք նրանց պահել այն ամենը՝ ինչ որ ձեզ պատուիրեցի. և ահա, մինչև աշխարհի վերջը՝ ես ձեզ հետ եմ»։

Գործք Առ. ա. 3 Այսպէս, Յիսուսն իւր չարչարանքներից և մահից յետոյ, բազմաթիւ հաստատուն ապացոյցներով՝ ցոյց տուեց իւր աշակերտներին, որ ինքը կենդանի է. քառասուն օրուան ընթացքում երևալով նրանց և Աստուծու Արքայութեան մասին խօսելով։[2])

141.

ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՕՐՈՒԱՆ ԱՌԱՒՕՏԸ.—ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Ղուկ. ԻԴ. 44-49 Քառասներորդ օրուան առաւօտը, Յիսուսն ասաց իւր աշակերտներին.—«Սրանք են ահա

[1]) Տես մարգ. շարքում 21-ը.

[2]) Ինչպէս այստեղ, նոյնպէս էլ յետագայում առաջ են բերւում Գործք Առաքելոց»-ից որոշ հատուածներ, յատկապէս նիւթն ամբողջացնելու համար։

այն խօսքերը, որ ես ձեզ հետ խօսեցի՝ երբ դեռ ձեզ հետ էի, թէ պէտք է կատարուի այն ամենը՝ որ գրուած են ինձ համար թէ Մովսէսի օրէնքների և թէ մարգարէների ու սաղմոսների մէջ»։ Այն ժամանակ նրանց մտքերը բացեց, որ գրուածներն հասկանան։ Եւ ասաց նրանց.—«Այսպէս էր գրուած և այսպէս պէտք է չարչարուէր Քրիստոսը և երրորդ օրը յարութիւն առնէր։ Բոլոր ազգերի մէջ Երուսաղէմից սկսած, Նրա անունով ապաշխարութիւն և մեղքերի քաւութիւն պէտք է քարոզուի. և դուք էք այս բաների վկաները։ Եւ ահա ես կուղարկեմ իմ Հօր աւետիքը ձեզ վերայ. բայց դուք Երուսաղէմում մնացէք, մինչև որ վերևից զօրութիւն ստանաք։

Գործք Առ. ա. 5-8 Յովհաննէսը ջրով էր մկրտում, իսկ դուք մի քանի օրից յետոյ՝ Սուրբ Հոգով կմկրտուիք»։

Աշակերտները հարցնում էին Նրան ու ասում.—«Տէր, արդեօք այժմ ես հաստատելու Իսրայէլի թագաւորութիւնը»։ Նա պատասխանեց.—«Ժամերն ու ժամանակներն իմանալը ձեր գործը չէ, որովհետև Հայրն իւր իրաւունքի տակ է դրել. բայց երբ Սուրբ Հոգին կիջնի ձեզ վերայ, այն ժամանակ դուք զօրութիւն կստանաք և Երուսաղէմում, ամբողջ Հրէաստանում, Սամարիայում և մինչև երկրիս ծայրերը՝ դուք իմ վկաներս կլինէք»։

Ղուկ. ԻԴ. 50-51 Եւ նրանց մինչև Բեթանիա տանելով, հանեց Զիրեվնաց ղեռաև գազարը և բարձրացնելով

ձեռքերը՝ օրհնեց նրանց։ Օրհնելուց յետոյ, Նա բաժանուեց նրանցից և վերացաւ երկինք։[1])

Գործք Առ. ա. 9-11 Մի ամպ եկաւ ու ծածկեց նրան աշակերտների աչքից։ Երբ նրանք աչքերը տնկած դէպի երկինք էին նայում, սպիտակ հանդերձներով երկու մարդ երևացին նրանց ու ասացին.—«Գալիլիացի մարդիկ, ինչէ՞ք կանգնել և երկնքին նայում. Յիսուսը, որ ձեզնից երկինք համբարձաւ, գալու է այնպէս, ինչպէս որ տեսաք նրա երկինք վերանալը»։

Ղուկ. իդ. 52 Գործք Առաք. ա. 12-14 Աշակերտներն երկրպագեցին և մեծ ուրախութեամբ վերադարձան Երուսաղէմ՝ Ձիթենեաց կոչուած լեռնից, որ շաբաթ օրուայ ճանապարհի չափ մօտ է Երուսաղէմին։ Տաճարէկ աշակերտները—Պետրոսը, Յակոբոսը, Յովհաննէսը, Անդրիասը, Փիլիպպոսը, Թովմասը, Բարդուղիմէոսը, Յակոբոս Ալփեան, Շմաւոն Նախանձայոյզը և Յուդա Յակոբեանը քաղաք մտնելով՝ վերնատունը բարձրացան, որ նրանց օթևանն էր։

Սրանք բոլորն էլ, կանանց և Յիսուսի մայր Մարիամի ու նրա եղբայրների հետ միատեղ՝ աղօթում և օրհնում էին Աստուծուն։

142.

ՄԱՏԱԹԻԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Գործք Առ. ա. 15-26 Այն օրերում, երբ մինչև հարիւր քսան հոգի հաւաքուած էին միատեղ, Պետրոսը դիմեց

[1]) Տես մարգ. շարքում № 52.

եղբայրներին ու ասաց.—«Եղբայրներ, պէտք է կատարուէր այն գրուածը, որ առաջուց Սուրբ Հոգին ասել էր Դաւթի բերանով, Յիսուսի բռնողներին առաջնորդող Յուդայի մասին։ Նա մեր թուիցն էր և այս (առաքելական) պաշտօնից էլ բաժին ունէր։ Սա անիրաւութեան վարձով մի ագարակ ստացաւ և գլխի վայր ընկնելով՝ միջից ճեղքուեցաւ և փորոտիքը դուրս թափուեցաւ։ Այս բանը յայտնի եղաւ Երուսաղէմի բոլոր բնակիչներին. այդ պատճառով էլ այդ ագարակը նրանց լեզուով Ակեղդամայ կոչուեցաւ, որ Արեան ագարակ է նշանակում։

Հենց այս բանի համար է սաղմոսների գրքի մէջ գրուած.—«Նրա բնակութիւնը աւերակ կըլինի, թող նրա մէջ բնակուող չլինի[1]) և նրա կարգն ուրիշն առնէ»։[2]) Ա՛րդ, անհրաժեշտ է որ այս մարդկանցից (որոնք մեզ հետ են եղել այն բոլոր ժամանակը որ Յիսուսը մեզ մօտ էլ և մուտ ունէր, սկսած Յովհաննէսի մկրտութիւնից մինչև Նրա երկինք համբառնալը) որևէ մէկը ձեզ հետ 'ի միասին վկայ լինի Նրա յարութեանը»։

Եւ երկու հոգի կանգնեցրին. Յովսէփին որ Բարսաբա էր կոչւում և Յուստոս անուանուեցաւ և Մատաթիային։

Եւ աղօթելով ասացին.—«Դու սրտագէտ Տէր, ցոյց տուր թէ այս երկսից որին ես ընտ-

[1]) Համեմատել.—«Նրանց բնակութիւնը աւերակ դառնայ և նրանց յարկի տակ՝ ոչ ոք չբնակուի։ (Սաղմ. կը. 26)։

[2]) —«Նրա օրերը թող կարճանան և նրա այցելութիւնը (կարգը, պաշտօնը) ուրիշն առնէ։ (Սաղմ. ճը. 8)։

որում այս առաքելական պաշտօնն ստանալու, որից զրկուեցաւ Յուդան և գնաց իւր տեղը»։

Նրանց վերայ վիճակ ձգեցին և վիճակն ընկաւ Մատթիային և այդպիսով նա դասուեցաւ 'ի շարս տասնեմէկ առաքեալների։

143.

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԳԱԼՈՒՍՏԸ

Գործք առ. բ. 1-13 Պենտեկոստէի[1]) տօնական օրն անցնելուց յետոյ, երբ ամենքը հաւաքուած էին միատեղ, յանկարծ երկնքից մի ձայն եկաւ՝ սաստկաշունչ քամու ձայնի պէս և լցրեց ամբողջ տունը՝ ուր նստած էին։[2]) Եւ երևացին նրանց բաժանուած լեզուներ որպէս թէ կրակէ և նստան ամեն մէկի վերայ։ Ամենքն էլ Սուրբ Հոգով լցուեցան և սկսեցին այլ և այլ լեզուներով խօսել, ինչպէս որ Հոգին խօսել էր տալիս նրանց։

Երուսաղէմում բնակուող երկիւղած հրէաներն ու երկրի ամեն ծայրերից հաւաքուած մարդիկ, երբ այս ձայնը լսեցին, ահագին բազմութեամբ եկան ու կիտուեցան. և լսում էին թէ ինչպէս աշակերտներն իրենց ամեն մէկի լեզուովն էին խօսում։

Ամենքն էլ հիանում ու զարմանում էին. և իրար էին ասում.—«Չէ՞ որ սրանք—այս խօսող-

[3]) Պենտեկոստէ—յունարէն է. նշանակում է Յիսունք կամ Յիսունք։ Հրէական տօն էր որ կատարւում էր զատկից յիսուն օր յետոյ և Սինայի օրէնսուութեան յիշատակն էր։

[4]) Այսինքն այն 120 հոգին, որ յիշուեցաւ նախընթաց գլխում։

ներն ամենքն էլ Գալիլիացի են. ի՞նչպէս է որ կարողանում են մեր իւրաքանչիւրիս մայրենի լեզուովը խօսել։ Ոչ միայն մենք—Պարթևներս և Մարք, Իլամացիք և Միջագէտքի, Հրէաստանի, Կապադովկիայի, Պոնտոսի և Ասիայի, Փռիւգիայի և Պամփիւլիայի, Եգիպտոսի, Լիբիայի մասերի և Կիւրինէի մօտ ընկած տեղերի բնակիչներս ենք լսում մեր լեզուով նրանց խօսած Աստուծու մեծամեծ գործերը, այլ և եկուոր Հռովմայեցիները նորադարձ հրէաները, Կրէտացիք ու Արաբացիք»։ Եւ ամենք էլ հիանում էին ու զարմանում և իրար էին ասում.—«Սա ի՞նչ բան է»։ Իսկ ոմանք ծաղրելով՝ ասում էին.—«Սրանք հարբած են»։

144.

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ.—ԵՐԵՔ ՀԱԶԱՐ ՀՈԳՈՒ ԴԱՐՁԸ

Գործք Առ. բ. 14-41 Պետրոսը տասնեմէկ առաքեալների հետ ի միասին վեր կացաւ և սկսեց բարձրաձայն խօսել նրանց հետ ու ասաց.—«Հրէայ մարդիկ և դուք ամենքդ որ Երուսաղէմումն էք բնակւում, լսեցէք խօսքերս և թող ձեզ յայտնի լինի, որ սրանք հարբած չեն, ինչպէս դուք էք կարծում, որովհետև դեռ ժամի երեքն է.[1]) այլ այս՝ Յովէլիա Մարգարէի միջոցով ասուածն է.—«Ես, ասում է Աստուած, վերջին օրերն իմ Հոգուց կըթափեմ ամեն մարմնի վերայ և ձեր տղաներն

[1]) Մեր առաւօտեան 9-ժամը։

ու աղջիկները կմարգարէանան և ձեր երիտասարդները տեսիլքներ կտեսնեն և ձեր ծերերը՝ երազներ։ Այն օրերն իմ ծառաների և իմ աղախինների վերայ էլ կթափեմ իմ Հոգուց և դրանք էլ կմարգարէանան։ Եւ վերևը—երկնքում՝ հրաշքներ ցոյց կտամ և ցածը—երկրում՝ նշաններ—արիւն, կրակ և ծխի մրրիկ. արևը խաւար կդառնայ և լուսինը՝ արիւն. դեռ Տիրոջ մեծ և երևելի օրը չեկած. և նա, որ Տիրոջ անունը կը-կարդայ՝ պէտք է փրկուի։[1])

Դուք, Իսրայելացի մարդիկ, լսեցէք այս խօսքերը. Յիսուս Նազովրեցին, Աստուծուց ձեզ ցոյց տուած մարդը, որն իւր պաշտօնը հաստատեց զօրութիւններով, հրաշքներով ու նշաններով, որ ինչպէս դուք էլ գիտէք Աստուած Նրա ձեռքովը կատարեց ձեր մէջ. Նա, որ Աստուծու սահմանած խորհրդով և կանխագիտութեամբ մատնուած լինելով, վերցրիք և անօրէնների ձեռքով փայտի վերայ մեխելով՝ սպանեցիք, որին Աստուած յարոյց մահուան ցաւերը լուծելով. որովհետև անհնար էր որ Նա բռնուէր նրանից, որի համար էլ Դաւիթն ասում է.—«Ամեն ժամանակ տեսնում էի Տիրոջս իմ առաջ, որովհետև իմ աջ կողմս է, որ չսասանիմ. այդ պատճառով էլ սիրտս ուրախացաւ և լեզուս ցնծաց, նաև մարմինս էլ յուսով հանգստացաւ. որովհետև անձս դժոխքում (կամ գերեզմանի մէջ) չես թողնի և քո Սուրբիդ էլ չես տայ ապակա-

[1]) Մարգ. Յովել. բ. 28-31. տես նաև մարգ. շարքում № 21.

նութիւն տեսնելու. ճանաչեցրիր ինձ կեանքի ճանապարհները և լցրիր ինձ երեսիդ ուրախութիւնով»։[1])

Մարդիկ եղբայրներ, հարկաւոր է համարձակ խօսել ձեզ հետ Դաւիթ նահապետի համար, որ մեռաւ ու թաղուեցաւ և նրա գերեզմանը մինչև օրս էլ մեր մէջ է։ Ա՛րդ, որովհետև նա մարգարէ էր և գիտէր որ Աստուած երդմամբ երդուեցաւ իրեն, որ իւր որովայնի պտղից է լինելու իւր աթոռի վերայ նստողը, ուստի և կանխատեսութեամբ խօսեց Քրիստոսի յարութեան համար, որովհետև նրա հոգին դժոխքում չթողնուեց և նրա մարմինն ապականութիւն չը-տեսաւ։[2])

Ահա այս Յիսուսին յարոյց Աստուած. որին մենք ամենքս էլ վկայ ենք։ Ուստի Աստուծու աջով բարձրանալով ու Սուրբ Հոգու աւետիքը Հօրից ստանալով՝ սփռեց այն վեզ վերայ որ դուք այժմ և՛ տեսնում և՛ լսում էք։

Որովհետև Դաւիթն ինքը երկինք չբարձրացաւ, բայց ասաց.—«Տէրն ասաց իմ տիրոջս, նստիր ա՛ջ կողմս մինչև որ քո թշնամիներին ոտքերիդ պատուանդանը դարձնեմ»։[3]) Ուստի, թող բոլոր Իսրայէլի տունը ճշմարտապէս իմանայ, որ այն Յիսուսին, որին դուք խաչեցիք, Աստուած թէ՛ Տէր արաւ և թէ՛ օծեալ։

[1]) Սաղմոս ժե. 8-10.
[2]) Սաղմոս ժե։ 10. տես մարգ. շարքում № 48։
[3]) Տես. մարգ. շարքում № 52։

Երբ այս (ատենաբանութիւնը) լսեցին, իրենց սրտերի մէջ զղջացին և Պետրոսին ու միւս առաքեալներին ասացին.—«Մարդիկ եղբայրներ, ի՞նչ անենք»։ Պետրոսն ասաց նրանց.—«Ապաշխարեցէք և թող ձեզնից ամեն մէկը մկրտուի՝ Յիսուս Քրիստոսի անունով մեղքերի թողութեան համար և Սուրբ Հոգու պարգևը կընդունիք։ Որովհետև ձեզ և ձեր որդոց համար է այս աւետիքը և այն բոլոր հեռաւորների համար, որոնց մեր Տէր Աստուածը կը կանչէ»։

Եւ ուրիշ շատ խօսքերով վկայութիւն էր տալիս և յորդորում էր նրանց ու ասում.—«Ազատեցէք ձեզ այս խոտորած ազգից»։ Եւ նրանք, որ նրա խօսքերը սրտանց ընդունեցին՝ մկրտուեցան. և այն օրը երեք հազար հոգու չափ աւելացան։

145.

ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Մարկ. ժզ. 20 Այնուհետև առաքեալները դուրս գալով, սկսեցին բոլոր երկրներում քարոզել՝ Տիրոջ գործակցութեամբ.[1]) և խօսքը (իրենց քարոզութիւնները) հաստատում էին նրան հետևող նշաններով (իրենց գործած հրաշքներով)։

[1]) Համեմատել.—«Բոլոր երկրներում լուեցաւ նրանց ձայնը և մինչև աշխարհի ծայրերը տարածուեցաւ նրանց խօսքը»։ (Սաղմ. ժը. 5)։

146.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ ՎԵՐՋԱԲԱՆԸ

Յովհ. ի. 30-31 իա. 25 Յիսուսն իւր աշակերտների առաջ ուրիշ շատ հրաշքներ գործեց, շատ բաներ արաւ, որոնք այս գրքի մէջ չեն գրուած, որովհետև եթէ Նրա բոլոր հաստատներն ու արածները մի առ մի գրուելու լինէր, կարծում եմ որ աշխարհս էլ բաւական չէր լինի այդ գրուածներն իւր մէջ պարունակելու։ Սրանք էլ այն պատճառով գրուեցան, որ դուք հաւատաք թէ Յիսուս Քրիստոսը Աստուծու Որդի էր և թէ Նրան հաւատալով, յաւիտենական կեանք ընդունէք Նրա անունով։

ՎԵՐՋ

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐՈՒՄ
С.С.Р.А. Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

ՅԱՆԿ

Յառաջաբան . . . . Ե—ԻԴ
Մարգարէութիւններ Յիսուս Քրիստոսի մասին . . . ԻԵ -ԼԷ

I.

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԿԱՊԱԿՑՈՒԱԾ ԴԷՊՔԵՐ

Գլուխ Երես

1. Ղուկաս Աւետարանչի յառաջաբանը 3
2. Զաքարիայի տեսիլքը տաճարում 3
3. Ս. Մարիամի աւետումը 6
4. Ս. Մարիամի այցելութիւնն Եղիսաբէթին 7
5. Յովսէփի տեսիլքը . . . 9
6. Յովհաննէս Մկրտչի ծնունդը և նրա պաշտօնը 10
7. Յիսուս Քրիստոսի ազգաբանութիւնը 12
8. Յիսուսի ծնունդը . . . 16
9. Տիրոջ հրեշտակն ու հովիւները . 17
10. Յիսուսի թլպատութիւնը.—Քառասունքին տաճար տանուիլը.—Սիմէօն Աստուածընկալ և Աննա մարգարէուհին 20
11. Մոգերի այցելութիւնը.—Մանկան փախուստը Եգիպտոս.—Բեթղեհէմի մանկանց կոտորածը.—Դարձ Եգիպտոսից Նազարէթ 22
12. Տասներկու տարեկ. Յիսուսը տաճարում 28

II.

ՅԻՍՈՒՍԻ ԳՈՐԾԵՐԸ ՄԻՆՉԵՒ ԱՌԱՋԻՆ ՋԱՏԻԿԸ

13. Յովհաննէս Մկրտչի քարոզութիւնը և կանխասացութիւնը . . . 29
14. Յիսուսի մկրտութիւնը . . . 33
15. Փորձութիւն 34
16. Յովհաննէս Մկրտչի վկայութիւնը . 35
17. Յովհաննէս Աւետարանիչը՝ Յիսուսի մասին 37
18. Յիսուսի հետևողները . . . 38
19. Կանա քաղաքի հարսանիքը . . 39

III.

ՅԻՍՈՒՍԻ ԳՈՐԾԵՐՆ ԱՌԱՋԻՆ ՋԱՏԿԻՑ ՄԻՆՉԵՒ ԵՐԿՐՈՐԴԸ

20. Յիսուսն Երուսաղէմում Զատկի տօնին 42
21. Յիսուսն ու Նիկոդիմոսը . . 43
22. Յովհաննէս Մկրտչի խօսքն իւր աշակերտներին Յիսուսի մասին . . 46
23. Յովհաննէսի բանտարկուիլը։ Յիսուսը հեռանում է Հրէաստանից . . 47
24. Յիսուսը խօսում է Սամարացի կնոջ հետ 49
25. Արքայազնի որդու բժշկութիւնը . 54
26. Յիսուսը Նազարէթում . . . 55
27. Յովնանի և Զիբեթիայի որդոց նոր կոչումը 57
28. Յիսուսը կափառնաում քաղաքում. Դիւահարի, Պետրոսի զոքանչի և այլոց բժշկութիւնը . . . 57

29. Ձկան որսը 60
30. Գալիլիայի բորոտի և Կափառնաումի անդամալուծի բժշկութիւնը . . 61
31. Մատթէոս մաքսաւորի կոչումը . 63

IV.

ՅԻՍՈՒՍԻ ԳՈՐԾԵՐՆ ԵՐԿՐՈՐԴ ՁԱՏԿԻՑ ՄԻՆՉԵՒ ԵՐՐՈՐԴԸ

32. Պրոպատիկէի անդամալուծի բժշկութիւնը 65
33. Պրոպատիկէի քարոզը: . . . 67
34. Աշակերտների հասկ կորզելը.—Կափառնաումի զօսացածի բժշկութիւնը 70
35. Առաքեալների ընտրութիւնը . . 71
36. Լերան քարոզը 73
37. Հարիւրապետի ծառայի բժշկութիւնը և Նայինի պատանու յարութիւնը . 88
38. Յովհաննէս Մկրտիչը պատգամաւորութիւն է ուղարկում Յիսուսի մօտ.—Յիսուսը գովում է Յովհաննէս Մկրտչին 89
39. Մեղաւոր կինը.—Միջնադէպ փարիսեցի Սիմոնի տանը . . . 91
40. Յիսուսին հետևող կանայք.—Յիսուսը ժողովրդի հետ.—Կոյր ու համր դիւահարի բժշկութիւնը . . 93
41. Յիսուսը հերքում է դիւական զօրութիւնը և նախատում է փարիսեցիներին 94

42. Փարիսեցիները Յիսուսից հրաշք են պահանջում.—Յիսուսի յանդիմանական պատասխանը.—Յիսուսի մօրն երանող կինը 96
43. Թէ որոնք են Յիսուսի մայրն ու եղբայրները 97
44. Սերմանացանի առակը . . . 98
45. Յիսուսը սերմերի, մանանեխի սերմի, խմորի, գանձի, մարգարտի և ուռկանի առակներով բացատրում է Երկնքի Արքայութեան կամ Աւետարանի տարածուելն ու կազմուելը . 101
46. Որոմի առակը 102
47. Ալէկոծութեան հանդարտուելը.—Գերգեսացի դիւահարի բժշկութիւնը 104
48. Տեռատես կնոջ բժշկութիւնը.—Յայրոսի աղջկայ յարութիւնը . . 107
49. Երկու կոյրերի և խուլումամբ դիւահարի բժշկութիւնը . . . 109
50. Յիսուսի երկրորդ այցելութիւնը Նազարէթ.-Քարոզութիւնների տարածուելը 110
51. Յիսուսը պատուէրներ է տալիս իւր աշակերտներին 111
52. Յովհաննէս Մկրտչի գլխատուելը . 115
53. Յիսուսը Բեթսայիդայի անապատում.—Հինգ հազարին կերակրելը . . 116
54. Յիսուսը ծովի վերայ. . . . 119
55. Յիսուսը քարոզում է Կափառնաումի ժողովարանում . . . 120
56. Յիսուսին հետևող աշակերտների վարանումը 124

V.

ՅԻՍՈՒՍԻ ԳՈՐԾԵՐԸ ԵՐՐՈՐԴ ՁԱՏԿԻՑ ՄԻՆՉԵՒ ՁՈՐՐՈՐԴԸ

57. Խօսակցութիւն աւանդութիւնների մասին.—Արտաքին և ներքին պըղծութիւն 125
58. Քանանացի աղջկայ և այլ հիւանդների բժշկութիւնը . . . 127
59. Զորս հազարին կերակրելը.—Փարիսեցիները երկնային նշան են պահանջում 129
60. Յիսուսը զգուշացնում է աշակերտներին փարիսեցիների խմորից.—Բեթսայիդայի կոյրի բժշկութիւնը . 130
61. Յիսուսը լսում է իւր մասին եղած կարծիքները.—Պետրոսի երանութիւնը. 131
62. Յիսուսը բացայայտում է իւր վախճանը.—Միջնադէպ Յիսուսի և Պետրոսի մէջ.—Յիսուսը փարատում է աշակերտների տարակուսանքը. . 132
63. Յիսուսի այլակերպութիւնը.—Հարցում Եղիայի մասին . . . 134
64. Լուսնոտ դիւահարի բժշկութիւնը.—բժշկութիւններ կատարելու պայմանը 136
65. Յիսուսից հարկ են պահանջում . 138
66. Թէ ով է մեծ Երկնքի Արքայութեան մէջ.—Յիսուսին չհետևող երդմնեցուցիչը.—Փոքրիկներին գայթակղեցնելու պատիժը 138

67. Յիսուսը սովորեցնում է մեղանչողներին ուղղել ու ներել.—Աններող և չար ծառայի առակը . . . 141
68. Յիսուսը հրահանգում է իւր եօթանասուն և երկու աշակերտներին և յանդիմանում Գալիլիացիներին . 143
69. Վերջին օրերը Գալիլիայում . . 145
70. Դէպի Երուսաղէմ 146
71. Յիսուսը վիճաբանում է փարիսեցիների հետ Տաղաւարահարաց տօնին 147
72. Փարիսեցիների ժողովը . . . 151
73. Պոռնիկ կինը 152
74. Յիսուսը վիճաբանում է փարիսեցիների հետ տաճարի գանձատանը . 153
75. 'Ի ծնէ կոյրի բժշկութիւնը . . 158
76. Քաջ Հովուի օրինակը . . . 162
77. Մարթա և Մարիամ . . . 165
78. Եօթանասուն և երկու աշակերտների վերադարձը 166
79. Յիսուսն ու օրինականը.—Սամարացու առակը 167
80. Ժառանգութեան համար բողոքողը.—Անմիտ հարուստի առակը.—Յիսուսը խօսում է գանձի մասին . 170
81. Յիսուսը խօսում է արթուն և պատրաստ լինելու և հաւատարիմ ծառայութեան անհրաժեշտութեան մասին 171
82. Աւետարանի նշանները . . . 173

83. Յիսուսը խօսում է Երուսաղէմում պատահած դէպքերի մասին և պատմում է անպտուղ թզենու առակը . 174
84. Կարկամուած կնոջ բժշկութիւնը . 176
85. Աւետարանի ընտրեալները.—Յիսուսին զգուշացնում են Հերովդէսից.—Յիսուսը գուշակում է Երուսաղէմի անկումը 177
86. Զրգողեալի բժշկութիւնը. — Կոչնականների, կոչնատիրոջ և ընթրիքի առակները 178
87. Յիսուսն Երուսաղէմում նաւակատեաց տօնին 181
88. Յիսուսին աշակերտելու պայմանները 183
89. Կորած ոչխարի, կորած դրամի և Անառակ որդու առակները . . 184
90. Անիրաւ տնտեսի առակը.—Փարիսեցիների զայրոյթը 187
91. Յիսուսը խօսում է ապահարզանի, ամուսնութեան և ամուրիութեան մասին 189
92. Մեծատան և աղքատ Ղազարոսի առակը 190
93. Տասն բորոտների բժշկութիւնը . 192
94. Մարդու Որդու գալուստը . . 193
95. Անիրաւ դատաւորի առակը.—Փարիսեցին ու մաքսաւորը . . . 195
96. Յիսուսն ու մանուկները. — Հարուստ իշխանը 196
97. Առաքեալների վարձը.—Այգու մշակների առակը 199

98. Հաւատք և խոնարհութիւն . . 201
99. Ղազարոսի յարութիւնը . . . 202
100. Կայիափայի խորհուրդը. — Յիսուսն առանձնանում է Եփրայիմ . . 206
101. Մահուան կանխագուշակութիւն.—Յակովբոսի և Յովհաննէսի մօր խնդրուածքը 207
102. Երիքովի կոյրի բժշկութիւնը . . 209
103. Յիսուսն ու Զակքէոս մաքսապետը 210
104. Մնասների առակը . . . 211
105. Բարտիմէոս կոյրի բժշկութիւնը . 212
106. Յիսուսը Սիմոն բորոտի տանը . 213
107. Յիսուսի հանդիսաւոր մուտքն Երուսաղէմ.—Յիսուսը Տաճարում . . 215
108. Անպտուղ թզենին.—Տաճարի մաքրուիլը.—Հաստատուն հաւատի և անկեղծ աղօթքի ոյժը. — Փոխադարձ հարցումներ 217
109. Երկու որդոց և չար մշակների առակը 220
110. Թագաւորի որդու հարսանեաց առակը 222
111. Կայսրինը՝ կայսրին տուէք, իսկ Աստուծունը՝ Աստուծուն . . . 223
112. Եօթն եղբայրների կինը . . . 224
113. Թէ ո՞րն է մեծ պատուիրանը . . 225
114. Դաւիթ և Դաւթի որդի . . . 226
115. Վայեր դպիրների և փարիսեցիների դէմ 227
116. Այրի կնոջ լուման 230
117. Հեթանոս ուխտաւորներ. — Յորենի հատիկը որպէս Յիսուսի փառաւո-

րութեան օրինակ.—Երկնքից եկած ձայնը.—Մեսիական խնդիր.—Վերջին յայտարարութիւն . . . 231

118. Յովհաննէս Աւետարանչի խորհրդածութիւնը 233

119. Մարգարէութիւն Երուսաղէմի աւերման մասին.—Գալստեան նշանները.—Հսկումն 234

120. Տան կոյսերի և քանքարների առակը 239

121. Վերջին դատաստանի բացատրութիւնը 242

122. Խաչուելու գուշակութիւն.—Սանեդրինի գումարումը.—Յուդայի մատնութիւնը 244

VI.

ՉՈՐՐՈՐԴ ԵՒ ՎԵՐՋԻՆ ՉԱՏԻԿ

123. Զատկի պատրաստութիւն.—Զատկական ընթրիք.—Ընթրիքի առաջին բաժակը 245

124. Ոտնալուայ.-Մատնութեան յայտնուիլը 246

125. Մեծութեան խնդիրը.—Մարմնի և արեան խորհուրդը.—Բաժանման խօսքեր.—Պետրոսի համարձակութիւնը.—Միջնադէպ զէնքի մասին . . 250

126. Հրաժեշտ. (Յիսուսի խօսած վերջին խրատները, յորդորները, յանձնարարութիւններն ու յայտնութիւնները) 253

127. Յիսուսի վերջին աղօթքը.—Աղթանքներ առաքեալների, հաւատացեալների և ամենքի համար . . 262

128. Յիսուսը Գեթսեմանի պարտիզում . 264

129. Յիսուսը քահանայապետների առաջ,—Պետրոսի ուրացութիւնը . . 268

130. Առաւօտեան ժողովի վճիռը.—Յիսուսը Պիղատոս դատաւորի և ապա Հերովդէսի առաջ 272

131. Յիսուսն երկրորդ անգամ Պիղատոսի առաջ 275

132. Դէպի Գողգոթա.—Սիմոն Կիւրինացին.—Յիսուսին խղճացող կանայք.-Յուդայի յուսահատութիւնը և վախճանը 279

133. Յիսուսի խաչելութիւնը.—Աւազակի զղջումը.—Գրուածների կատարումն. Յիսուսի մահը.—Հրաշալի նշաններ . 281

134. Յիսուսի թաղումը և թաղման պարագաները.—Գերեզմանի կնքուիլը . 287

135. Յիսուսի Յարութիւնը.—Իւղաբեր կանայք.—Յիսուսն ու Մարիամ Մագդաղինացին.—Յիսուսն ու մընացեալ կանայք.—Ջանքեր յարութիւնը ստելու 291

136. Յիսուսն ու Էմմաուս գնացող աշակերտները 296

137. Յիսուսն երևում է աշակերտներին վերնատանը.—Առաքելական իշխանութիւն.—Թովմասի թերահաւատութիւնը 298

138. Յիսուսը երևում է աշակերտներին Տիբերական ծովի մօտ . . . 300

139. Պետրոսի սիրոյ վկայութիւնը. — Պետրոսի և Յովհաննէսի վախճանը . 301
140. Յիսուսն երևում է տասնմէկ աշակերտներին Գալիլիայի լերան վերայ. — Առաքելութեան պաշտօնը. — Յարութեան քառասուն օրերը . . 303
141. Քառասներորդ օրուան առաւօտը. — Յիսուսի համբարձումը . . . 304
142. Մատթիայի ընտրութիւնը . . 306
143. Սուրբ Հոգու գալուստը . . . 308
144. Պետրոսի առենաբանութիւնը. - Երեք հազար հոգու դարձը . . . 309
145. Առաքեալների գործունէութիւնը . 312
146. Յովհաննէս Աւետարանչի վերջաբանը 313

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՆԿԱՏՈՒԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես	Տող	Տպուած է	Պէտք է լինի
ԺԵ	1 ցածից	չորորդ (և ուրիշ տեղեր)	չորրորդ
ԻԲ	17 վերևից	որվհետև	որովհետև
ԼԶ	2 ցածից	Իսրայելին	Իսրայէլին
26	ծանօթ. 1 վերևից	Յիսուսը	[1]) Յիսուսը
29	վերնագրի թուահամարը	1	13
34	4 վերևից	Յիսուն	Յիսուսն
35	վերնագրի թուահամարը	13	16
»	վերնագրի մէջ	Մկրտիչի	Մկրտչի
39	11 ցածից	Անդրեաս (և ուրիշ տեղեր)	Անդրէաս
44	3 վերևից	ծնուել	ծնուել [1])
»	պակասում է հետևեալ ծանօթութիւնը		[1]) Աւետարանների հայ թարգմանութեան օրինակներից շատերի մէջ.—«Մի անգամ արդէն ծնուած մարդն, էլ ինչպէս կարող է նորից ծնուել»:
47	8 ցածից	չորորդապետ	չորրորդապետ
94	1 վերևից	դուր	դուրս
»	2 վերևից	Քուզայի	Քուզայի
109	7 ցածից	ուրս	դուրս
155	2 ցածից	կդարցնէ	կդարձնէ
180	8 վերևից	Աստուծու	Աստուծու
198	11 ցածից	'ի վեր.	'ի վեր
201	3 վերևից	ասում	անում
»	9 ցածից	գիտէինք	գիտենք
237	12 ցածից	ապրիլ	ապրել
262	8 վերևից	միմեան	միմիայն
287	14 վերևից	Զեբեթայի	Զեբեթիայի
306	17 վերևից	Բարդուղիմէոսը, Յակովբոս Ալփեան և այլն	Բարդուղիմէոսը, Մատթէոսը, Յակովբոս Ալփեան և այլն.
310	11 վերևից	Իսրայելացի	Իսրայէլացի


ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐԸ
ՔՐԻՍՏՈՍԻ ԺԱՄԱՆԱԿ
Բեղրան
Բուրադա գ.
Դամասկոս
Բոստրինոս
Սիդոն
Սարեպթա
Լևանդես գ.
Տիւրոս
Աբելբեթմաքա
Դանի գետ
Կեսարիա Փիլիպ
Գիսադա լեռ
Մսադոն լեռ.
Կադէս
Գիսգաղա
Ռամա
Հաղորդին
Բեթսայիդա
Նաֆա
Ակքով
Բեղոս գ.
Կարմեղ գ.
Կանա
Մեգիդ գ.
Մագդալա
Տիբերիա
Գերգեսա
Դաղմանութա
Գամալա
Աստարովթ
Եդրայի
Դոթան
Դաթան
Դոթան
Դաթան
Նազարեթ
Դաբորէ
Նային
Ընդոր
Դաղարա
Դոթան
Մակեդովն
Ռոմեն
Բեթսան
Գաղաղայադոն լեռ.
Պելղղա
Թաբոր
Դովթայիմ
Թեբեզ
Բեթաբարա
Ամաթոս
Գերասա
Սամարիա
Սուքար
Գեբալ լեռ
Սաղիմ
Ապողոնիա
Անտիպատրիս
Գաղ գաղ
Կանա գ.
Դարոնոյ լեռ
Ակրաբբի
Գաղ.ցսադ լեռ
Ռամովթ
Գաս գ.
Ցոպպէ
Բեթ Դագոն
Լիդդա
Արիմաթիա
Բեթորոն
Բեթել
Բեթ Նէմրա
Ռաբաա
Ցազէր
Ռեմղա
Ամմաուս
Ալեղոն
Ռամա Ներքոյ
Գաղատիա
Ակկարոն
Մասփա
Բեթադղա
Եղեադ
Հերոնասաղեմ
Զիբենեաց լեռ.
Ներսեն
Բեթանիա
Բեթլեհեմ
Բեթաբարա
Բաալ-Մեոն
Բեթլեհեմ
Մոքով
Թամ
Թեկուէ
Ցուրբակա գ.
Նեղեբ
Նեղեբ
Հեբրոն
Դեբոն
Արադ
Մեդաբա
Գերարա
Բերսաբէէ
Ամրոն գ.
Ամրոն գ.
Ամրոն գ.

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ.

ՄԱՐԱԳԵԱՆ ՏԱՃԱՏ ԱՌԱՔ ՔԱՀԱՆԱՅԻ

(Յարութիւն Մարագեան. Տաճատ Գնունի)

Հետեւեալ աշխատութիւնները

1) ՊԱՏԿԵՐՆԵՐ, ԶՐՈՅՑՆԵՐ, ՎԷՊԻԿՆԵՐ . . . . (տպուած «Նոր-Դար» օրաթերթում 1884—1904)

2) ՔԱՆԴԱԾ ՕԶԱԽ անցեալից մի յիշողութիւն 1889. սպառուած

3) ՅԻՍՈՒՍԻ ԵՐԿՐԱՒՈՐ ԿԵԱՆՔԸ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ Ա. տպ. 1898 սպառուած

4) ԿԼԱՒԴԻԱՅԻ ԱՅԳՈՒՄ (աւանդութիւն) Էրնստ Ֆոն-Վիլդէնբրուխի. թարգմ. 1898. գ. 20 կ.

5) ԿԱՆԱՆՑ ԽՆԴՐԻ ԱՌԹԻՒ 1901. գին է 40 կ.

6) ՅԻՍՈՒՍԻ ԵՐԿՐԱՒՈՐ ԿԵԱՆՔԸ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ Բ. բարեփոխուած տպագր. 1914 թ.



Յանկացողները դիմու ·ինձ.
Баку. Протоіерею Тачату Марагянцъ.

Գրավաճառանոցներին կլինի զեղչ։

990

0027741

990